

სიმედი

II სურ

სიმედი

სიმედი, ჯიშისადაც სი ჯიშისადაც

სიმედი

№ 11

სიმედი

1902

სიმედი

Синография Груз. Издат. Т—я. | სიმედი, ჯიშისადაც სიმედი. 1902

ԲՈՎԱՆԴՍԿՈՒԹԻՒՆ

№ 11

Երես

1. ԿԵԱՆՔԻ ԴԱՍԸ, պատկեր Ա. Ահարոնեանի . . .	5
2. ԴԱՐԴ, բանաստեղծութիւններ Ալ. Ծատուրեանի . . .	22
3. ԻՆՉՈՒՄ ԵՐԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԳԱԻԱՌ ԶԵՆ ԳՆՈՒՄ, բժ. Ա. Մ.-ի . . .	23
4. «ԷՍ ՍՇԽԱՐՀԸ», բանաստեղծ. Ա.Լ. Իսահակեանի . . .	34
5. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ, Ե. Ֆրանգեանի . . .	36
6. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, . . . Լ. Բաբայեանի . . .	42
7. ՄՕՆՆԱ ՎԱՆՆԱ, դրամա Մօրիս Մէսեռլինկի, Թարգմ. Տ. Յովհաննիսեանի . . .	56
8. ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՄԻԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, յօդ. Կալամիի, Թարգմ. * . . .	75
9. «ԴԱՐԴԸ՝ ՍՐՏԻՍ», բանաստեղծ. Ա.Լ. Իսահակեանի . . .	95
10. ՇՎԵՑՅԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրբաթ-Հարունի . . .	96
11. ԱՇՈՒՂԻ ԵՐԳԵՐԻՑ, Ալ. Ծատուրեանի . . .	104
12. ԱՆՀԱՇՏԸ, պատմութեամբ Շահրիարի . . .	106
13. Մ. ՊԵՇԻԿՍՏՈՒՆԵԱՆ, քննադատական փորձ, Գ. Ալ- բունեանի . . .	123
14. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—35) Յ. Արարաթեան՝ «Մայրենի լե- զու», Հար. 36) V. Guinet; «La Turquie d'Asie», Ե. Թ. 37) Զիլինկարեան և Ռաշմանեան, «Էքստրակուրսիւն», ԲԳ.—38) Ալ. Մատուրեան, «Արձակ բանաստեղծու- թիւններ» Տարգմենկի, Տ. Ե. . . .	142
15. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, Արհեստագիտութիւնը Պարս- կաստանում, Յ. Կարախանեանի . . .	151
16. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ, Գահանայական ժողովներ Ա- խալքալարում և «գլխաղինը» վերացնելու հարցը, Սալլիմեանի . . .	160
13. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՅ.—«Խորատուղտած զանգը» Հա- ուպտմանի.—Հիւսիսի միտքը.—Ի՞նչ է ուղտած ասել Հաուպտմանի իր պիէսայով.—Հաուպտման և Նիցշէ. —«Տօնածառ» Նեմիրովիչ-Պանչենկօի և յՈՂ մի բոսլէ	

Եւր շրջան II տարի

Հրատ. XIV տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 11

ՆՈՅԵՄԲԵՐ

1902

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Типографія Груз. Издат. Т—ВВ. | Տպարան Վրաց Հրատ. Ընկերութեան.
1902

Дозволено цензурою, Тифлисъ, 29 ноября 1902 года.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 11

Երես

1. ԿԵԱՆՔԻ ԴԱՍԸ, պատկեր Ա. Ահարոնեանի . . . 5
2. ԴԱՐԴ, բանաստեղծութիւններ Ալ. Ծառուբեանի . . . 22
3. ԻՆՉՈՒ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԳԱԻԱՌ ԶԵՆ ԳՆՈՒՄ,
բժ. Ա. Մ.-ի . . . 23
4. «ԷՍ ՍՇԽԱՐՀԸ», բանաստեղծ. Ա.Լ. Իսահակեանի . . . 34
5. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ,
Ե. Ֆրանգեանի . . . 36
6. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ,
Լ. Բաբայեանի . . . 42
7. ՄՕՆՆԱ ՎԱՆՆԱ, զրամա Մօրիս Մեհեռլիցկի,
Թարգմ. Տ. Յովհաննիսեանի . . . 56
8. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՍԻԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ,
յօդ. Կալամիի, Թարգմ. * Մ. . . 75
9. «ԴԱՐԴԻ՝ ՍՐՏԻՍ», բանաստեղծ. Ա.Լ. Իսահակեանի . . . 95
10. ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ, Կուրբաս-Հարունի . . . 96
11. ԱՇՈՒՂԻ ԵՐԳԵՐԻՑ, Ալ. Ծառուբեանի . . . 104
12. ԱՆՀԱՇՏԸ, պատմուածք Շահիարի . . . 106
13. Մ. ՊԵՇԻԿՈՒՇԼԵԱՆ, քննադատական փորձ, Գ. Ալ-
բունեանի . . . 123
14. ՄԱՏՆԱԽՍՈՒԹԻՒՆ.—35) Յ. Արարաթեան՝ «Մայրենի լե-
զու», Հար. 36) V. Guinet; „La Turquie d'Asie“, Ե. Թ.
37) Զիյինկարեան և Ռաշմանեան, «Ելէքտրականութիւն»,
ՌԲ.—38) Ալ. Ծառուբեան, «Արձակ բանաստեղծու-
թիւններ» Տուրքիայի, Տ. Ե. . . 142
15. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, Արհեստագիտութիւնը Պարս-
կաստանում, Յ. Կաբախեանի . . . 151
16. ԳԱԻԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ, Քահանայական ժողովներ Ա-
խալքալաքում և «զլխաղինը» վերայնեղու-
հարցը, Սալիւմեանի . . . 160
13. ԳԵՂԱՐՈՒԵՍԻ ԱՇԽԱՐՀԻՑ.—«Խորատուգում զանգը» Հա-
ուպոմանի.—Հիւսիսի միտքը.—Ի՞նչ է ուղում առել
Հաուպոման իր պիէսայով.—Հաուպոման և Նիցշէ.
—«Տօնածառ» Նեմիրովիչ-Գանչենկօի և «Աչ մի լուպէ

Հանդիսող չունեմ՝ Մեասնից կու.—Տրիլբի՝ Գէի.—Հրէական ազգի ողին.—Օտարներ՝ Պատապենկօի.—Նիւթապաշտական, գործնական ողին մեր յուսած՝ և զգեր՝ ժամանակում.—Ուրիշ Եկօստա՝ Գուցկօվի.—Օտելլօ, Շէքսպիր և հայ բեմը.—Պ. Նարա-Մուրալի կօնցերաը, Ս.	164
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մի պարագոքս անհատի և ժողովրդի մէջ.—Երկու հիմնական ուղիարհացեցողութիւն.—Մեր ինտէլիգէնտների երեք կատեգորիան.—Գարբիէլ՝ Միր-զօյեանց.—Թիֆլիսի քաղաքացիին խորհրդարանի նոր կազմը.—Բազուի քաղաքագլուխը և զուման.—Basy՝ լրագիրը.	183
Պ ա շ տ օ ն ա կ ա ն հ ա ղ ո ղ ա զ ր ու թ ի ն ն ե թ	190
19. ԷՄԻԼ ԶՕԼԱՆ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԸ, Ա. Ահարոնեանի .	194
20. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Մաքուային սակագների քննութիւնը ռայխստագում.—Մեծամասնութեան և փոքրամասնութեան պայքարը.—Ձեխերի և գերմանացիների անտագոնիզմը.—Աւստրիայի և Ունգարիայի չարաբերութիւնները.—Կրուպկի մահը	203
Պ օ լ ս ի թ ե թ թ ե թ թ ե թ թ	210
21. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ	218
22. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ, ԿՈՂՄԻՑ	224
23. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	—
24. 2-րդ ՅԱԻԼՈՒԱԾ «Մուրճի», Բրես Հաւս «Ինքնապաշտ» Եւ ուր տարի առաջ, Թարգմ. Սո. Լիսիցեանի 1—32	

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը՝ յատուկ խնդրում է յօդուածագիրներէրից՝ զրեւ պարզ, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:
2. Չընդունուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնուում: Ձեռագիրը չեղ ասանալու համար պէտք է ուղարկել ճանապարհամարում:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. Մուրճի՝ համարը չը ստացուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև չաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պօստային գրասենեակի՝ հաւաստագիրը (удовѣреніе), որ ամապրի համարը չի լանձնուած զանպատառին:

Կ Ե Ա Ն Ք Ի Դ Ա Ս Ը

«Ես սիրում եմ վեհաթիւնը մարդկային տանջանքի».
ԱլԳԵԷԿ-ՊԵ-ՎԻՏԻԷ

I

Մենք նոր աւարտել էինք համալսարանը, ես և ընկերս՝ երկուսով էլ բժիշկ. տարիների յամառ աշխատանքներս վերջապէս պսակուեց յաջողութեամբ, մենք նորաւարտ բժիշկներ էինք: Այս միտքը մեր սիրտը լցնում էր և՛ հրճուանքով և՛ հպարտութեամբ. կեանքը մեր առաջ բաց էր, ապագան ժպտուն, վայելքների մի շարք:

Մի փոքր հանգստանալու և մեր ապագայ անելիքի մասին մտածելու համար, մենք երկուսով էլ իմ հայրենի քաղաքը եկանք: Ընկերս տեղաւորուեց մի աժանագին հիւրանոցում, իսկ ես ծնողներիս մօտ:

Յաջորդ օրը, երբ ես ընկերոջս տեսութեան գնացի, առաջին բանը որ աչքովս ընկաւ, դա նրա դրան վրայ կպցրած այցկարտն էր՝ «բժիշկ Արաքսեան»: Ինձ էլ բան պէտք էր, «բժիշկ Արաքսեան» պոռալով ներս ընկայ սենեակ: Նա մի փոքր կարմրեց, ժպտաց, ապա ձեռքերը չփեց դռնութեամբ:

—Հը, մեր տղայ, լաւ ես շտապել:

—Շտապել, ինչո՞ւ, միթէ մենք այժմ բժիշկ չենք, պատասխանեց նա մի առանձին ինքնաբաւականութեամբ:

—Բժիշկներ ենք, միայն իմ դրան վրայ այդպիսի այցկարտ չը կայ, և ես կարողացայ ընել այս գիշեր, իսկ դու, ինչպէս երեւում է, չէիր կարող առանց դրան ընել, պատասխանեցի ես ծիծաղելով:

—Հանաքով ասացիր, բայց հաւատացած եղիր, որ ես վաղուց այնպէս հանգիստ չէի ընել, ինչպէս այս գիշեր ընեցի:

—Եւ երազներ էլ տեսար:

—Եւ երազներ էլ տեսայ:

—Սիրուն, գրաւիչ երազներ:

—Օ, չափազանց գրաւիչ:

—Ծիշտ այնպիսի երազներ, որոնց մասին այնքան խօսում էիր ուսանողութեանդ ժամանակ և որոնց հասնելը քո կեանքիդ նպատակ ես ընտրել, հարուստ աղջիկ, չքեղ տուն, կառք:

—Ծիշտ այդպիսիները՝ հարուստ աղջիկ, չքեղ տուն, կառք:

—Ուրեմն այն բամիները դեռ գլխիցդ չեն դուրս եկել,

—Քամիներ, խեղճ, վրայ բերեց նա այս անգամ կատարեալ լրջութեամբ, բամիները քո գլխիումն են, եթէ կամենում ես, իսկ ես տեսնում եմ կեանքը, ինչպէս որ նա կայ, ինչպէս եղել է, և պիտի լինի: Ես ապրել եմ ուզում, դա իմ իրաւունքն է, ինչպէս և ամենի իրաւունքն է: Երբ ես տարիների ընթացքում չան պէս չարչարում էի, պանիր ու հացով էի կերակրում, անքուն գիշերներ անցկացնում հաստ հատորների վրայ, հնացած դիակներ կտրատում և քրքրում, այդ իմ դժոխային կեանքի շրջանում ես ոչ ոքից պահանջ չունեցայ, ոչ ոք ինձանով չը հետաքրքրուեց էլ, իրաւունք ունէին, այժմ էլ հերթն իմն է և ես պիտի ապրեմ, պիտի ապրեմ: Դրա համար եմ չարչարուել, դրա համար եմ սովորել: Չարիք չեմ անի ոչ ոքի, անազնուութիւն չեմ անի երբեք, կը բռնկեմ՝ դա իմ

պարտքն է, վարձ կը վերցնեմ՝ դա էլ իմ իրաւունքն է. ահա իմ՝ բարոյական սկզբունքները:

— Իսկ, եթէ մարդը մեռնում է և չի ուզում փող տալ, բժիշկ կանչել, որովհետեւ տգէտ է, բժշկութեան մասին հասկացողութիւն չունի, կամ եթէ ուզում է բժշկուել, հասկանում է բժշկութեան արժէքը, բայց միջոց չունի:

— Փոյթս չէ, թող մեռնի, ուրիշ կերպ չի էլ կարող լինել, կեանքն այդպէս է. կամ ես պէտք է ինձ զոհ բերեմ այդպիսիներին, կեանքս դարձնեմ անվերջ դառնութիւնների, չը գնահատուած զոհերի մի շարք և ոչնչանամ առանց ապրելու, կամ նրանք պիտի ջախջախուեն կեանքի անողորմ, անխուսափելի չարիքի առաջ: Ընտրութիւնը դժուար չէ, ես ապրել եմ ուզում, ինչպէս ամեն մի էակ տիեզերքի վրայ ապրել է ուզում: Հասարակական պիրամիդի շերտերում պայքարը եռում է. անհատներ ու դասակարգեր աշխատում են վեր բարձրանալ, ոմանք մնում են իրանց նոր դրաւած տեղերում, ուրիշները վար են գլորւում, հզօրներն ապրում են, թոյլերը խեղդւում, արդարացնելով «վա՛յ յաղթութեամբին» ասացուածքը: Ասա, ինչ ուզում ես, բայց կեանքն այսպէս է, կռիւ, կռիւ...

— Թող այդ, ընդհատեցի նրան, դա շատ հին երգ է, և դու հարիւրաւոր անգամ կրկնել ես քո այդ վայրենի թեօրիաները, մոռանալով՝ որ փիլիսոփայութեան վերջին խօսքը քեզ չի սլատկանում բարեբաղդաբար:

— Լաւ, կը թողնեմ, բայց այն ժամանակ դու էլ խօսք տուր դադարեցնել այս վէճը, որ սկսում է ձանձրալի դառնալ, որովհետեւ շատ հին վէճ է և ոչ մի օգուտ չունի, հաւատացնում եմ քեզ, քո փաստերն անզօր են փոխել իմ հայեացքները կեանքի վրայ: Խօսենք ուրիշ բաների մասին:

— Թող այդպէս լինի, պատասխանեցի ես:

Արդարեւ, դա մի շատ հին վէճ էր: Ընկերս մի յաճաա նիւթապաշտ էր, և ամենից շատ հետաքրքրւում

էր այդ նիւթապաշտական դպրոցի փիլիսոփաներով, այնտեղից էլ քաղել էր իր կեանքի բարոյական սկզբունքները: Տարիների ընթացքում անթիւ անգամ մենք վիճել էինք, երբեմն նոյն-իսկ խռովել իրարից: Նա ծաղրել էր իմ աւտրուիստ դադափարները, ինձ անուանել էր ֆանտազիօր, ես նրան անուանել էի կարիւրիստ, աֆերիստ, նիւթապաշտ. խռովել էինք իրարից, բայց կրկին հաշտուել, կրկին մնացել լաւ ընկերներ: Վէճ յարուցանողը միշտ ես էի լինում, յարձակում էի առաջինը ես, և դա իր պատճառն ունէր. ինձ միշտ թւում էր, թէ ես պիտի յաջողեցնեմ նրա գլխից հանել այնքան չոր նիւթապաշտական դադափարները և անվերջ փորձեր էի անում, ընկերական մի անխղիւր կապով կապուած էի նրան. սիրում էի, որովհետեւ ինձ թւում էր, որ նրա սիրտը բարի է, շիտակ, և որ կեանքի դառնութիւններն են նրան այդպէս չարացրել, նրա մէջ թուլացրել, բայց ոչ իսպառ ջնջել, ազնիւ զոհեր բերելու ձգտումները: Եւ արդարեւ, նա խիստ շատ էր տանջուել մինչեւ աւարտելը, իր բոլոր ջանքերը մի ուր և է նիւթական նպաստ ստանալ ուսման ընթացքում, ապարդիւն էին անցել և այժմ կ'ասես հաշիւ էր պահանջում կեանքից իր քաշած նեղութեան, իր կրած խեղճութեան համար:

Սակայն իմ ջանքերն ըստ երևոյթին իզուր անցան: Եւ սա վերջին անգամն էր, որ ես նրա հետ վիճեցի նոյն խնդրի մասին: Թողեցի, որ կեանքը ինքը ասի նրան այն, ինչ ես աշխատում էի հասկացնել: Այնուհետեւ ամեն անգամ երբ ես գալիս էի նրան այցելութեան, բարձրաձայն կանչում էի դռնից «բժիշկ Արաքսեան» և ապա մենք սկսում էինք խօսել բոլորովին այլ նիւթերի մասին, ծիծաղում էինք, զուարճանում և բաժանւում:

Մեր կեանքի այն շրջանն էր, երբ մարդ ոչ ուսանող է, ոչ ազատ, հասուն մարդ: Դեռ սենեակը անկարգ, ծխով լի, դեռ սեղանի վրայ լիմոնի և պապի-

րոտի կտորներ, դեռ թէյի բաժակները այս ու այն կողմ գրքերին խառն, անկողինը ճմռուած, շորերը թափթփուած, խօսակցութիւնը զուարճալի, հանաքները՝ անվերջ։ Հին հոգսերից, քննութիւնների անցնելու դժուարութիւններից պրծած, նոր կեանքի հոգսերին, դառնութիւններին անծանօթ, կամ երիտասարդ ոյժերի, կարողութեան վրայ վստահ հեղնութեամբ, հպարտութեամբ ապագային նայելով՝ մենք անց էինք կացնում մեր կեանքի այդ անցողական շրջանը։

Լաւ օրեր էին։

Մի անգամ, երբ մենք դարձեալ ուրախ ուրախ խօսում էինք, յանկարծ հարեւան սենեակից լսուեց մի մանկական ձայն, որ կարդում էր գիրկապ անելով։

«Բը-ա-դը, բադ. բը-ա-շը, բաշ. բը-ու-ն, բան։

—Ո՛չ, բը-ու-ն, բուն, ուղղեց երեխայի սխալը մի այլ հաստ ձայն, որ ըստ երեւոյթին դասատուի ձայնն էր։

—Բը-ու-ն-բուն, շարունակեց երեխան. տը-ու-ն, տուն. —լաւ է, այժմ դու ասա, Շնչիկ։

—Շը-ու-ն,շուն, սկսեց մի այլ աւելի բարակ մանկական ձայն, նը-ու-շ, նուշ. ու-շ, ուշ. նուշ ու շուն։

—Լաւ է, Շուշիկ, դու էլ ես լաւ սովորել, վրայ բերեց նոյն հաստ ձայնը։ Ապա նա սկսեց նոր դաս տալ, թէ մէկին և թէ միւսին, կրկնեց, երեքկնեց դասը, և դուրս ուղարկեց։

Մենք երկուսով էլ, մեզ անհասկանալի մի պատճառով, ամեն բան թողած, ուշի ուշով լսում էինք, ինչ որ կատարւում էր բարակ պատի միւս կողմում։

Քիչ յետոյ, մենք տեսանք, թէ ինչպէս մէկը դուրս եկաւ հարեւան սենեակից, անցաւ մեր լուսամուտի առաջից։ Դա երեւի դասատունն էր. մի երիտասարդ մարդ, խունացած վերարկուով, որ նա խնամքով կոճկել էր վերից վար և կարծես մրսում էր, թէեւ աշնանային տաք օրեր էին, գլխարկը խորը քաշած ճակատին՝ դէմքի պրօֆիլը հազիւ տեսանք, դա մի գունատ, նիհար երիտասարդ էր։ Նա անցաւ, իսկ հարեւան սե-

նեակում ձայները չը դադարեցին. երկու մանուկներն այժմ սովորում էին, իրար օգնում. կը-ա-տը-ու, կա-տու. կը-ա-շ-ի, կաշի. ասում էր մէկը, կը-ու-տ, կուտ. ասում էր միւսը. երբեմն էլ երկսի ձայները խառնում էին իրար, և էլ ոչինչ չէր հասկացում, բայց մենք չարունակում էինք լսել լուռ, խորասուզուած...

Օրեր անցան, նոյն ձայները, համարեա միեւնոյն եղանակով, մօտաւորապէս միեւնոյն ժամերին լսում էին հարեւան սենեակից. պարզ էր, որ մէկը կանոնաւորապէս դաս էր տալիս երկու մանուկներին: Միակ փոփոխութիւնը, որ նկատում էր, այդ այն էր որ ուսուցիչը օր աւուր աւելի և աւելի էր հազում, և շատ անգամ ստիպուած էր ընդհատել իր արտասանած վանկերը իր չոր հազը դադարեցնելու համար, ապա կրկին սկսում էր նոյն համբերութեամբ, կրկնում էր, սովորեցնում էր, յետոյ դուրս գնում, թողնելով որ երեխաները թոթովեն իրանց դասերը:

Կամաց կամաց մենք ընտելացանք այս բոլորին. էլ չէինք ականջ գնում, երբեմն էլ նոյն-իսկ սրախօսութիւնների առարկայ էինք դարձնում՝ երեխաների թոթովանքը, նրանց արտասանութիւնները, կամ ուսուցչի այս ու այն խօսքը. օրինակ՝ «Շնչիկ, դու խելօք ես, Գարեգինը այսօր խելօք չի», կամ, «Ձեր երկուսին էլ սիրում եմ, երկուսդ էլ խելօք էք»: Եւ ուսուցիչն այս խօսքերն արտասանում էր այնպիսի հայրական քնքշութեամբ, որ անհնարին էր ուշք չը դարձնել: Շուտով այդ էլ մեզ ձանձրացրեց, մենք չը գիտէինք, ո՞վ է այդ ուսուցիչը, նոյն-իսկ մոռացութեան տուինք նրան, լուսամուտի առաջից անցնելիս չէինք էլ նայում վրան:

Այսպէս անցան մի քանի օրեր և շաբաթներ: Բայց վերջին օրերը, երեխաների ձայնն էր լսում միայն, ուսուցիչն այլ եւս չէր անցնում լուսամուտի առաջից, և նա էլ դաս չէր տալիս, այլ հազում էր...

II

Այն օրուանից, երբ տեղի ունեցան պատմութեանս նիւթը կազմող դէպքերը, տասնեակ տարիներ են անցել, բայց ես դեռ յիշում եմ բոլորը ամենայն մանրամասնութեամբ. և դա առանց պատճառի չէ։ Մարդիկ չեն մոռանում իրանց մանկութեան յիշողութիւնները, կեանքի արշալուսին ամեն մի երեւոյթ, ամեն մի դէպք ոչ միայն նոր է, հապա և զարմանալի է մանկան համար և խորը կերպով ազդում է նրա կոյս մտքի, երեւկայութեան վրայ, յաւիտեան չը ջնջուելու համար։ Իմ կեանքի երկրորդ շրջանի արշալոյսին ես էլ մի մանուկ էի, մի հասակ առած մանուկ, որ զարմանքով էր տեսնում աշխարհը, մարդկանց, կեանքը իր չար ու բարի կողմերով և որքան շատ բան կար անծանօթ, զարմանալի։ Սակայն այդ բոլոր նորութիւններից, բոլոր ուշադրաւ երեւոյթներից ոչ մէկն այնպէս չը ցնցեց իմ երեւակայութիւնը, ոչ մէկն այնպէս խորը չը տպաւորուեց իմ մտքում, որքան իմ ընկերոջ բժ. Արաքսեանի մէջ տեղի ունեցած զարմանալի հոգեկան փոփոխութիւնը։ Դա մի դէպք չէր, այլ մի ամբողջ աշխարհ, մի ամբողջ կեանք, մի անծանօթ՝ բիշ հասկանալի կեանք, որ յանկարծ բացուեց իմ առաջ։ Ես . որ կարծում էի շնորհիւ իմ դիպլոմի ամեն բան իմանալ, ամեն ինչ հասկանալ, բացատրել, լուծել, յանկարծ ինձ զգացի աշակերտի, ամենատեղէտ, թոյլ աշակերտի կացութեան մէջ։

Այն օրը, լաւ յիշում եմ, մնայլ թխպոտ անձրևային օր էր։ Բանաստեղծներն իրանց պատկերաւոր նկարագրութիւնների մէջ սիրում են արտաքին բնութեան և մարդկային հոգու պատկերների մէջ տխուր, կամ ուրախ զուգադիպութիւն գտնել։ Սակայն այդ օրուայ մնայլը բոլորովին համապատասխան չէր իմ սրտին. բնութիւնն ասես սգաւոր էր, արտասուում էր մօտա-

լուտ ձմրան երկիւղից, իսկ ես ուրախ էի և սիրտս լի հրճուանքով: Տէր Աստուած, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, մի ամիս չը կար աւարտել էի, և արդէն լաւ պաշտօն ունենալու բաւական դրական յոյսեր կային:

Եւ այսպէս ես գնում էի ընկերոջս մօտ մտմտալով իմ ապագայի մասին: Ես ընկերոջս պէս նիւթապաշտ չէի, իմ բոլոր երջանկութիւնը կայանում էր իմ փառասիրութեան մէջ. ես ուզում էի պաշտուել այն զոհերի գնով, որ ես պատրաստ էի յանձն առնել ժողովրդի համար: Ես ուզում էի, որ իմ մասին ապագայում գրեն, խօսեն, պատմեն, որ ինձ մատով ցոյց տան, երբ անցնելու լինեմ փողոցներով, իսկ այսքանի համար ես պատրաստ էի լուսամուտից վայր նետուել գլուխս փչրել: Մտածելով այս բոլորի մասին, ես երբեմն ընկնում էի հըստաղի մէջ, զգում էի, որ ընդունակ եմ ամենախելագար զոհողութիւններ յանձն առնել, անկեղծ էի ոգեւորութեանս րոպէներում, և վէճերի ժամանակ իմ խօսքերը հնչում էին ուժով, համոզիչ շեշտով: Ընկերներս ինձ ալտրուիստ էին համարում. այդ ածականը ես ընդունում էի հպարտութեամբ, և հաստատ որոշել էի, կեանքի մէջ էլ փառքով կրել:

Ես երեւակայում էի, թէ ինչպէս կը մտնեմ կորած, մոռացուած խրճիթները, մութ նկուղները, թէ ինչպէս կը սրբեմ այնտեղ ցաւերի մէջ տառապողների արցունքները իմ բժշկական հմտութեամբ, և իմ նիւթական զոհերով և երբ դուրս գնալու լինեմ, ինչպէս կը լսեմ յետևիցս աղօթքի և օրհնութեան մրմունջներ. օ, դա մի ամբողջ երանութիւն էր ինձ համար:

Եւ ուրիշ շատ լաւ բաներ էի մտածում ես, երբ հասայ ընկերոջս բնակարանին: Արդէն պատրաստուում էի ըստ իմ սովորականին «բժ. Սրաքսեան» գոռալով ներս ընկնել, երբ ականջիս հասած մի ձայն ինձ ստիպեց սառած կանգ առնել:

— «Կը-ու-տ, կուտ. կը-ա-չը-ի, կաչի». նոյն մանկական ձայները, որ սովորաբար միշտ լսում էին հարե-

ւան սենեակից, բայց ինչ որ ինձ ապշեցրեց այսօր, այդ այն էր, որ այս անգամ ձայները դալիս էին ընկերոջս սենեակից, բժիշկ Արաքսեանի սենեակից:

Երեւոյթն այնքան տարօրինակ էր, որ ես մի րոպէ կարծեցի թէ լսողութիւնս ինձ խաբում է, և թէ գուցէ ես սխալմամբ հարեւան սենեակի դրան առաջ եմ գուրս եկել: Բայց անկարելի էր, դրան վրայ շատ պարզ երեւում էր իմ հանաքների և հեգնութեան մշտական առարկան, այցկարաւ «բժիշկ Արաքսեան». ես ինքս ինձ համոզելու համար ականայ նոյն-իսկ կարդացի՝ «բժիշկ Արաքսեան»: Յետոյ մտածեցի, թէ մի գուցէ երեխան կարդում է հարեւան սենեակում և ես այստեղ ձայնն եմ լսում, մտեցայ կամացուկ, ականջս դրի ընկերոջս դրան կողպէքի վրայ, ոչ մի կասկած չը կար, «կը-ու-չը-տ, կուշտ, կը-ա-չը-ի, կաշի. պարզ և որոշ լսում էր մանկական ձայնը ընկերոջս սենեակից»: Այնուամենայնիւ ես բոլորովին չը համոզուեցի, և դուռը հրեցի ներս մտայ: Եթէ այդ վայրկեանին բժիշկ Արաքսեանը յանկարծ մի մահակի հարուած իջեցնէր գլխիս, գուցէ ես այնքան չը զարմանայի, որքան զարմացալեց ինձ տեսածս, և ես սառած մնացի դրանը կպած, առանց առաջանալու, առանց մի բառ ասելու և նստում էի: Ընկերս նստել էր սեղանի առաջ, իր երկու կողմում տեղ էին բռնել երկու երեխաներ, մի եթ տարեկան աղայ և մի ինն տարեկան աղջիկ, գանգրահեր գլուխներով: Երկու փոքրիկ գեղջուկ գէմբեր էին, վախվխելով, անվստահ նայեցին ինձ և կրկին գլուխները քաշ ձգեցին իրանց փոքրիկ դրբերի վրայ՝ կրկնելով իրանց անվերջանալի վանկերը. «կատու, կաշի, շամամ»: Բժիշկը լուրջ, հանդիսաւոր գէմբ ունէր, նա վերեւ նայեց, հազիւ ձեռքով ինձ նշան արաւ, որ նստեմ և շարունակեց:

—Շնչիկ, այժմ դու կարդա:

«Կատու, կաշի, շամամ» շարունակեց երեխան: Չը նայելով նրա հրաւերին, ես նստել չը կարողացայ, ևս ապշած էի, ծիծաղել չէի համարձակւում, պատկերի

լրջութիւնն ինձ կաշկանդել էր, հարց տալ, խօսել նոյնպէս սիրտ չէի անում, վախենում էի խանգարել, իսկ նստելու մասին չէի էլ մտածում, ես ապշել էի, սառած մնացել իմ տեղում, դիտարկը ձեռքիս, աչքերս չռած նայում էի այս պատկերին, նայում էի և էլ չէի մտածում. երազ էր...

Որչափ մնացի ես այսպէս կանգնած չեմ յիշում, միայն երբ բժիշկը վերջացրեց դասը, երեխաներին դուրս ուղարկեց խաղալու, նրանք մտեցան դրանը դրբերը ձեռներին, այն ժամանակ միայն. ես հեռացայ դռնից:

— Զարմացած ես, այնպէս չէ, ասաց բժիշկը երեսիս ժպտալով:

— Զարմացած... դու այն աստ խելքդ տեղն է, նախորդ գիշեր քեզ հետ մի բան չի պատահել:

Պատասխանի փոխարէն նա մի պինդ ծիծաղեց, ապա մի առ ժամանակ երկսով էլ լուռ կացանք:

— Լսիր, դարձաւ նա ինձ, երբ ես տեղ բռնեցի նրա դէմ ու դէմ շարունակ հարցական հայեացքս իր դէմքին ուղղած, լսիր ինձ և մի զարմանար: Երբ այնտեղ, համալսարանական նստարանի վրայ դու և քո խելքի, քո սկզբունքների մարդիկ խօսում էիք ժողովուրդից, նրա ցաւերից, խօսում էիք ալտրուիզմից, ծրագրում էիք ձեր անձնազոհ գործունէութիւնը. գիտակ էիք համարում ձեզ կեանքի համար, պատրաստուած նրա ձախորդութիւնների դէմ գնալու, նրան ընկճելու ձեր բարոյական ոյժով, ձեր անձնուիրութեամբ, դուք բոլորդ էլ սուտ էիք խօսում առանց իմանալու, դուք իլլիւզիաների մէջ էիք, դուք անկեղծ էիք լուպէապէս: Ձեր դիմացկանութեան, ձեր անկեղծութեան, ձեր անձնազոհութեան յարատեւութիւնը կեանքը միայն կարող է ապացուցանել, հաստատել, բայց դուք իրաւունք էիք համարում ձեզ արդէն հասարակական անձնազոհ գործիչներ համարել, իսկ ինձ մատերիալիստ, կարրիերիստ: Իսկ երբ ես պնդում էի, որ ինձանից դուրս աշխարհը

գոյութիւնն չունի ինձ համար, որ ես աչքերս կը փակեմ աշխարհի ցաւերի առաջ, կը քաղեմ վարդերը, խոյս տալով փշերից, ես էլ անգիտակցաբար սուտ էի ասում, և մենք բոլորս էլ երեխաներ էինք: Աշխարհը, կեանքը ոչ դուք էիք ճանաչում, ոչ ես, այժմ էլ չենք ճանաչում, և դեռ յայտնի չէ, թէ երբ կը ճանաչենք և երբոր ճանաչենք, ինչ կը շինենք: Բայց ուզում ես, ես րեղ ցոյց տամ: Թէ ով է ճանաչում աշխարհ, ով է առանց աղմուկի լուծել ձեր բոլոր թէօրիաները, ով է մոռացութեան, խաւարի, թշուառութեան, ապերախութեան մէջ իմ նիւթապաշտութեան հիմքերը քանդել, և առանց աղմուկի գծել մի ճանապարհ, որով հազիւ թէ մենք գնալ համարձակուենք, այն անտիճան փշոտ է նա, այն անտիճան դժուարագնաց է. ասա, ուզում ես տեսնել այդ մարդուն:

— Ես քեզ չեմ հասկանում:

— Ձեռն հասկանում: Լաւ, ես կ'աշխատեմ առանց հանելուկների խօսել: Քանի՞ օր է, որ դու չես եկել ինձ մօտ:

— Երեք օր է կարծեմ:

— Կարճ ժամանակ է, Տէր Աստուած, բայց այնքան շատ ապրեցի: Դու շատ ծաղրեցիր իմ դրանք կպցրած այդ կարտը, լսիր, այժմ, թէ նա ինչ թանկագին ծառայութիւն մատուցեց ինձ:

Հարեւան սենեակում ապրողը մի գիւղական ուսուցիչ է այն մարդկանցից մէկը, որոնց մենք սովոր ենք «վարժապետ» կէս հեգնական, կէս արհամարհական բառով կնքել. վերջին օրերս դու նկատեցիր, որ նրա դասախօսելու ձայնն այլ ևս չէր լսում, նա միայն հաղում էր: Նա հիւանդ է, պառկած, և առանց օգնութեան, առանց ծանօթների, առանց միջոցի: Ի՞նչ լաւ, որ նա իմ այցկարտից մի օր իմացել է, որ իր հարեւանը՝ ես բժիշկ եմ:

Երկու օր առաջ նստած էի սենեակումս, երբ դուռս կամացուկ բացուեց, և չեմքի վրայ յայտնուեց

այն փոքրիկ աղջիկը, որին քիչ առաջ տեսար ինձ մօտ։ Նա մտաւ և կանգ առաւ, գլուխը բաշ ձգեց ու մնաց. Տէր Աստուած, այն ինչ դէմք էր, ո՞վ, ո՞ր հոգեբանը, ո՞ր բանաստեղծը, ո՞ր նկարիչը կարող է նկարագրել մի մանկական դէմք, ուր գծագրուած են անմեղութիւն, երկիւղ, վիշտ, յուսահատութիւն և բոլորը միասին կազմում են մի այնպիսի խառնուրդ, մի այնպիսի պատկեր, որի առաջ մարդ ակամայ գլխարկը պիտի հանի, ասես աստուածութիւնն է ուղարկել իր հրեշտակը բեզ ասելու ինչ որ մոռացուած ճշմարտութիւններ։ Ի՞նչ արժեն այդ պատկերի մօտ քո բոլոր ճառերը, բոլոր պերճախօսութիւնները, բոլոր փաստերը, որոնցով դու աշխատում էիր ջրել իմ նիւթապաշտ թէօրիաները, աշխատում էիր ինձ ալտրուիստ դարձնել։ Այ, հոգիս, դժբաղդ մանկան արցունքի մի կաթիլը աւելի համոզիչ, աւելի յուզիչ է, քան ամենահանճարեղ, ամենապերճախօս բարոգները հիմնուած անհերքելի փաստերի վրայ։

Շուշիկը, այսպէս է նրա անունը, նայեց ինձ վախժիւնելով, երկու կաթիլ արցունք կար կախած սիրուն, անմեղ աչքերից։

— Հ ա յ Ր Ի Կ Ս Հ Ի Լ ա ն դ է, ասաց նա և հեկեկալով ծածկեց երեսը։

Մի սառը բան անցաւ մարմնովս, ես դողացի, հասկանում ես, ես դողացի այդ խեղճ, այդ թոյլ, դողդոջուն արարածի առաջ։ Ինչո՞ւ դողացի, ես խօսմ պինդ ներվեր ունեմ. դու այդ գիտես, ես մինչև այժմ էլ չեմ կարողանում հասկանալ, թէ այն ի՞նչ սարսուռ էր որ անցաւ իմ մարմնով։ Ես լուռ վեր կացայ մօտեցայ երեխային, նա վախենալով էր նայում ինձ, ես շոյեցի գլուխը, չը գիտեմ ինչ ասացի, կարծեմ բան էլ էլ ասացի, նա սրտապնդուեց, վերեւ նայեց. ես համոզուած եմ, որ արտասուող հրեշտակը այդպէս կը նայէր իր արցունքի միջից, ես չը կարողացայ համբերել, բռնեցի այն սիրուն դանդաղահեր գլուխը, համբուրեցի և կրծքիս սեղմեցի պինդ, պինդ. օ, ես դեռ

երբէք, երբէք այնպէս չէի համբուրել մէկին: Ես առաջին անգամ կեանքում համբուրեցի աշխարհի վիշտը, մերձաւորի ցաւը սրբազան, այդ անմեղ դէմքի վրայ:

Քիչ յետոյ ես հիւանդի մօտ էի:

Նա էր ուղարկել ինձ մօտ երեխային: Հիւանդանալով անյուսութեան և անտէրութեան մէջ, նա մնում է մի առժամանակ առանց խնամքի. ի վերջոյ որոշում է գիւմել անժանօթ բժշկի օգնութեանը:

Ահա երբք օր է, որ ես անց եմ կացնում նրա մօտ ամբողջ ժամեր: Դաւառից, գիւղերից է գալիս, էլ պաշտօն չունի, էլ դպրոց չը կայ, եկել է պաշտօն գտնելու համար:

Ուրբան բան ասաց ինձ. ինչե՛ր նկարագրեց, որքան է ապրել այդ մարդը: Խօսում է նա... ձեզ պէս չի խօսում, ընկեր, նա չի երեւակայում, նա չի գեղեցկացնում, նա միայն ասում է մերկ, կոպիտ ճշմարտութիւնը, ցաւեր է պատմում, որոնց առաջ ոչինչ են ձեր բոլոր ճոռոմարանութիւնները: Չէ, մենք ոչինչ չը գիտենք:

Նուրծքն է հիւանդ խեղճի. ես արեցի, ինչ որ կարող էի, նկատելով որ նա սաստիկ ցաւում է երեխաներին՝ դաս տալ չը կարողանալու համար, յանձն առայ պարապել, մինչեւ որ ինքը կը վեր կենայ, ասացի նրան, բայց հազիւ թէ... Իմ առաջարկութիւնը նրան անչափ ուրախացրեց:

III

Մի ողորմելի սենեակ էր, ուր ներս տարաւ ինձ ընկերս. մի անկողին, երեք ողբալի աթոռներ և մի սեղան, ահա բոլոր կարասին:

Մի մաշուած դէմք հազիւ ծրագրւում էր բարձի սպիտակութեան վրայ, և վերմակի տակ մի նիհար, ոսկրացած մարմին: Խոր ընկած աչքերը հազիւ էին նշմարւում, իսկ նիհար այտերը մի անախորժ, հիւանդոտ կար-

միութիւնն ունէին: Թաւ, երկար և սեւ մաղերը անհոգ ոլորներով բոլորել էին կնճռոտ և դուրս ցցած ճակատը: Անխնամ ձգած միրուքը խճճուել և ծածկել էր չրթունքներն ու բերանը և ամբողջ դէմքը տանջանքի, յոգնածութեան կնիք ունէր վրան: Շատ ապրած դէմք էր այն, տարիներն անհետ չէին անցել վրայով: Մեղ տեսնելով նա ժպտաց մի տեսակ թախծալի մեղմութեամբ, և այդ ժպտով մի առանձին խորհրդաւորութիւն տուեց այդ թուխ դէմքին:

—Ընկերս է, նոյնպէս բժիշկ, ասաց բժիշկ Արաբսեան ներկայացնելով ինձ:

—Շատ և շատ ուրախ եմ թէ ձեզ և թէ նրա համար, ասաց նա անկողնի տակից՝ դուրս հանելով նիհար, ոսկրոտ ձեռքը և մեկնելով մեզ: Երկու բժիշկ, մի հիւանդ. չարունակեց նա ժպտալով նոյն թախծալի ժպտով, երկու խելքը մէկից լաւ է, այնպէս չէ. դուցէ կարողանաք կեանք տալ այս անկենդան մարմնին:

—Իդուր էք գանգատուում, ասաց ընկերս, այսօր դուք շատ լաւ էք երեւում, դէմքերդ շատ ախորժ արտայայտութիւն ունի:

—Իրաւունք ունէք. ճշմարիտ, որ այսօր լաւ եմ զգում ինձ. միայն այս հաղը... և ծանօթ, անախորժ հաղը կրկին ընդհատեց նրա խօսքը. բայց այդ էլ ոչինչ, չարունակեց նա, քանի տարի է, որ հաղում եմ: Ես այժմ այնքան լաւ եմ, որ կը նստեմ և մի քիչ կը խօսեմ, խօմ գիտէք, որ ուսուցիչները շատախօս կը լինեն, այդ նրանց արուեստն է, որ ի վերջոյ բնաւորութիւն է դառնում, և տարօրինակ էլ չէ, երբ մարդ խօսում է անընդհատ տասն և եօթ տարի:

—Մի՞թէ այդքան ժամանակ դուք միշտ ուսուցիչ էք եղած:

—Այո, միշտ, չարունակ, մի ամբողջ կեանք էր, այն էլ անցաւ, և չը գիտեմ մի բան թողեց յետեւից, թէ ոչ. օ, կեանքը շատ է հզօր, և մենք չափազանց թուլ, չափազանց քիչ, պէտք էր մի քանի տնգամ աւե-

լի տարել... մի բանի անգամ աւելի տանջուել դրական հետեւանքների հասնելու համար: Է՛հ, վերջապէս, թողնենք այդ, ինձ հետաքրքրողն այժմ այդ երկու երեխաներն են, որոնց ես այդպէս չէի կամենայ թողնել աշխարհում: Ո՛վ գիտէ, թէ ի՞նչ կարող է պատահել ինձ հետ, իսկ նրանք մայր էլ չունեն:

—Դեղն ընդունեցիք, հարցրեց Արաքսեանը:

—Ո՛չ, տուող չեղաւ: Ծուշիկը փորձեց չը կարողացաւ. ես էլ, է՛հ, էլ ոյժ չի մնացել:

Արաքսեանը գլուխը օրօրեց, մօտեցաւ, վերջրեց գեղի սրուակը, կաթեցրեց գդալի մէջ, և քնքշութեամբ բարձրացնելով հիւանդի գլուխը, դեղը խմացրեց:

Հաղը վերսկսուեց, հիւանդը թուլացած՝ ընկաւ բարձի վրայ, մենք մնացինք անխօս, և նայում էինք: Ես խօսք չէի գտնում, իսկ ընկերս չը գիտեմ ինչո՞ւ էր լռում: Հիւանդը կամաց կամաց աչքերը փակեց և քնեց:

Մենք զգուշութեամբ դուրս եկանք, գնացինք ընկերոջս սենեակը, նստեցինք և շարունակում էինք լռել. խօսել չէր լինում: Երկսիս մտքերն էլ փոխադարձաբար իրար համար շատ էին պարզ, որպէս զի պէտք լինէր արտայայտուել:

Լռութիւնն ընդհատեց Արաքսեանը.

—Կը մեռնի, ասաց նա աչքերը մի կէտի յառած:

—Միթէ:

—Այո, կը մեռնի, և երկու որբերը...

—Անտէր, անտիրական կը մնան:

Ընկերս նայեց ինձ մի հայեացքով, որ ես լաւ հասկանալ չը կարողացայ, բայց որը լաւ չէր ինձ համար, ես կուզէի, որ նա այդպէս չը նայէր ինձ: Նա այսօր բոլորովին տարօրինակ էր. իմ տրամադրութիւնը բոլորովին այլ էր, երբ նրա մօտ եկայ, այժմ չը գիտեմ ինչո՞ւ նրա առաջ ես ինքս ինձ յաւ չէի զգում, ես որ այնքան տարիներ նրան խրատում էի երեխայի պէս. Արաքսեանն էլ չէր խօսում: Լռութիւնն ինձ խեղդում էր. ուստի վերկացայ, գլխարկս առայ և դուրս գնացի:

Այդ ամբողջ օրը ես թափառում էի, և չը գիտեմ ինչի մասին էի մտածում, բայց գիտեմ, որ բարձերի սպիտակութեան վրայ ծրագրուող այն գունատ պատկերը և ընկերոջս մոայլ գէմքն ինձ հետեւում էին քայլ առ քայլ: Գիշերն էլ լաւ չը քնեցի և միւս օրը վաղ առաւօտից կրկին հիւրանոց գնացի:

Պատշգամբի վրայ կանգնած էր Արաքսեանը, գըլուխը յենած սեանը և մոայլ հայեացքը դէպի հեռուն ուղղած: Դեռ երբէք ես նրան այդքան տխուր չէի տեսել: Ոտնաձայնս լսելով նա գլուխն ինձ դարձրեց և առանց դէմքի արտայայտութիւնը փոխելու, դարձեալ նախորդ օրուայ իշխողի տոնով ասաց.

— Աւելի վաղ կարող էիր գալ:

— Մեռաւ...

Պատասխանի փոխարէն նա բռնեց ձեռքիցս և ներս տարաւ հիւանդի սենեակը: Ուսուցիչը հոգեվարքի մէջ էր. երկու երեխաները նրա այս ու այն կողմում կըծկուած հեկեկում էին:

Արաքսեանը մօտեցաւ նրանց հանգստացնելու. հիւանդը բորբոքուած աչքերը դէպի նա դարձրեց, ապա նայեց արտասուող երեխաներին երկմբ, երկմբ և երկու կաթիլ արտասուքներ կախուեցին նրա կոպերից: Յետոյ ծածկոյթի տակից հանեց դողդողուն ձեռքը և մեկնեց դէպի փոքրիկները: Նա էլ չէր խօսում և մահուան համր լեզուով նրանց մեզ էր յանձնում: Արաքսեանը գրկեց երեխաներին, համբուրեց, հիւանդը տեսաւ այդ, հանգստացաւ կարծես, փորձեց ժպտալ մի նշան գոհունակութեան, բայց գունատ շրթունքները միայն ծամուեցին, աչքերը փակուեցին և անզօր, անկատար ժպիտը յաւիտեան սառեց նրա դէմքին:

Նա մեռաւ:

— Հայրիկ, հայրիկ, միմնջում էին որբերը և Արաքսեանը հեկեկում էր նրանց հետ, իսկ ես տեսարանի վեհութեան առաջ քարացած՝ կանգնել էի ինչ անելու

չ'իմանալով. յիշում եմ՝ սակայն, որ կ'ուզէի մօտենալ գրկել և համբուրել Արաքսեանին բացականչելով.

—Օ՛, ազնիւ հոգի՛, ինչ դժուար է եղել ճանաչել մարդկային սիրտը: Բայց դրա փոխարէն ես էլ դառն, դառն արտասուեցի:

Մի օր յետոյ չորս հոգի էինք հետեւում սայլի դադաղին, ես ու ընկերս երկու որբերի ձեռքից բռնած: Թաղումից վերադարձին Արաքսեանը որբերին իր սենեակում տեղաւորեց և երբ մի քանի օր յետոյ պաշտօն ստանալով ես եկայ նրան վերջին մնաս բարին աւելու, դրսից վերստին լսեցի երեխաների ձայնը «Բադ, նուշ, շուն...»

—Գնաս բարի, ասաց նա ինձ և շարունակեց դասը. Շնչիկ, դու կարգա՛:

—Իսկ դ՞ո՛ւ, դ՞ո՛ւ ի՞նչ ես անում, ո՞ւր ես ուզում գնալ:

—Ե՞ս... ես չը գիտեմ, ես էլ պաշտօն չեմ փնտռում, գնում եմ, երեւի մի կտոր հացը պակաս չի լինի, աշխարհը լայն է, ցաւերն անթիւ... Գնաս բարի...

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Դ Ա Ր Դ

(Նուէր Ա. Ա-ին)

Այ իմ ականք, գըրչի ականք,
Դըրչիդ դարդին վերջ չը կայ.
Ախ, երբ կ'անցնեն էս մութ ամպեր...
Ախ, երբ արեւօր կը գայ...

Վերն ու հեռուն—սեին տալիս,
Մեռանք սև օր քաշելով.
Էդ սև օրն ես դու էլ լալիս,
Կեանք ու գըրիչ մաշելով:

Մարդ քու ցուին չի դիմանում,
Յաւըդ մեծ է, սարի պէս...
Արտասոճնք է աչքից քամում,
Սըրտին պառկում, քարի պէս...

Եթիմ ազգի եթիմ որդի՝
Արտումդ հաղանքմի երազ...
Աշուղ դառել էրուած սըրտի,
Ձեռք ես առել դարդի՝ սաղ...

Ու երգում ես, ու էրում ես,
Ոնց խեղճ բըլբուլ սըգաւոր,
Որ չի տեսնում վարդի երես,
Լացով լըցնում սար ու ձոր:

Դո՛ւ էլ կարօտ կեանքի վարդին,
 Կեանքի գարնան, արևին,
 Քեզ տուել ես մեր ծով-դարդին,
 Էս անդարուն օրերին...

Այ իմ ախպեր, գըրչի ախպեր,
 Գըրչիդ դարդին ես զուրբան.
 Առաջ գընա յուսով, համբեր—
 Աստուած օրհնի՛ր քու ճամբան:

ԱԼ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ԻՆՉՈՒԻ ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԳԱԻԱՌ ԶԵՆ ԳՆՈՒՄ

Այս վերնագրում դրած հարցի մասին ես կուզեի մի երկու խօսք ասել. եթէ չեմ սխալում «Մուրճի» ընթերցողներին հետաքրքիր կը լինի բժշկի կարծիքը, այն բժշկի, որը հէնց այժմ էլ ապրում է գաւառում: Այստեղ միայն բժիշկների մասին է խօսքս *):

Ինչպէս յայտնի է, հիւանդութիւնները մեծ մասամբ առաջ են գալիս կեղտոտութիւնից և զանազան հակառողջական պայմաններից. ումը յայտնի չէ միւս հանգամանքն էլ, որ մարդու մաքրութիւնը և առողջապահութեան հասկացողութիւնը կախուած են նրա կրթութիւնից. նոյնը կարելի է ասել մի ամբողջ համայնքի, գաւառի, նոյն-իսկ և նահանգի մասին: Երեւակայեցէք, ընթերցող, այն գաւառի սանիտարական դրութիւնը, որտեղ գրեկ-կարգալ իմացողները ամբողջ ազգաբնակչութեան 0,40% են կազմում: Ամբողջ Շարուր-Դարալագեազ (Երևանի նահանգ) գաւառում, որ ունի մօտ 80,000 բնակիչ, կայ միայն 6 դպրոց, որոնց մէջ սովորում են 300 աշակերտ: Այն, միայն 300 աշակերտ: Միւս գաւառները (Երևան, Նահ.) չառ քիչ են զանազանում Շարուր Դարալագեազից: Իսկ կրթութեան պակասութիւնը, տգիտութիւնը, նպաստում է զանազան «պառանքների», «տիրացունքների» և «հէքիմների» զարգանալուն, որոնց բժշկութիւնը զանազան խտտերից, «մահլամներից», «նեո գնեղուց» և սրանց նման օյիններից հեռու չի անցնում:

Իմ կարծիքով, մեր գաւառը դեռ չի սովորել, չի ընտելացել համալսարանաւարտ բժշկի. մեր գաւառը դեռ չի ըմբռնել համալսարանաւարտ բժշկի կարեւորութիւնը: Դրա ամենագլխաւոր պատճառը տգիտութիւնն է:

Փաստեր, որքան կամենաք. գաւառի հայ հասարակու-

*) Համեմատիւ սոյն հարցի մասին «Մուրճի» 1901 թ. № 5 և 9-ում գրուած, նոյնպէս բժիշկների՝ պ. պ. Գ. Սարգսեանի և Վ. Տէր-Գրիգորեանի յօդուածները: Խմբ.

թիւնը աւելի յաճախ է դիմում բժշկի, քան թուրքը... զաւառի այն մեծ գիւղերը, որոնք մօտ են քաղաքին, օրինակ՝ Ղամառլուն, Աշտարակը և այլն աւելի շուտ շուտ են դիմում բժշկին, քան յետ ընկած տեղերը...

Տգիտութիւնն է պատճառը, որ գիւղական հասարակութիւնը ամեն կերպ աշխատում է վարչութիւնից ծածկել զանազան հիւանդութիւններ, երբ մի որ և է գիւղում տարափոխիկ հիւանդութիւն է երեւում, երբ այդ հիւանդութեան պատճառով այդ գիւղն է գալիս զաւառական բժիշկը, գիւղացիք միշտ աշխատում են թաղցնել հիւանդին. բժշկին ցոյց չեն տալիս, կարծելով՝ բժիշկն ուզում է թունաւորել, որպէս զի հիւանդութիւնը վերջանայ, մանաւանդ, երբ բժիշկն առաջարկում է նրանց՝ առողջներին հիւանդից ջրկել և այլն... Քանի անգամ այդ տեսակ դէպքերում դեզ եմ առաջարկել և հիւանդը հրաժարուել է դեզ ընդունելուց...

Գործով գիւղերը չըջելիս՝ ամեն գիւղում հիւանդներ է ընդունում բժիշկը. կայ գիւղ, որ հիւանդ չը լինի. բայց, եթէ պատահմամբ բժիշկը չը գայ այդ գիւղը, հիւանդն երբէք չի դիմի նրան. Շատ քիչ է պատահում, որ հեռու գիւղերից զան զաւառի կենտրոնը, որտեղ ապրում են զաւառական և գիւղական բժիշկները, և, յատկապէս հիւանդի համար, բժիշկ տանեն իրանց գիւղը. Դիմելիս էլ, բժիշկին հրաւիրում են այն ժամանակ, երբ բանը բանից անցել է, երբ «տիրացուի» կամ այդ գիւղի «հէքիմի» դեղերը չեն օգնել. այս դէպքում էլ բժիշկը մի անգամից աւելի չի տեսնում հիւանդին... Ասացէք, ինչպիսի, ինչպիսի բժշկութիւն կարող է լինել այդ տեսակ հանգամանքներում:

Շատերը կարծում են՝ թէ զաւառում սրբնթաց հիւանդութիւններ քիչ են լինում, աւելի շատ երկարատեւ հիւանդութիւններն են. իմ կարծիքով՝ դա սխալ է. աւելի ճիշտն այն է, որ մենք, զաւառի բժիշկներս, շատ քիչ հիւանդ ենք տեսնում հիւանդութեան սուր շրջանում, մեզ դիմում են կամ, ինչպէս վերն ասացի, այն ժամանակ, երբ բանը բանից անցել է, կամ՝ երբ հիւանդութիւնը արդէն դարձել է երկարատեւ. Այս կէտի մասին շատ երկար կարելի է խօսել ու գրել. իւրաքանչիւր բժիշկ, մանաւանդ զաւառում ապրող բժիշկ, լաւ գիտէ, որ, երբ հարցը գալիս է հիւանդին բժշկելուն, գիւղացին բժիշկին չէ դիմում. բայց երբ հարկաւոր է բժիշկից վկայական ստանալ վէրքի, կամ ծեծուածի համար, այն ժամանակ նոյն գիւղացին պատրաստ է օրեկան հինգ-տաս անգամ դիմել. Շատերն ուրիշ պատճառներ էլ են բերում այն բանի համար թէ՛

ինչո՞ւ գիւղացին բժիշկին չէ գիմու՞մ Ահա այդ պատճառները.

1) Տեղացի բժիշկներէ պակասութիւնը. տեղացի բժիշկները քիչ են, օտարներն էլ տեղական լեզուներ չը գիտեն: — Բայց պիտի խոստովանուել, որ, եթէ ցանկութիւն լինի բժիշկին գիմելու, այդ հանգամանքը չի խանգարի:

2) Լաւ ճանապարհներ չը կան:

3) Բժիշկը հեռու է ապրում: — Դրանց դէմ կասեմ, որ, ինչո՞ւ ճանապարհներէ վատութիւնը քննիչին, կամ դաւառապետին գիմելուն չի խանգարում, իսկ բժիշկի գիմելուն խանգարում է: — Ինչո՞ւ մօտակայ գիւղերի հիւանդները չեն բժըշկուում, բժիշկ չեն կանչում:

4) Բժիշկի վարձատրութիւնը թանգ է նստում գիւղացուն: — Բայց մի՞թէ նոյն գիւղացին «տիրացումին» կամ «հէքիմին» քիչ փող է տալիս: — մի՞թէ անեա դնելը կանոնաւոր բժըշկութիւնից է՞ծան է... Ինչ ուզում են, թող ասեն, բայց պարզ է, որ մեր գիւղացին, մանաւանդ թուրքը, չի սիրում բժշկուել. ուրիշ կերպ չի կարելի բացատրել վերջապէս և այն հանգամանքը, որ գիւղական կամ գաւառական բժիշկը իրանց ապրած գաւառական կենտրոնից կամ մեծ գիւղից դուրս — ամիսը 2-3 հիւանդ է ունենում իւրաքանչիւրը, ձբի հիւանդներ էլ չեն գալիս:

Այդ բոլորից յետոյ, պարզ է, թէ որքան է գիւղական տարրը հաւատում բժշկականութեանը և լինչպէս է նա վերաբերում բժշկին:

Հիմա գանք այն կէտին թէ՛ որպիսի պայմանների մէջ է ապրում գաւառում մնացողը:

Գաւառական մեծ կենտրոններում ապրուստի պայմանների կողմից քիչ թէ շատ յարմարութիւններ կան, բայց գիւղերում ոչ բնակարան կայ, ոչ էլ անհրաժեշտ մթերքներ: Այստեղ պիտի ասել, որ կան և այնպիսի գաւառական կենտրոններ որտեղ ամենահասարակ պահանջներին անգամ գոհացում տալ չի կարելի, օր, Բաշնորաչէն, որտեղ ծառայողների բնակարանները շատ քիչ են զանազանում մնացած գիւղացիների բնակարաններից: Իսկ գիւղերում՝ էբ ասել հարկաւոր չէ. մի քանի կենտրոններում բնակարանները լաւ են, բայց քաղաքի գներ են պահանջում: Մթերքները մի քանի գաւառական կենտրոններում սուելի թանգ են, քան թէ նոյն-իսկ քաղաքում. գիւղացին մի բան որ տանում է հասցնում քաղաք՝ ճարահատեալ պիտի ծախէ. նորից հօ չը պէւք է յետ բերի տուն. իսկ իրանց գիւղում, կամ իրանց գիւղի մօտ գաւառական կենտրոնում գիւղացին ստիպուած չէ է՞ծան քնով ծախել, ուստի, օգտուելով և

այն հանգամանքից, որ նոյն բանից էլ ուրիշ ծախող չը կայ, նա մէկին երկու գին է տառւում, քաջ իմանալով որ ծառայողը պիտի առնէ: Կարճ ասած՝ գաւառական կենտրոնում կամ նահանգական քաղաքում բնակարանի և միջնորդների գնի մէջ շատ քիչ զանազանութիւն կայ, այնպէս որ նահանգական քաղաքում ապրել թէ, գաւառական կենտրոնում՝ այդ կողմից համարեա թէ միեւնոյնն է և միեւնոյն ծախան է պահանջուում: Միւս և ամենամեծ անյարմարութիւնն այն է, որ գաւառներում միայն կենտրոններն են կապուած նահանգական քաղաքի հետ խճուղով, որով անց ու դարձ է անուամբ պոստը: Խօսքս այն գիւղերի մասին չէ, որոնք գտնւում են խճուղու վրայ: Գաւառական կենտրոնի ամենամիփթիւնը բանը պոստն է, որով ստացւում են գրքեր ու լրագիրներ: Շատ քիչ գաւառներ կան, որտեղ լինեն թատրոն, գրադարան... Մեր միփթարութիւնը միայն լրագրողներն են կազմում: Խճուղուց (արքունական) դուրս շատ քիչ գիւղեր կան որտեղ լինի պոստային հիմնարկութիւն: Վայ այն բժշկի դրութիւնը, որն ապրում է մի այնպիսի գիւղում, որտեղ չը կայ պոստ. նա կտրուած է ամբողջ աշխարհից: Գուցէ այդ բանը ուրիշների համար զգալի չը լինի, բայց համալսարանաւարտի համար դա մեծ դժբաղդութիւն է, որովհետեւ նրա զլխաւոր պահանջներից մէկը—գրքերն ու լրագիրներ են: Գաւառում ապրող բժիշկը բայց օրաթերթից և ամսագրից, եթէ նա չի ուզում յետ մնալ իր գիտութիւնից բոլորովին, պիտի ստանայ և բժշկական լրագիր և զանազան նոր դուրս եկած գրքեր... Բայց այդ բոլորը ծախս են պահանջում, իսկ տեսնե՞ք նա ի՞նչ է ստանում:

Յարգելի ընթերցող, ոչ ոք չի ուրանայ, որ ներկայ հասարակական հանգամանքներում ամեն ինչ դրամի վրայ է հիմնուած:

Երկու տարի է ապրում եմ գաւառում և եկել եմ այն եզրակացութեան, որ մեր ժողովուրդը բժշկին վարձատրել չը գիտէ. խօսքս հասարակ գիւղացու մասին է, գաւառական մեծ կենտրոններում քիչ կը գտնուեն որոնք չը վճարեն բժշկին, թէև Բաշտորաչէնում բացի ծառայողներից, տեղացիք բժշկին հրաւիրելիս կոպէկ չեն տալիս՝ ասելով թէ այդ վատ սովորութիւնը նրանց մէջ չը կայ: Բժշկին մէկին երկու գին ասել բնակարանի համար—դա լաւ բան է, իսկ նրան վարձատրել—վատ սովորութիւն: Գիւղացին, բժշկին հրաւիրելիս, այսպէս է դատում՝ ի՞նչ մեծ բան է բժշկի համար հիւանդին նայելը, դեռ գրեթէ ու մի քանի խորհուրդներ տալը: Գիւղացին դեռ չի ընտելացել այն մտքին, որ բժշկի վարձատրութիւնը չը պիտի համեմատել նրա դործ դրած չարչարանքի, կամ աշխատանքի

հետ—(խօսքս բացառութիւն կազմող գիւղացիների մասին չէ)
—գիւղացին չը գիտէ, որ բժշկի վարձատրութիւնը կախում
չունի այն աշխատանքից, որը գործ է դնում բժիշկը հիւանդին
քննելիս. նա չը գիտէ, որ բժշկին վարձատրելիս, պիտի ի նկատի
առնել, թէ՛ որքան չարչարանք, որքան տարիներ, որքան առող-
ջութիւն և, վերջապէս, որքան փող է գործ գրել բժիշկը մինչև
որ ձեռք է բերել այն գիտութիւնը, որին նա լանձնել է իրան:
Ասեմք, այդ կողմից, գիւղացուն չի կարելի մեղադրել, քանի որ
այդ բանը շատ ու շատ քաղաքացիներն էլ չը գիտեն...

Հայը բժշկին չի դիմի, գիմելիս էլ չի վարձատրի: Ան-
ցեալ ամառ ապրում էի մեր գաւառի լեռնային գիւղերից մէ-
կում. հետո տարել էի և անհրաժեշտ դեղեր ու գործիքներ:
Ամստուայ ընթացքում բաւականին հիւանդներ ընդունեցի,
դեղեր տուեցի, բայց ոչ մէկից վարձատրութիւն չը ստացայ,
բացի մէկից, որն այն էլ վարձատրեց նրա համար, որ կարողա-
նայ ինձնից մէկ վկայական ստանալ. եթէ իմանար, որ իր գոր-
ծի համար ես վկայական չեմ տայ, նա, անկասկած, ինձ
կոպէկ չէր վճարի. ինչ ասել կուզի, որ վճարել խոստացողներ
շատ կային, բայց ոչ ոք իր խոստումը չը կատարեց: Բժշկի
համար այնքան ծանր չէ, երբ չեն վճարում այն գիւղում, որտեղ
ինքն է ապրում, բայց պատահում են դէպքեր, երբ 10—15
վերստ հեռավորութեան վրայ գնում ես և առանց կոպէկի
ճանապարհ են գցում: Ամեն անգամ գործով գիւղերը գնալիս
միշտ հիւանդներ է ընդունում բժիշկը, բայց հազարից մէկը
նրան չի վարձատրի. գոնէ կաթ, ձու, հաւ տան, բայց դա էլ չը
կայ. բայց երբ ուղարկում է բժիշկը կաթի,—բաժակը 2 կոպէկի
արժող կաթը նրան 5 կոպէկից պակաս չեն ծախի... Կրկնում
եմ, խօսքս բացառութիւնների մասին չէ... Իւրաքանչիւր գա-
ւառում ապրող բժիշկ փաստեր և օրինակներ շատ կունենայ:

Ներողութիւն, ընթերցող, որ ձանձրացնում եմ, բայց
չեմ կարող հետեւել օրինակը չը բերել. մէկ անգամ ինձ կենտ-
րոնից հրաւիրում են 5 վերստի վրայ մի հիւանդի համար:
Հիւանդին զանազան հարցեր տալուց յետոյ, ջերմաչափը դնում
եմ կոնստակը, որ իմանամ թէ քանի աստիճան է նրա տաքու-
թիւնը. միևնոյն ժամանակ ցոյց եմ տալիս, թէ, ինչպէս է
հարկաւոր պահել թեր, որ ջերմաչափը չը կտրուի: Ահա թէ
ինչ պատասխանեց ինձ 40° տաքութիւն ունեցող հիւանդը.

—«Էհ, թագաւորի բժիշկ, թագաւորի ապրանք, կոտրում
է՛ թող կոտրուի, ինչ անենք»:

Դրանով թէ ինձ և թէ իր շրջապատողներին, նա հաս-
կացրեց, որ պաշտօնով ծառայող բժշկին վարձատրութիւն

տալ պէտք չէ. ինչ ասել կուզի որ ես վարձատրութիւն չը ստացայ: Միայն յետոյ իմացայ, որ ահագին հարստութեան տէր է այդ մարդը: Ես կարծում էի թէ առողջանալուց յետոյ կը վճարի, նա առողջացաւ, իսկ ես իմ վարձս մինչեւ այժմ էլ չեմ ստացել...

Պատահում են դէպքեր, երբ 60-70 վերստ հեռաւորութիւնից գալիս են բժիշկ տանելու: Վերն ասացի, որ միշտ բժշկին այդքան հեռաւորութիւնից հրաւիրում են այն ժամանակ, երբ բանը բանից անցիլ է: Բժիշկը գնում է: Մինչեւ գիւղը հասնելը, ճանապարհին բժշկին, մօտակայ գիւղում, արդէն յայտնում է, որ հիւանդը մեռել է... Հիւանդի բարեկամը, բժշկին խոստացած վարձատրութեան կէսը վճարելով (որովհետեւ հիւանդը վախճանուել է) և, չը նայած, որ 2 վերստ է մնում որ բժիշկը հասնի հիւանդի գիւղը, թողնելով նրան մեռակ կենտրոնից 60-65 վերստի վրայ (ուր գնում են միայն ձիով, առանց կառքի), ինքը հանգիստ սրտով վերադառնում է տուն, իսկ բժիշկը՝ ինչպէս ուզում է թող յետ դառնայ կենտրոն, դրա հետ նա գործ չունի:

Տեսէք ահա թէ՝ որքան դժուարութիւնների է հանդիպում բժիշկը վարձն ստանալիս. եթէ դա դժուար է ծառայող բժիշկի համար, ուրեմն որքան դժուար կը լինի ազատ պրակտիկայով պարապողի համար: Երեւակայեցէք ձեզ մի բժիշկ, որը պաշտօն չունի և ապրում է գաւառում, պարապելով ազատ պրակտիկայով, և որն յիշած պայմաններում է փող աշխատում. ապրել պէտք է—թէ ոչ:

Ընթերցող, գուք կը կարծէք, թէ ես քարոզում եմ, որ գաւառ հարկաւոր չէ գնալ. թէ ինչ է իմ ասելիքս, ահա լսէք:

Դիցուք թէ գտնուեց մէկ բժիշկ, որն, արհամարհելով գաւառական կեանքի բոլոր անյարմարութիւնները, գնաց առանց պաշտօնի, մասնաւոր պրակտիկայով պարապելու համար գաւառ: Այդ բժիշկը, եթէ ուզում է ծառայել գիւղացու բժշկական գործին, չը պիտի ապրի գաւառական կենտրոնում, որովհետեւ այդտեղ առանց նրան էլ չատ բժիշկներ կան, որոնք պաշտօն ունեն: Ամբողջ երեւանեան նահանգում միայն Ալէքսանդրապօլում, իբրև գաւառական կենտրոն, բացի ծառայող բժշկներից, կայ և մասնաւոր պրակտիկայով պարապող բժիշկ. բայց Ալէքսանդրապօլը կարող է մրցել Երեւանի պէս նահանգական քաղաքների հետ, ուրեմն դա բացատրութիւն է: Ուրիշ կենտրոններում ապրող և մասնաւոր պրակտիկայով պարապող բժիշկը չատ քիչ հիւանդ կունենայ, որովհետեւ չատ դժուար է երեւակայել, որ հասարակ ժողովուրդը ծառայող բժիշկին, որի հետ չուտ

շուտ պատահում է, թողնի և դիմի ազատ կամ մասնաւոր պրակտիկայով պարապողին. ինչ ասել կուզի, որ այդ դէպքում նշանակութիւն ունեն և պապղուն կոճակները, ասենք կոճակները քաղաքներումն էլ նշանակութիւն ունեն, ուր մնաց գաւառումս Պարզ բան է, որ դա սխալ է, բայց, ինչ արած, որ իրողութիւն է: Այսպէս թէ այնպէս գաւառ գնացող բժիշկը (ազատ պրակտիկայով պարապողի մասին է խօսքըս) պիտի ապրէ գաւառական կենտրոնից դուրս, մի ուրիշ գիւղում: Բայց քանի գիւղ կայ, որտեղ մասնաւոր, ոչ երթեւեկների հիւանդանոցին կից, զեղատուն լինի: Եւ միայն երեւանեան նահանգի հետ եւ ծանօթ, բայց չեմ կարծում, որ ուրիշ նահանգները շատ զանազանուն են երեւանեան նահանգից:

Ամբողջ երեւանեան նահանգում միայն 2 գիւղում (գաւառի կենտրոնից դուրս) զեղատուն կայ. դրանցից մէկը Ղաւառլուն է, որտեղ և ապրում է գիւղական բժիշկը, որտեղ և գտնւում է երթեւեկների հիւանդանոցը իր զեղատնով, մէկն էլ Ագուլիսը: Առանց զեղերի ինչ է անելու գաւառում բժիշկը: Եթէ հիւանդը զեղեր պիտի գնայ գիւղական զեղատնից (հիւանդանոցի կից) վերջինի, էլ ինչու է դիմում մի ուրիշ բժշկի, կը դիմի գիւղական բժշկին. ո՞վ իր գործը հեշտացնելու փոխարէն—կը ծանրացնի, փոխանակ երկու բժշկի դիմելու, մէկից զեղատոմս վերցնելու համար, իսկ միւսից զեղ,—նա կը դիմի գիւղական բժշկին, որի իրաւասութեան տակ է գտնւում հիւանդանոցի զեղատունը: Բանից դուրս է գալիս, որ ազատ պրակտիկայով պարապող բժիշկը, գաւառ գնալիս, հետը զեղեր էլ պիտի տանի. ուրեմն նա որքան հարուստ պիտի լինի, որ նրա համար ծանր չը լինի անագին գումար պարապեցնելու: 'Իրիցութե' բժիշկը զեղեր էլ տարաւ հետը. փորձը ցոյց է տալիս, որ բժշկին դիմում են այն գիւղացիք, որոնց գիւղում ապրում է բժիշկը, իսկ դրսի գիւղացիք շատ քիչ են դիմում. բայց փորձը և ցոյց է տալիս, որ բժշկին վարձատրողը միայն դրսի գիւղացիներն են, իսկ այն գիւղում, որտեղ ապրում է բժիշկը, նա վարձ չի ստանայ, եթէ ուզում է հիւանդներ ունենալ. դէհ, այժմ ասեք խնդրեմ, առանց վարձատրութեան բժիշկը հիւանդին քննի, հիւանդին զեղատոմս ու համ էլ զեղ տայ, միթէ դա կարելի բան է: Վերջապէս, որ գիւղացին զեղի համար, փող կը վճարի, քանի որ գիւղական հիւանդանոցի զեղատնում ամեն ինչը ձրի է. ապա թող բժիշկը փորձի և իւրաքանչիւր հիւանդից 20-30 կոպէկ պահանջի: Եւ հաւատացած եմ, որ այդ բժիշկը ոչ մի հատ հիւանդ չի ունենայ:

Թող փորձի բժիշկը և իր աշխատանքի վարձ չուզի, այլ պահանջի հիւանդից միայն վերցրած դեղի գինը, այդ դէպքում էլ ես չեմ կարծում, որ շատ հիւանդ ունենայ նա: Ահա թէ՛ որքան դժուար է առանց պաշտօնի դաւառ գնալը:

Եթէ Ագուլիսի պէս գիւղում բժիշկ չի մնում, յետ ընկած գիւղում ինչպէս կարող է բժիշկ մնալ:

Իմ ընկերներէրից մէկը, համալսարանն աւարտելուց յետոյ, գնաց իրանց գաւառը գործելու. նա ապրում էր գաւառի կենտրոնում, որտեղ կային 2 բժիշկ (այժմ էլ կան), կար և կայ դեղատուն: Նա ամեն օր քաւական թուով հիւանդներ էր ընդունում, բոլորն էլ չնորհակալ էին նրանից, զո՛հ էին, բայց հիւանդներին քանիսը բժշկին վարձատրեց: Բոլորն էլ գիտէին, որ նա չի ծառայում և նիւթական կողմից դրութիւնը վատ է, բայց և այնպէս վճարուցներ շատ չը կային:

Եթէ հիւանդին հարցնէք. «Ինչո՞ւ չէք վճարում», — նա ձեզ կը պատասխանէ. «Բան չունէք», — որ վճարելու լինիմ, ինչո՞ւ եմ նրա մօտ գնում, այլ գաւառական կամ զինուորական բժշկին կը դիմեմ էլի»: Կամ կ'ասի ձեզ, «Տօ նրան ո՛վ է փող տալիս, մեր Գրիգորի տղայ Տիգրանն է, (բժիշկը բախտ է ունեցել նրա համագիւղացի լինել), նրա համար ամօթ էլ է մեզնից փող վերցնելը, զեռ թող չնորհակալ լինի նա, որ ուրիշի չենք դիմում, այլ իրան ենք հրաւիրում» և այլն սրա նման բաներ... Եւ կ'ասի ձեզ այնպէս, որ դուք կը կարծէք թէ՛ այդ մարդը բժշկին ուսանող ժամանակը ամբողջ 5 տարի օգնել է...:

Վերջն այն եղաւ, որ այդ բժիշկն էլ փախաւ իր գաւառից: Ահա թէ ինչու առանց պաշտօնի գաւառ չի կարելի գնալ: Իմ ասելիքս այն է, որ գաւառում ազատ պրակտիկայով պարապելը անկարելի է: Գաւառում ծառայող բժշկին շատ քիչ են դիմում, ուր մնաց ազատ պրակտիկայով պարապողին. առաջինը կարող է աւելի շատ հիւանդ տեսնել, քան թէ երկրորդը, որովհետեւ նա ապահովուած է, կարող է ձրի ընդունել, իսկ երկրորդը՝ ոչ: Իսկ հիւանդ չը տեսնելով, կարելի է իմացածն էլ մոռանալ. ուրեմն բժիշկը, երբ ուզում է հիւանդ ունենալ և սովորածը չը մոռանալ, պէտք է ձրի ընդունի, ձրի էլ դեղ բաժանի... Իսկ այդպիսի բժիշկ ոչ մի տեղ չէք գտնի...:

Դիցուք, գտնուեց մի այդպիսի բժիշկ: Դէպ դէպքումն էլ բժիշկը չի հասնիլ իր նպատակին, եթէ նա չը չըջի գիւղերը. նա պէտք է դեղերը և գործիքները հետը վերցրած գիւղից գիւղ գնայ, որպէս զի օգուտ տայ ոչ թէ մի, այլ մի քանի գիւղի... Այդ բժիշկը, նուիրելով իրան դիւղացու բժշկական գործին, պէտք է տանէ ամեն տեսակ զրկանքներ: Մի օր սոված, մի օր

կուշտ, կիսաքուն կամ բոլորովին առանց քնելու, աշխարհից կարուած, առանց կարգալու թափառում է մեր իդէալիստ բժիշկը գիւղից գիւղ և բժշկում է հիւանդներին... Ուրեմն հազար գրկանքներ և ոչ մի բաւականութիւն... Այս տեսակ պայմաններում ապրող բժիշկը շատ շուտ կը հիւանդանայ (եթէ որ գտնուի այդպիսի բժիշկ), իսկ հիւանդը չի կարող բժշկել, նա ինքն է բժշկի կարիք զգում, ուր մնաց ուրիշին բժշկի...

Նստել լաւ սենեակում, ապրել լաւ պայմաններում, ունենալ ամեն տեսակ յարմարութիւններ և պահանջներ անել ուրիշներից, դա շատ հեշտ է: Ապա պ.պ. պահանջողներ, եկէք դուք գաւառ և գործէք այնպէս, ինչպէս որ ուրիշից էք պահանջում:

Կարծեմ, այժմ հասկանալի է իմ միտքս. իմ կարծիքս այն է, որ գաւառում ազատ պրակտիկայով պարապել անկարելի է թէ հարուստ և թէ աղքատ բժշկի համար, ու առանց պատշաճի գաւառ գնալ միտք չունի:

Գաւառական կեանքի անյարմարութիւնները ստիպում են շատերին ծառայութիւն չը մտնել, իսկ դուք պահանջում էք, որ գնան և ազատ պրակտիկայով պարապեն. ով յարմարութիւն չունի գնալ շարունակելու, ով ստիպում է գաւառում ապրել, նա մտնում է ծառայութեան: Ամեն գաւառում գիւղական և գաւառական բժիշկների տեղերը միշտ բռնուած են լինում շատ քիչ բացառութեամբ: Գաւառում, ինչպէս վերը տեսանք, բժշկին շատ քիչ են դիմում. գաւառում գրադարան, թատրոն և այլն զուարճութիւններ չը կան, բացի թղթախաղից: Գաւառում կեանքի ամենահասարակ յարմարութիւնները չը կան, գաւառում չեն վարձատրում (կենտրոնները մի կողմն կամ թողնում), իսկ պահանջում ենք, որ երիտասարդները գնան գաւառ: Հէնց այդ է պատճառը, որ ծառայող բժիշկներն անդամ փախչում են դաւառից, իւրաքանչիւր ծառայող բժիշկ, մանկով ծառայութիւն, աշխատում է մի փոքր ուղղել իր նիւթականը և փախչել գաւառից, որ կատարելագործուի իր գիտութեան մէջ, որ կարողանայ քիչ թէ շատ ինտելիգենտ կեանք վարել: Եթէ ուղում էք, որ երիտասարդ բժիշկները գաւառ գնան, այն ժամանակ պիտի մեր ժողովրդի, գիւղացու բժշկական գործը կարգին հիմքերի վրայ դնել. բաժանել գաւառը բժշկական մասերի, իւրաքանչիւր մաս ունենայ իր երթեւեկների հիւանդանոցը՝ իր դեղատնով. հիւանդանոցին կից լինի բժշկի համար բնակարան և ոչ թէ հացատուն. իւրաքանչիւր բժշկական մաս թող հրաւիրի բժիշկ որոշ ուժիկով, ֆելդշերներ նոյնպէս ուժիկով. ճանապարհներ ունենայ, որ կարելի լինի գիրք ու լրագիր

ստանալ... Մի խօսքով քիչ թէ շատ յարմարութիւններ պիտի ունենայ գաւառը, որ բժիշկը կարողանայ ապրել. դրէք բժկական գործը կարգին հիւքերի վրայ, տուէք փոքր ի շատ է յարմարութիւն՝ ապա, պահանջէք... Ես կարծում եմ, եթէ բժկական գործը գաւառում կանոնաւոր հիւքերի վրայ դրուի, ինչպէս վերն ասացի, այն ժամանակ գաւառ գնալ ցանկացողներ շատ 'կը լինեն, իսկ քանի որ գաւառը չի բաժանուել բժկական մասերի և ամեն մի գաւառում կան միայն 2 բժիշկի տեղ (գաւառական և գիւղական)—գաւառ կը գնան միայն 2 բժիշկ, մէկը գաւառական բժիշկի պաշտօնով, որը շրջում է գիւղերը դատաստանական գործերով և միւսը՝ գիւղական բժիշկի պաշտօնով, որը ընդունում է հիւանդներին երթեւեկների հիւանդանոցում. Վերջացնելով, ես կրկնում եմ, որ պահանջներ անելը հեշտ է, իսկ կատարելը դժուար, սակայն աւելի լաւ կը լինէր, որ իւրաքանչիւր պահանջող առաջ լաւ քննէր իր ասուլիքը և յետոյ պահանջներ անէր երիտասարդներին:

Բժիշկ Ա. Մ.

*
* 4

էս աշխարհը արունքաէր է ոչ գութ ունի, ոչ խիղճ
ունի.
Ե՛հ, աշխարհն էլ ցաւող չունի. մահացու է ու վերջ ունի.
Ու մեզի պէս հողեղէն է. ու մեզի պէս մահկանացու.
մեր գերեզմանն ինքն է հիմի, ու գերեզման ինքն էլ
ունի:

Հազար ափսոս ծաղկունանցը, նազուկ լուսնին,—պի-
տի թուովն.
Մով ծովերը, մով սարերը սև ծխի պէս պիտի անցնին.
Վառ արևը պիտի մարի, վառ աստղերուն հազար ափ-
սոս,
Հրեղէն ձին, բլբուլ, մարալ, հէյվախ, պիտի մեռնին,
անցնին...

Թէ աշխարհը, թէ ամեն մարդ ծնաւ—եկաւ, մեռ-
նի—կ'երթայ.
Թէ անցորդ ենք, չարբաշ ճամբորդ, երերմունի, փշի
վերայ.
Ո՞ւմ հարցնենք՝ մեզի ասէ,—էս երանգ է, թէ արթուն
բան.
Որ մենք եկանք, հիմի կ'երթանք.—խաբար չը կայ, խա-
բար չը կայ...

է՛յ, անցաւոր, ցաւի աշխարհ, ցաւդ բարձած մէկ-
մէկ կ'երթանք.
Ինչո՞ւ եկանք, ինչո՞ւ կ'երթանք... մեզ հարցրէք, մենք
խաբար տանք.
Յաւերու տակ մեռանք, մեռանք. էրնէկ էնոր, որ չի
զգայ.
Հազար ափսոս, որ ծնուեր ենք. չը ծնուածին էրնէ՛կ
կուտանք:

Ա՛խ, խոր կը զգամ, որ աշխարհում մարդն է մէնակ,
որ դարդ ունի.
Մարդու վերքը, մարդու ցաւը ո՛չ տակ ունի, ո՛չ չափ
ունի.
է՛յ, անցաւոր, անսիրտ աշխարհ, քեզի հազար երնէ՛կ
կուտանք,
Որ չես զգայ քու մեծ վերքը, որ տակ չունի, որ չափ
չունի:

Մեր խեղճ երգն է մէնակ ճարը անմխիթար սրտի
համար.
Մեր խեղճ երգն է քու մեծ վերքի խոր միմուռը, ու-
նայն աշխարհ.
Երազի պէս եկանք—կ'երթանք. երազի պէս դուն էլ
կ'երթաս.
Մարդուս կնանքն էլ ցաւիդ երգն է, մարդս երգ է,
երազ—աշխարհ...

Ա.Ի. ԻՍՍԶԱԿԵԱՆ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

I

Մեր նախկին յօդուածներէյ արդէն որոշ չափով գիտեն ընթերցողները, թէ ինչ ստոր աստիճանի վրայ է կանդնած Ատրպատականի հայ ազգաբնակութեան զարգացումը: Այդ պատկերը լրացնելու համար մենք կ'աշխատենք ծանօթացնել նաեւ այդ ժողովրդի ընթերցանութեան գործի հետ:

Ատրպատականի հայերը, մանաւանդ գաւառահայերը, կարգալու առանձին հակում չունեն: Ատրպատականի ընդարձակ գաւառներում եղած գրադարան-ընթերցարանները կարելի է մատների վրայ համարել: Բայց գաւառների ընթերցանութեան խնդրի մասին կը խօսենք մանրամասն միւս անգամ, այժմ միայն կանգ կ'առնենք Թաւրիզի վրայ, որ այդ կողմից համեմատաբար լաւ վիճակի մէջ է:

Թաւրիզի հայ ազգաբնակութիւնը ապրում է Ղալա և Լիլաւա թաղերում: Ղալա թաղում ապրում են մօտաւորապէս 300 տուն, իսկ Լիլաւա թաղում՝ 400 տուն, «մօտաւորապէս» եւս ասում, որովհետեւ ճիշտ վիճակագրութիւն չը կայ:

Թաւրիզի երկու հայաբնակ թաղերն էլ ունեն գրադարան-ընթերցարաններ, որ գտնւում են զպրօցների բակերում: Լիլաւա թաղի գրադարանը կոչւում է՝ «Ս. Արովեան», իսկ Ղալայինը առանձին անուն չունի:

Այդ երկու գրադարաններից՝ Ղալայինը աւելի հին է, աւելի հարուստ: Ղալա թաղի գրադարանը հիմնուել է 1874 թուին, Անդրէաս արքեպիսկոպոսի առաջնորդութեան միջոցին, որը եղել է և հիմնադիրներից մէկը:

Սկզբում ունեցել են չատ աննշան քանակութեամբ գրքեր, գրադարանական ընկերութիւնը ունեցել է միմիայն 75 կտոր գիրք, առաջնորդարանից էլ նուէր է ստացւում 81 կտոր, դառնում է 156 գիրք: Ահա այսքան գրքով գործի հիմք է զրուում,

բայց յետոյ ի հարկէ տարէցտարի աւելանում է գրքերի քանակը: Ահա այսպէս.—

1876	Թուին հասնում է	218	կտորի
1881	”	274	”
1882	”	784	”
1884	”	861	”
1886	”	994	”
1887	” (պակասում է)	960	”
1900	”	1,000	”
1902	”	1,300	”

Այս առաջ բերած թուերի մէջ չեն հաշուած օտար լեզուով եղած գրքերը, որոնց թիւը հասնում է 500 կտորի: Բայց այդ կան նաեւ ձեռագիր գրուածքներ, հին և կրօնական գրքեր, մօտ 50 կտոր: Օտար լեզուով գրած գրքերի մեծագոյն մասը ֆրանսերէն է, իսկ մի մասն էլ ռուսերէն, կայ և անգլիէրէն. մեծամասնութիւնը ի հարկէ կարգում է միայն հայերէն գրքեր:

Այժմ դանք «Խ. Աբովեան» գրադարանին: Այս գրադարանը հիմնուել է աւելի ուշ, Ստեփաննոս եպ. Մխիթարեանի առաջնորդութեան օրով, 1889 թուին. հիմնադիրը եղել է հէնց Մխիթարեան եպիսկոպոսը: Բայց ինչպէս է սկսուել գործը, որքան գիրք են ունեցել առաջին տարին, ինչ վիճակի մէջ է եղել գրադարանը առաջին մի քանի տարիներում, ինչ աջողութիւն է ունեցել գործը. սակայն այդ մասին ոչինչ յայտնի չէ, ոչ մի գրութիւն չէ մնացել, բացի առաջին կանոնադրութիւնը, որը շրջանակի մէջ գրուած պահւում է գրադարանում:

«Խ. Աբովեանի» գրադարանը կանոնաւորուել է միմիայն 1893-4 թուականներից սկսած, երբ Լիլաւայի դպրոցներում եղել է կանոնաւոր ուսուցչական խումբ: Այժմ «Աբովեան» գրադարանը ունի 1303 տեսակի 1377 կտոր գիրք, որ բաժանուած է այսպէս:

1. Մանկական բաժին	96 տեսակի	102 կտոր գիրք
2. Մանկավարժական բաժին	21	24 ” ”
3. Կենսագրական	31	36 ” ”
4. Բանաստեղծական	44	44 ” ”
5. Թատրոնական	76	81 ” ”
6. Ճանապարհորդ.	23	23 ” ”
7. Գիտակ. և մասնագ.	204	212 ” ”
8. Վիպական	460	500 ” ”
9. Դասագրքերի	113	123 ” ”
10. Կրօնական	63	63 ” ”
11. Ռուսերէնի	136	136 ” ”
12. Պրանտերէնի և այլն	33	33 ” ”

Հնդամինը . 1,303 տեսակի 1,377 կտոր գիրք.

Նույնիմբեր, 1902.

Սրանց մէջ չէ հաշուած միմիայն ամսագրերի բաժինը, որովհետեւ մեծ մասով կիսատ-պռատ են:

Երկու գրադարաններումն էլ բելետրիստիկական գրուածքները գերակշռող տեղ են բռնում: Այսքանս գրադարանների մասին, այժմ՝ գանք ընթերցարաններին:

Ղալայի գրադարան-ընթերցարանում այժմ ստացւում են հետեւեալ հայոց պարբերական հրատարակութիւնները: Օրաթերթեր՝ «Մշակ», «Բիւզանդիօն», «Նոր-Դար», «Արեւելք», «Շարժում», «Ձայն»¹, «Հայրենեաց» և «Իրաւունք»:

Ամսագրեր՝ «Մուրճ», «Բազմավէպ», «Լուսնայ», «Արարատ», «Թատրոն», «Հանդէս Ամսօրեայ» և «Անահիտ»:

Շաբաթաթերթեր՝ «Լոյս» և «Հայրենիք»: Յրանսերէն՝ «Pro Armenia» և «L'Armenie»:

Լիւաւա թաղի գրադարանը բացի այն, որ ստանում է վերեւ յիշուած բոլոր հրատարակութիւնները, ստանում է և՛ «Астраханский Вѣстникъ» ռուսերէն լրագիրը:

Այժմ արդէն մեզ միանգամայն պարզ է, թէ ի՞նչ ունեն գրադարան-ընթերցարանները. մնում է մեզ իմանալ թէ ի՞նչ պէս, ի՞նչ ձևով և ի՞նչ չափով են օգտւում տեղացիները գրադարան-ընթերցարաններին:

Երկու գրադարան-ընթերցարաններն էլ ունեն անդամ-բաժանորդներ, որոնք տարեկան վճարելով մի որոշ գումար, օրինակ, 5—15 ղոան, օգտւում են և՛ գրադարանից և՛ ընթերցարանից: Այժմ իւրաքանչիւր գրադարան-ընթերցարանի մշտական անդամների թիւը հասնում է 35—40-ի. շատ անհաճ թիւ, և դրանք մեծ մասով ուսուցիչներ են և գործակատարներ: Իսկ անդամ չը համարուող անձինք իւրաքանչիւր գրքի համար վճարում են 2—4 շահի (կոպէկ):

Եւ որպէս զի ցոյց տանք, թէ ի՞նչ չափով են օգտուել գրադարաններից, մենք մանրամասն առաջ կը բերենք երկու գրադարանների մի մի տարուայ հաշիւը:

Ղալայի գրադարանից օգտուողների թիւը 1901 թուականի ընթացքում եղած է 333, իսկ «Խ. Արովկանի» գրադարանից օգտուել են նոյն այդ թուականին 1210 մարդ: Թիւրիմացութեան տեղի չը տալու համար անհրաժեշտ ենք համարում նկատել, որ այս թուերը ցոյց են տալիս ոչ այն, թէ քանի անձինք են օգտուել գրադարաններից, այլ այն, թէ քանի անգամ են օգտուել կամ քանի կտր զիրք է կարդացուել:

Այստեղ էլ զեղարուեստական գրուածքները ահապին տուկոս են կազմում, կէսից շատ աւելի: Ահա այսպէս.

Ղ ա լ ա թ ա ղ ի գ Ր ա գ ա ր ա ն ը .

1. Վիպական բաժնից կարգացուել է	254	կտոր	գիրք
2. Թատերական " "	29	"	"
3. Գիտական " "	22	"	"
4. Պատմական " "	19	"	"
5. Կենս., դասագրքեր, կրօնական " "	9	"	"
6. Պարբերական հրատարակութիւններ	194	"	"

Պարբերական հրատարակութիւնները 333 կտոր գրքերի մէջ չէր մտնած :

«Խ. Ա բ ո վ ի ա ն» գ Ր ա գ ա ր ա ն .

1. Վիպական բաժնից կարգացուել է	826	կտոր	գիրք .
2. Թատերական գրքեր " "	74	"	"
3. Բանաստեղծական " "	89	"	"
4. Գիտական-հասարակական-առողջապահ. " "	98	"	"
5. Պարբերական հրատարակութիւններ	123	"	"

Աւագորութեան առնելով առաջ բերած թուերը նկատում ենք երկու գրադարանի վերաբերմամբ էլ, որ կարգացուած գրքերի մէջ բնութարիստիկական գրուածքները իրանց քանակութեամբ առաջին տեղն են բռնում, պարբերական հրատարակութիւնները՝ երկրորդ տեղը, իսկ լուրջ գրականութիւնը շատ չնչին տոկոս է կազմում։ Նկատելի է և այն, որ բնութարիստիկայի մէջ գերիշխում է վէպը, որ Թաւրիզի հայերի ամենատիրելի գրուածքն է, և ընդհանրապէս զարգացման այս աստիճանի վրայ կանգնած ժողովրդի համար սիրելի է վէպը և նա է ամենից շատ կարդացուած։ Այս էլ պէտք է ի նկատի ունենալ, որ վէպը կարգալիս ոչ թէ նպատակ են դնում ուսումնասիրել կեանքը.— ոչ, նրանց չէ հետաքրքրում գրքի իդէան, նրանք քըն-նադատաբար չեն կարդում (ասինք չեն էլ կարող), այլ նրանց գրաւում է վէպի ֆաբուլան, լոկ պատմութիւնը, նրանք իւրացնում են միայն որոշ արկածներ և դէպքեր :

Այստեղ սահրաժեշտ ենք համարում առաջ բերել Ղալա թաղի գրադարանից 6 ամսուայ ընթացքում տարուած գրքերի ցուցակը, այս 1902 թուականի յունուարից մինչև յունիս, որովհետեւ, ինչպէս գրադարանագետը յայտնեց, անցեալ տարի գրադարանը շատ անկանոն է եղել, միշտ էլ գրքեր չէ դրուել խնդրողներին :

1. Վիպական գրքեր	491	կտոր	գիրք .
2. Թատերական	41	"	"
3. Պատմական	7	"	"
4. Գիտական	12	"	"
5. Քննադատական	5	"	"

6. Հասարակ., կրօնական, դասագիրք	13	կտոր	գիրք
7. Կենսագրական	6	»	»
8. Պարբերական հրատարակութիւններ	156	»	»

Ընդամենը 731 կտոր գիրք.

Այստեղ էլ, ինչպէս նկատելի է, քանակութեամբ առաջին տեղն են բռնում վիպական գրուածքները և պարբերական հրատարակութիւնները, և պարզ է նոյնպէս, որ «Ն. Աբովեան» գրադարանից մի տարուայ ընթացքում աւելի գրքեր են կարդացուել, քան Ղալայի գրադարանից:

Շատ հետաքրքիր էր իմանալ թէ օգտուող անձինք ինչ դասակարգերից են, իմանալ մանրամասն, բայց ցաւելով պէտք է ասել, որ շատ դժուար է այդ անել: Գրադարանների վարչութիւնները այդպիսի հաշիւներ չունեն. միայն այսօրոյն կարելի է վստահութեամբ ասել, որ օգտուողների ամենամեծ տոկոսը, գրեթէ կէսից աւելի, կազմում են աշակերտները, իսկ մնացածը բռնում են գործակատարները, արհեստաւորները և ուսուցիչները:

Երկու գրադարանների թէ բաժանորդների թիւը, թէ կարդացուած գրքերի աննշան քանակը շատ պերճախօս ֆակտեր են ժողովուրդի անընթերցասիրութեան:

Անհրաժեշտ ենք զգում մատնանիչ անել և մի երեւոյթի վրայ, որը թէև ինքն ըստ ինքեան ազեղ և ցաւալի է, բայց անկարելի է լռութեան տալ,—այժմ բաւականին թուով գրքեր են պակասել «Աբովեան» գրադարանից, անշուտ վերցրել են գրադարանից և չեն վերադարձրել: Այդ առիթով շատ էին գանգատում գրադարանապետները և խնդրում էին յիշատակել այս հանգամանքը: Ընթերցողը տեսաւ, որ Ղալայի գրադարանից մեծ քանակութեամբ գրքեր են պակասել դեռ 1887 թւին: Այս միանգամայն տգեղ երեւոյթը գրեթէ ամեն տեղ կայ, ամենքն են գանգատում, թերթեցէք այս կամ գրադարանի ակզեկագիրը և դուք անշուշտ կը պատահէք այդ երեւոյթին:

Այս հանգամանքի առաջն առնելու ամենալաւ և գործնական միջոցն այն է որ որոշած ժամանակամիջոցը լրանալիս անմիջապէս յետ պահանջել գիրքը և ձգտել կարճ ժամանակով թողնել նրանց մօտ, օրինակ մի շաբաթից ոչ աւելի: Կարելի էր և որոշ գրաւական վերցնել, բայց դա գործի աջողութեան տեսակէտից այնքան էլ ձեռնտու չէ, որովհետեւ ժողովուրդը առանց այդ էլ կապուած չէ գրադարանի հետ, առանձին պահանջ չէ զգում կարդալու, այն դէպքում բոլորովին կը կտրուի գրադարանից:

Այդ գողութեան դէպքերը կարող են առաջանալ նաեւ վարչութեան կամ գրադարանապետի անհոգութիւնից և անհետեւողականութիւնից: Եթէ վարչութիւնները խիստ հետեւողական լինեն՝ գողութիւններ տեղի չեն ունենայ, իսկ եթէ պատահեն էլ, դրանք բացառիկ օրինակներ և դէպքեր կը լինեն:

Իսկ գալով ընթերցարաններին, յաւելով պէտք է խոստովանուել, որ աւելի անմխիթար, անբաւարար են, քան գրադարանները: Յաճախորդները չատ աննշան, բոլորովին չնչին թիւ են կազմում, այդ ասում ենք ի հարկէ մեր տեսածի, ամենօրեայ զիտողութեան վրայ հիմնուելով, որովհետեւ գրադարանների վարչութիւնները չունեն ոչ մի հաշիւ ընթերցարանի յաճախորդների վերաբերմամբ, այնպէս որ պարզ չէ՝ թէ որքան անձինք օրեկան կամ տարեկան յաճախում են այս և այն ընթերցարանը: Շատ յանկալի է, նոյն-իսկ անհրաժեշտ է, որ վարչութիւնները այդ հանգամանքը ի նկատի ունենան և յաճախորդների մասին մանրամասն հաշիւ պահեն, նոյն-իսկ նշանակել՝ թէ նրանք ինչ պարագմունքի տէր են:

«Խ. Աբովեանի» գրադարան-ընթերցարանի միակ կանոնաւոր յաճախորդները բարձր դասարանների աշակերտներն, երբեմն էլ յաճախում են ուսուցիչները, իսկ երբեմն միայն երեւում են արհեստաւորներ և գործակատարներ: Նոյն այդ բանն է և Ղալալի ընթերցարանում, չատ քիչ փոփոխութեամբ, բայց սա համեմատաբար աւելի յաճախորդներ ունի, որոնց մէջ գերիշխող տեղ են բռնում ուսուցիչները:

Երկու ընթերցարանների վերաբերմամբ էլ կարելի է վըստահութեամբ ասել, որ հազիւ օրեկան միջին թուով 2-6 յաճախորդներ ունենան. որքան ողորմելի թիւ: Բացառութիւն չեն համարւում և այն օրերը, որ գրեթէ ոչ մի այցելու չեն ունենում, այդ դոնէ «Խ. Աբովեանի» գրադարանի վերաբերմամբ հաստատապէս կարող եմ վկայել: Հէնց երէկ, հոկտեմբերի 5-ին, զնացի գրադարան, չը կար այնտեղ և ոչ մէկ այցելու, խեղճ գրադարանապետը աչքը տնկած նստել-սպասում էր թէ երբ մէկը ներս կը մտնի:

Ահա ընթերցարանների դրութիւնը, ահա թէ որ աստիճան ժողովուրդը չէ սիրում կարդալ և հեռու է փախչում ընթերցարաններից:

Կարելի է կարդում են, ունեն կարդալու գրքեր և առանձին կարիք չեն զգում գրադարան-ընթերցարան յաճախել,—գուցէ հարցնի ընթերցողը: Ո՛չ, այդպէս չէ: Այստեղ, չը կան մասնակի, տան մէջ գրադարաններ, չունեն այն քանակութեամբ գրքեր, որ բաւարար համարուի ընթերցանութեան համար,

հայոց պարբերական հրատարակութիւններ չատ քիչ են ստացւում: «Մուրճ» ստացւում է, բայցի գրադարաններից, 6 հատ. «Մշակ» և «Նոր-գար» հազիւ իւրաքանչիւրից 10-15 օրինակ:

Գրադարան-ընթերցարանների վարչութիւնները պէտք է միշտ աշխատեն տարէջ տարի աւելացնել գրքերի թիւը, հարստացնել գրադարանները և կանոնաւոր, նոր հրատարակուող գրքերը անհրաժեշտ է անմիջապէս ձեռք բերել, ստանալ անպայման կարեւոր պարբերական թերթերը, այդ հանդամանքները կարող են փոքր ի չափէ գրաւել յաճախորդներ: «Աղբիւրը», որ մեր միակ մանկական ամսագիրն է, երկու գրադարաններումն էլ չէ ստացւում:

Սրանով վերջապէս մեր ասելիքը երկու թաղերի գրադարան-ընթերցարանների մասին: Այժմ ընթերցողի ուշադրութիւնը դարձնենք Թաւրիզի մէկ ուրիշ գրադարանի վրայ, որ էութեամբ շատ հետաքրքիր է: Վերջերս կանանց դարեգործական միացեալ ընկերութիւնը Թաւրիզում «լսեկապէս կանանց և օրիորդների համար ձրի գրադարան-ընթերցարան» հիմնեց, որովհետեւ, ինչպէս պատճառաբանում է ներկայ վարչութիւնը իր 1901-1902 տարեշրջանի կանոնադրութեան մէջ, «տեղական ինչ-ինչ սովորութիւնների և հասկացողութիւնների պատճառով տիկիներն և օրիորդները չեն կարողանում օգտուել քաղաքում գտնուած միւս գրադարաններից *):»

Այդպէս է արեւելքը... հարեմական հասկացողութիւնները շատ խոր արմատներ են գցել...

«Այս տարի, կարգում ենք նոյն 1901-1902 տարեշրջանի տեղեկագրի մէջ, գրադարանն ունի 500-ի չափ գրքեր և ստանում է օրաթերթեր և ամսագրեր»:

Սրանով վերջացնում ենք մեր ասելիքը Թաւրիզի գրադարան-ընթերցարանների և ընդհանրապէս ընթերցանութեան գործի մասին, իսկ միւս անգամ կանայնք դաւաճենք:

ԵՐ. ՖՐԱՆՔԵԱՆ

*) Յեւ 1091—1902 տարեշրջանի տեղեկագիրը, էրես 12.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տասը տարի հազիւ է անցել այն ժամանակից, երբ ժողովրդական համալսարանների դադարաւորն անդամ անձանօթ էր Գերմանիային, բայց այսօր բանաստեղծների և փիլիսոփաների հայրենիքը, իր ժողովրդական մասսայի կրթութեան մակերեւոյթը բարձրացնող այդ իսկական հիմնարկութիւններով, կարող է պարծենալ և նոյն-իսկ մրցել իր հարեւան մի քանի կուլտուրական երկրների հետ: 57¹/₂ միլիոն ազգաբնակչութիւն ունեցող Գերմանիան ներկայումս ունի մօտ 45 ժողովրդական համալսարաններ (Volksuniversitäten) կամ բարձրագոյն դպրոցներ, որոնք գլխաւորապէս գտնուում են Գերմանիայի մեծ և համալսարանական քաղաքներում, և չի անցնիլ մի տասը տարի էլ, երբ Գերմանիայի գրեթէ իւրաքանչիւր միջնակարգ քաղաք կունենայ իր յատուկ ժողովրդական համալսարանը, որովհետեւ այժմ գերմանական հասարակական կարծիքն և մամուլը եռանդուն կերպով զրադուած են վերոյիշեալ հարցով և աշխատում են ժողովրդական համալսարանը գերմանական իւրաքանչիւր քաղաքի սեպհականութիւնը դարձնել:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ժողովրդական համալսարանների դադարաւորը սկսել է հետզհետէ ժողովրդականանալ և հայերիս մէջ և վերոյիշեալ կրթական հիմնարկութիւնների սաղմային դրութիւնը մտել է և հայաբնակ մի քանի քաղաքներում, օր. Բագուի հանրակրթական կուրսերը, հայաբնակ նահանգական և գաւառական քաղաքներում երբեմնակի կարգացող հրապարակական և ժողովրդական դասախօսութիւնները, Թաւրիզի լսարանական ընկերութիւնը և այլն,— ներկայ յօդուածով կ'աշխատենք ծանօթացնել գերմանական ժողովրդական համալսարանների կուլտուրական նշանակութեան, նպատակի, կազմակերպութեան և զարգացման հետ:

Բայց ժողովրդական համալսարանների հարցի հետ լաւ ծանօթանալու համար հարկաւոր է ամենից առաջ

մի համառօտ զաղափար տալ զանիական ու անգլիական նոյնանման հիմնարկութիւնների մասին, որովհետեւ գերմանական ժողովրդական համալսարանների տիպը իր կազմակերպութեամբ զանիական ու անգլիական ժողովրդական համալսարանների տիպերի խառնուրդն է ներկայացնում:

Դանիայի ժողովրդական կամ գիւղական համալսարանները, որոնք առաջին տեսակը կամ տիպն են կազմում, իրանց ծագմամբ և տարածմամբ, պարտական են զանիայի յայտնի պատմաբան, բանաստեղծ և եպիսկոպոս Սեվերին Գրունգվիգին, որ իր հայրենակից Փօլդի հետ միասին 1844 թ. հիմնեց առաջին գիւղական համալսարանը Դանիայում: Գրունգվիգն իր մանկավարժական աշխարհայեցողութիւնն և սկզբունքը գործադրեց և քարոզեց գլխաւորապէս Դանիայի ժողովրդական համալսարաններում: Նրա կարծիքով իւրաքանչիւր անհատ ոչ թէ իր մանկական, այլ երիտասարդական հասակում (18—30) պէտք է ձեռք բերի ուսումնարանական կրթութիւնը, որովհետեւ երիտասարդների երեւակայութեան գործունէութիւնը աւելի կենդանի և որ ամենից գլխաւորն է, երիտասարդական հասակում իւրաքանչիւր անհատ աչքի է ընկնում իր ստեղծագործական ընդունակութեամբ, որի չնորհիւ նա սովորածը ինքնուրոյն կերպով մշակում և իր մտաւոր սեպհականութիւնն է դարձնում: Նրա կարծիքով անարդար է այն հանգամանքը, երբ մտաւորապէս դեռ չը հասունացած մանուկներին ծանրաբեռնում են ուսումնարանական իմաստութեամբ: Մանուկը մինչև 12 տարեկան դառնալը պէտք է միայն իմանայ գրել, կարդալ և հաշուել, համառօտ կերպով ծանօթանայ իր հայրենիքի պատմութեան գլխաւոր դէպքերի հետ, զաղափար կազմի ինչպէս իր հայրենի երկրի, այնպէս էլ օտար երկրների բնութեան բնորոշ յատկութիւնների մասին: Դանիայի ժողովրդական առաջին համալսարանի հիմնադիր Գրունգվիգը բոլորովին հակառակ էր այն բանին, երբ փոքր հասակում մանուկներին ծանրաբեռնում են թէ կրօնական և թէ ուրիշ անհասկանալի խրթին խնդիրներով: Նա աւելի նպատակայարմար էր համարում վերոյիշեալ խնդիրներով զբաղուելը վերապահել երիտասարդական հասակին, երբ անհատների մէջ արդէն զարգացած է ինքնագիտակցութիւնը, որի չնորհիւ միայն կարելի է ձեռք բերել ինքնուրոյն աշխարհայեցողութիւն և իրանց լսածները ենթարկել սեպհական դատողութեան և քննադատութեան:

Գրունգվիգի վերոյիշեալ կարծիքը՝ մանկավարժական սիստեմը՝ նոր չէր: Նրանից դեռ մօտ 40 տարի առաջ այդ կարծիքը

մի քանի ակնառուոր մանկավարժներ և զիտնականներ արգէն դուրս էին բերել կրթական հարցի հրապարակը: Բայց Գրունդ-վիգի գլխաւոր ծառայութիւնը կայանում է նրանում, որ նա այդ աշխարհայեցողութիւնը կամ կարծիքը իրականացրեց և գործադրեց: Ղանիական ամբողջ ժողովրդի համար: Նրա գլխաւոր նպատակներից մէկն էլ այն էր, որ նա ցանկանում էր երիտասարդութեան ընդհանուր կրթութեամբ նպաստել իր ժողովրդի քաղաքական հասունութեան, իսկ վերջին նպատակին հասնելու համար, նրա կարծիքով, մայրենի լեզուն, գրականութիւնը և սլաւոմութիւնն ամենագլխաւոր առարկաներն են կազմում:

1844 թ. Իւթլանդիա թերակղզու վրայ գտնուող Ռիդդ-դիսկ փոքրիկ քաղաքում բացուեց Դանիայի առաջին ժողովրդական համալսարանը, որ բաւական զփուարութիւնների դէմ մաքառելուց յետոյ վերջապէս հասաւ այն ծաղկած դրութեան, որի մէջ նա ներկայումս է գտնւում: Այդ նախանձելի դրութեան և կենսունակութեան շատ նպաստեց Գրունդվիգի ընկեր Բ. Բոլըր, որ կարճ ժամանակի ընթացքում ժողովրդական աղքատ և տգէտ մասսայի մէջ կարողացաւ շօշափելի հետաքրքրութիւն դարձնել դէպի ժողովրդական համալսարանը: Նա մինչև անգամ հանրակրթական կուրսեր հիմնեց և կանանց համար: Բայց Դանիայի ժողովրդական համալսարանները սկսեցին զգալի յառաջադիմութիւն անել և ծաղկել միայն 1864 թ.: Մինչև այդ թուականը $2\frac{1}{2}$ միլիոն ազգաբնակութիւն ունեցող Դանիան ունէր միայն 7 ժողովրդական կամ գիւղական համալսարան, 1870 թ. 30 համալսարան. իսկ ներկայումս, երբ Դանիայի ազգաբնակութիւնը $2\frac{1}{2}$ միլիոնից չէ աւելացել, ունի 70-ից աւելի ժողովրդական համալսարաններ: Ամեն տարի կրթական այդ հիմնարկութիւնները այցելում են մօտ 5—6,000 մարդիկ, իսկ մինչև այժմ բոլորը միասին այցելել են մօտ 150—200,000 հոգի: Վերոյիշեալ թուերից շատ պարզ երեւում է, թէ Դանիան իր ժողովրդական համալսարաններով կուլտուրական զարգացման վրայ է կանգնած: Այդ տեսակէտից փոքրիկ Դանիայից օրինակ վերցրին նրա հարեւան մի քանի երկրներ. օր. 1864 թ.-ից յետոյ Նորվեգիայում և Շվեդիայում երեւան եկան ժողովրդական առաջին համալսարանները, որոնց ծրագիրն ու կազմակերպութիւնը բոլորովին նման էր զանիականին: Ֆինլանդիայում էլ ներկայումս գոյութիւն ունեն 10 այդպիսի գիւղական համալսարաններ և այլն:

Դանիայի ժողովրդական համալսարանները այցելում են գրեթէ բացառապէս գիւղացիները և հէնց այդ է գլխաւոր

պատճառը, որ այդ բոլոր համալսարանները յարմարեցրուած են գիւղական ազգաբնակութեան կարիքներին և պահանջներին: Ժողովրդական համալսարանները մեծ մասամբ գտնուում են գիւղերում և ունեն սեպհական շինութիւններ: Իւրաքանչիւր շինութիւն սովորաբար բաղկացած է երկու դահլիճներից՝ դասախօսութիւնների համար, մարմնամարզարանից, զրադարանից, ընթերցարանից, մի շատ մեծ ճաշարանից, համալսարանի վերատեսչի մասնաւոր և սովորողների ընդհանուր բնակարաններից:

Այդ համալսարանի գլխաւոր սկզբունքներից մէկն էլ այն է, որ համալսարան այցելողները ոչ միայն տեսական տեղեկութիւններ ձեռք բերեն, այլ և սովորեն յարգել ընտանեկան—բարոյական կեանքը, ազգային գիտակցութեան և սեպհական արժանաւորութեան զգացմունքը: Դրա համար ունկընդիրները ապրում են համալսարանում, ամեն օր յարաբերութիւն ունեն դասախօսների, նախնաւանդ վերատեսչի ընտանիքի հետ, ճաշում են միասին, իսկ ազատ ժամերը միասին անց են կացնում համալսարանի ընթերցարանում կամ հիւրանոցում: Ժողովրդական համալսարանի իւրաքանչիւր դասընթացը տեւում է վեց ամիս: Ամեն օր այցելուները լսում են միջին թուով 6 դասախօսութիւններ, որոնց հետեւում են գործնական աշխատանքներ, օր. աղամարդկանց համար գիւղատնտեսութիւն, կաթնատնտեսութիւն, հաշուապահութիւն, փայտահատութիւն և այլն, իսկ կանանց համար՝ կարու ձեւ, հիւսել, մանել և այլն: Տղամարդկանց կուրսը տեւում է ձմեռային հինգ ամիսները, եսկ կանանց՝ ամառային 4 ամիսները: Ժողովրդական համալսարան այցելող ունեւորները սովորաբար զմարում են ամսեկան մօտ 15 բուրլի թէ ապրուստի և թէ դասախօսութիւնների համար: Համալսարաններում աւանդում են հետեւեալ առարկաները՝ դանիական լեզու, գրականութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, իրաւաբանութիւն, քաղաքատնտեսութիւն, վիճակագրութիւն, կրօնի փիլիսոփայութիւն և այլն, իսկ բնական և առողջապահական գիտութիւններից՝ բժշկութիւն, առողջապահութիւն, բուսաբանութիւն, կենդանաբանութիւն, քիմիա, բնախօսութիւն, մարդակազմութիւն, ստղաբաշխութիւն և այլն:

Ամենաշատ ժամանակը սովորաբար գործադրում են պատմութեան և անցնում են ոչ թէ պատերազմների, զօրավարների և թուականների պատմութիւն, այլ պատմական նշանաւոր երեւոյթների պատճառներն ու աղբեցութիւնն են քննում, համեմատում են պատմական շրջանները միմեանց հետ և գլխաւորապէս զբաղւում են պատմական այն անձնաւորութիւններով,

որոնք ունկընդիբների մէջ զարթեցնում են վեհի, ազնու-
թեան և ճշմարտութեան զգացմունքը:

Ամեն օր երեք ժամ յաջորդական դասախօսութիւններէյ
յետոյ լինում է չորրորդ քննական կամ փորձական դասախո-
սութիւնը: Այդ ժամին դասախօս-ուսուցիչները քննում են, թէ
լսողները սրբան են հասկացել իրանց դասախօսութիւններէյ,
իսկ լսողները իրանց համար մութ մնացած զանազան հարցերի
մասին լրացուցիչ և պարզաբանող տեղեկութիւններ են ստա-
նում: Դասախօսներն իրանց գլխաւոր ուշադրութիւնը դարձ-
նում են այն բանի վրայ, որ սովորողները ստանան ամբողջա-
կան և հիմնաւոր կրթութիւն՝ դորձնական և հասարակական
կեանքի մէջ զինուած լինելու համար: Դանիայի ժողովրդական
համալսարաններում չեն սովորում քննութեան համար, ապացոյց
որ սովորողներն իրանց դասընթացը աւարտելուց յետոյ վկա-
յականներ չեն ստանում: Ամեն ինչ կեանքի համար է նշանա-
կուած: Ամեն շաբաթուայ երկու երեկոները սովորաբար նուի-
րում են բնդհանուր գրուցաբանութեան և վիճարանութեան,
որոնք համալսարաններում սովորողների մտաւոր զարգացմանը
չափ են նպաստում:

Դանիայի ժողովրդական համալսարանների գլխաւոր նպա-
տաւն է պարտաճանաչ և գիտակից քաղաքացիներ պատրաս-
տել: Կրթական վերոյիշեալ հիմնարկութիւններում կրօնի դա-
սատուութիւն, բառիս իսկական նշանակութեամբ, գոյութիւն
չունի: Ամեն առաւօտ ունկընդիբները համառօտ ազօթում են,
կիրակի օրը եկեղեցում քարոզ է լինում, իսկ համալսարան-
ների մեծ մասում երբեմն մեկնաբանում են Նոր-Կտակարա-
նի: մի քանի կարեւոր նիւթեր: Վերջին երեւոյթը զարմանալի
է նրա համար, որ ժողովրդական համալսարանների հիմնադիրը
մի հոգեւորական՝ Կալիսկոպոս Գրունդվիգն էր: Վերջինիս սկզբ-
բունքը հետեւեալն էր. (Մարդ ոչ թէ շատ պէտք է խօսի կրօնի
մասին, այլ պէտք է աշխատի կրօնական հոգով ապրելու):
Գրունդվիգն երիտասարդներից պահանջում էր աւելի շուտ կրօ-
նական տրամադրութիւն, քան թէ կրօնական շատախօսութիւն
և իմաստութիւն: Հէնց այդ տեսակէտից ժողովրդական համալ-
սարանները մեծ ծառայութիւն են մատուցել և իրանց սա-
ների մեծամասնութիւնից պատրաստել են հասարակական, ըն-
կերական և ազգայնական բնագիւծերով օժտուած անհատներ:
Ժողովրդական համալսարանների միջնորդը մաքուր և առողջ
է, ամենուրեք տիրում է սէր և ընկերական զգացմունք: Իրանց
իղեալները կորցրած երիտասարդները այնտեղ վերստին զօր-
նում են: Վատ և բացասական յատկութիւնների զարգացման

համար վերոյիշեալ հիմնարկութիւններում հող չը կայ, որովհետեւ դասախօս-ուսուցիչները ոչ թէ սովորական մահկանացուներ են, այլ մեծ մասամբ դադափարական, անձնազուհի իրանց ժողովրդի բարեկեցութեան համար նախանձախնդիր անհատներ, որոնք օժտուած են իղէալական ձգտումներով և հակումներով: Եթէ ուսուցիչներն վերոյիշեալ յատկութիւններով չեն օժտուած և հասարակական կեանքում յոյս չեն տուել իրանց բարոյական տոկունութիւնն ու եռանդը, այն ժամանակ որոնք չեն կարող դասախօսի պաշտօն ստանալ ժողովրդական համալսարաններում:

Վերջին հիմնարկութիւններից դուրս եկող երիտասարդները կեանքի մէջ մտնելով աշխատում են իրականացնել այն իղէալները, որ նրանք ստացել են սովորելու ժամանակ: Այժմ նրանք զինուած են նախանձելի մտաւոր պաշարով, ունենաւելի զբաղմունք և գիտակցական աշխարհայեցողութիւն, աւելի շուտ են ըմբռնում իրանց շրջապատող հասարակութեան ժամանակակից կարեւոր և բազմակողմանի պահանջները, մի խօսքով դարձել են այդ հասարակութեան կարեկից և ցանկալի անդամները և աշխատում են նպաստել նրա ընդհանուր բարեկեցութեանը: Դանիայի ժողովրդական համալսարանները իրանց գոյութիւնը պահպանում են ամենից առաջ համայնքների նիւթական նուէրներով, համալսարանականների թոշակներով և կառավարութեան նպաստով: Վերջինս նիւթականապէս նպաստելով ժողովրդական համալսարաններին, բոլորովին չէ միջամտում նրանց ներքին կազմակերպութեանն և գործերի մէջ:

Անգլիայի ժողովրդական համալսարանները, որոնք իրանց ծրագրով և կազմակերպութեամբ բոլորովին տարբերում են զանիականից, կազմում են ժողովրդական համալսարանների երկրորդ տեսակը կամ տիպը: Նրանք սկիզբ առան Անգլիայում 1872 թ. յետոյ, ի նկատի չունեն գործնական նպատակներ, այլ աշխատում են գիտութիւնը ժողովրդականացնել:

Անգլիայում ժողովրդական համալսարանները կամ բարձրագոյն դպրոցները զանաւում են գրեթէ միայն մեծ և միջին քաղաքներում և հիմնուած են ոչ թէ մասնաւոր մարդկանց կամ ընկերութիւնների նախաձեռնութեամբ, ինչպէս Դանիայում, այլ իրանց ծագմամբ գլխաւորապէս պարտական են կրթական կենտրոնական մի քանի վարչութիւնների: Քեմբրիջի, Օքսֆորդի, Մանչեստրի (Վիկտորիան) համալսարանները և Լոնդոնի կրթական մեծ ընկերութիւններն են ներկայացնում այն գլխաւոր կենտրոնները, որոնք 38 միլիոն ազգաբնակչութիւն ունեցող Անգլիայում կազմակերպում են ժողովրդական սիստե-

մատիական դասախօսութիւններ: Այդ 4 գլխաւոր կենտրոններն են կառավարում անգլիական ժողովրդական համալսարանների գիտնական և վարչական գործերը, նրանք են որոշում աւանդուելիք առարկաները, նշանակում դասախօսներին և նրանց նիւթական վարձատրութեան քանակը: Այդ 4 գլխաւոր կրթական կենտրոններին բարոյապէս և նիւթականապէս օգնում են Անգլիայի բազմաթիւ քաղաքներում գտնուող դրանց ձեւերը: Ժողովրդական համալսարանների դասախօսները սովորաբար չընդ կամ թափառական ուռույիչներ են, որոնք բազկացած են ոչ միայն համալսարանների ուսուցչապետներից և դոյենտներից, այլ և շատ անգամ մասնաւոր անհատներից, որոնք աչքի են ընկնում համալսարանական կրթութեամբ և ընդհանուր զարգացմամբ: Այդ դասախօսները շատ անգամ անհագին տարածութիւններ են անցնում, որպէս զի նշանակուած դասախօսութիւնները որոշուած տեղերում կարգան: Դասախօսութիւնների նիւթերը բազմակողմանի և բազմաբովանդակ են լինում, սովորաբար գիտութեան գրեթէ բոլոր ձեւերից: Օր. անցեալ տարի միայն Քեմբրիջը և Օքսֆորդը Անգլիայի զանազան տեղերում կազմակերպել են բնական գիտութիւնների 265 դասախօսութիւններ, գրականութիւնից և գեղարուեստից 146 դաս., քաղաքատնտեսութիւնից և նրա օժանդակ մի քանի գիտութիւններից 217 դաս. և այլն: Ամենաքիչ դասախօսութիւններ են կարգացուել փիլիսոփայութեան, կրօնի և մանկավարժութեան մասին: Բացի վերոյիշեալ տեսական գիտութիւններից անգլիական ժողովրդական համալսարաններում մեծ ուշադրութիւն են դարձնում և գործնական գիտութիւնների վրայ, որոնք կեանքի և գոյութեան համար շատ անհրաժեշտ են: Ժողովրդական համալսարաններ կազմակերպող անգլիական 4 զբաղւոր կենտրոնները հիմնել են զանազան քաղաքներում և բազմաթիւ գրադարաններ, որոնք պարունակում են իրանց մէջ գիտութեան բոլոր ձեւերի վերաբերեալ ժողովրդական ամենատարրական հրատարակութիւնները բազմաթիւ օրինակներով, որպէս զի համալսարանների ունկընդիրները կարողանան դրանցից նպատակայարմար կերպով օգտուել: Անգլիական ժողովրդական համալսարանները տարբերում են դանիական արպից նրանով, որ անգլիականում լսողները իրանց ցանկացած դասընթացները աւարտելուց յետոյ պարտաւոր են քննութեան ենթարկուել գործնական կեանքի համար վկայականներ ստանալու: Անգլիայում էլ ժողովրդական համալսարանները իրանց գոյութիւնը պահպանում են 4 կենտրոնների, կրթական զանա-

զան ընկերութիւնների, կառավարութեան և մասնաւոր բարեգործ անհատների գրամական նուէրներով:

Հետաքրքիր է այստեղ յիշել և այն ժամանակ, որ անգլիական կառավարութիւնը իր գրամական նպաստը ժողովրդական համալսարաններին տալիս է ոգելից խմիչքների համար սահմանուած մաքսերից, այն է տարեկան մօտ 71½ միլիոն բոլբոլ չափ: Բայց չը պէտք է մոռանալ նաև այն հանգամանքի վրայ շեշտելու, որ ժողովրդական համալսարանների գործը երբեմն կազմում է Անգլիայում, որովհետեւ կառավարութիւնը նիւթականապէս քիչ է նպաստում գործին, իսկ 4 գլխաւոր կենտրոնները երբեմն չեն կարողանում ծածկել իրանց բոլոր ծախքերը և դրա համար ստիպուած են լինում շատ անգամ զանազան տեղերում դադարեցնել դասախօսութիւնները: Բայց բարեբաղդաբար անցնալ տարուանից ի վեր անգլիական կառավարութիւնը սկսել է նիւթական աւելի խոշոր նպաստներով մասնակցել ժողովրդական համալսարանների օգտակար գործին: Անգլիական ժողովրդական համալսարանների տիպը ժամանակի ընթացքում տարածուել է Եւրոպայի մի քանի երկրներում օր. Աւստրո-Ունգարիայում, Ֆրանսիայում և այլն, բայց այդ սիւստեմը վերջին երկրներում դեռ եւս չէ տուել կուլտուրական այն արդիւնքները, ինչպէս որ Անգլիայում:

Վերջապէս, Գերմանիայի ժողովրդական համալսարանները ներկայացնում են այդ օրինակ հիմնարկութիւնների երրորդ ընտրել տեսակը կամ տիպը: Եթէ ի նկատի ունենանք գերման ժողովրդի բարձրագոյն կրթութեան հարցով զբաղուած մի քանի գիտնականների այն ճիշտ կարծիքը, իբր թէ քաղաքակրթութեամբ Գերմանիան իր ժողովրդական համալսարաններով բաւական պատուաւոր տեղ է բռնում Եւրոպական միւս երկրների շարքում, այն ժամանակ մենք սխալուած և մեղանշած չենք լինի իրականութեան դէմ: Ծիշտ է Գերմանիայում հասարակական կարծիքը աւելի ուշ է սկսել զբաղուել ժողովրդական համալսարանների հարցով, բայց այնուամենայնիւ նա վերջին տասնամեակում կուլտուրական այնպիսի շարժում է առաջ բերել յօգուտ ժողովրդական մասսայի ընդհանուր և բարձրագոյն կրթութեան և բոլորովին անկախ կերպով գլուխ է բերել ժողովրդական այնպիսի համալսարաններ, որոնք օրինակի տեղ կարող են ծառայել նրա հարեւան երկրներին համար:

Որ ժողովրդական համալսարանների երրորդ տիպը ներկայացնում է գերմանականը, այդ բանին իբրեւ ընտրել օրինակ է ծառայում Բերլինի Հումբոլդեան ակադեմիան կամ ժողովրդական առաջին համալսարանը, որ հիմնուեց 1878 թ.

Հումբոլդ հռչակաւոր գիտնականի և նշանաւոր հրապարակախօս Ռիկէրտի նախաձեռնութեամբ: Գերմանական և անգլիական ժողովրդական համալսարանների մէջ բացի միմեանց հետ տարբեր գծերից, գոյութիւն ունեն և նմանութիւններ ըստ իրանց նպատակի և մեթոդի և այդ հանգամանքը գլխաւորապէս կարելի է բացատրել կուլտուրաների այն նմանութեամբ, որ յատուկ է թէ Սնդլիային և թէ Գերմանիային, նախանաւանդ եթէ ի նկատի ունենանք վերոյիշեալ երկու երկրների տնտեսական և արդիւնաբերական նոյնանման պայմանները:

Թէև գերմանական ժողովրդական համալսարանները դեռ եւս մուտք չեն գործել գիւղական ազգաբնակչութեան մէջ և ծառայում են գլխաւորապէս քաղաքների ազգաբնակչութեան համար, բայց այնուամենայնիւ ոչ մի երկիր այնքան աչքի չէ ընկնում իր ժողովրդական համալսարանների բազմակողմանի, բազմարժանեղակ և սխառեմատիկ ծրագրով, որքան Գերմանիայում ներկայումս գոյութիւն ունեցող ժողովրդական համալսարանները, նախանաւանդ Բերլինի Հումբոլդեան ակադեմիան: Օր., այն ինչ 1899 1900 թ. 4 միլիոն ազգաբնակչութիւն ունեցող Լոնդոնում կարգացուել են 162 չարք կամ ցիկլուս դասախօսութիւններ, Վիէնայում 57, Բերլինում կարգացուել են 218 ցիկլուս դասախօսութիւններ:

Բայց գերմանական ժողովրդական համալսարաններում տիրում է ճեմարանական ազատութիւնը, այսինքն լսողները իրանց հետաքրքրող դասընթացները լսելուց յետոյ պարտադիր չեն քննութեան ենթարկուելու, ինչպէս անգլիականում, և, բացի դրանից, փորձնականը և գործնականը վերոյիշեալ հիմնարկութիւններում ցանկալի կերպով յարգուած չէ, ինչպէս որ գանիական ժողովրդական համալսարաններում: Սրանից պարզ երեւում է, որ գերմանական ժողովրդական համալսարաններում տիրապետողը աւելի տեսական տեղեկութիւններն են: Վերևսում շեշտեցինք, որ գերմանական ժողովրդական համալսարանների համար բնորոշ տիպը ներկայացնում է Հումբոլդի ակադեմիան, որ միւսների հետ համեմատած աչքի է ընկնում իր լսողների մեծ քանակութեամբ և նրանց դէպի ընդհանուր կրթութիւնը տաժած նոսնգով: Վիճակագրական տեղեկութիւնները պարզ ցոյց են տալիս, թէ վերոյիշեալ ակադեմիան հետզհետէ լինչպիսի հսկայական քայլերով է յառաջադիմել: Օր., այն ինչ 1881|82 թ. այնտեղ լսողների թիւը 536 էր, 1900|1901 թ. դրանց թիւը հասաւ 10,146-ի: Այդ ակադեմիայի կամ ժողովրդական համալսարանի վարչութիւնը ամեն ջանք գործ է դնում, որպէս զի այնտեղ լսողների թիւը երկու սեռից էլ հա-

ւասար լինի և, բացի զբանից, ժողովրդական գրեթէ բոլոր շըր-
ջաններից էլ մասնակցեն իր դասախօսութիւններին: Եւ յիրա-
ւի, նա կարողացել է հասնել իր նպատակին. այնտեղ լսում են
թէ երկու սեռից և թէ վաճառականներ, արհեստաւորներ,
բանուորներ, զանազան պաշտօնեաներ, ուսուցիչներ, ծառայող-
ներ և այլն, ինչպէս որ մենք մի անգամ առիթ ունեցանք ան-
ձամբ տեսնելու: Հումբուրգեան ակադեմիայում դասախօսու-
թիւններին մասնակցել են ոչ միայն ժողովրդի բոլոր դասա-
կարգերը, այլ և, որ ամենագլխաւորն է, ինչպէս մինչեւ այժմ՝
հրատարակուած վիճակագրական տեղեկութիւնները ցոյց են
տալիս, ժողովրդի ամենաբազմաճաճ տարրը՝ արհեստաւորները
և բանուորները, որոնք ամենից մեծ կարիք ունեն բարձրագոյն
և ընդհանուր կրթութիւն ստանալու: Այդ հանգամանքը կարե-
ւի է բացատրել և նրանով, որ դասախօսութիւնների համար
իւրաքանչիւր լսող ամեն մի քառորդ տարուայ համար վճարում
է միայն 3 մարկ կամ 1¹/₂ բուրլի: Վերոյիշեալ ժողովրդական
համալսարանում լսողների գրեթէ կէսը կազմում են օրավար-
ձով ապրող մարդիկ: Մինչեւ այժմ եղած՝ փորձը ցոյց է տուել,
որ արհեստաւորներն ու բանուորները աւելի մեծ քանակու-
թեամբ և եռանդով կ'այցելեն ժողովրդական համալսարան-
ները, եթէ նրանք իրանց տրամադրութեան տակ աւելի շատ
ազատ ժամանակ ունենան. բայց չէ որ նրանք օրուայ մեծ
մասը պէտք է աշխատեն հարուստների համար, որպէս զի
իրանց թշուառ գոյութիւնը սլահպանելու համար բաւարար
օրավարձ ստանան: Դրա համար է, որ դերմանական ժողովրդ-
դական համալսարանների զարգացման նպաստող նշանաւոր գոր-
ծիչներ վաղուց ի վեր սկսել են հասարակական կեանքում պրո-
պագանդա բանուորների աշխատանքի ժամանակը կրճատելու,
որպէս զի նրանք կարողանան աւելի նպատակայարմար կերպով
օգտուել գիտութեան բարիքներից:

Իրանց կազմակերպութեամբ գերմանական ժողովրդական
համալսարանները բոլորովին տարբերում են անգլիական տի-
պից նրանով, որ նրանք ոչ թէ համարում են Գերմանիայում
վաղուց գոյութիւն ունեցող տէրունական համալսարանների
յաւելուածները, այլ բոլորովին անկախ հիմնարկութիւններ են
ներկայացնում, որոնք իրանց ծագումով պարտական են ժողո-
վրդական մասսայի կամ ամբոխի բարձրագոյն կրթութեան
գործով հետաքրքրուող բոլոր մարդկանց: Կրթական այդ հիմ-
նարկութիւնները իրանց գոյութիւնը գլխաւորապէս սլահպա-
նում են քաղաքային ինքնավարութիւնների, կրթական և բանու-
որական զանազան ընկերութիւնների, գերմանական միացեալ

տէրութիւնների և մասամբ էլ ունկընդիւրների տուած նիւթական նպաստներով ու նուէրներով Գերմանիայի գրեթէ իւրաքանչիւր աչքի ընկնող քաղաքում գոյութիւն ունի մի ընկերութիւն, որի անունն է «Ժողովրդի բարձրագոյն կրթութեան համար հոգացող ընկերութիւն» և որի վրայ է գլխաւորապէս ծանրաբեռնուած Ժողովրդական համալսարանների կազմակերպութեան հոգսը։ Այդ ընկերութեան կարող են անգամ գրուել գերմանական ազգաբնակչութեան բոլոր դասակարգերից և կուսակցութիւններից մարդիկ և զրա հետ կարող են միանալ ամեն տեսակ ընկերութիւններ և հաստատութիւններ իրանց տարեկան որոշ անդամավճարներով։ «Ժողովրդի բարձրագոյն կրթութեան համար հոգացող ընկերութիւն» է կազմում և որոշում Ժողովրդական համալսարանների ուսման ծրագիրը և վերջինս իրագործելու համար Գերմանիայի զանազան տեղերից հրաւիրում գիտնական ոյժեր՝ դասախօսներ և երբեմն նրանց նիւթական վարձատրութիւնը նշանակում։ Ընկերութիւնը դասախօսող գիտնականների վերաբերմամբ խիստ ընտրութիւն է աւնում։ Նրանցից պահանջւում է գիտական ու հետադարձական ընդունակութիւն և պատրաստութիւն։ Այդ դասախօսները նշանակւում են Գերմանիայի զանազան համալսարանների և ինստիտուտների ուսուցչականներից, պրիվատ—դոցենտներից և ասսիստենտներից, գիմնազիանների և բէալական դպրոցների ուսուցչականներից և աւագ ուսուցիչներից, տէրունական պաշտօնեաներից՝ դատաւորներից, փաստաբաններից և այլն, յաճախ էլ մասնաւոր գիտնականներից և հասարակական զանազան գործիչներից։ Բացի գիտնական պաշարից և հետադարձական ընդունակութիւնից, դասախօսներից պահանջւում է և անկեղծ ցանկութիւն և իդէալական վերաբերմունք դէպի իրանց ստանձնած պատասխանատու և գաղափարական պաշտօնը։ Կարիէրիստ և ոգեւորելու ընդունակութիւնից զուրկ դասախօսները սովորաբար տեղ չեն գտնում գերմանական Ժողովրդական համալսարաններում։ Այդ դասախօսների մի զգալի տոկոսը շատ անգամ առանց նիւթական որեւէ վարձատրութեան է ծառայում Ժողովրդական համալսարաններում, ցանկանալով միայն իր կողմից նպաստել Ժողովրդի բարձրագոյն կրթութեան զարգացման։ Բայց չը նայելով այդ հանգամանքին, գերմանական գրեթէ բոլոր Ժողովրդական համալսարանները սկզբունքով նիւթականապէս վարձատրում են իրանց դասախօսներին, որպէս զի նրանց վերաբերմամբ խստապահանջ լինին և Ժողովրդի բարձրագոյն

կրթութեան գործը յանուն ազգասիրութեան և ձրի ծառայութեան չը կազայ:

Գերմանիայի ժողովրդական համալսարանները գլխաւորապէս դասնում են առեւտրական ու արդիւնաբերական մեծ և խոշոր քաղաքներում և բացի դրանից տէրունական համալսարաններ ունեցող քաղաքներում Օր.: Գերմանիայի 21 համալսարանական քաղաքները ունեն միաժամանակ և իրանց ժողովրդական համալսարանները, որոնք, միւս քաղաքների համալսարանների հետ համեմատ, աւելի ծաղկած և բարեկարգ վիճակի մէջ են դասնում, որովհետեւ դրանց դասախօսների ամենամեծ տոկոսը բաղկացած է տէրունական համալսարանների ուսուցչապետներից, որոնց մեծ մասը ձրի է դասախօսում: Յիշենք օրինակի համար Բերլինի, Միւնխէնի, Հայդելբերգի, Լայպցիգի, Տիւբինգէնի, Բրեսլաուի, Գիդէնի, Ենայի և այլն ժողովրդական համալսարանները, այն ինչ առեւտրական և արդիւնաբերական քաղաքներից միայն Համբուրգի, Մանհայմի, Կարլսրուէի, Ֆրանկֆուրտի (Մայնի վրայ), Գիօնի, Ալէնի, Նիւրնբէրգի, Շտուտգարդի և այլն ժողովրդական համալսարաններն են աչքի ընկնում իրանց բարեկարգութեամբ և զարգացմամբ: Գերմանական ժողովրդական համալսարանների միակ և ամենագլխաւոր բացասական կողմը այն է, որ նրանք մեծ մասամբ անմատչելի են գիւղական և փոքրիկ քաղաքների ազգաբնակչութեան, մի բան, որով այժմ զբաղուած են գերմանական հասարակական կարծիքը ու մամուլը և սաստիկ պրօպագանդա են անում յօգուտ վերոյիշեալ ազգաբնակչութեան բարձրագոյն կրթութեան:

Այդ հարցը անցեալ տարիներում շատ անգամ նոյն-իսկ գերմանական ռայխստագի քննութեան և խորհրդածութեան նիւթ է եղել և ապագայում հաւանօրէն դրական մտքով կը լուծուի յօգուտ եթէ ոչ գիւղական, գոնէ փոքրիկ քաղաքների ազգաբնակչութեան, որովհետեւ գերմանական քաղաքական կուսակցութիւններից շատերը վաղուց եկել են այն համոզմունքին, որ գերմանական տէրութիւնը բարոյապէս պարտաւոր է իր գանձարանից աւելի խոշոր գումար բաց թողնել Գերմանիայի փոքրիկ քաղաքներում եւս ժողովրդական համալսարաններ հիմնելու: Բայց չը նայելով դրան, Գերմանիան իր ժողովրդական համալսարաններով կանգնած է իր դրութեան բարձրութեան վրայ և օրինակի տեղ կարող է ծառայել առհասարակ այն բոլոր հարեւան երկրների համար, որոնք չեն ցանկանում, որ ընդհանուր և բարձրագոյն կրթութիւնը իրանց ազգաբնակչութեան միայն բարձր խաւերի սեպհականութիւնը լինի: Իւրաքանչիւր

երկրում կուլտուրական և հասարակական նախանձելի կեանք տեղեկելու համար ամենից առաջ հարկաւոր է այդ երկրի ժողովրդի բոլոր խաւերի կրթութեան մակերեւոյթը բարձրացնել, որովհետեւ՝ «կուլտուրան միայն այն ժամանակ կարող է իր դերը ցանկալի կերպով կատարել, երբ նա թափանցել է ժողովրդական բոլոր, նամանաւանդ ամենաստորին խաւերի մէջ», շատ ճիշտ ասել է մի անգամ Գերմանիայի ներկայ կայսր Վիլհելմ Բ:

Մեր յօդուածի սկզբում ասացինք, որ եւրոպական ժողովրդական համալսարանների գաղափարը և սաղմային զրութիւնը սկսել են մուտք գործել և հայերիս մէջ: Ժամանակ է արդէն, որ այդ գաղափարը ժողովրդականանայ և շատ տարրական ու համեստ կերպով իրականանայ մեզանում: Բազուի հանրակրթական կուրսերի նման դասախօսութիւններ համեստ կերպով կարելի է կազմակերպել և կովկասի ուրիշ քաղաքներում: Բարոյական մեծ պարտականութիւն ունեն կովկասեան զանազան ինտելիգենտ-մասնագետները հաւաքական ոյժով և պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութեամբ գիտութեան կարեւոր ճիւղերից ժողովրդական շատ դիւրամատչելի և սխտեմատիկ դասախօսութիւններ կազմակերպելու ժողովրդի կրթութեան և տեղական պահանջների համաձայն, որպէս զի ժողովրդի կարօտ խաւերը կարողանան գիտութեան գոնէ ամենատարրական բարիքները վայելել և քիչ կամ շատ գիտակցաբար վերաբերուել զէպի իրանց հասարակական և անհատական պարտականութիւնները:

Լ. ԲԱՐԱՅԵԱՆ

Մ Օ Ն Ն Ա Վ Ա Ն Ն Ա

ԴՐԱՄԱՆ ԵՐԵՔ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

Մօրիս Մէտեղիկի

Ե Ր Ր Ո Ր Դ Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հանդիսարան՝ Գուրգո Կօլօննայի պալատում: Բարձր պատուհաններ, մարմարէ սիւներ, կամարակապ սրահ, գորգ ու վարազոյրներ և այլն: Ձախ կողմում՝ երկրորդ կարգում՝ ընդարձակ պատշգամբ, որի ճաղապատի (բալխատրագ) վրայ շարուած են մեծ-մեծ ծաղկակիր անոթներ և ուր բարձրանում են երկու արտաքին սանդուխներով: Հանդիսարանի մէջտեղում, սիւների արանքին, մարմարէ լաշն աստիճաններ տանում են դէպի այդ նոյն պատշգամբը, որտեղից պէտք է որ երևայ քաղաքի մի մասը:

Առաջին սենարան

Ներս եմ մտնում ԳՈՒԻԴՈՆ, ՄԱՐԿՈՆ, ԲՈՌՍՈՆ և ՏՈՒԷԼԼՈՆ:

ԳՈՒԻԴՈ. Ես արեցի ձեր ուզածը, նրա ուզածը, ամենքի ուզածը. արդարութիւնը պահանջում է, որ իմ կամքն էլ վերջապէս կատարուի: Ես լռեցի, ես թաք կացայ, ես շունչս պահեցի, ինչպէս կարող է անել մի վախկոտ մարդ, երբ գողերը կողոպտում են իր տունը... Եւ ես ազնիւ էի իմ անարգութեան մէջ... Դուք ինձ մանրակրկիտ վաճառական դարձրիք... Տեսէք, արշալոյսը բացւում է... Տեղիցս չեմ շարժուել մինչև այժմ... Ես չափում ու կշռում էի իմ խայտառակութիւնը... Պէտք էր ճշտիւ կատարել սակարկութեան պայմանները և վճարել ձեր ուտելիքների գինը... Պէտք էր, որ այս վսեմ գիշերը մինչև ամենավերջին րոպէն պատկանէր գնողին: Օ՛հ, այդ շատ թանկ գին չէր այնքան տաւարի, այնքան ցորեն ու բանջարի համար... Բայց այժմ ես վճարել պրծել եմ իմ ամբողջ վճարելիքը և դուք կերել՝ կշտացել էք... Այժմ ես արդէն ազատ եմ, այժմ կրկին ես եմ այստեղի իշխանաւորը և դուրս եմ գալիս իմ խայտառակութիւնից...

ՄԱՐԿՈ. Ձը գիտեմ, որդիս, թէ ինչ էք ուզում անել... Ձը կայ ոչ մի մարդ, որ իրաւունք ունենար միջամտել ձեր վշտի նման մի վշտի կամ կարողանար սփոփել այդպիսի մի վիշտ, և ես չատ լաւ հասկանում եմ, որ նոյն իսկ այն անհուն երջանկութիւնը, որ չրջապատում է այժմ ձեզ ամեն կողմից և որ ծագել է ձեր վշտի աղբիւրից, կարող է միմիայն աւելի ևս դառնացնել ձեր առաջին արցունքները... Այժմ, երբ քաղաքը փրկուած է արգէն, մեզ էլ գրեթէ ցաւալի է թւում այդ փրկութիւնը, որ այնքան թանկ նստեց ձեզ, և մենք, կարելի է ասել, յաւիտայից խոնարհեցնում ենք մեր գլուխը այն մարդու հերկայութեամբ, որին միմիայն, անիրաւաբար, վիճակուեց կրել ամբողջ ծանրութիւնը... Եւ սակայն, եթէ մի հրաշքով երէկուան օրը նորից կրկնուէր, ես պարտաւոր կը լինէի վարուել այնպէս, ինչպէս երէկ վարուեցի, մատնացոյց անել նոյն զոհերը և զրդել գործելու նոյն անարդարութիւնը, որովհետեւ արդար վարուել ուզողը ստիպուած է շարունակ՝ դառնացած սրտով ընտրել երկու կամ երեք անհաւասար անարդարութիւններից մէկը կամ միւսը... Ձը գիտեմ՝ ինչ ասեմ ձեզ, բայց եթէ իմ ձայնը, որ երբեմն սիրելի էր ձեզ, կարող է այս վերջին անգամը թափանցել ձեր սրտի մէջ, որ միշտ լսում էր նրան, խնդրում եմ ձեզ, որդիս, չը հետեւէք կուրօրէն այն խորհուրդներին, որ կը թելադրեն ձեզ առաջին ըռպէի զայրոյթն ու վիշտը... Սպասեցէք զոնէ, որ անցնի այն վտանգաւոր ժամը, որ մեզ ասել է տալիս այնպիսի խօսքեր, որ չի կարելի այլ ևս յետ առնել... Վաննան գալու է չուտով... Մի դատէք նրան այսօր, յետ մի մղէք ոչ ոքի, մի արէք ոչ մի բան, որ կարող է անուղղելի լինել... Իսկ իմացէք, որ անուղղելի է, անհրաժեշտօրէն և անգթօրէն անուղղելի՝ այն ամենը, ինչ որ մարդ անում ու ասում է ծայրայեղ վշտի ըռպէին... Վաննան գալու է չուտով, յուսահատ, բայց և երջանիկ... Մի յանդիմանէք նրան... Մի տեսնուէք նրա հետ գալուն պէս, եթէ ոյժ էք զգում ձեր մէջ խօսելու նրա հետ այնպէս, ինչպէս կը խօսէիք հետը, եթէ վաղուց ի վեր վերադարձած լինէր... Եթէ իմանայիք, որքան բարութիւն, արդարութիւն և խոհմտութիւն են թելադրում սահող ժամերը մեզ, ողորմելի մարդկանցս, որ խաղալիք ենք այնքան հզօր ոյժերի... Հաւատացէք ինձ, միակ խօսքերը, որոնք զին ունեն, միակ խօսքերը, որ մարդ պէտք է առաջուց իմանայ, երբ կսկիծը կուրացնում է մեզ, այն խօսքերն են, որ մարդ արտասանում է այն ժամանակ, երբ աչքերը քացւում են, երբ հասկանում է եղածը, երբ արդէն ներած է լինում և սկսում է նորից սիրել...

ԳՈՒԻԴՈ. Պրծաւ ձեր ասելիքը... Իմացէք վերջապէս, որ այլ ևս անցել է մեղրածոր խօսքերի ժամանակը և որ այդպիսի խօսքերով չի կարելի այլ ևս խաբել ոչ ոքի... Ես թոյլ տուեցի, որ վերջին անգամ դուք ասէք ինձ ձեր ասելիքը, որովհետև ուզում էի իմանալ, թէ ինչ ունէր ինձ տալու ձեր իմաստութիւնը կեանքիս փոխարէն, որ նա խորտակեց այնքան վարպետօրէն... Այդ է ուրեմն նրա առաջարկածը՝ Սպասել, համբերել, ընդունել, մոռանալ, ներել և լավ... Սակայն կը ներէք Այդ շատ քիչ է... Ես աւելի լաւ եմ համարում խոհեմ չը լինել, և լոկ խօսքերը ինձ բաւական չեն խառնապատկութիւնիցս դուրս գալու համար... Իմ ուզածս շատ պարզ բան է։ Մի քանի տարի առաջ դուք ինքներդ կը թելադրէիք ինձ նոյն բանը։ Վաննան պատկանել է ուրիշ տղամարդի։ Վաննան այլ ևս իմս չէ, քանի որ կենդանի է այդ մարդը։ Ես չեմ կարող ասելք՝ առաջնորդուելով քերականական կանոններով։ Ես ուրիշ կանոնների եմ հետևում. ես հետևում եմ այն վեհ օրէնքին, որ իշխում է բոլոր՝ սրտի տէր մարդկանց վրայ... Պիզան ունի այժմ ուտելու և պաշտպանուելու միջոցներ։ Նա զէնքեր է ստացել, ես կը վերցնեմ այդ զէնքերից իմ արդար բաժինը։ Այսօրուանից ինձ են պատկանում Պիզայի զինուորները, գոնէ նրանցից լաւագոյնները, որոնց ես եմ զօրագրել և որոնց վարձը ես եմ վճարել իմ սեփական քսակից։ Ես այլ ևս ոչինչ պարտական չեմ Պիզային և յետ եմ վերցնում այն, ինչ որ ինձ է պատկանում։ Այդ զինուորներին ես յետ կը տամ Պիզային միայն այն ժամանակ, երբ նրանք կանեն այն, ինչ որ ես իրաւունք ունեմ նրանց անել տալու... Գալով մնացածին, ահա թէ ինչ եմ անելու. Վաննան... Ես ներում եմ նրան կամ կը ներեմ նրան, երբ այն մարդը այլ ևս կենդանի չի լինի... Վաննան խաբուել է. նա սոսկալի սխալ է գործել, բայց, ինչ էլ լինի, նա հերոսաբար է սխալուել... Մարդիկ զազրելի կերպով ի չարը գործ դրին նրա սրտի գութն ու հոգու վեհութիւնը... Այդ ոչինչ, այդ կարող է՝ եթէ ոչ մոռացուել՝ գոնէ այնքան աղօտանալ անցեալի խորքում, որ սիրող աչքը այլ ևս չի կարողանալ նշմարել նրան... Բայց կայ մի մարդ, որին ես չեմ կարող տեսնել այլ ևս առանց կարմրելու և առանց քսամնելու... Մի մարդ կայ այստեղ, որի միակ նպատակակէտը պէտք է լինէր ուղեցոյց և նեցուկ հանգիստանալ ագնիւ և վեհ երջանկութեան... Բայց նա դարձաւ այդ երջանկութեան ոտոխը և կործանիչը, և ահա դուք ականատես կը լինէք այժմ մի բանի, որ սոսկալի է, բայց և միանգամայն արդար. դուք կը տեսնէք, թէ ինչպէս մի զաւակ, այս՝ առժամանակ տալին ու վրայ եղած

աշխարհում, դատում է իր հարազատ հօրը, անիծում է նրան, ուրանում է նրան, քշում է նրան իր աչքի առաջից և արհամարհում ու ատում է նրան...

ՄԱՐԿՕ. Նզովեցէք ինձ, որդիս, միայն թէ ներեցէք նւրան... եթէ ձեր կարծիքով մի աններելի սխալ կայ այն հերոսութեան մէջ, որ փրկեց բիւր կեանքեր, սխալը ամբողջովին իմա է, իսկ հերոսութիւնը՝ ուրիշներինը... Լաւ խորհուրդ էր իմ տուածը. բայց նա հեշտ խորհուրդ էր ինձ համար, որովհետեւ ես մաս չունէի պահանջուած գոհի մէջ... Բայց այսօր, երբ այդ խորհրդի պատճառով ես զրկւում եմ այն բանից, որ ամենաթանկն է ինձ համար, նա աւելի ես լաւ է թւում ինձ... Դուք շատ լաւ էք դատել ձեր խղճի համաձայն, իսկ ես իսկ այնպէս, ինչպէս ես ինքս կը դատէի, եթէ աւելի ջանիլ լինէի... Ես գնում եմ, զաւակս, և դուք չէք տեսնիլ ինձ այլ ես. ես լաւ գիտեմ, որ իմ տեպր կը դառնայնի ձեր հոգին, բայց յոյս ունեմ կրկին տեսնել ձեզ, առանց ձեր աչքին երեւալու... Եւ քանի որ ես հեռանում եմ առանց համարձակուելու յուսալ, թէ կայրեմ մինչև այն օրը, երբ դուք ինձ կը ներէք ձեզ հասցրած չարիքս,—որովհետեւ ես ինքս էլ ապրել եմ, ուստի և լաւ գիտեմ, որ ներողութիւնը շատ դանդաղ է առաջ ընթանում, երբ մարդ իր կեանքի կէսունն է գտնւում ձեզ պէս,—քանի որ հեռանում եմ այստեղից այսպիսի աննախանձելի դրութեան մէջ, կուղէի գոնէ վատահ լինել, որ ինձ հետ տանում եմ այստեղից ձեր ամբողջ քէնն ու ատելութիւնը, ձեր սրտի բոլոր դաժան յիշողութիւնները, և որ ոչ մի նշոյլ այդ զգացմունքներից չի մնայ նրա համար, որ գալու է շուտով... Ես միայն մի բան կը խնդրեմ ձեզանից... Թոյլ տուէք ինձ վերջին անգամը տեսնեմ, թէ ինչպէս նա նետւում է ձեր գիրկը... Այնուհետեւ ես կը հեռանամ առանց տրտնջալու և առանց ձեզ անարդար համարելու... Լաւ է, որ մարդկային աղէտների միջոցին ամենածերը վերցնի իր ուսերի վրայ այն բոլորը, որ նա կարող է կրել, որովհետեւ մի քանի քայլից յետոյ նրա վրայից բոլորովին վերցնելու են բեռը...

(Արդէն Մարկոսի վերջին խօսքերի ժամանակ զրահում սկսում է բարձրանալ խառնաշփոթ և ուժգին աղմուկ. Այդ խօսքերին հետեւող լռութեան միջոցին այդ աղմուկը աստկանում է, մօտենում է և աւելի որոշ է դառնում. Սկզբում ապառդութեան մրմունջ է այդ, այնուհետեւ դեռ եւ հեռում գոնուող, բայց հետզհետէ լառաջացող ամբողջ ցնծութեան աղաղակներ. Շատ չանցած, հետզհետէ աւելի ու աւելի պարզ որոշուելով և ամեն կողմից թափանցելով անհամար ամբոխի յախուռն ժողովի միջով, լսում են անթիւ անգամ կրկնուող աղաղակներ՝ «Վա՛ն».

նա, Վա՛ննա... Մեր Մօննա Վաննան... Փառք ու պատիւ Մօննա Վաննային... Վա՛ննա, Վա՛ննա, Վա՛ննա... և այլն և այլն)։

ՄԱՐԿՕ. (Առաջ նետուելով դեպի կամարակապ սրահը, որ տանում է դեպի պատեզամբը)։ Վաննան է... Նա գալիս է... Նա այնտեղ է... Ժողովուրդը ողջունում է նրան ցնծութեան աղաղակներով։ Լսեցէք, լսեցէք...

(Բռնած և Տօնէլլօն նոյնպէս գնում են պատշգամբը, իսկ Գուրգօն մնում է միայնակ և, յենուած մի սիւնի, նայում է դեպի հեռուն։ Նյս ամբողջ տեսարանավերջի ընթացքում դրսեի աղաղակները կրկնապատկուում են և արագ-արագ մօտենում)։

ՄԱՐԿՕ. (Պատեզամբում)։ Օ՛, ամբողջ հրապարակը, փողոցները, ծառերի ճիւղերը, պատուհանները՝ ծածկուած են գլուխներով և ձեռներով, որոնք շարժւում են... Կարծես քարերը, տերեւներն ու կղմինդրները շունչ են առել ու մարդ են դարձել... Բայց ո՛ւր է Վաննան... Ամպի նման մի բան եմ տեսնում միայն, որ բացւում է ու նորից խփւում... Բռնօ, թըշուառ աչքերս դաւաճանում են սիրոյ գորովիս... Ծերութիւնս, արցունքներս ու երկիւղս կուրացնում են նրանց... Նրանք չեն կարողանում գտնել այն միակ էակին, որին վնասում են... Ո՛ւր է նա... Դու տեսնում ես նրան։ Ո՛ր կողմից պէտք է գընամ նրան ընդառաջ...

ԲՕՌՍՕ. (Պահելով նրան)։ Ձէ, մի իջէք ներքեւ... Ամբողջ շատ հոծ է և այլ իս չի կարողանում ինքն իրան զսպել... Կանանց ճիւղում են, երեխաներին ոտնատակ են տալիս... Բացի այդ՝ օգուտ էլ չը կայ ձեր իջնելուց. Վաննան այստեղ կը հասնի, նախ քան դուք կարողանաք իջնել... Նա մօտենում է, ահա նա... Բարձրացնում է զլուխը, մեզ նկատեց... Աւելի արագ է քայլում, նայում է այս կողմը ու ժպտում։

ՄԱՐԿՕ. Ուրեմն դուք տեսնում էք նրան, մինչդեռ ես չեմ տեսնում... Ախ, իմ կուրացած աչքեր, որ չեն կարողանում ոչինչ որոշել... Այս առաջին անգամն է, որ անիծում եմ ծերութիւնս, որ այնքան բան սովորեցրեց ինձ՝ այս մէկը թագցնելու համար... Բայց եթէ տեսնում էք նրան, ասացէ՛ք՝ ինչպէս է նա... Տեսնո՞ւմ էք արդեօք նրա դէմքը...

ԲՕՌՍՕ. Նա գալիս է յաղթական կերպով... Կարծէք լոյս սփռելիս լինի իրան ողջունող ամբոխի վրայ...

ՏՕՌԷԼԼՕ. Բայց ո՞վ է այն մարդը, որ գալիս է նրա կողքին...

ԲՕՌՍՕ. Չը գիտեմ... Չեմ ճանաչում նրան... Դէմքը ծածկուած է...

ՄԱՐԿՕ. Լսում էք, որքան մոլեգին է ցնծութիւնը... Ամ-

բողջ պալատը յնչուում է և ծաղկանօթների ծաղիկները թափ-
ւում են ճաղերի վրայ... Կարծէք մարմարէ աստիճաններն ու
սալերը բարձրանում են մեր ոտների տակ և ուզում են մեզ
բոլորիս տանել, նետել ընդհանուր յնծութեան յորձանքի մէջ...
Օ՛, սկսում եմ տեսնել... Ամբոխը հասնում է վանդակներին...
Տեսնում եմ, որ նա հրապարակում յանկարծ բաժանւում է եր-
կու մասի...

ԲՕՈՒՍՕ. Այո, Վաննան հետզհետէ մօտենում է մեզ և ամ-
բոխը ճանապարհ է բանում նրա առաջ, կազմելով յաղթութեան
ու սիրոյ ցանկապատ... Ժողովուրդը ծաղիկներ, արմաւենու
ճիւղեր և գոհարներ է նետում նրա կողմը... Մայրերը մեկնում
են կռները, որպէս զի նա ձեռքը քսի իրանց գրկի երեխանե-
րին, իսկ այր մարդիկ չոքում են ու համբուրում այն քարերը,
որոնց դիպել է նրա ոտքը... Զգուշացէք... Մօտենում են... Չեն
կարողանում այլ ևս զսպել իրանց... Եթէ բարձրանան սան-
դուխով, մեզ ոտի տակ կը տան... Բարեբախտաբար՝ պահա-
պանները շտապում են ամեն կողմից խափանել մուտքերը...
Գնամ հրաման տամ յետ մղել ժողովրդին և փակել վանդակ-
ները, եթէ արդէն ուշ չէ...

ՄԱՐԿՕ. Ոչ, ոչ: Թողէք, որ նրանց հրճուանքը զեղուի այս-
տեղ այնքան առատօրէն, որքան ուզում է իրանց սիրտը... Ինչ
հոգ թէ նրանք ոտնատակ կը տան շատ բան, գուցէ և մեզ,
երբ նրանց սէրը այդպէս անհուն է... Նրանք այնքան տան-
ջուել են, որ իրաւունք ունեն փրկուելուց յետոյ կանգ չառնել
ոչ մի սահմանի առաջ... Ո՛վ իմ խեղճ, իմ բարի ժողովուրդ...
Ես էլ քեզ նման հարքածի պէս եմ և գոռգոռում եմ քեզ հետ...
Ո՛վ Վաննա, իմ Վաննա... Այդ զո՛ւ ես առաջին աստիճանի
վրայ... (Նա նետւում է առաջ, ուզելով իջնել ներքեւ Վաննային
հանդիպելու համար, բայց Բօնսօն եւ Տօնէլլօն չեն թողնում):
Վեր ել, վեր ել, Վաննա... Սրանք ինձ բռնել են, չեն թողնում՝
խցնեմ... Սրանք վախենում են հրճուանքից... Վեր ել, վեր ել,
Վաննա, աւելի գեղեցիկ, քան Յուդիթը, և աւելի անարատ,
քան Լուկրէցիան... Վեր ել, վեր ել, Վաննա, վեր ել ծաղիկների
միջով (Վազում է և մարմարէ անօթներից լիաբուռն պոկելով
ծաղիկները՝ նետում է սանդուխի ստորոտը): Ես էլ ունեմ ծա-
ղիկներ կեանքը ողջունելու համար... Ես էլ ունեմ վարդ, շու-
շան ու դափնի՝ փառքը պսակելու համար:

ԾՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՄԵ

ՆՈՅՆ ԱՆՁԻՆՔ ԵՒ ՊՐԻՆՁԻՎԱԼԼԷՆ ՈՒ ՎԱՆՆԱՆ:

(Աղաղակները աւելի մոլեգին են դառնում, Վաննան, Պրինչիվալ-լէյի ուղեկցութեամբ, երևում է սանդուխի ծալքին ու նետում է վերջին աստիճանի վրայ կանգնած Մարկոյի գիրկը: Ամբողջ զրոհ է տալիս և գրաւում է ամբողջ սանդուխը, պատշգամբը ու կամարակապ սրահը, բայց որոշ հեռաւորութիւն է թողնում իր և Վաննայից, Պրինչիվալլէյից, Մարկոյից, Յոսսոյից ու Տոնէլլոյից կազմուած խմբի մէջ):

ՎԱՆՆԱ. (Նետուելով Մարկոյի գիրկը)։ Ես երջանիկ եմ, հայր իմ...

ՄԱՐԿՕ. (Պինդ գրկելով նրան)։ Ես էլ երջանիկ եմ, աղ-ջիկս, որ նորից արժանանում եմ տեսութեանդ... Թող նայեմ երեսիդ՝ մինչ համբուրում եմք այսպէս... Օ՜, աւելի ճաճան-չափայլ է դէմքդ, քան եթէ յետ դարձած լինէիր Լըկնային բարձունքից, որ փառաբանում է վերադարձդ... Ահռելի թշնա-մին չի կարողացել չքացնել և ոչ մի ցուք քո աչքի լոյսից, և ոչ մի ժպիտ՝ քո շրթունքներից...

ՎԱՆՆԱ. Ես ձեզ կասեմ, հայր իմ... Բայց ուր է Գուր-դօն... Ամենից առաջ նրան պէտք է ազատեմ... Նա դեռ չը գիտէ...

ՄԱՐԿՕ. Եկ, Վաննա, ահա այստեղ է նա... Եկ, ինձ քչում են և թերեւ իրաւացի է այդ, բայց քեզ ներում են քո հրաշալի սխալը, և ես ուզում եմ քեզ նետել նրա գիրկը, որպէս զի իմ վերջին շարժումը և վերջին հայեալքը ձեր նորից գտնեն սիրով չաղկապուած...

(Այդ րոպէին Գուրդօն գնում է Վաննայի կողմը՝ Վաննան ուղում է բերանը բանալ և շարժում է անում նրա գիրկը նետուելու համար, բայց Գուրդօն խիստ շարժումով կանգնեցնում ու լետ է մղում նրան և գիւմում է նրան շրջապատողներին)։

ԳՈՒԻԻԴՕ. (Կտուկ, խիստ եւ հրամայական եղանակով)։ Մե-նակ թողէք մեզ։

ՎԱՆՆԱ. Ոչ, ոչ... Ամենքդ էլ մնացէք այստեղ... Դու չը գիտես, Գուրդօ... Ես ուզում եմ քեզ ասել, ևս ուզում եմ ան-մենքին ասել... Ես անսարատ եմ վերադարձել, Գուրդօ, և ոչ ոք չի կարող...

ԳՈՒԻԻԴՕ. (Ընդհատելով նրա խօսքը, յետ մղելով նրան եւ ձայնը բարձրացնելով բարկութիւնիցը, որ հետզհետեւ սասկանում է)։ Մի մօտեցիր ինձ, դեռ մի դիպիր ինձ... (Յառաջանալով դեպի ամբոխը, որ սկսել էր գրոհ ցալ դեպի դահլիճը եւ քր բնկրկում է նրա դիմաց)։ Չը լսեցիք... Խնդրում եմ, որ դուրս

գալք և մեզ մեծակ թողնէք: Դուք ձեր տների տէրն էք, ես էլ այստեղի տէրն եմ: Բոսո և Տոնէլլօ, կանչեցէք պահապաններին: Օ՛, ես ձեզ լաւ եմ հասկանում... Փառաւոր խնջողից յետոյ տեսարան է հարկաւոր ձեզ... Բայց դուք չէք տեսնիլ այդ տեսարանը. նա ձեզ համար չէ, դուք արժանի չէք նրան... Միս ու գինի բաւական ունէք, ես վճարեցի բոլորիդ կեր ու խումի գինը, էլ ի՞նչ էք ուզում ինձանից... Կարծեմ, իրաւունք ունեմ պահանջել, որ գոնէ վիշտս ինձ թողնէք... Գրնացէք, կերէք ու խմէք... Ես ուրիշ հոգսերով եմ զբաղուած և զսպում եմ արցունքս, որ դուք չէք տեսնիլ... Ձեզ եմ ասում, դնացէք այստեղից... (Լուռ շարժում ամբոխի մէջ, որ ֆիչ-ֆիչ անհետանում է): Դո՛ւք ինչու էք ոտներդ կախ գցել... (Բուռն շարժումով բռնելով հօր կոնիցը): Դուք ես: Մանաւանդ դուք: Ամենից առաջ դուք, որովհետեւ ձեր մեղքն է այս... Դուք չէք տեսնիլ իմ արցունքները... Ա՛խ, ես ուզում եմ միայնակ լինել, աւելի միայնակ, քան գերեզմանում, որպէս զի իմանամ վերջապէս այն, ինչ որ պէտք է իմանամ... (Նկատելով անշարժ կանգնած Պրինչիպալիին): Իսկ դուք... Ո՞վ էք դուք, որ այդտեղ կանգնած էք քողարկուած արձանի նման... Մեզ սպասող խայտառակութիւնն էք, ի՞նչ է, թէ մահը... Ձը հասկացա՞ք, որ պէտք է հեռանալ այստեղից... (Վերցնելով պահապաններից մէկի գեղարդը): Գուցէ ուզում էք, որ պեղարդի հարուածներով քչեմ ձեզ այստեղից... Ի՞նչ էք չօչափում ձեր սուրը... Ես էլ սուր ունեմ, բայց նա ձեզ համար չէ... Նա այսուհետեւ ծառայելու է ինձ միմիայն մի մարդու դէմ... Այդ մարդը... Բայց ինչու էք այդպէս ծածկել ձեր գլուխը... Ես սիրտ չունեմ այժմ դիմակով զուարճանալու... Ձէք պատասխանում... Կայէք, ես ուզում եմ իմանալ, թէ ո՞վ էք դուք... (Մօտենում է, որ դէն շպրտի նրա գլխի ծածկոյքը: Վաննան նետում է Պրինչիպալիի ու նրա արանքը եւ կանգնեցնում է նրան):

ՎԱՆՆԱ. Ձեռք չը տաք սրան...

ԴՈՒԻԻԹ. (Զարմացած կանգ է առնում): Օ՛, Վաննա... Դո՛ւ, Վաննա... Ո՞րտեղից է քեզ այդ կորովը...

ՎԱՆՆԱ. Սա է ինձ փրկել...

ԴՈՒԻԻԹ. Օ՛, ո՛ւ Սա քեզ փրկել է... Փրկել է, հրք արդէն... Երբ արդէն շատ ուշ էր... Լաւ բան է արել... Բայց աւելի լաւ կը լինէր...

ՎԱՆՆԱ. (Տենդային կերպով): Թոյլ տուր վերջապէս տեսիլ... Ազաչում եմ, Գուլիօ... Մի հատ խօսք բաւական է, որ ամեն ինչ իմանաս... Քեզ ասում եմ, որ սա ինձ փրկեց և որ պատիւս խնայուած է, յարգուած... Սա ինձ ձեռք չի տուել...

Սա եկաւ այստեղ իմ հովանաւորութեան տակ... Ես սրան տուեցի իմ խօսքը, քո խօսքը, մեր խօսքը... Սպասիր մինչեւ բարկութիւնդ նստի... Թոյլ տուր ասեմ քեզ... Սա ոչ մի այնպիսի խօսք չի արտասանել, ոչ մի այնպիսի շարժում չի արել, որ...

ԳՈՒԻԴՕ: Բայց ով է սա, ո՞վ...

ՎԱՆՆԱ: Պրինչիվալէն...

ԳՈՒԻԴՕ: Ո՞վ... Սա... Ո՞վ, այս մարդը... Սա, Պրինչիվալէն...

ՎԱՆՆԱ: Այո, այո, սա քո հիւրն է... Սա վստահութեամբ է վերաբերում քեզ... Սա մեր ազատարարն է...

ԳՈՒԻԴՕ: (Մի բույե մնում է ապշած, այնուհետեւ սկսում է խօսել հետզհետէ սասկացող ուժգնութեամբ ու յալիւսակութեամբ, այնպէս որ Վաննան չի կարողանում ընդհատել խօսքը)։ Օ՛հ, այդ արածդ, իմ վաննա... Այդ արածդ՝ կարծես անարատ ցօղ լինի, որ իջնում է երկնքի անապակ ակունքից... Օ՛հ, վաննա, իմ վաննա... Վեհ է քո հոգին, և ես քեզ սիրում եմ ու հասկանում վերջապէս... Այո, դու իրաւացի էիր, քանի որ չէր կարելի այդ չանել, անշուշտ պէտք էր այնպէս անել, ինչպէս դու արեցիր... Օ՛հ, հասկանում եմ քո խորագիտութիւնը, որ աւելի զօրաւոր քանուկն է, քան զրա ոճիրը։ Բայց ինչպէս կարող էի իմանալ այդ, ինչպէս կարող էի նախատեսել... Մի ուրիշը գուցէ սպանէր դրան, ինչպէս Յուդիթը Հոլոֆերնին։ Բայց զրա ոճիրը աւելի մեծ էր, քան Հոլոֆերնի ոճիրը, և աւելի մեծ վրէժ էր պահանջում... Պէտք էր դրան բերել այստեղ, ինչպէս որ դու արեցիր... Պէտք էր դրան բերել այստեղ, որպէս զի իր զոհերը՝ իր դահիճները դառնան... Հրաշալի յաղթանակ... Դա հետեւում էր անշուշտ քո համբոյրներին հեղաբար, քնքշօրէն, ինչպէս մի գառն՝ ծաղկափթիթ ոստի յետեւից... Ի՞նչ նշանակութիւն ունեն այն համբոյրները, որ մարդ տալիս է ատելութեամբ տոգորուած... Ի՞նչ նշանակութիւն ունեն քո տուած համբոյրները, որոնց շնորհիւ դա ընկաւ քո լարած որոգայթը... Այո, այո, դու իրաւացի ես դատել. եթէ դրան սպանէիր այնտեղ, վրանում, զազրելի ոճիրից յետոյ, երբ միայնակ էիք, այդ բաւական չէր լինի. կասկածի տեղիք կը մնար. մարդիկ իրանց աչքով տեսած չէին լինի... Արար աշխարհքը գիտէր նողկալի գաշինքը. պէտք էր որ արար աշխարհքն իմանայ, թէ ինչ հատուցումն են ստանում նրանք, որոնք այդ աստիճան անարգում են մարդկային բնութիւնը... Բայց ինչպէս կարողացար այդ անել... Այդ ամենամեծ յաղթանակն է, որ երբեւիցէ կանացի պատիւը... Կայ, կայ, դու այժմ կը պատմես ամենքին... (Վա-

գում է դեպի պատեգամբը եւ գոռում է՝ որքան ուժումը կայ): Պրինչիվալէն. Պրինչիվալէն... Մեր ձեռքն է ընկել մեր ոխերիմ թշնամին...

ՎԱՆՆԱ. (Դալ առ Բալ) հետեւում է նրան ու աշխատում յետ կացնել): Ձէ, չէ, լսիր ինձ... Ձէ, այդ չէ... Աղաչում եմ, Գուրգո... Ձէ, սխալում ես, Գուրգո...

ԳՈՒԻԴՕ. (Ազատւելով նրա ձեռքից ու կրկնապատիկ ուժով գոռալով): Թող ինձ, կը տեսնես այժմ... Նրանք ամենքը պէտք է իմանան այդ... (Կանչելով ժողովրդին): Այժմ կարող էք գալ, այժմ պէտք է գաք... Դուք էլ, հայր իմ, որ խրել էք ձեր գլուխը երկու ճաղերի արանքը ու զաղտուկ դիտում էք այստեղ կատարուածը, կարծէք սպասելիս լինէք, թէ գուցէ վերջապէս երեւան գայ մի որեւէ աստուած և ուղղի ձեր պատճառած չարիքը ու հաշտութիւն զցի մեր մէջ: Յետ դարձէք, հաշտութիւնը կայացել է արդէն, անյուր հրաշքը կատարուել է... Թող քարերն էլ տեսնեն ու լսեն այն, ինչ որ տեղի է ունենալու այժմ... Ես այլ եւս չեմ թաքնւում ոչ ոքից և իսպառաակութիւնս չքանում է արդէն: Մի բոպէ եւս, և ես աւելի անարատ կը լինեմ, քան սմանից անարատները, և աւելի կը ջանիկ, քան նրանք, որոնք ոչինչ չեն կորցրել: Այժմ դուք կարող էք յնժութեան աղաղակներ արձակել ի պատիւ իմ Վաննայի... Այժմ ես էլ ձեզ հետ միացած աղաղակում եմ ի պատիւ Վաննայի, և աւելի բարձրաձայն, քան դուք ամենքդ... (Պատեգամբում իւրուողներին հրելով դեպի դահլիճը): Այս անգամ դուք իսկապէս տեսարանի բան կ'ունենաք... Աշխարհիս երեսին արդարադատութիւն կայ... Օ, ես այդ շատ լաւ գիտէի, բայց չէի կարող կարծել, թէ այսպեան շուտով կը լինի այդ... Ես վճռել էի ակնապիշ սպասել երկար տարիներ այդ արդարադատութեանը... Ես անցնելու էի ամբողջ կեանքս, դարսնամուտ աչք պահելով այդ արդար հատուցմանը՝ ամեն տեղ, շաւիղների ոլորաններում, անտառների խորշերում, փողոցների անկիւններում... Եւ անա յանկարծ այդ արդար հատուցումը ես գտնում եմ այստեղ, այս դահլիճում, իմ դիմաց, ձեր դիմաց, այս աստիճանների վրայ... Ի՞նչ չը տեսնուած հրաշք է պատահել... Իսկոյն կ'իմանանք այդ. Վաննան է գործել այդ հրաշքը... Բայց որովհետեւ արդարադատութիւնը այցելել է մեզ, կը նշանակի նա կատարելու է իր գործը... (Դիմում է Մարկոյին, բռնելով կռիցքը): Լաւ էք տեսնում այս մարդուն...

ՄԱՐԿՕ. Այո, ո՛վ է դա...

ԳՈՒԻԴՕ. Ձէ որ դուք տեսել էք արան, խօսել էք հետը. դուք չէիք սրա հաճոյակատար լրաբերը...

(Պրինչիվալլեն դարձնում է գլուխը դեպի Մարկոն, որ նրան նախաշում է):

ՄԱՐԿՕ: Պրինչիվալլեն...

(Իրաւանցումն ամբոխի մեջ):

ԳՈՒԻԻՒՕ: Այո, այո, Պրինչիվալլեն, ինքը Պրինչիվալլեն... Մօտեցէք, նայեցէք, շօշափեցէք. խօսեցէք հետը... Գուցէ մի նոր յանձնարարութիւն ունի ձեզ տալու... Օ՛, ի հարկէ, սա այլ եւս այն փայլուն Պրինչիվալլեն չէ. բայց իմ մէջ գութ չը կայ սրա համար... Հրէշաւոր ու տնլուր նենգութեամբ սա խելոյ ինձանից միակ բանը աշխարհումս, որ ես չէի կարող տալ իրան... Եւ այժմ արդարադատութիւնը և մի խորագիտութիւն, որ աւելի չքնաղ է, քան արդարադատութիւնը, սրան իր ստով բերել են այստեղ, որպէս զի խնդրի ինձանից միակ հատուցումը, որ ես կարող եմ տալ իրան... Իրաւունք չունէի հրաշք խոստանալու ձեզ... Մօտեցէք, մի վախենաք, սա այլ եւս չի գնալ այստեղից... Բայց լաւ կողպեցէք դռները... Մի գուցէ յանկարծ մի ներհակ հրաշք խլի սրան մեր ձեռքից... Բայց ձեռք չը տանք սրան խելոյնեւեթ... Պահենք սրան աւելի երկարատեւ զուարճութիւնների համար... Ո՛վ դուք, իմ խեղճ եղբայրներ, որոնց սա այնքան տանջեց, չարչարեց, որոնց սա ուղում էր կոտորել, որոնց կանանց և զաւակներին ծախում էր սա. նայեցէք սրան, ահա նա ինքն է և այժմ պատկանում է ինձ, ձեզ, մեզ ամենքիս, լսում էք... Բայց ձեզ այնքան չի տանջել սա, որքան ինձ... Խելոյնեւեթ ես կը տամ սրան ձեր ձեռքը... Իմ Վաննան բերել է սրան այստեղ, որպէս զի մեր վրէժխնդրութիւնը անհետ ջնջի մեր խայտառակութիւնը... (Աւելի անմիջական կերպով դիմելով ամբոխին): Դուք ամենքդ այստեղ էք և ամենքդ վրայ կը լինէք... Պէտք է պարզել ամեն ինչ... Հասկացա՞ք, թէ ինչումն է հերոսութիւնն ու հրաշքը... Այս մարդը տիրացել է Վաննային: Ոչինչ չէր կարելի անել դրա դէմ. դուք ամենքդ կամենում էիք, որ այդպէս լինի. դուք ծախեցիք Վաննային... Ես ոչ ոքի չեմ անիծում. եղածը անցաւ, և դուք իրաւունք ունէիք աւելի բարձր դասել ձեր կեանքը, քան իմ խղճուկ բախտաւորութիւնը... Բայց ինչ հնարք կարող էիք դուք գտնել, որպէս զի նորից կեանք տայիք սիրոյ. զգայմունքին հէնց այն բանով, որ նրան մեռցնում է... Դուք շատ յաջող կործանեցիք եղածը, բայց պէտք էր վերականգնել կործանածը... Եւ ահա տեսէ՛ք, Վաննան արեց այդ... Նա աւելի լաւ հնա՞ք գտաւ, քան Լուկրէցիան կամ Յուդիթը... Լուկրէցիան ինքն իրան սպանեց. Յուդիթը սպանեց Հովթերնին... Օ՛, այդ շատ պարզ է ու շատ լուս ու մուշ... Վաննան չուզեց սպանել

փակած վրանում, այլ բերեց այստեղ կենդանի ողջակէզը, հրապարակական ողջակէզը... Մենք բոլորս պէտք է սրբենք այն անարգութեան արատը, որի մէջ մասն ունենք ամենքս... Խնչպէս արեց նա այդ... Ահա այժմ նա կը պատմի մեզ...

ՎԱՆՆԱ. Այո, ես կը պատմեմ ձեզ. բայց իմ պատմածը բոլորովին ուրիշ բան է լինելու...

ԳՈՒԻԴՕ. (Ընդհատելով Վաննայի խօսքը եւ մօտենալով նրան, որպէս զի համբուրի)։ Թող նախ համբուրեմ քեզ, որպէս զի ամենքն իմանան...

ՎԱՆՆԱ. (Ուժգին յետ մղելով նրան)։ Ոչ, ոչ, ոչ դեռ եւս... Ոչ, ոչ, ոչ երբէք այլ եւս, եթէ չը լսես ինձ... Ականջ դիր, Գուիդօ... Այժմ հարցը վերաբերում է աւելի իրական պատուի և մի այլ տեսակ երջանկութեան, քան այն պատիւն ու երջանկութիւնը, որոնք պղտորել են միտքդ։ Օ՛հ, ես չտես ուրախ եմ, որ ամենքը վերադարձան այստեղ... Նրանք կը լսեն ասածս, թերեւս՝ նախ քան դու կը լսես. նրանք կը հասկանան ասածս, թերեւս՝ նախ քան դու կը հասկանաս... Լսիր ինձ, Գուիդօ... Ես չեմ համաձայնիլ զրկել քեզ, մինչեւ որ չիմանաս...

ԳՈՒԻԴՕ. (Ընդհատելով նրա խօսքը ու նորից աւխատելով զրկել)։ Կ'իմանամ, կ'իմանամ, բայց նախ և առաջ ես ուզում եմ...

ՎԱՆՆԱ. Լսիր ինձ, ասում եմ... Ես երբէք սուտ չեմ խօսել. բայց այսօրուայ ասածս այնպիսի խորին ճշմարտութիւն է, որ մարդ կարող է միայն մի անգամ ասել իր կեանքում և որ մահ է պատճառում կամ կեանք է տալիս... Լսիր ինձ, Գուիդօ, և նայիր ինձ, եթէ լաւ չես տեսել ինձ մինչև այս րոպէն, առաջինը և միակը, երբ դու կարող ես սիրել ինձ այնպէս, ինչպէս ես կ'ուզէի սիրուած լինել... Ես խօսում եմ այժմ քեզ հետ յանուն մեր կեանքի, յանուն այն ամենի, ինչ որ կազմում է իմ էութիւնը, յանուն այն ամենի, ինչ որ դու ներկայացնում ես ինձ համար... Ընդունակ եղիր հաւատալու անհատաւորին... Այս մաքրը չը տիրացաւ ինձ... Սա կարող էր ամեն ինչ անել, որովհետև ինձ տուել էին իրան... Բայց ձեռք չը տուեց ինձ, և ես դուրս եկայ սրա վրանից այնպէս, ինչպէս կարող էի դուրս գալ եղբորս վրանից։

ԳՈՒԻԴՕ. Ինչո՞ւ...

ՎԱՆՆԱ. Որովհետև նա սիրում է ինձ...

ԳՈՒԻԴՕ. Ա՛խ, ճիշդ էր քո ասելիքը... Դրանումն էր հրաշքը... Այո, այո, հէնց առաջին խօսքերիցդ ականջովս զիպաւ այնպիսի մի բան, որ անհասկանալի էր... Փայլակի նման աչքիս երևաց մի րոպէ, բայց ես ուշք չը դարձրի... Ինձ թուաց, թէ

վրդովմունքն ու զարդանդը պլտորել են միտքդ... Բայց այժմ տեսնում եմ, որ պէտք է աւելի պարզ նայել հարցին... (Յաճկարժ մեղմացնում է ձայնը)։ Այդպէս ուրեմն, ամբողջ գիշերը անցկացրիր այդ մարդու վրանում գրեթէ մերկ ու միայնակ և նա չը տիրացաւ քեզ...

ՎԱՆՆԱ. Ձէ, չը տիրացաւ...

ԳՈՒԻԴՕ. Ձեռք չը տուէց քեզ, չը համբուրեց քեզ...

ՎԱՆՆԱ. Միայն մի անգամ համբուրեցի ձեզատը և նա նոյնպիսի համբոյր գրոշմեց ձեզատիւ...

ԳՈՒԻԴՕ. Ձեզատիւ... Նայիր ինձ, վաճառ... Մի՞թէ ես նման եմ այնպիսի մարդու, որ կարող է հաւատալ, թէ աստղերը նարկիզի ծաղիկներն են և թէ կարելի է հանգցնել լուսինը, թքելով ջրհորի մէջ... Երբուանից ես այդպէս... Ա՛խ, չեմ ուզում ասել... Ձեմ ուզում դեռ ես անդառնալի կորուստի մատնել ինձ ու քեզ... Ձեմ հասկանում նպատակդ, կամ գուցէ այս սոսկալի գիշերուայ մոլեգին զառանցանքն է ցնորեցրել քո խելքը կամ իմս...

ՎԱՆՆԱ. Զառանցանք չէ ասածս, այլ զուտ ճշմարտութիւն...

ԳՈՒԻԴՕ. Աստուած իմ, զուտ ճշմարտութիւն... Ա՛խ, հապա ի՞նչ է իմ փնտռածս... Բայց չէ որ ճշմարտութիւնը պէտք է գէթ փոքր ինչ համապատասխան լինի մարդկային բնութեան...—Ինչէր ես ասում։ Մի մարդ այն աստիճան փափազում է տիրանալ քեզ, որ դաւաճանում է հայրենիքին, ծախում է բոլոր ունեցածը լուր մի գիշերուան վայելքի համար, ստորաբար կորուստի է մատնում ինքն իրան, անում է այնպիսի մի բան, որ երբեք ոչ մի մարդ չի համարձակուել անել, և անհնար է դարձնում իր համար միայլ այլ եւ աշխարհիս երեսին, և այդ մարդը տեսնում է քեզ մերկ ու միայնակ իր վրանում, իր տրամադրութեան տակ և զգում է, որ ոչինչ չի մնում իրան այլ եւ աշխարհում բացի այդ գիշերից, որ գնել է այդքան թանկ գնով, ու յանկարծ նա բաւականանում է միմիայն նրանով, որ մի հատիկ համբոյր է գրոշմում ձեզատիդ և յետոյ գալիս է այստեղ, որպէս զի մեզ հաւատացնի, որ այդպէս է եղել... Ձէ, մարդ պէտք է արդար լինի, և չը պէտք է այդ աստիճան ծաղր ու ծանակ դարձնի ուրիշների սև բախտը... Եթէ այդ էր նրա ուզածը, ի՞նչ կարիք ունէր ստիպելու, որ մի ամբողջ ժողովուրդ անցկացնէր այնպիսի մի գիշեր, և իմ սիրտս սեացնելու այնպիսի վշտով, որ ինձ տասը տարով ծերացրեց ու գրեթէ խելագար դարձրեց... Ա՛խ, եթէ նա ուզում էր միայն մի համբոյր գրոշմել ձեզատիդ, նա կարող էր այդ անել ու

փրկել մեզ առանց այսքան տանջելու... Նա կարող էր ուղղակի գալ այստեղ իբր մի ազատարար աստուած... Բայց ո՞վ է այդպէս պահանջում ու պատրաստում ճակատի դրոշմելիք մի համբոյր... Ճշմարտութիւնը քո ասածում չէ, այլ մեր վշտահար հեկեկանքների և մեր յուսահատութեան մէջ... Չէ, ես չեմ դատում քեզ, ես չեմ կարող դատաւոր լինել իմ սեփական գործում, որ թերեւ անկարող լինեմ պարզ աչքով տեսնել: Բայց ահա թող ուրիշները դատեն ու վճռեն իմ փոխարէն... (Իմեմով ամբոխին):—Լսեցի՞ք բոլորը...—Ձը գիտեմ, թէ ինչու է այսպէս խօսում... Բայց ասածն արդէն ասուեց և դուք այժմ պէտք է դատաստան անէք... Դուք հօ պէտք է հաւատաք սրան, որովհետեւ սա ձեզ փրկել է...—Դէ ասացէք, հաւատում էք սրա խօսքին... Թող նրանք, որոնք հաւատում են սրա ասածներին, դուրս գան բաղմոթեան մէջից և զան այստեղ ու սուտ հանեն մարդկային առողջ դատողութիւնը... Ես կուղէի իմանալ, թէ ովքեր են այդ մարդիկ և ինչ կերպարանք ունեն նրանք... (Միմիայն Մարկոն է դուրս գալիս ամբոխի մէջից, ուր տեղ-տեղ միայն լսում է մրմուռ, այն էլ անհամարձակ ու անորոշ):

ՄԱՐԿՍ. (Նետուելով դեպի բեմի մեջտեղը): Ես հաւատում եմ զրա ասածներին...

ԴՈՒԻԻՍ. Դուք սրանց մեղսակիցն էք...—Բայց միւսները, միւսները, Ո՛ւր են հաւատացողները... (Վաննային):—Տեսա՞ր... Այն մարդիկ, որոնց դու փրկեցիր, քաշում են այն ծիծաղից, որ կը լցնէր այս դահլիճը, եթէ ասէին, որ հաւատում են քեզ. նոյն իսկ նրանք, որոնք միմուռ էին մի քիչ առաջ, չեն համարձակում հրապարակ դուրս գալ... Իսկ ես, ես պէտք է հաւատայի՛ն...

ՎԱՆՆԱ. Նրանք պարտաւոր չեն հաւատալ ինձ. բայց դու, որ սիրում ես ինձ...

ԴՈՒԻԻՍ. Օ՛հ, ի հարկէ, ես սիրում եմ քեզ, ուստի և պէտք է խաբուեմ յիմարի նման... Բայց ոչ, ոչ, լսիր ինձ... Իմ ձայնը այլ ես առաջուանը չէ... Բարկութիւնս նստեց... Այդ խորտակում է ոյժերս, և ես յանկարծ դարձայ կարծես այնպիսի մի մարդ, որ ծերանում է բոպէ առ բոպէ... Զայրոյթս չքայալ... Ոչ, ոչ, այժմ ուրիշ բան է բռնելու նրա տեղը... Ծերութիւնը, խելագարութիւնը... Ինքս էլ դեռ չը գիտեմ... Ես որոնում եմ, ես զննում եմ ու տնտղում իմ ներսը, որպէս զի գտնեմ իմ խեղճ բախտի մնացորդը... Միայն մի յոյս է մընում ինձ, բայց այնքան դիւրաբեկ է նա թւում ինձ, որ

սիրտ չեմ անում ձեռք տալ նրան... Մի հատիկ խօսք բա-
ւական է այդ յոյսը խորտակելու համար, և սակայն վիշտս
ստիպուած է վախճվախ փորձել այդ վերջին յոյսը...—Վաննա,
ես շատ մեծ սխալ արեցի, որ ամբոխին կանչեցի այստեղ նախ-
քան քեզնից իմանալս... Սա մոռացայ, որ ամօթի զգայմունքը
չէր թոյլ տալ քեզ հրապարակաւ ասել... Դու չես համարձակ-
ւում նրանց ասել, որ այս հրէշը տիրացել է քո մարմնին...
Այո, ես պէտք է սպասէի, մինչև մենակ մնայինք... Դու ինձ
կը խոստովանէիր զազրելի ճշմարտութիւնը... Բայց չէ որ, ա-
ւաղ, ես էլ, ուրիշներն էլ դիտենք արդէն այդ ճշմարտութիւ-
նը... Չէ որ այժմ ուշ է արդէն. էլ ինչ կարիք կայ, Վաննա,
ծածկելու այլ ևս այդ ճշմարտութիւնը... Այժմ պէտք է ասես.
այժմ ամօթխածութիւնդ պէտք է ինքն իրան յաղթի... Դու
չես բարկանալ ինձ վրայ... Ինքդ էլ կը հասկանաս... Այսպիսի
րոպէներում մարդու խելքը չը դիտէ այլ ևս, թէ...

ՎԱՆՆԱ. Նայիր ինձ, Գուրգոս—Այս իմ վերջին հայեացքի
մէջ ես ամիոփում եմ իմ ամբողջ ոյժը, իմ ամբողջ անխարդա-
խութիւնը, այն ամենը, ինչ որ ես պարտական եմ քեզ... Ա-
մօթխածութեան հետեանք չէ իմ ասածը, այլ զուտ ճշմարտու-
թիւն... Այս մարդը չի տիրացել ինձ...

ԳՈՒԻԴՈ. Լաւ, լաւ, շատ լաւ... Այլ ևս ոչինչ չի մնում
ինձ... Այժմ ես ամեն ինչ դիտեմ... Այո, այդ ճշմարտութիւն է
կամ, ճիշտ ասած, սէր... Այժմ ես հասկանում եմ... Դու ու-
զում էիր սրան փրկել... Չը գիտեմ, թէ ինչպէս մի գիշերուայ
մէջ կարող էր այդ աստիճան փոխուել այն կինը, որին ես այն-
քան սիրում էի... Բայց սխալուել ես, այդ միջոցով չի կարելի
փրկել սրան... (Ձայնը բարձրացնելով):—Լսեցէք ինձ, դուք ա-
մենքդ՝ Վերջին անգամն է... Այս բոլորիս երգուելու եմ... Դեռ
ինձ պահում եմ անդունդի ավիւն... Մի բոլոր անց՝ ձեռքերս
պոկ կը դան... Չեմ ուզում, որ զուր կորչի այդ բոլորն... Դեռ
լսում էք ինձ... Ձայնս ուժասպառ է եղել... Եթէ չէք լսում,
մօտեցէք...—Տեսնում էք այս կնոջը և այս մարդուն... Պարզ է,
որ սրանք սիրում են միմեանց...—Դէ լաւ լսեցէք ու մի մո-
ռանաք, ես կչուում եմ ամեն մի խօսքս նոյնքան խնամքով, որ-
քան ինքամքով բժիշկը կչուում է դեղը մերձիման հիւանդի
համար...—սրանք, իմ համաձայնութեամբ, ազատ-համարձակ
դուրս կը գան այստեղից առանց որ և է նախատինք կամ վնաս
կրելու, և կը տանեն հետները՝ ինչ-որ սիրտներն ուղի... Ճա-
նապարհ տուէք ու ծաղիկներ ցանէք վրաները, եթէ ուզում
էք... Թող երթան, ուր որ սէրը ճանապարհ յոյց կը տայ իրանց
մոլեգնութեանը, միայն թէ այս կինը թող ասի ինձ միակ

հնարաւոր ճշմարտութիւնը, միակ բանը, որ դեռ սիրում եմ նրա մէջ և որ նա պարտական է ինձ ասել այն ազատութեան փոխարէն, որ տալիս եմ իրան...—Հասկացած, Վաննա: Այս մարդը տիրացել է քեզ...—Պարզ ասա՛ այո կամ ոչ. այդ է իմ բոլոր ուզածը... Փորձութիւն չէ այս, ոչ էլ թակարդ: Ես երզում կերայ: Վկայ եմ ամենքը:

ՎԱՆՆԱ: Ծշմարտն ասացի... Սա ինձ ձեռք չի տուել...

ԴՈՒԻԴՕ. Շատ լաւ, դուք ինքներդ ասացիք:—Դուք ինքներդ դատապարտեցիք սրան:—Այլ ևս ոչինչ չի կարելի անել:—Այժմ ես սթափւում եմ... (Մօտենալով պահապաններին եւ նրանց ցոյց տալով Պրինչիվալիին):—Այս մարդը ինձ է պատկանում. բռնէք սրան, կապեցէք ձեռք ու ոտքը. տարէք սրան ներքեւ, այս դահլիճի տակի ամենախոր զնգանները:—Ես էլ դալիս եմ հետներդ (Վաննային): Դուք այլ ևս չէք տեսնիլ սրան. և ես կը դամ ձեզ հաղորդելու վերջին ճշմարտութիւնը, որ սրա վերջին խօսքերը կը յայտնեն շուտով...

ՎԱՆՆԱ. (Նետուելով պահապանների մեջեղը, որոնք բռնում են Պրինչիվալիին): Ոչ, ոչ: Դա իմն է... Ես սուտ ասացի: Ես սուտ ասացի: Դա տիրացել է ինձ: Դա տիրացել է ինձ... Դա ունեցել է ինձ... Տիրացել է ինձ... (Պահապաններին յիշ հրելով): Յետ քաշուեցէք այստեղից... Ձեռք չը տաք սրան, սա իմ բաժինն է... Սա միայն ինձ է պատկանում... Ես իմ ձեռքով պէտք է տեսնեմ սրա դատաստանը... Սա ինձ տիրացաւ ստորաբար, լրբաբար, տիրացաւ, տիրացաւ...

ՊՐԻՆՉԻՎԱԼԼԷ. (Աւելանալով խեղդել նրա ձայնը): Սուտ է ասում: Սուտ է ասում: Սուտ է խօսում, որ ինձ վրկի, բայց ամենատեսակի տանջանքները չեն կարող...

ՎԱՆՆԱ. Լռեցէք... (Դառնալով դէպի ժողովուրդը): Վախենում է... (Մօտենալով Պրինչիվալիին՝ իբր քե ցանկանալով կապոսել նրա ձեռները): Շուտ արեք, տուէք ինձ պարաններն ու չղթաները... Այժմ, երբ արդէն ազատութիւն եմ տուել զայրոյթիս, ես եմ սրան չղթայելու և ես եմ սրան մատնելու ձեռք... (Պրինչիվալիին ձեռքերը կապում է եւ ասում ականջին):—Լսի՛ր, նա մեզ փրկում է: Լսի՛ր նա մեզ միացնում է իրար հետ... Ես՝ քեզ եմ պատկանում այսուհետեւ, ես քեզ սիրում եմ... Թող քեզ չղթայեմ... Յետոյ կազատեմ քեզ... Ես կը լինեմ քո պահապանը... Մենք կը փախչենք միասին... (Դուալով, իբր քե ցանկանալով լսել տալ Պրինչիվալիին): Լռեցէք... (Իմելով ամբոսին): Կամայ ձայնով աղաչում է ինձ... (Բանալով Պրինչիվալիին դեմքը): Նայեցէք սրա զէմքին... Տեսէք, դեռ կրում է այս սոսկալի գի-

չերուան հեաքերը... (Բանալով իր վերադիմումը եւ ցոյց տալով արիւնք ուսը): Իմ վրայ էլ նշան է մնացել... Սոսկալի սիրալին գիշեր... Նայեցէք, սա ինքն է... Տեսէք, ճրքան գարշիլի է և անպիտան... (Տեսնելով, որ պահապանները շարժուում են, ուզելով տանել Պրինչիվալիյին):—Ձէ, չէ, ինձ թողէք սրան: Սա իմ բաժինն է: Սա իմ որսն է և ուզում եմ, որ միայն ինձ պատկանի... Բռնեցէք, լաւ պահէք... Ձէք տեսնում, որ ուզում է վախճել...

ԳՈՒԻԴՈ, Հապա ինչո՞ւ համաձայնեց գալ... Ինչո՞ւ էիր սուտ ասում...

ՎԱՆՆԱ: (Տեսանուելով ու խօսքի փոփոխում): Սուտ էի ասում... Ձը գիտեմ... Ես չէի ուզում առել... Լսիր, ահա այժմ... Այո, այո, դու այժմ կը հասկանաս... Մարդ չատ անդամ չի իմանում, թէ ինչ է անում... Ո՞վ կարող է ամեն ինչ նախատեսել... Երբ գնում էի այնտեղ, մտքովս չէր անցնում... Բայց բան է, պատահում է... Այո, այո, դու այժմ կ'իմանաս... Գողը պատռուեց: Ի՞նչ արած, որ քեզ վիշտ կը պատճառի. չէ որ ինքդ էիր ուզում... Ա՛խ, վախենում էի քեզանից... Վախենում էի յուսահատութեան հասցին սէրդ... Այժմ դու ինքդ ես ուզում, որ ես այդ անեմ... Շատ լաւ: Ուրեմն կ'ասեմ քեզ: (Աւելի հանգիստ ու վստահ ձայնով): Ոչ, ոչ, ես քո կարծած դիտաւորութիւնը չեմ ունեցել: Ես սրան նրա համար չեմ բերել այնտեղ, որ ամենքը սրա դահիճը դառնան ու բոլորս միասին հանենք մեր վրէժը... Իմ դիտաւորութիւնս այդքան վստահ էր, բայց աւելի էր տողորուած քո սիրով... Ես ուզում էի սպանել սրան ամենաթանաթ կերպով, բայց և ուզում էի, որ այս խայտառակ գիշերուան խայտառակ յիշողութիւնը չը ծանրանայ քո գլխին մինչեւ մեր մահուան օրը... Ես ուզում էի վրէժ հանել միայնակ ու ծածուկ. ես սպանելու էի սրան զանդաղ մահով, հասկանում ես, սակաւ առ սակաւ, մինչեւ որ սրա սեւ արիւնը, կաթ առ կաթ ծորելով, ջնջէր իր արած ժանտ ոճիրը... Դու չէիր իմանալ երբէք սոսկալի ճշմարտութիւնը, և սոսկալի յիշողութիւնը չէր ցցուիլ երբէք, իբր ժանտ ուրուական, մեր քաղցր համբոյրների միջեւ... Խոստովանում եմ, ես վախենում էի, թէ դու չեա կարողանալ այլ եւս սիրել ինձ, երեւակայելով այդ պատկերը... Ես գիտեմ, որ խելագարութիւն էր արածս, որ անհնար բան էր ուղածս... Բայց այժմ դու ամեն ինչ կ'իմանաս... (Դիմելով ամբոյսին): Որովհետեւ բանն այնտեղ է հասել և այլ եւս կարիք չը կայ խնայելու մեր սիրոյ զղացմունքը, ուրեմն դուք էլ պէտք է հասկանաք... Պէտք է ամեն ինչ պարզ ասեմ և դուք պէտք է լինէք իմ դատաւորը...

Ահա թէ ինչ է եղել իմ արածս. այս մարդը, ինչպէս ասացի, տիրացաւ ինձ ստորաբար, լրբաբար... Ես ուզում էի սպանել սրան և կոխ սկսուեց մեր մէջ... Բայց սա ինձ զինաթափ արեց... Այն ժամանակ աւելի խիստ վրէժիւնդրութեան ծրագիր ծագեց մտքումս և ես սկսեցի ժպտալ սրա երեսին... Սա հաւատաց իմ ժպտին... Օ՛, խելագարներ են աղամարդիկը... Եւ մենք իրաւունք ունենք նրանց խաբել... Նրանք սիրում, պաշտում են սուտը... Երբ նրանց յոյց են աալիս կեանքը, նրանք կարծում են, թէ մահ է այդ. Երբ մահ են առաջարկում նրանց, կեանքի տեղ են ընդունում նրանք... Սա կարծում էր, թէ տիրանալու է ինձ, բայց իսկապէս ինքն ընկաւ իմ ձեռքը... Ահա այժմ գերեզման է մտնում և ես իմ ձեռքով կը կնքեմ գերեզմանի խուփը... Ես գիտէի, որ պէտք է սրան այստեղ բերել, իբրեւ մի հեզ դստն, համբոյրներ տալով... Եւ ահա սա իմ ձեռքումն է և ես կրեմք չեմ բաց թողնիլ սրան ձեռքիցս... Օ՛, իմ սիրուն Պրինչիվալլէ, Այնպիսի համբոյրներ կը տեսնես այժմ, որ երբեք ոչ մի մարդ չի տեսել:

ԳՈՒԻԴՈ: (Մօտենալով): Վաճառ...
 ՎԱՆՆԱ: Մէկ մօտիկից նայիր սրան... Ի՞նչ յոյսեր ունէր...

Իսկոյնեկէ իսկաւատաց, երբ ասացի ճսիրում եմ քեզ, Պրինչիվալլէ... Օ՛, դժոխք որ տանէի, անխօս կը դար յետեւիցս... Ես համբուրում էի այսպէս... (Ձեռն համբոյրներ ե դրոշմում Պրինչիվալլէի օրթոգոններին): Սիրում եմ քեզ, Ձիանէլլօ... Դու էլ համբուրիր ինձ... Այս համբոյրներն են միայն իսկական համբոյրներ... (Շուռ գալով դէպի Գուիդօ): Տեսնում ես, դեռ այժմ էլ համբոյրներիս պատասխանում է համբոյրով... Օ՛, այսպիսի սոսկումից յետոյ չառ հեշտ է անցնել ծիծաղի... Տէր, սա իմն է առաջի Աստուծոյ և մարդկանց... Ես ուզում եմ, որ սա իմն լինի և իմն կը լինի... Սա այս գիշերուան վարձս է և հրաշալի վարձ... (Օրօրում ե եւ յեկում սիւներից մեկին): Չգոյշ կացէք, վայր եմ ընկնում... Ես չեմ կարող դիմանալ այսպիսի մեծ հրճուանքի... (Շնչաւաղառ ձայնով): Հայր իմ, ձեզ եմ յանձնում սրան, մինչեւ որ ոյժերս... Թող տանեն 'ախ քան... Թող մի զնդոն ընտրեն սրա համար, ախպիսի խոր զնդան, որ ոչ ոք չը կարողանայ... Եւ իմ մօտ կը լինի բանալին... Թող իսկոյն բերեն ինձ... Թող ոչ ոք ձեռք չը տայ սրան... Սա իմ բաժինն է, լսում էք, իմ բաժինը, և չեմ ուզում, որ ուրիշի մօտ դիպչի սրան... Գուիդօ, սա ինձ է պատկանում... (Մի քայլ անելով դէպի Մարկօն): Հայր իմ, սա իմն է, և դուք պատասխանատու էք սրա համար... (Ակնայառ նայելով Մարկօյին): Հասկանում էք, հայր իմ... Դուք սրա պահապանն

էք լինելու. տեսէք, որ նախատինքի մի՛ նշոյլ անգամ չը դիպչի սրա երեսին, որպէս զի կարողանաք սրան յետ դարձնել ինձ այնպէս, ինչպէս ես այժմ յանձնում եմ ձեզ... (Պրինչիվալլէին Տանում եմ): Յտեսութիւն, իմ Պրինչիվալլէ... Օ՛, մենք կը տեսնուենք նորից... (Մինչ Գուիդօն գտնուում է զինուորների մէջ, որոնք կոպիտ կերպով տանում են Պրինչիվալլէին, Վաննան ճիշդ է արձակում, օտուտում է եւ ընկնում Մարկոյի գիրկը, որ տեսնելով, որ նա ընկնելու է, վազել էր օգնութեան):

ՄԱՐԿՕ: (Շատ արագ եւ կիսաձայն, կռաւարկով դեպի Վաննան): Այո, հասկացայ, Վաննա... Հասկացայ քո սուտը... Դու անհնարը հնարաւոր դարձրիր... Արածդ իրաւացի էր և շատ անիրաւ, ինչպէս այն ամենը, ինչ որ մարդիկ անում են... Կեանքը իրաւունքներ ունի... Սթափուիր, Վաննա... Պէտք է շարունակել սուտը, որովհետեւ չեն ուզում հաւատալ ճիշտը ասելիս... (Կանչելով Գուիդօյին): Գուիդօ, Վաննան սթափուում է... Կանչում է քեզ...:

ԳՈՒԻԴՕ: (Վազելազ մօտենում է ու իր գիրկն առնում Վաննային): Ի՞մ Վաննա... Ժպտում է... Պատասխանիր ինձ, իմ Վաննա... Ես երբէք չեմ կասկածել... Այժմ, ամեն ինչ վերջացաւ, և ամեն ինչ մոռացութեան կը արուի արդար վրէժից յետոյ... Ծանր երազ էր, անցաւ-դնաց...

ՎԱՆՆԱ: (Աչքերը բանալով, սասիկ քոյլ ձայնով): Ո՞ւր է նա... Այո, գիտեմ, գիտեմ... Բայց ո՞ւր է բանալին, չուտ արէք տուէք ինձ... Նրա բանտի բանալին... Չը թողնէք, որ ուրիշները...

ԳՈՒԻԴՕ: Պահապանները այս բոպէիս կը գան ու բռնալին կը յանձնեն քեզ...

ՎԱՆՆԱ: Ուզում եմ, որ միայն իմ ձեռքումս լինի բանալին, որպէս զի հաստատ իմանամ... Որպէս զի ոչ մի ուրիշ մարդ... Հա, վատ երազ էր... Շուտով կը սկսուի լաւ երազը... Լաւ երազը...

Վ ա ր ա գ ո յ ր

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Յնօրին Պուրցելի»ի մէջ տպուած են մի շարք յօդուածներ, որոնք պատմականօրէն շատ լաւ պարզում են հայ-վրացական յարաբերութիւնները: Կարեւոր համարելով երկու ազգերի համերաշխութիւնը, մենք ուզում ենք որ մեր ընթերցողները իմանան վրացիների դժգոհութեան բուն պատճառները հայերից, այդ նպատակին կարելի է հասնել պ. Կալամիրի ծանօթացնելով յօդուածների հետ:

«Մեր կարծիքը հայ-վրացական փոխադարձ յարաբերութիւնների մասին արդէն յայտնել ենք: Հոգով և սրտով կողմնակից ենք համերաշխութեան համահաւասար իրաւունքներով: Կովկասեան ազգերի միութիւնը մենք ներկայացնում ենք որպէս լուսաւոր և ուժեղ ապագայ: Այս միութեան համար հարկաւոր է, որ որքան կարելի է բոլորս լինենք անկեղծ, ուսումնասիրենք այսօրուայ մեր անհամաձայնութեան պատճառները, որպէս զի ոչ միայն տեսնենք իրար, այլ և հասկանանք միմեանց:

Վերջին ժամանակներս մեր հասարակութեան մէջ զարթնեց հետաքրքրութիւն զէպի հայերը՝ տպւում են նամակներ հայերի վերաբերմամբ, թարգմանւում են հայոց լրագիրների յօդուածները մեր փոխադարձ անհամաձայնութիւնների վերաբերեալ: Ամենքս էլ հետաքրքրւում ենք, թէ ի՞նչ են մտածում և ի՞նչ են գրում հայ գրողները մեր մասին: Սա լաւ նշան է և պիտի աշխատենք աւելի և աւելի մօտ ծանօթանալ հայ գրողների և հասարակութեան հետ: Մեր լրագիրները մեծ ծառայութիւն կը մատուցանեն վրացիութեան, և թէ աւելի մեծ աշխատանք և լուսաբանութիւն մտցնեն այն չարքաչ հարցերից մէկի մէջ որ մկրտուած է հայ-վրացական անուամբ: Այսպիսի փոխադարձ յարաբերութիւնների հարցեր եղել են և կան ամեն տեղ, որտեղ մի շրջանակի մէջ, մի հողի վրայ ապրում են այլ և այլ ազգութիւնների անդամները: Այս հարցը ոչ հնարած է և

ոչ հեղինակած, այլ իսկական կեանքի հետեւանքն է: Չենք կարող անցնել այս հարցի կողմով և մտածել՝ որ նա ինքն ըստ ինքեան կը լուծուի: Ինքն ըստ ինքեան երկրագնդիս վրայ ոչինչ չի շինուում և ամեն բանի մէջ հարկաւոր է մարդկային բանականութիւնը: Հայ-վրացական անհամաձայնութիւնը մեր կեանքի մայր հարցերիցն է և պիտի աշխատենք նրա համար, ինչպէս որ ուրիշ ցաւերի համար:

Մենք կամենում ենք այս յօդուածներով ծանօթացնել ընթերցողներին՝ թէ ինչպէս արտայայտուեց վրաց գրականութեան մէջ մեր և հայոց անհամաձայնութիւնը, ինչից առաջացաւ դա և ինչ հայեացք ունէին դրա մասին վրաց գրողները: Հետաքրքիր է գիտենանք թէ մի քանի հարցերը հիման ծնուեցան, թէ առաջուց էլ գոյութիւն ունէին և կամ մի քանի դրողներ ինչպէս էին նայում հայ-վրացական անհամաձայնութեան վրայ: Եթէ որեւէ մէկը նրանցից փոխեց իր կարծիքը՝ ինչից առաջացաւ դա: Օրինակի համար, կարծում ենք որ Թիֆլիսի ընտրութիւնների մրցութիւնը սկսուել է վերջին տաս տարուայ ընթացքում, այն ինչ ինչպէս երևում է քսան և հինգ տարուց առաջ էլ կատաղի կսիւ են մղելիս եղիլ իրար դէմ վրացիք և հայերը:

Վրաց մամուլի հայրն է Սերգէյ Մեսխին և մենք էլ կը սկսենք նրա «Դրօէբա»-ից *):

«Դրօէբան» տեսնում էր վրաց-հայկական անհամաձայնութիւնը Փարթ-կախէթի գիւղերում տնտեսական հողի վրայ, Թիֆլիսում քաղաքային խնամվարութեան մէջ, տեսնում էր նաեւ զուտ ազգային շահերի ընդհարումն (լեզու, վրացի կաթոլիկներ և այլն), տեսնում էր վրայիների նեղուրը հայերից, բայց հաւատում էր որ այս անհամաձայնութիւնը կ'անցնէ, որ ամբողջ հայ ազգը չէ մեզ նեղողը և քարոզում էր փոխադարձ յարգանք և միութիւն:

*) «Դրօէբա»-ն հիմնուել է 1866 թ. մարտի 4-ին. նրա հրատարակիչը մինչեւ 1882 թիւը եղել է Ստ. Մելիքիշվիլի խմբագիրը, մինչեւ 1869 թ.—Գ. Մերեթելին: Սյա տարուանից մինչև 1883 թ. մայիսը—Ս. Մեսխին: 1873 մինչև 74 թիւը Ս. Մեսխին արտասահմանումն էր և լրագրի ժամանակաւոր խմբագիրն էր Կիր. Լորթքիվանիդզէ (թէպէտ և Ս. Մեսխին աշխատակցում էր և ուղղ ժամանակ դրօից)—1883 թ. մայիսի 9-ից լրագիրը ղեկավարում է Իւ. Մաչարեիլի-ից, որն և շուտով դառաւ նրա խմբագիրը և լեկատար տէրը: «Դրօէբա»-ն փակուեց կառավարչական կարգադրութեամբ: Նրա վերջին թիւը լոյս տեսաւ 1885 թ. սեպտեմբերի 14-ին: «Դրօէբան» առաջ լոյս էր տեսնում շաբաթը մի անգամ: 1875 թուից շաբաթը երեք անգամ, իսկ 1877-թուին նա դադար տվնիստիս: 1880—1881 թ. «Դրօէբա»-ն և «Իվերիա» լրագիրները մէկ խմբագրութիւն ունէին:

Առաջին նամակ հայերի դէմ տպուեց լրագրի 1870 թուի № 22-ում, որ վերաբերում է հայ վաճառականների տնտեսապէս ուժեղանալուն Քարթալինայի մէջ... «Ստրկութիւնը վերջացաւ և հիմա յուսալի է որ այստեղի կալուածների մեծ մասը կանցնի պրիկազի և հայոց ձեռքը: Պիտի տեսնէք՝ թէ որքան օգուտ են տալիս նրանք պարսապաններին: Հրէաները և հայերը քիչ է մնում որ քերթեն բոլոր վրացիներին: Յաճախ պատահում է, որ ստկոսները երկու անգամ գերակշռում են պարտք տուած փողին»: Այս նամակը ուղարկուած է Քարթլի գիւղից: Այս տեղից սկսած այսպիսի բողոքներ հայերի վերաբերմամբ սովորական երևոյթ են կազմում մեր լրագրութեան մէջ: 1871 թուականի № 38-ում Աղնախից գրում են, որ նրանց վաշխառուները մի թուամանի վրայ տարեկան 12-ից մինչև 24 բուլլի տուկոս են վերցնում: Գիւղացիների կարողութիւնը անցնում է վաճառականների ձեռքը, մեծ պարտք կայ նաև իշխան աղանուականների կալուածների վրայ: 1872 № 15-ում նկարագրուած է հայ վաճառականի խորամանկութիւններից մէկ օրինակ՝ մի գիւղացի պարտք է վերցրել հայից, աֆուհետեւ վարձուել է ուրիշի մօտ, ծառայել է, հաւարել է փող, յետոյ տուն վերադառնալիս ճանապարհին հանդիպել է պարտատէր հային, վճարում է նրա պարտքը, բայց մուրհակը յետ չի ստանում նրանից, քանի որ վաճառականը յայտնում է նրան որ չի վերցրել իր հետ, ուստի նա կարող է յետոյ դնալ նրա մօտ և ստանալ մուրհակը, բայց «յետոյ» նրան չի տալիս այդ մուրհակը, որ յանձնում է պարտատէր վրացուն այն ժամանակ, երբոր երկրորդ անգամ ստանում է գրանից իր պարտքը: Թղթակիցը վերջացնում է այս նամակը նրանով՝ որ վրացի գիւղացին միշտ նեղութիւն կը կրի, քանի որ հայերը տիրապետում են: 1874 թուի մի №-ում կարդում ենք՝ «Գիւղական լրագիրը իմացել է որ Քիզիլի մէջ ամբողջ գիւղի կալուածները անցել են մի վաճառականի ձեռքը: Ամբողջ վրաստանում շատ է տարածուած որ հող-կալուածները, ինչպէս ազնուականների, նոյնպէս էլ գիւղացիների անցնում են վաճառականների ձեռք: Եթէ այս բանը գլուխ պահելով և ուրիշ միջոցներով (գիւղական բանկեր գիւղատնտեսական դպրոցներ) չը կանգնեցնենք, մի գեղեցիկ օր կը տեսնենք մեզ աղքատացած, խոկ մեր հող ու կալուածքը վաճառականների և փողով հարուստ այլազգիների ձեռքին»:

Ահա էլի մի պատկեր, կը գայ հայ վաճառականը գիւղ. կը գտնի ստանհայր, կը սկսի գիւղացու հետ այլ և այլ բաներից խօսել, գովել նրան, խաբելով կը ծախէ նրան ապրանք (մեծ մասամբ փթած և անպէտք) նիսիա, յետոյ կը գայ կալի ժամանակ, որ-

պէսդի ստանայ իր նիսիան և այժմ էլ կը խաբի գիւղացուն քաշի ու չափի մէջ։ Ամբողջ արդիւնաբերութիւնը անցնում է հայի ձեռքը, գիւղացուն ոչինչ չի մնում։ Ինչ այգի որ կը հաւանի վաճառականը, կը ծանօթանայ նրա տիրոջ հետ, կը բարեկամանայ, յետոյ գրաւով կը վերցնէ նրա այգին, առկոս տոկոսի վրայ կը գայ և ի վերջոյ կ'առնի այգին («Գրօէքա» 1875 թ. № 68)։ «Մեր արդիւնաբերութիւնը սատանայինն է», յաճախ կը լսէք գիւղացուց, գրում են 1875 թ. № 91-ում։ սրա մէջ կը համոզուէք, եթէ հանդիպէք գիւղում հնձի ժամանակ։ հէնց կը սկըսուի թէ չէ հունձը, կը վերցնեն իրանց զլուխը վաճառականները և մինչև հայի կալսելը հարիւրներով թրեւ կը գան գիւղից գիւղ. կը կանգնեն գիւղացու դռներ և զօռով փաթաթում են նրա չլնքին փթած և ընկած ապրանքը իր սովորական գնից երեք անգամ թանկ։ Քիզիզի մէջ, սրտեղ կան լաւ արօտատեղեր, այգիներ և մարգագետիններ, բոլորը սղնախեցի հայերի ձեռքին է—կարդում ենք 1877 թ. № 225-ում։

Այս մէջ բերած լուրերը բոլորովին բաւական են, որպէս զի ներկայացնենք մեզ մեր գիւղացիների դրութիւնը։ Գիւղացու տնտեսական պայմանները այնպէս են, որ նա ստիպուած է դիմել վաճառական միջնորդին, որպէս հում նիւթ առնողին և ապրանք վճարողին և վաճառական-բանկեր-վաշխառուին, որ նրան վճարել է տալիս 100—2000/0։ Գիւղացին, ինչպէս նաեւ ագնուականն ու իշխանը՝ լաւ են տեսնում, թէ ինչպէս իրանք կորչում են և նեղուած են վաճառականից և, ընտանաբար, նրանց մէջ ծնւում է ատելութիւն, թշնամութիւն և զգուանք դէպի այդ վաճառականը, նա մանաւանդ որ նա պատկանում է այլ ցեղի։ Արդարութիւնը պահանջում է յիշել և այն որ թըղթակիցները յիշատակում են որ վաճառականները միայն հայերից չեն, նրանց մէջ կան նաեւ վրացիներ, հրէաներ. ասում են որ վաճառականները մեզ աղքատացրին, բայց այդ երեւոյթի մէջ չեն մեղադրում միայն հայ վաճառականին։ Մի թըղթակից հայ վաճառականին նախատելուց յետոյ աւելացնում է, որ նա զրանով չի ուզում դիպչել ազդութիւններին, և չի ուզում հաստատել, որ անարդարութիւնը, անկիրթ ժողովրդին կողոպտելը, անխղճութիւնը և անկարգութիւնը միայն հայերիցն է։ Քիզիզի մէջ շատ հայերի մեծ մասը նամուսով, խղճով և ճշմարտութեան հետեւող է (1877 թ. № 225)։ Բայց սա ի հարկէ չի փոխում ընդհանուր պատկերը. գիւղի մէջ վաշխառու-վաճառականը՝ հայն է և այդ բանը կրկնակի աննորմալ է (անբնական) դարձնում դրութիւնը։

Ինչպէս է նայում ինքը խմբադրութիւնը հայ վաճառա-

կաննների կողմից մեր գիւղերի այսպէս նեղուելուն: Նա տեսնում էր միայն վաճառականին և ոչ հային: Մի առաջնորդողի մէջ (1871 թ. № 41) որի վերնագիրն է «Մեր չքաւորութիւնը», և դրաւում է Քիզիդից ուղարկուած թղթակցութեան առթիւ, կարդում ենք. «Միթէ միան Քիզիդումն ենք վրայիքս այսպիսի նեղ դրութեան մէջ ընկած: Ամեն տեղ, Քարթլի, Իմէրէթի, Սամէգրէլոյի, Գուրիայի և այլն տեղեր, որտեղ որ կանք վրայիքս, ամեն տեղ յատկապէս գիւղացին աղքատ է և տնանկ: Այս գիւղացիներից ամեն մէկը իր կարեաց չափ աշխատում է իր ոյժը և ջանքերը գործ դնել հողի, վազի մշակութեան վրայ, բայց երեւում են այնպիսի անձնաւորութիւններ, որոնք առանց խղճահարուելու օգտւում են նրանց աշխատանքից: «Այսպէս է, չարունակում է նա, նաեւ լուսաւոր երկրներում, ինչպէս, օր. Անգլիայում, բայց այնտեղ կառավարութիւնը մշակում է աղքատ ժողովրդի օգտին օրէնքներ, հասարակութիւնը ամեն կողմից դրանց աջակցում է, լուսաւորումները հազար տեսակ միջոցներ են գտնում աղքատ մշակների համար, իրանք մշակներն էլ մօտենում են իրար, կազմում են այլ և այլ ընկերութիւններ, աշխատում են միասին և ձեռք են մեկնում իրար: Երկրորդ առաջնորդողի մէջ (1873 թ. № 11), որի տակ ստորագրուած է Ս. Մ. (Ս. Մեսխի) ասում է, որ—մեր գիւղացիների կայքերի կէսը յատկապէս կախէթում և Քարթլիում վաճառականների մօտ գրաւ են և եթէ մի որեւէ միջոցի չը դիմենք, ամբողջապէս կ'անցնեն նրանց ձեռքը, որ մեր վստ անտեսական դրութեան պատճառը միայն մեր կողմի վաճառականները չեն, բայց միեւնոյն ժամանակ Վրաստանի տնտեսապէս ընկնելուն պակաս չեն նպաստել նրանք, որ այսպիսի դրութեան դէմ միակ միջոցն է ժողովրդի լուսաւորութիւնը, ինքնաճանաչութիւնը, նրա աշխատանքի լաւ պայմանների մէջ դնելը, և այլն:—Այս երեւոյթի մասին խօսեց նաեւ Գ. Ս. կակի (1874 թ. № 450) և մեր ձեռքից մեծ կալուածների ընկնելու պատճառը վերագրեց մեր մշակութիւն չը գիտնալուն և աշխատանքից փախչելուն. «Այսպիսի դրութեան մէջ, եթէ հայերը իրար եղբայրաբար ձեռք մեկնեն, օգնեն իրար և ոչ թէ իրանց սեփականը կորցնեն, այլ մեր կորցրածն էլ փրկուեն, միթէ դրա համար պիտի մեղադրենք նրանց: Նոյն հոգով է գրում (1870 թ. № 24—Ֆելլէտօն) նաեւ Գորիսիլի (Գ. Ծերեթելի) մեր «Փուլ ինքնասիրութիւնը և փողերի անհաշիւ վատնելն է պատճառ, որ այսօր Քարթլ—Կախէթի հող-կալուածքը հայոց ձեռքն է ընկած: Նոյն Գ. Ծերեթելին *) գրում է

*) Գ. Ծերեթելիի մասին մենք կը խօսենք մի այլ անգամ: Այստեղ կը նկատենք միայն, որ Գ. Ծերեթելին ընդհանրապէս պօլիտիկ—բօսանք

իր «Մենք և մեր ժամանակ»-ի մէջ (Դր. 1879. № 13-16). «Ենթադրենք որ այսօր մեր երկրում չը կայ հայը, հաւատացած պիտի լինենք որ նրանց տեղ կը լինէր վրացի վաճառականը, որ կը վարուէր ուղիղ այնպէս, ինչպէս այսօր վարուում են հայ վաճառականները... Այստեղ հայութիւնը մէջ բերելու չէ, առեւտուրի կարգը մէկ է ամեն տեղ: Չարչիւնների դէմ մէկ միջոց կայ—ամենք պիտի աջակցենք աշխատող ժողովրդին, շատացնենք բանկերը, հարկաւոր փողը գտնենք նրանց համար, որպէսզի մի երկու րուբլու համար միկիտանը իր ձեռքը չը գցի ամբողջ տարուայ աշխատանքը և այլն»: Բոլորովին ուղիղ է դատում «Դրօժբան», որ հայ վաճառականների դէմ պիտի կռուենք աշխատանքով, լուսաւորուելով, անտեսաբար ուժեղանալով և ոչ թէ ազադականեամբ և պօլիցիալական միջոցներով, բայց նա պարզ ներկայացրած և պատկերացրած չունէր այն վնասը, որ առաջ էր գալիս և առաջ է գալիս այժմ մեզ համար ոչ միայն լոկ վաճառականից, այլ հայ վաճառականից: Եթէ ընդհանրապէս վնասաբեր է և վատ, որ մեր գիւղացին աւարդարօրէն նեղուի չարչիից, եւս առաւել վնասաբեր ու կործանիչ է, որ մեր գիւղացու կաջքը. (նաեւ աղնուական-իշխանների) օտար վաճառականի ձեռքը անցնի, քանի որ այդ դէպքում ազգի—մի մասի կարողութիւնը ոչ թէ անցնում է նրա միւս մասի ձեռքը, այլ բոլորովին կորչում է այդ ազգի համար: Ով է մեղաւոր, կամ ում մեղքն է, հարցը դրանում չէ: Եթէ ուզում էք իմանալ, այստեղ երկու կողմն էլ մեղաւոր են: Այն երեւոյթի համար, որի անունն է վաշխառութիւն կամ գիւղացուն վաշխառուից նեղուիլը, հարկաւոր է երկու էլէմենտ—վաշխառու, չարչի—փող և ապրանք տուողը և ծախողը մի կողմից և փող ստացողը միւս կողմից: Այս հանգամանքում երկուսն էլ մեղաւոր են: Բայց բանը նրանում է որ երեւոյթը տեսնենք լաւ և զգանք՝ թէ որքան նա վնասաբեր է: Մեր մեղքն է թէ ոչ՝ այդ չը դիտենք. գիտենք միայն որ նեղուիլ կայ և նեղուածները մենք ենք: «Դրօժբան» չէր տեսնում, չէր տեսնում սկըզբում (յետոյ տեսաւ), որ մեր լուսաւորութիւնը առաջ չէր գնում ուղիղ ճամբով, քանի որ վաճառականութիւնը և արհեստները այլ ազգի ձեռքին է: Այստեղ չը պիտի լինի որեւէ ատելու-

տիկ էր. ուզում էր տեսնել այն, ինչ որ ցանկալի էր և ինչ որ դեռ գոյութիւն չունէր: Սրանով մենք չենք ուզում ասուելու զոքի հանգուցեալ դրոյի և հասարակական դործիչի անուան վրայ: Ով որ փոքր ինչ գոնէ բռնանտիկ չէ, նա ոչինչի չի հաւատում, Գ. Ծերեթեւու զլխաւոր արժանաւորութիւններից մէկը այն էր, որ որպէս իդէալիստ խորապէս հաւատում էր բարեկաւ ասպագային:

թիւն կամ չը հասկացած թշնամութիւն, այլազգի վերաբերմամբ, թէկուզ նա լինի հայ կամ թաթար: Մեզ համար վնասաբեր է որ Գարթլ-Վախէթի գիւղերի և քաղաքների մէջ վաճառականներն օտար տոհմերից են և այսպիսի դրութիւնը պիտի հեռացնենք մեր գլխից: Միթէ նրան հակառակ կը լինի մէկը:

Բայց միթէ տեսաւ «Դրօշբաշ» որ հայ վաճառականների լուսաւորութիւնը վատ էր մեզ համար, որ մեր ձեռքից կալուածների հեռանալը և հայ վաճառականի ձեռք անցնելը, որ առաջ չարչի էր և վաչխառու, յետոյ վաճառական, արհեստաւոր, արտադրող և որ յետոյ փոխուեց և դարձեալ պիտի փոխուի եւրոպական բուրժուազիայի, միթէ այս բոլորը նման չէ այն առածին ճշկաւ թիքէն՝ իր ամանի մէջը:

Վերին աստիճանի հետաքրքիր է հայ գրողների կարծիքը այս երեւոյթի մասին: Ահա թէ ինչ էր գրում «Մշակը» 1873 թ. («Դրօշբաշ» 1873 թ. № 23). «Մենք յաճախ լսում ենք զանգատ, որ տոկոսով փող տուող հայը շատ է նեղում և աղքատացնում գիւղացիներին, ինչպէս վրացի, նոյնպէս էլ հայ»: Այս հարցի մասին միշտ տպւում են յօդուածներ, նամակներ և մանր մունր լուրեր ինչպէս «Մշակի», նոյնպէս և վրաց «Դրօշբաշ» մէջ: Երկու լրագիրն էլ տնտեսական տեսակետից էին նայում այս յաւալի երեւոյթի վրայ: Չէր էլ կարելի այս երեւոյթը այլ տեսակետով քննել: Ծնչող, տոկոսով փող տուողներ ամեն տեղ էլ կան: Հայերի մէջ այս բնութեան հակառակ գործին շատերը չեն հետեւում: Կովկասի մէջ ապրում են բաւական թուով աշխատանք սիրող և արհեստաւոր հայեր: Որովհետեւ մի քանի հայեր սկսել են ժողովրդին աղքատացնող այս դործը, հաւատացած ենք որ ամբողջ հայութեան ոչ ոք չի վատաբանելու: «Բայց այս մէկը հարցնենք, կարո՞ղ է արդեօք այս բանը հասկանալ հասարակ ժողովուրդը, նեղուած, աղքատ, տգէտ և աշխատասէր գիւղացին: Գերթողին գիւղացին իր երկիւղալի թշնամին է համարում. իր այս թշնամին մեծ մասամբ լինում է հայ վաճառականը: Այսպիսով փող տոկոսով տուողը միշտ հայն է... Այստեղից վրացի գիւղացին համոզւում է որ ամբողջ հայ ազգը բաղկացած է նրա պարտատէրի նման մարդկանցից... Մեր հայրենակիցներից մի քանիսը իրանց կեղեքիչ վարմունքով ոչ միայն հեռացնում են մեզանից վրաց գիւղացու ժողովրդի համակրութիւնը, այլ և ծնեցնում են նրա մէջ բոլորովին հակառակ զգացմունք: Այս մարդիկ վրաց ժողովրդի սրտի մէջ ցանում են թշնամական վերաբերմունք զէպի հայ ժողովուրդ, այն ժամանակը երբ այդ երկու ժողովուրդը ունի ընդհանուր չահեր»: Ի վերջոյ լրագիրը բերում է այն հա-

յերի կարծիքը որոնք ասում են՝—ո՞վ է մեղաւոր, որ այն ժողովուրդները, որոնց մէջ ապրում են հայերը, նրանցից թոյլ են, ծոյլ են, այնպէս որ հեշտութեամբ կեղեքւում են հայերից, — բերելով այս կարծիքը հարցնում է. «Բայց մի՞թէ դա ուղիղ է, մի՞թէ խելօք մարդու և ընդունակ ժողովրդին վայել է իր ընդունակութիւնը և ոչ ոք ի նարը գործ դնել»:

Պարզ է, որ «Մշակը» վերին աստիճանի միակողմանի է նայում գործին: Այստեղ միայն մի քանի հայեր չեն գործում, այստեղ միայն տնտեսական հարց չէ, այլ այստեղ ազգային հարց է տնտեսական հարցի վրայ *):

*) Յօդուածի այս մասն էր տպուիլ դեռ, բայց «Իվերիան» չը ապահով նրա վերջնական լայտարարեց, որ «Դրօճբայից» առաջ էլ վրաց գրականութեան մէջ խօսքեր լինում էին հայոց մասին «Մէկ ցոյց տուէք՝ հարցնում է նրան ճնորդիս Պարցելի» № 1893: «Ո՞ր պրեսուայի մէջ, ո՞ր խմբագիրներն էին գրում հայերի մասին և այն էլ ռաս գրում Մինչեւ «Դրօճբան» գոյութիւն ունէր՝—«Սաքարթվելոս գաղեթի (Վրաստանի լրագիր) 1817-20 թուակ. Այժմ այդ լրագրից մնացել է միայն մի համար, որը իր մէջ պարունակում է լայտարարութիւններ, տեղեկութիւններ Պետրոս մեծի մասին և մանր լուրեր»): «Քարթուլի գաղեթի» (վրացերէն լրագիր) (1820—1821 թ. լրագիրը գլխաւորապէս նշանակուած էր պաշտօնական կարգադրութիւնների համար), «Տփլիսիս Ուժդեբանի» (Тифлисскія вѣдомости) (1830 թուին) մինչեւ միզ հասել է տառնորոգ համարը: Դուրս էր գալիս շարաթը մի անգամ, տպում էր հին լեզուով, «Մախարաբի» (Աւետարեք). որա մասին ոչինչ չը գիտենք (այս տեղեկութիւններ հանուած են «Իվերիայի» աշխատակից Գր. Ղիփշիճէի բրօշիւից «Периодич. печатъ на Кавказѣ» 1901):

Ննդրում ենք չարգելի լրագրին ասել. այս հրատարակութիւններից ո՞րի մէջն էր գրում հայերի մասին: Կամ գուցէ շատ էր գրում հայերի մասին զուգադատեալական լրագիր «Դուրսիս Բեղա» (գութնի մայր, 1861—1876 թ.) կամ «Սաքարթվելոս մօմբէ» (Вѣстникъ Грузіа-1863 թ.) այս ժուրնալի մէջ մենք հանդիպեցինք Իլ. Օքրոմճեղիշվիլու մի նամակի հաշ լիղուի և լուսաւորութեան չառաջադիմութեան մասին, որի մէջ միայն չարգանք է արտայայտուած ղէպի հայերը), կամ գո՞ւցէ «Յիսկարի» մէջ (Արշալույս 1852-75 թ.), որ գլխաւորապէս գրական մասից և լաճախ միայն թարգմանութիւններից էր կազմուած: «Յիսկարի» մէջ կաշ մի նամակ հայերի կամ ինչպէս «Յիսկարի»ն է ասում «մեր եղբայրակիցների» պատմութեան մասին. չարգանքով գրուած, կամ գուցէ «Սաքարթ. Սասուլիէրօ մախարաբէլին» էր (Վրաստանի հոգեւոր աւետարեք) մի բան գրում հայերի մասին:

Մենք սպասում ենք փորձուած և զիտցող լրագրի պատասխանին, բայց առաջուց էլ գիտենք լրագրի պատասխանը, այնպէս, ինչպէս գիտենք որ ծերացած «Իվերիան» չը գիտեն որ զրական ժողովածու՝ դեռ ևս պրեսսա չէ, որ պարբերական մամուլի համար անպայման հարկաւոր է բաղաւաղական էլեմենտը: Այսպէս էր միայն «Դրօճբայի» մէջ և այդ լրագրից է սկսում վրաց պարբերական մամուլը:

Ինչպէս յայտնի է, քաղաքային ինքնավարութիւնը մըտոյրին մեղանում 1874 թուին: Մինչեւ այդ ժամանակ մի քանի տարի գոյութիւն ունէին հին համայնական կարգեր: Ամեն մի համայնք և ամեն մի դասակարգ ընտրում էր իր ներկայացուցիչին: Այդ դասակարգները գործերից մի քանիսը վարում էին ջոկ-ջոկ, իսկ մի քանիսը միասին: 1866 թուին Թիֆլիսում տեղի ունեցաւ այս ձեւի ընտրութիւնները, առաջին դասակարգի՝ այսինքն ժառանգական ազնուականների ներկայացուցիչներ, ընտրուեցան մեծ մասամբ վրացիք. երկրորդ դասակարգի (անձնական-ազնուական և ժառանգական պատուաւոր քաղաքացի) ներկայացուցիչները միայն երկուս թէ երեքը վրացիք էին, երրորդ դասակարգի (մոքալաքի-անձնական պատուաւոր քաղաքացի) ներկայացուցիչներից ոչ մէկը վրացի չէր: Չէր ընտրուած վրացի նաեւ չորրորդ դասակարգի (Թիֆլիսի բնակիչներ, որոնք չունէին անշարժ կալք, բայց առեւտուր էին անում կամ արհեստաւոր էին) ներկայացուցիչների մէջ: Պիտի նկատենք և այն, որ ամեն մի դասակարգ ընտրում էր իր կողմից 25 ներկայացուցիչ: Քաղաքագլուխ ընտրուեց նոյնպէս հայ:

1870 թուի քաղաքային կանոնադրութեան դօրութեամբ ընտրողները ձայնաւոր էին ընտրում երեք տեսակ. Թիֆլիսում ամեն մի տեսակը ընտրում էր 24 ձայնաւոր: 1874 թուին Թիֆլիսում քաղաքային ընտրութիւնների առաջին կարգում ընտրուեցան միայն երեք վրացի (ընդամենը ներկայ էին 32 ընտրողներ), երկրորդ կարգում 2 վրացի (ներկայ էին 150 ընտրողներ), երրորդ կարգում—2 վրացի (350 ընտրողներ): Թեկնածուներ էին քաղաքագլխի համար՝ Թումանով, Խանջիեւ և Մամայով: Ընտրուեց առաջինը: 1875 թուին Թումանովի տեղը ընտրուեց Դմիտրի Ղլիփանից (սրա հակառակորդների թեկնածուն էր Երեմեա Արծրունին): 1878 թուին առաջին կարգից ընտրուեց մի վրացի, 3—4 այլազգից, մնացածը հայեր էին (ընդամենը ներկայ էին 32 ընտրողներ). երկրորդ կարգից—3 վրացի, 3 այլազգից, մնացածը հայ (ներկայ էին 57 ընտրողներ), երրորդ կարգից—6 վրացի, մնացածը հայեր էին: Քաղաքագլխութեան թեկնածուներն էին՝ Դ. Ղլիփանի, Բէհբութով, Խոջամիշասով, Չուբալով, Թամամէւ և Ղորղանով: Ընտրեցին Ղորղանովին, բայց երրորդ նա հրաժարուեց, նրա տեղը ընտրուեց Մատինով:

1883 թուին առաջին կարգից ընտրուեցին 2 վրացի, 2-ը այլազգից, մնացածը հայ էին (ներկայ էին ընդամեն 31 ընտրող), երկրորդ կարգից—3 վրացի, 4-ը այլազգից մնա-

ցածը հայ (ներկայ էին 96 ընտրողներ), երրորդ կարգից 4 վրացի —2-ը այլազգից, մնացածը հայ: Քաղաքազուլուս ընտրեցին Թումանովին:

Այսպիսի ընտրութիւններ տեղի ունեցան «Դրօշբաշի գոյութեան ժամանակ: Ի՞նչպէս էր նայում լրագիրը այս ընտրութիւններին: 1866 թուականի գույշ սաստիկ սահմանափակուած քաղաքային ինքնավարութիւնը ոչ ոքին չէր հետաքրքրում և ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում թէ ընտրուողը ով կը լինէր՝ վրացի, հայ թէ ուրիշը: Հայերը շատ էին և ընտրում էին ինքն ըստ ինքեան իրանցից, հեռու մնալով ամեն տեսակ ալօքրտիկայից: «Դրօշբաշն» ոչինչ չի ասում:

Բոլորովին այլ են 1874 թուի ընտրութիւնները: Բացուցաւ գործունէութեան լայն ասպարէզ: Ոմանց պատուասիրութիւնն էր գրաւում դէպի այս ասպարէզը, ոմանց էլ հասարակական գործունէութիւնը: Վրացիք էլ ցանկացան քաղաքի ինքնավարութեան մէջ մասն ունենալ. մօտ եկան, բայց տեսան որ հայերը, որոնք վրացերէն էին խօսում և որոնք առաջ նայում էին հայերի վրայ, ինչպէս իրանց եղբայրների և իրանց գլուխը կիսով չափ վրացի էին համարում,—դարձեալ աւելի (գույշեակամայ) իւրայինների կողմը բռնեցին, ընտրեցին հայերին, սեւագնելով վրացիներին:

Վրացիութիւնը շատ տխրեց հայերի վարմունքից, նա մասնաւոր այն պատճառով, որ վրացիք այդ բանին չէին սպասում: «Մեր քաղաքում մեզ սեւացրին», ասում էին նրանք դառնութեամբ և կամայ ակամայ ուշադրութիւն էին դարձնում իրանց դրութեան վրայ: Տեսան որ միայն «Չվենորա» (մերուձերութիւն) բաւական չէ, այլ և հարկաւոր է ոտ ամրացնելու համար նիւթական հիմք (հող): Հարկաւոր էր որ վրացիք շատ լինէին և նիւթականապէս ապահովուած Թիֆլիսում: Տեսան, որ Թիֆլիսը՝ անունով վրացիներինն է, բայց իրապէս նա ուրիշին է: Ս. Մեսխին հետեւեալ մեղանիօլիական նամակն է գրում ընտրութիւններից յետոյ («Դր.» 1874 թ. № 29—նոյեմբեր). «Որքան էլ տխրելու լինի իսկական վրացին (եթէ միայն մի տեղ կարելի լինի գտնել «իսկական վրացուն»,—ինչքան էլ տխրելիս լինի, բայց և այնպէս պէտք է խոստովանած, որ մի ժամանակ Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսը—այսօր դարձել է հայերի սեփականութիւն: Այսօրուայ Թիֆլիսի բնակիչների կէսը հայերն են: Վաճառականութիւնը, առեւտուրը նրանց ձեռքին է, քաղաքի հողը նրանցն է, այդ հողի վրայ կառուցած չէնքերն էլ համարեա բոլորն էլ հայերինն են: Գուցէ պատահէք մի տեղ մէկ կամ մի քանի իմերելի կամ մինգրելի և այն էլ

ծառայողների, մանրավաճառների կամ տան տէրերի մէջ, թէ չէ մնացած վաճառականութիւնը և «մեր» քաղաքի կարողութիւնը բոլորը հայերի ձեռքին է»:

«Մի խօսքով հայերը, բաւականին ուժեղ ճանկերով են կպել քաղաքին և, առայժմ տէր են և վարում են նրա բոլոր գործերը: Եթէ այս երեւոյթը ի նկատի ունենանք, այն ժամանակ լաւ կը ըմբռնենք, թէ ում պէտք է ընտրէր քաղաքը իր գործերը վարելու և կարգադրելու համար: 72 քաղաքային դեպուտատների մէջ միայն երեքը թէ չորսը վրացի են, կարծեմ մէկ թէ երկուսը—սուս և մէկն էլ գերմանացի, մնացածը—բոլորը հայեր են: Այս երեւոյթը շատ հեշտ հասկանալի է: Մանր և խոշոր վաճառականները, շատ թէ քիչ հարկ վճարողները, բոլորը հայեր են եւ նոքա էլ իրանց ծանօթ եղբայր մարդկանց, իրանց հաւատակից եւ արհեստակից մարդկանց ընտրեցին քաղաքային խորհրդում իրաւասու՝ իրանց շահերը պաշտպանելու համար: Սրա մէջ ոչինչ զարմանալու բան չը կայ: Բայց այս ընտրութիւնների հետեւանքը, կարծեմ արժէ, որ նրա մասին վրացի մարդը փոքր ինչ մտածէ»... Այն ինչ ընտրութիւններից առաջ Ս. Մեսխին միայն խորհուրդ էր տալիս ընտրողներին ընտրել այնպիսի մարդկանց, որոնց հետաքրքրեցնում է հասարակական գործը և որոնց սիրտը ջալում է հասարակական բարեկեցութեան համար *): Կը նշանակէ, որ բաւական չէ՝ որ միայն լաւ մարդիկ ընտրուին, այլ և հարկաւոր են լաւ վրացիներ: Մենք վերեւ ընդգծեցինք Ս. Մեսխիի մէկ դարձուածքը որտեղ նա ասում էր՝ թէ բոլորովին բնական էր որ հայերը իւրայիններին ընտրեցին: Սա ուշադրութեան արժանի է, նամանաւանդ, որ այն ժամանակ դեռ եւս լրագիրների կողմից չէր սկսուած ազիտացիա, դեռ եւս լրագիրները չէին ստեղծել «հայ-վրացական հարցը», ինչպէս կարծում են այդ մի քանիսը: Հայերը ղեկավարւում էին (այնպէս, ինչպէս վրացիք) բնական ազգային զգայմունքներով: Այս բնականօրէն իրար ձգտելն է մեր և հայերի ընդհարման, այն առաջին աղբիւրը, որին դժբախտաբար չեն նկատում շատերը:

Ամենից շատ բարկացրին հայերը Ակակիին, որը հետեւեալ սուր խօսքերը գրեց նրանց հասցէին. («Դր.» 1875 № 7) «... Այս խօսքերով մենք այն ենք ապացուցանում, որ եթէ մենք՝

*) «Մշակ»-ն էլ խորհուրդ էր տալիս չատկապէս երրորդ կարգի ընտրողներին, «Դուք չքատր էք, ասում էր նա, ընտրեցէք ձեր միջից այնպիսիներին, որոնք մտեն ձեր գրութեան մէջ»:

վրացիքս մեր անշնորհքութեան և անփութութեան չնորհիւ կորցնելու լինենք մի բան, աւելի լաւ է, որ այդ կորուստը էլի մեր եղբայրակից հայերը ձեռք զոյն և ոչ թէ օտարները, բայց սրանով ասել չէի ուզում որ հայերը կապեն մեր ձեռն ու ոտը, շարժուելու կարողութիւն չը տան, մինչեւ մեր բերանից խլեն մեր պատուը: Բայց դժբախտաբար հայերի կողմից այս վերջին գործողութիւնը երեւան է գալիս կամաց-կամաց... Այս եղբակացութեանը հասցրեց մեզ քաղաքային վարչութիւնը, որ նոյն հայութիւնն է: Հաւատացած պիտի լինեն ամենքը, որ վրացին, թէկուզ նա հանձար լինի, չի արժանանայ գլխաւորութեան քաղաքային վարչութեան մէջ: Ուղիղ է, երբեմն քաղաքային վարչութեան մէջ պատահում են և վրացիք իբրեւ անդամներ, բայց նրանց ձայնը այսպէս է կորչում հայերի մեծամասնութեան մէջ, ինչպէս կաթիլը ճահճի մէջ... Ի հարկէ, հայերը ձեռք կը մեկնեն իրար, սրա դէմ ոչինչ ասելիք չունենք, բայց միայն այն կը պահանջենք, որ քաղաքի վարչութիւնը մեզ նեղացնելու քայլեր չանէ»:

Սրանից յետոյ հեղինակը պատմած ունի այն լուրը, թէ ինչպէս քաղաքի վարչութիւնը մի-մի ուղբի հարկ է նշանակել մշակների վրայ, (որոնք համարեա վրացիք և իմերեթներ են) թէ ինչպէս կապալով է տուել այդ հարկը, թէ ինչպիսի անարդարութիւններ են տեղի ունենում այդ հարկի առթիւ, թէ ինչպէս կալանաւորում են մեղաւորին և անմեղին և յաճախ երկրորդ անգամ վճարել են տալիս այդ հարկը:

«Մշակը» այս նամակը ընդունեց իբրեւ հայերի անպատուութիւն և նեղացաւ, որին պ. Ակակին պատասխանեց՝ «Երեւում է որ «Մշակը» ամբողջ ազգի տեղն է ընդունում քաղաքի այն հայերին, որոնց մենք անպատուեցինք, եթէ այսպէս է, երեւում է որ հայերը լաւ չեն հասկանում ազգութիւն տառն բանը և զարմանում ենք, որ սրանից յետոյ ինչպէս է ասում մեզ՝ թէ որ տեղ է բարեկամութիւնը, միացած ոյժով յառաջադիմութիւնը և այլն... «Մշակը» կոտորւել է, որ ինքն էլ իր կողմից անբաւական է քաղաքային վարչութիւնից և նրան համակրող հայերից, սա նշանակում է որ նա չի հաւանում նրանց վարմունքը, իսկ եթէ չի հաւանում, ինչու է պաշտպան կանգնում նրանց... Կրկնում ենք, որ այն հայերը, որոնց հետ տխրում ենք և ուրախանում և պատրաստ ենք և ապագայումն էլ մասնակից անել նրանց, թիֆլիսի հայերից բոլորովին տարբեր դեղից են և կը լինեն: Մենք նրանց մէջ չենք տեսնում իսկական հայ ցեղը: Պօէսը (իմա Ակակի) ամեն մի երեւոյթը ներկայացնում է իրան պարզ, լուսաբանուած ամեն կողմից իր ամբողջ դէմքով: Եթէ

առաջ պ. Ակակին սկզբունքով էր նայում երեւոյթին և եղբայրութիւն էր տեսնում և հիմա, երբ տեսաւ վրացիների նուաւտացումն, կարեց իր բոլոր յարաբերութիւնները Թիֆլիսի բոլոր հայերի հետ

Եկաւ 1878 թուի ընտրութիւնների օրը և «Դրօքրա»ն առաջուայ նման խորհուրդ տուեց Թիֆլիսցիներին՝ օգտուեն անցած չորս տարուայ ձայնաւորներից և քաղաքային վարչութիւնից անբաւական լինելուց, աշխատեն ընտրել այնպիսի մարդկանց, որոնց սիրտը ջառում է հասարակական գործունէութեան համար, (№ 254): Առաջին և երկրորդ կարգի ընտրութիւններից անբաւական լրագիրը, նոյն տեսակ խորհուրդ է ապրիս երրորդ կարգի ընտրողներին, ազգայնութիւնն ի նկատի միք առնի, ասում է նա, այլ ընտրեցէք այնպիսիներին, որոնք կը մտածեն ձեր օգտի և բարեկեցութեան համար: Երրորդ կարգի ընտրութիւններն էլ չարդարացրին վրացիների յոյսը: Դեռ առաջ, ընտրութիւնների ժամանակ, պ. Ակակին հարց տուաւ հայոց լրագիրներին թէ՛ ի՞նչ կ'ասեն նրանք, եթէ Պետերբուրգում ձայնաւորներ ընտրուեն միայն գերմանացիներ, Վարչաւայում — միայն հրէաներ, իսկ Թիֆլիսում մի վրացի էլ չընտրուի: Սրա պատասխանը գտաւ միայն «Մշակի» խմբագիրը, որին իր կողմից պ. Ակակին պատասխանեց՝ նախ յիշում է այն, որ վրացիները հաւատ ընծայեցին և երիտասարդ հայերի կողմը բռնեցին, բայց երբ գործի անցան, թէպէտ նրանք սեւաչքին հարուստ հայերին, բայց նոյն վիճակի ենթարկեցին և վրացիներին: Յետոյ դառնում է ուղղակի պատասխանին և ասում՝ մենք համոզուած ենք, որ «Մշակ»ի պատասխանը չի կազմում ամբողջ հայ երիտասարդութեան կարծիքը, նա մանաւանդ որ այդ պատասխանը էգօթստական է, անարդար և անհեռատես: Պ. Ակակին դժգոհ է հայ լրագրից: Առաջ վաճառականների հայութիւնը ուրանում էիր, ասում է նա «Մշակին», այն ինչ հիմա ազդեցկում ես, թէ դրանք են իսկական հայ ազգը, նրանք ոչ մի ընդհանուր բան, ասում ես դու, չը պիտի ունենան վրացիների հետ քաղաքում, քանի որ Թիֆլիսը այսօր հայերինն է...

Այսպիսի ոճը սովորական է այսօր հայ-վրացական յարաբերութիւնների մէջ: Կասի որեւէ հայ կամ վրացի մի խօսք միութեան մասին — նա մեղ դուր է գալիս և մենք գէպ այդ միութիւնն ենք ձգտում: Բայց հաւատ չունենք դէպի միմեանց և մեղ համար լաւ չենք պարզել, թէ ի՞նչի մէջ պէտք է կայանայ այդ միութիւնը: Երբեմն միութեան քարոզիչը այնպիսի բան է պահանջում զիմացիների կողմից, որ բնաւ չի տանում գէպի միութիւնը: Այս բանը ապացուցանում է էլի մի

անգամ որ մեր անհամաձայնութեան հարցը լուրջ երևոյթ է: «Դրո՛ւք» և «Մշակը» շատ մօտ էին իրար: Ս. Մեսխին համարեա բարեկամ էր Մշակի խմբագիր Արծրունու հետ, բայց երբ որ նրանց լրագիրները մեր միութեան համար ընդհարուում էին իրար հետ, լինում էր այնպէս, որ իրանց պակասութիւններն էլ պաշտպանում էին:

Վերեւ բերած պ. Ակակիի նամակը վերջանում է հետեւեալ խօսքերով. «Մենք մեր կողմից նրանց (արհեստաւորներին) դնահատում ենք և որչափ ձեր գոված վաճառականին ենք ատում, նոյնչափ եւս սիրում ենք արհեստաւորին, ինչ ազգի էլ նա պատկանելիս լինի»։ Այսօր ամեն մի նեղուած գիմում է ժողովրդին զանգատով: Դէմօկրատիական ժամանակը յաճախ դիմում էր ժողովրդին, բայց դրանով այնուամենայնիւ նա չը զոհացրաւ նրա ազգայնական յանկութիւնը: Պարզ է, որ սրա պատճառը այն է, որ մեզանում արհեստաւորները և աշխատող դասակարգը դեռ եւս ոչ մի նկատելի ազդեցութիւն չունեն կեանքի վրայ: Թէպէտ երբեք չը պիտի մտածենք թէ որեւէ ժողովուրդը կը լինի ոչ ազգայնական: Որպէս զի մեզանում վերջ դրուի ազգայնական անհամաձայնութեան, սրա համար հարկաւոր են շատ ձեռնտու պայմաններ: Բայց որքան դէմօկրատիական կը դառնայ մեր կեանքը, այնքան աւելի արդարութիւն կը մտցնուի այդ ազգայնական անհամաձայնութիւնների մէջ... 1883 թուի ընտրութիւններին «Դրո՛ւք» միայն մի յօդուած նուիրեց: Ս. Մեսխին այլ եւս կենդանի չէր: Յօդուածը տպուած է առաջին և երկրորդ կարգի ընտրութիւններից յետոյ, որոնց ժամանակ ընտրուեցան միայն 5 վրացի:

«Առաջուց արգէն ունէին ժողովներ» կարդում ենք այս յօդուածում, «ունէին խօսակցութիւններ, առաջուց քարոզում էին և կազմում ցուցակներ: Մի քանիսները մինչեւ անգամ ցոյց էին տալիս անկողնապահութիւն և վրայիների մէջ էլ փնտռում էին ձայնաւորների համար թեկնածուներ: Յետոյ եկաւ քուէ տալու ժամանակը... (ընտրեցին 2 վրացի). այնպիսի կուսակցութիւնների բաժանուեցին, որ այլապէս չէր կարելի. սպասեցէք մինչեւ երկրորդ կարգի ընտրութիւնները... (ընտրեցին 3 վրացի): Այսպիսով 48 ձայնաւորից ընտրեցին միայն 5 վրացու, 6 ռուս և այլ ազգի: Առաջիկայ կիրակին երրորդ կարգի ընտրութիւններն են, բայց չենք կարծում որ այն ժամանակ էլ 4—5 մարդուց աւելի ընտրեն այլազգից: Ուշադրութեան արժանի է այս երեւոյթը: Ուղիղ է վրացիները Վրաստանի մայրաքաղաքում թուով քիչ են հայերից, բայց վրացի, ռուս եւ ուրիշ ազգի մարդկանց որ գումարեմ հայե-

րից եքե ոչ շատ, պակաս էլ չի լինի: Եւ եթէ հայերը ընտրուած են աւելի մեծ թուով ձայնաւորներ սրա պատճառը այն է, որ նրանք ցենզ ունեն, միմեանց պահել գիտեն, ունեն կազմակերպութիւն և միասին են բոլոր հասարակական գործերում: Գաղաքի վրացիների շահերը պահանջում են որ լուսաւորուած, առաջաւոր և պատուական վրացիք էլ տեղ և մասնակցութիւն ունենան քաղաքային գործաւարութեան մէջ: Այս պատճառով հարկաւոր է որ մենք էլ այնպէս վարուենք, ինչպէս որ վարուած են հայերը՝ ձեռք բերենք ցենզ և հարկաւոր դէպքում գործենք միասին եղբայրաբար, պահենք իրար: (Գր.՝ 1881 № 241):

Գաղաքային ինքնավարութիւնը բաւականին մեծ ծառայութիւն մատուցեց մեզ մեր ինքնաճանաչութեան գործում: Աւելի և աւելի ուշադրութիւն ենք դարձնում մեր թուլութեան, մեր պակասութիւնների վրայ: Ամեն մի պարտութիւն մեզ սթափեցնում է և չենք կարծում որ մի ուրիշ բան այնպէս նպաստ է մեր հասարակական աճման, ինչպէս քաղաքային ընտրութիւնների մրցումն: Վրացիք ամենից առաջ այստեղ, Թիֆլիսի ինքնավարութեան մէջ, ինչպէս հայելիում, տեսան իրանց յետաձուլութիւնը, անհիմն լինելը, տեսան որ հայերը աւելի համերաշխութիւն են ցոյց տալիս քան վրացիները, թէպէտ ապրում են վրաստանում և վրացերէն էլ խօսում են: Վերեւ բերած յօդուածի մէջ ամենից աւելի ուշադրութեան արժանին այն է, որ այստեղ մենք առաջին անգամն ենք տեսնում վրացիների այն ցանկութիւնը որպէս զի միմեան ուրիշների հետ ընդդէմ իրանց նախկին եղբայրակից հայերի, ինչ որ, ի հարկէ, երկու կողմի համար էլ պիտի համարել ցաւալի երեւոյթ: Պարզ է և այն որ սրա մէջ աւելի մեծ մեղք ունեն հայերը, քան վրացիները: Այսպէս կը վարուէին բոլորը: Այսպէս են վարուած նաեւ հայերը: Հայերը թուով շատ են Թիֆլիսում, աւելի շատ էլ կարողութիւն ունեն: Այս պատճառով էլ աւելի մեծ ոյժ ունեն ընտրութիւնների ժամանակ: Այս ոյժը նրանք ամբողջապէս իրանց օգտին ծառայեցին և նայեցին վրացիների վրայ ոչ որպէս թոյլ եղբայրակիցների, այլ որպէս օտարների վրայ: Հայերը ընտրուած էին իւրայիններին և վրացիներին թողնում էին այնքան իրաւունքներ, որքան տուել է նրանց և օրէնք: Ոչ բարոյական ոչ էլ պատմական իրաւունքը ի նկատի չի առնուել: Հայերը վարուած էին այնպէս, ինչպէս վարուած է ամեն մի սովորական մարդ, որը չի ղեկավարուած իր կեանքի մէջ այս պատճառներով: Մեր բարոյական իրաւունքը այն է, որպէս զի մեզ տան այնքան ձայնաւոր, որքան կանք թուով Թիֆլիսում

(և ոչ այնքան ձայնաւոր, որքան կարողութիւն ունենալ), Մեր պատմական իրաւունքը այն է, որ Թիֆլիսը մենք պաշտպանել ենք արիւնով և ծառայութիւն ենք մատուցել թէ այս քաղաքին և թէ քաղաքացիներին: Մենք կարող ենք միշտ դիմել հայերի բարոյականին, պահանջել արդարութիւն և ոչ միայն օրէնք, բայց դրանով, ի հարկէ, ոչինչ չենք օգտուի այսօր: Այսօր մեր ոյժը մեր բազմաւալու, տնտեսականապէս ուժեղանալու մէջն է Թիֆլիսում: Այն ժամանակ հայերը կը յարգեն մեր իրաւունքները և մենք էլ անբաւական չենք լինի նրանցից *):

Հազիւ կը պատահի մեզսնում մի այնպիսի հայ որ վրացերէն չիմանայ: Մեր հայերից մի քանիսը գիտեն վրացերէն, բայց չը գիտեն հայերէն: Այսպէս էր և այսպէս է այսօր էլ գիւղերում, այն ինչ քաղաքներում հիմա պատահում են այնպիսի հայեր, որոնք ամաչում են գիտենալ վրացերէն լեզուն: Հայերի մէջ այսօր մեծ ազիտացիա կայ, որպէս զի ամեն մի հայ անպատճառ գիտենայ մայրենի լեզուն: Այս ազիտացիային բնականաբար հետեւում է բնակչիւ ընդդէմ վրաց լեզուի, որը մինչեւ վերջերս տիրապետող լեզուն էր հայերի մէջ:

Շատ ցանկալի է որ կովկասեան ազգութիւնները իմանան միմեանց լեզուները: Լաւ է որ հայերը պիտեն վրացերէն (պիտի գիտենանք մենք էլ և հայերէնը), բայց վատ է և պախաւարակելի որ վրացերէն լեզուի միջոցաւ հային մոռացնել տանք իր մայրենի լեզուն և աշխատենք նրան վրացիայնել: Ով այսպէս կը վարուի, նա ձեռք տուած կը լինի ազգային անկախութեան սկզբունքին և ով չի յարգում ուրիշին, նա չի կարող և իր համար պատիւ պահանջել ուրիշներից: Մենք ամաչում ենք, երբ գողանում ենք մի սրել է մասնաւոր մարդի ամենափոքր սեփականութիւնը և կամ սահմանափակում ենք նրա իրաւունքները, իսկ միթէ իբրեւ ճշմարտութիւն պիտի ընդունենք և այն՝ եթէ խլենք որեւէ ազգի զաւակներին, սահմանափակենք նրա գործունէութեան ասպարէզը և կամ թուլացնենք: Միթէ պիտի յարգենք անձնական իրաւունքները, իսկ ազգային իրաւունքները չը յարգենք: Ոչ, Ազգային անձեռնմխելիութիւն պիտի մեր սրբութիւն սրբոյը լինի: Թող հայը խօսի վրացերէն, վրացին հայերէն և կամ այլ լեզուով, բայց թող այդ բանը իբրեւ զէնք չը ծառայի նրանց այլասեւուման: Չը նմանուենք Եւրոպային այն բանում, ինչ որ վայրենի է և բռնի:

Դժբախտաբար «Դրօշբառի» մէջ կը հանդիպէք այնպիսի

*) «Տնորիս Պարբերի» № 1897.

15 օգոստոսի 1902 թ.

պրեստենդիաների՝ թէ հայերը անպայման պիտի գիտնան վրացերէն և այս վրացերէն լեզուն վրացերէն սիրտ պիտի դնի նրանց մէջ: Լրագիրը համարեա նեղանում է որ հայերը վրացերէնի փոխարէն աշխատում են սովորել հայոց լեզուն: Ուղիղ է, այս բանը այսպէս պարզ չէ արտայայտուած, բայց գրելու ոճը պարզ ցոյց է տալիս այդ: 1870 թ. № 14-ում արտատպած է «Կաւկազից» այն լուրը, որ Դուչէթի հայոց ուսումնարանում վրացերէն չեն սովորեցնում, թէպէտ երեսմանների համար նա կազմում է մայրենի լեզու: Այս լուրին լրագիրը իր կողմից աւելիացնում է. «Հայոց եկեղեցական ուսումնարաններում վրացերէնը չէ աւանդում ոչ մի տեղ և այնպէս է արտաքսուած այնտեղերից, որ կարծես թէ նա անիծած լինի: Այն ինչ այն բանին չեն մոտիկ անում, թէ նա կեանքի մէջ հարկաւոր է թէ ոչ: 1873 (№ 31) Գորուց գրում են. «Գորու հայոց օրիորդաց ուսումնարանում վրացերէն բոլորովին չեն սովորեցնում, ժողովուրդը վրացերէնից զատ ոչինչ չի իմանում, ուրեմն սկզբնական կրթութիւնը երեսմաններին տալիս են այն լեզուով, որով նա ինչի՞» — էլ չը գիտէ: Չը գիտենք, ուղիղն ասած, որ մեծ դեպուսատը կտւմ մի այլ ոք երկար որոնելուց յետոյ գտել է որ Գորու բնակիչների (հայերի) մայրենի լեզուն հայերէնն է: Վրացերէնը որ սովորեցնելիս լինեն, այն ժամանակ վրացիք էլ կը յաճախեն ուսումնարան, «բայց էլ ինչպէս կ'աւան, թէ մենք հայեր ենք, իսկ նրանք վրացիք»: Մինչեւ անգամ Քուլթայից էլ են գրում անբաւական նամակներ հայերի վերաբերմամբ (Վր.՝ 1883 թ. № 155), որ այնտեղի հայ երեսմաններին, որոնք միայն վրացերէն գիտեն, հայոց ուսումնարանում ուղղակի հայերէնով են սկսել աւանդել ուսումը: Դիմիտրիյ քահանայ Զանաչվիլի տխրութեամբ գրում է (Վր.՝ 1882 № 5), վրացիք չատ բարիք են արել հայերին, Դաւիթ Վերաշինողը մեծ օգնութիւն է հասցրել թուրքերից ոչնչացնուող հայերին. «այս բարիքի փոխարէն այսօր հայերի հոգեւոր կոնսիստորիան ասում է գոբնցի հայերին, որ նրանք վրացերէն լեզուով չը խօսեն»:

Ի հարկէ, երբոր հայերի մէջ զարթնեց ազգային ինքնասնանաշութիւնը, սկսեցին դիմագրել վրաց լեզուին և չատ անգամ էլ չափազանցութեան մէջ ընկան: Հայ հոգեւորականութիւնը ցոյց տուաւ այս դէպքում մեծ չափնիստութիւն: Կը բերենք մի օրինակ: 1881 թուին Գորու մէջ վախճանուել է մի հայ և նրա թաղման ժամանակ մի հայ վրացերէն լեզուով դամբանական է խօսել (և ինչ պիտի անէր, եթէ ներկայ եղող-

*) Այս խօսքը աղպէս է գործածուած բնագրի մէջ:

ները և նոյն-իսկ ինքը հայերէն չը գիտեն և այլ կերպ չէին կարող պատուել հանգուցեալին): Երբ այս լուրը հասաւ հայոց թեմական կոնսիստորիային, սա շտապով թուղթ գրեց Գորու դաւաճապետին թէ հետազօտեցէք, ո՞վ տուեց այն անձնաւորութեան իրաւունք հայոց եկեղեցու մէջ վրացերէն դամբանական ասելու (Դր. 1881 № 273): Այս լուր հաղորդող թղթակիցը աւելցնում է վերջում. «Միթէ հայ հոգեւորականութիւնը նեղանում է, որ վրաց քաղաքում (թէկուզ վրացի քաղաք էլ չը լինի) վրացի քաղաքացու համար ասեցին վրացերէն դամբանական: Ես չեմ հաւատում, որ մինչեւ այդտեղ հասած լինի այն ժողովուրդի հոգեւոր դասակարգը, որի համար վրացի ժողովուրդը բացել է իր սիրտը, իր տունը, ընդունել է իր հողի վրայ և ազատել է թշնամուց հաղար կերպ և պաշտպանել է սեփական արիւնով»:

Մենք ասացինք, որ բոլորովին ընական է հայերի բնակցիւմ ընդդէմ վրաց լեզուի, որ նրանց մոտացնել տուաւ իրանց մայրենի լեզուն, բայց հետեւեալ լուրը այնուամենայնիւ շատ զարմանալի է, նամանաւանդ որ նա վերաբերում է առաջաւոր հայի զէմօկրատ պ. Արծրունու կարծիքին: Ութսունական թուականներին ամենքը մեծ յայտ ունէին բացուած տեսելու Թիֆլիսի համալսարանը, ամեն օր սպասում էին նրա թոյատրուելուն և «Մշակի» խմբագիր Արծրունին էլ հետեւեալ առաջարկութեամբ դիմեց սուսաց կառավարութեանը. «Ռուսաստանը մեծ նշանակութիւն ունի Արեւելքում: Ռուսիան աշխատում է որ Թիւրքիայի և Պարսկաստանի հայերը նրա քաղաքական ազդեցութեան տակը լինեն... մեծ ազդեցութիւն կունենար Ռուսաստանը հայոց երիտասարդութեան վրայ Կ. Պօլսում, եթէ նա այնտեղ բացէր ուսումնարան: Մեր կարծիքը այն է, որ Ռուսիայի այս ոյժը և ազդեցութիւնը Պարսկաստանի և Թուրքիայի հայերի վրայ եւս առաւել կ'աւելանար, եթէ որ Թիֆլիսի համալսարանի մէջ ուսերէն և հայերէն լեզուներով դասաւանդուէին գիտութիւնները ուսանողներին (Դր. 1880 № 65): «Դրօժբաճն թէպէտ խոստացաւ ընթերցողներին յետոյ մանրամասն խօսել այս ճտարօրինակ առաջարկութեան մասին, բայց յետոյ ոչինչ չէ գրել դրա մասին»:

Թիֆլիսի համալսարանի մէջ հայերէն լեզուով դասաւանդել — սա մի այնպիսի առաջարկութիւն է, որին չի համաձայնի ոչ մի վրացի, ինչ տեսակ միութեան էլ նա կողմնակից լինի: Հասկանալի է, որ այսպիսի պրեպոնդիաներով չենք պատրաստի միութեան շաւիղը:

Մեր և հայոց մէջ մինչեւ այսօր էլ վրաց կաթօլիկների

հարցը վիճելի է: Վրաց գրողների տեսակէտից ոչ միայն գոյութիւն ունեն վրացի կաթօլիկներ, այլ և վրացի գրիգորիականներ: Այն ինչ հայերը բողոքովին ուրանում են վրաց կաթօլիկութիւնը. ով կաթօլիկ է Կովկասում, նա հայ է, ասում են նրանք: Այս երեւոյթի մասին 1876 թուին «Դրօքբա» (№ 20) առաջնորդողում կարդում ենք հետեւեալը. «Դրօքբա» № 17-ում տպած էր Ախալցխայից ուղարկած մի թղթակցութիւն, որից ընթերցողը կը իմանար, որ այն անդադի մի *skrskwa* *) աշխատում է բոլոր ոյժով հաւատացնել վրացի կաթօլիկներին, որ նրանք իսկական հայեր են և ոչ վրացիք: Աշխատում է հայոց լեզուն տարածել այսպիսի վրացիների մէջ, որոնք իրանց կեանքում չեն եղել հայ և որոնք իրանք իրանց համարում են իսկական վրացի... Զարմանալի խառնաշփոթութիւն է տիրում մեզանում դաւանանքի և ժողովուրդի ազգութեան վերաբերմամբ. դաւանանք և ազգութիւնը մէկը մէկուց չեն կարողանում զանազանել: Վի հարկէ, շատ գովելի է, որ անհատը հաւատարիմ է իր ժողովրդին, աշխատում է իր հայրենակիցների թիւը շատացնել և ուժեղացնել: Բայց այսպիսի անձնաւորութիւնը, երբեք չը պէտք է մոռանայ, որ իր ժողովրդի այսպիսի ուժեղանալը եւ բազմանալը չը պիտի տեսնուի մի այլ ժողովրդի հաշուով **)...»

1880 թուին «Մշակ»ի և «Մեղու Հայաստանի» մէջ տեղի ունէր բանակօւն ազգութեան վերաբերմամբ: «Մշակ»ը մեծ նշանակութիւն էր տալիս լեզուին, օրինակ էր բերում մեզ որ մեր մայրենի լեզուն ոչ միայն ինքնեւ չենք մոռանում, այլ և ուրիշ տոհմերի մէջ տարածում ենք վրացերէնը, ինչպէս որ շատ հայ կաթօլիկներ սովորեցին վրացերէնը և այս պատճառով իրանք իրանց գլուխը համարում են վրացի: «Մշակ»ը ասում էր. ամեն մի վրացի կաթօլիկը հայ էր, բայց վրացերէն լեզուն վրացիացրեց նրանց: Սրա վրայ ոմն Մեսիս պատասխանեց հայոց լրագրին և ապացուցանում էր («Դր.» 1880 № 239—240). «Վրացի կաթօլիկները իսկական վրացիներ են, եթէ նրանք ընդունել են հայ անունը այդ նրա համար է՝ որ պահէին իրանց գլուխը օսմանցիներից: Հային և հայ հաւատը չէր հալածում օսմանցիին, քանի որ հայերը թշնամի էին և մատնող յոյների, վրացիների, եւրոպացիների. հայերը ծառայում էին օսմանցիներին, պաշտօնեաներ էին» և այն: Ինչպէս որ վրացիք ցանկանում են վրաց լեզուի միջոցով ուժեղանալ հայոց հաշուով, նոյնպէս էլ

*) Այս բառը բնագրինն է:

Ե. Թ.

**) Ընդգծումը յօդուածագրինն է (Նարամիի):

Ե. Թ.

հայերը կամենում էին իրանց ուժեղանալը վրացի կաթօլիկների միջոցով: Սրա մէջն է արտայայտւում փոխադարձ անվստահութիւն, թշնամութիւն, նախանձ, թէպէտ և քողարկուած: Վրացին իր գլուխը կարծում է մի մեծ բան, իսկ հային ընդունում՝ իբրեւ անտիկ և փչացած արարած, փոխադարձաբար հայն էլ հպարտութեամբ է նայում վրացուն և վրաստանը մեծ Արմինիայի մօտ ոչինչ է համարւում: Համարեա թէ վրացուն դուր է գալիս հայի կորուստը և ընդհակառակը: Այս երկու ազգութիւնը այգբան ժամանակ է ապրում են հարեւանօրէն, բայց էլի միմեանց առաջ չեն բաց արել միմեանց սրտեր: Անկեղծութիւնը և միութիւնը առաջ աւելի չատ էր, իսկ այժմս քիչ:

Հայը գրում է Թէլաւից՝ «այստեղի հայերը առանձնացած կեսնք են վարում» («Դր.» 1880 № 149): Նոյն է գանդատւում և մի թէլաւցի թղթակից (1882 № 118), որ հայերը առանձնակի են աշխատում. «Մինչեւ այսօր վրացիք և հայերը իրար ճշմարիտ եղբայրների պէս էին սիրում և եթէ հիմա ձեռնտու էր այս միութեան խախտումն, թող աշխատի սրա համար և վերջը ի՞նչ երեւայ թէ ով կը վնասուի»:

Կարելի է յիշել և այն փաստը, որ հայերը բացի քաղաքային ինքնավարութիւնից ուրիշ հասարակական հաստատութիւնների մէջն էլ սկսեցին այլազգիներից առանձնանալ: «Դրոէ-բաշն մատնացոյց է անում» (1880 թ. № 68) որ «Փոխադարձ վարկի» բանկի վարչութիւնը կարծես աշխատում է մերժել բացի հայերից, միւս բոլոր այլազգի ժողովուրդների անդամակցութիւնը և նրանց հետ գործ բռնելը: Մեզ յայտնի է, մի քանի օրինակներ, երբ վրացիներին չընդունեցին, թէպէտ նրանք և լաւ առուստուր ունեն և անուն ու վարկ, գրում է լրագիրը: Այսպիսի օրինակները յետոյ աւելի շատացան երկու կողմից:

(Կը օտուրւնակուի)

*
* *

Դարդը՝ սրտիս, աղբատ ու խեղճ, ցուպը՝ ձեռիս,
գլխակոր.
Շատ տարիներ պանդուխտ եղած՝ նորէն դարձայ հայ-
րենիք.
Կեանքի բեռով մէջքս ծռած, միտքս շուար ու մոլոր,
եօթը սարէն, եօթը ծովէն դարձայ անուշ հայրենիք:

Իմ հայրենի գեղի հանդում տեսայ մանկութ ընկերիս.—
Ա՛խ, ընկե՛ր ջան... կարօտ սրտով նրա առաջ վաղեցի.
Ասի.—«Բարո՛վ, անդին ընկեր. մի՛թէ ինձի չես ճանչեր...»
Ախրը ես շատ փոխուեր էի... չը ճանաչեց նա ինձի:

Յուպը ձեռիս գեղը մտայ, անցայ ետրիս տան
ճամբով.
Տեսայ ետրս վարդը ձեռին՝ մէնակ կանգնած դրան մօտ.
Ասի.—«Քո՛ւրիկ, աղիդ տեսքիդ արժանացայ ես բարով...»
Նա էլ ինձի չը ճանաչեց... աղբատ էի ու փոշոտ:

Դարդը սրտիս հասայ մեր տուն, տեսայ ծերուկ—
խեղճ մօրս.
Ասի.—«Նանի, ճամբորդ մարդ եմ. դիչերս ինձ հիւր
կ'ընդունես».
Ա՛խ, մէրիկ ջան... վզովս ընկաւ, սրտին գրկեց ու լա-
ցեց.—
—«Ա՛խ, բալն ջան, զարիբ բալն, էդ դճն ես...»

ԱՒ. ԻՍՍԷԱԿԵԱՆ

ՇՎԷՅՑԱՐԱԿԱՆ ԳԻՒՂԸ

VI

Սիրելիս, այսօր կիրակի է, գնում եմ այստեղի գիւղական եկեղեցին ժամերգութեան ներկայ լինելու, ինձ ասացին, որ ամեն կիրակի քահանան քարոզ է խօսում, թէ եկեղեցին և թէ մանաւանդ քահանան ինձ չատ են հետաքրքրում: Շվէյցարական, քաղաքային քահանաների մտաւոր և բարոյական առաւելութիւնների հետ ծանօթ եմ, քեզ անշուշտ չեմ զարմայնի, թէ ասեմ, որ նրանք բոլորն էլ անպատեհաւ համալսարանական են և մեծ մասամբ աւետարանական առաքինութիւններով օժտուած մարդիկ: Նրանց հասարակական գործունէութիւնը, որ արտայայտւում է գլխաւորապէս բարեգործութեան ասպարիզում, oeuvres de charité-ի մէջ, այն աստիճան բեղմնաւոր է, որ քաղաքակրթութեամբ, լուսամիտ շվէյցարական քաղաքացին մեծ յարգանք է տածում գէպի իր քահանաները: Այն խայտառակ սկանդալները, որոնցով հռչակուած են մեր կողմերում քահանաները, այն ընչպէրազոյց, ամօթալի պոռոտաբուծութիւնը, որ նրանց դարձնում է սնհասկանալի մի դասակարգ անգամ հաւատացող հօտի աչքում, այս երկրում միանգամայն անծանօթ են: Մեր քահանաները բոյսեր են, որոնք Ալպերի վրայ երբէք չեն բուսնի, այստեղի հողն ու կլիման նրանց համար սպանիչ կը լինին:

Եւ չեմ ուզում երկար խօսել շվէյցարական քաղաքային քահանաների մասին, դա իմ նպատակից դուրս է, և ես ընդհանուր խօսքերով ասացի՝ ինչ որ հարկաւոր էր: Ինձ առանձնապէս հետաքրքրում է այս երկրի գիւղական քահանան, գիւղական եկեղեցին: Լուրջ, կենսական խնդիրներով աղքատ մեր անապատ կեանքում վերջին տարիները հրապարակօրէն բուսաւ քահանայական հարցը, դու գիտես, թէ այդ հարցի վրայ մեզանում այժմ մի ահագին զրականութիւն կայ, ինչ զարմանք, մեզ

համար խօսմ վաղուց են ասել, թէ տիրացու ազդ ենք, տիրացուի պատմութիւն ենք ունեցել, տիրացուների պէս էլ աշխատում ենք շարունակել մեր պապերի սկսածը:

Ինչ ուզում են ասեն, բայց ով ուշի ուշով հետեւել է Վերահանայական հարցի մասին եղած ողորմելի վիճարանութիւններին, նա համոզուած կը լինի, որ մարդիկ ուզում էին իմանալ թէ հայ ժողովրդին կրթուած քահանայ հարկաւոր է, թէ ոչ: Սնացած բոլորը կամ կզերական, կամ կզերամիտ սոսկետութիւններ էին, որոնցով ջանք էին անում քողարկել իրանց իսկական մտքերը: Բայց այդ թողնենք, որովհետեւ ինչպէս դիտեա, այդ բոլոր աղմուկը, այդ բոլոր ճամարտակութիւնները վերջ ի վերջոյ ոչ այլ ինչ էին, եթէ ոչ մի քանի խիճեր, անզգոյշ ձեռքով ձգուած դարաւոր լճակի մէջ, որի պղտոր ալիքները մի պահ թեթեւ շրջաններ արին, և կրկին ամեն բան խաղաղուեց, իրեն ընդունեցին իրանց նախկին կերպարանքը, և ընթանում են այն շաւղով, որ գծել է նրանց համար եկեղեցականութեամբ ապրած մէկ ժողովրդի պատմութեան տրամաբանութիւնը: Կեանքի խոշոր յեղաշրջումները սովորաբար լրագրական վաղանցուկ յօդուածներով և խղճուկ «ցանկալի էջներով» չեն կատարուում: Մարդկային ուղեղը խմորի մի զանգուած չէ, որին կարելի լինի ցանկացած ժամին այս կամ այն ձևը տալ: Վարերով դարձնուած գաղափարները վարերը միայն կարող են կրծել, ոչնչացնել, այլապէս ինչպէս բացատրել մեր ողբալի իրականութիւնը:

Ես դառնում եմ բուն ինգրին, այստեղի գիւղական եկեղեցուն: Նախորդ նամակներից մէկում քեզ գրել էի, որ այդ եկեղեցին դանդաղ է մի կանաչադարձ բլրակի վրայ և իր սուր ղոթական զանգակաւնով իշխում է գիւղի և շրջակայքի վրայ, թէևս բուն շէնքը շատ փոքր է: Սա իսկապէս եկեղեցի էլ չէ, այլ փոքրիկ մատուռ, որ իրանք անուանում են chapelle: Այստեղ ժամերգութիւնը կատարւում է միայն կիրակի օրերը, մի պատեօրի ձեռքով, որ միաժամանակ հովոււմ է մի քանի գիւղ, և դա ոչ մի անյարմարութիւն չի ներկայացնում, ի նկատի ունենալով յարաբերութիւնների հեշտութիւնը:

Ճաշից յետոյ ժամի 2¹/₂-ն է, մի այլ գիւղում իր կրօնական պարաքը կատարելուց յետոյ, քահանան հագիւ այժմ է հասել այստեղի ժամերգութեանը: Եկեղեցու փոքրիկ զանգի ձայնը միակերպ ու խղճուկ տարածւում է շրջակայքի վրայ և գիւղում փոքրիկ իրարանցում է սկսւում: Համարեա ամենքն առանց խտրութեան պատրաստւում են գնալ եկեղեցի և ոչ ոք

այս տօն օրին չի աշխատում: Մարդ ու կին, աղջիկներ ու տղաներ, բացի շատ փոքր երեխաներից, դիմում են դէպի կանաչ բլրակը, որտեղից զանգի ձայնը հնչում է անընդհատ: Եկեղեցու դուռը ծածկուած է. բակում գիւղացիները խմբեր կազմած խօսում են ու ծխում, իսկ կանայք ու աղջիկները զբօսնում են կանաչների վրայ. ահա ժամհարը դուռը բացեց. տղամարդիկ սպասում են, որ նախ կանայք ներս մտնեն տեղաւորուեն. նրանցից լիտոյ իրանք առաջացան: Այժմ համարեա ամբողջ գիւղը այս փոքրիկ եկեղեցուն է համախմբուած:

Այս եկեղեցին ներսից նոյնքան անշուք է, որքան և դրսից. նրա բոլոր զարդը կազմում են փայտէ խեղճ նստարանները շարուած պատերի շուրջը, մի փոքրիկ ամբիոն քահանայի համար, և մի վերնաշարկ՝ ուր բարձրանում են փայտէ աստիճաններով: Առհասարակ բոլոր բողոքական եկեղեցիները թէ քաղաքներում և թէ գիւղերում վերին աստիճանի անշուք են լինում. կաթօլիկ եկեղեցու ծայրայեղ զարդասիրութիւնը, ոսկու և արծաթի անչափ առատութիւնը, թանկագին զարդանօթեղէնները, արձանները, պատկերները, սրոնցով պապականութիւնը ծանրաբեռնել և խեղդել էր հաւատը, իւրեքին, քրիստոնէական նախնի պարզութիւնը վերականգնելու իր եռանդի մէջ, մղեցին դէպի մի այլ ծայրայեղութիւն և նա իր հաստատած եկեղեցին դարձրեց մի տեսակ դասախօսութիւնների դահլիճ, ուր աղօթողի և իր Աստուծո մէջ ոչ մի փայլուն առարկայ, ոչ մի թանկագին իր չը կայ: Բողոքական իր եկեղեցու մերկութեան մէջ աշխատում է իր հոգու մերկութեամբ կանգնել երկրէքի առաջ և իր խնդրուածքներն ու աղօթքը կատարել առանց որեւէ չնչաւոր կամ անշունչ միջնորդի, ահա թէ ինչու նա մերժում է նաեւ խոստովանութիւնը, որը մի տեսակ հերքումն էր լինէր իր կրօնական անհատականութեան, իր ազատութեան: Գաղաքների եկեղեցիներն էլ անզարդ են, ուր մնաց գիւղականները, որոնք ուղղակի խղճուկ և սառն սպաւորութիւն են զործում, մանաւանդ պատկերների կատարեալ բացակայութեամբ:

Այս էլ այդ անշուք գիւղական եկեղեցիներից մէկն է: Այստեղ բազմութիւնը տեղաւորուեց առանձին կարգով. մի կողմում այդ տարին իրանց 16 տարին լրացնող տղաները, նրանց յետևում նոյն տարիքն ունեցող աղջիկները, Հակոբակ կողմում հասակ առած ու ջահիլ կանայք և աղջիկներ: Տղամարդիկ մեծ մասամբ բարձրացան վերնաշարիկը, ժամաւարներից իւրաքանչիւրն իր ձեռքում ունի մի գիրք, դրանք ձայնադրած սաղմոսներ են: Ամենքն էլ երգել գիտեն հոգեւոր եր-

զեր, որ դպրոցներում անցնում են իբրև պարտաւորիչ առարկայ ձայնագրութեան հետ միասին:

Քահանան դեռ չը կայ, բազմութիւնը լռելեայն սպասում է, եւ առիթից օգտուում եւ նստարանների վրայ շարուած դէմքերը դիտելու: Ամենքն էլ տօնական շորեր ունեն. տղամարդիկ մեծ թէ փոքր մաքուր, օսլայած շապիկ գոյնզգոյն փողպատներով: Գեղջուկներ են, այդ երևում է նրանց ամբողջ արտաքինից, սև զգեստները ճմռտած ու ծալծլած, պարզ է, որ նրանք միայն տօն օրերին են հրապարակ գալիս, պահձու շորեր են: Կանայք գոյնզգոյն չրջագեստներ ունեն զեղջուկ ճաշակով կարուած, գլխարկները ցօղից են ու լայնեզր, ու գրաւիչ անհոգութեամբ դրուած շիկահեր գլուխներին:

Ինչ որ զարմացնում է օտարականին չվէյցարական այսփառ գրաւիչ, այսփառ գեղեցիկ բնութեան մէջ բնակիչների տգեղութիւնն է: Ահա այստեղ իմ առաջն է համարեա ամբողջ դիւղը և սակայն այդ բոլոր բազմութեան մէջ ոչ մի իսկապէս գեղեցիկ տղամարդ կամ կին: Կոլոր սպիտակ դէմքեր են, միզմ, անարտայայտիչ աչքերով, որոնք թարթում են երեխայական միամտութեամբ: Ըներ երկրի այն սիրուն, գանգրահեր գլուխները, այն վառ և իմացականութեամբ լի աչքերը, այն խորաթափանց հայեալքը, այն խոհուն, կամ աւելի ձիշտ խորամանկ ճակատներն այստեղ չը կան: Կանայք մեծ մասամբ կարճահասակ են, տգեղ իրանով, պաղ, անփայլ աչքերով, այտերը միշտ մի փոքր կարմիր, որ սակայն բնաւ գեղեցիկ չէ, գլուխները հարաւի կանայց հարուստ վարսերից զուրկ, չվէյցարական կլիման կարծես թշնամի է մազերի, ինչպէս նաև ստամոքի: Սպիտակ փայլուն ստամոքի և ալեծածան հարուստ վարսեր ունեցող մարդ կամ կին այս երկրում շատ հազուագիւտ են: Հարաւի բնակիչների այս երկու տառաւելութիւնները միշտ չվէյցարացիների մէջ գեղասիրական նախանձ են շարժում: Բայց հասակաւորների տգեղութեան հակառակ սրբան գեղեցիկ են չվէյցարացի երեխաները՝ մի մի հրեշտակներ, որոնց նայելով մարդ մնում է դարմայած՝ թէ այդքան գեղեցիկ մանուկները ինչպէս են վերջում այնքան տգեղանում:

Իմ դիտողութիւններն ընդհատում է քահանան, որ ներս է գալիս և բարձրանում իր ամբիոնը: Նա մի երիտասարդ մարդ է, հաղիւ երեսուն տարեկան, համակրելի դէմքով, բարեձև, համարեա գեղեցիկ կազմուածքով, յամենայն դէպս աւելի գեղեցիկ քան բոլոր նստողները: Նրա հետ մտնում են դիւղական ուսուցիչը և եկեղեցու տիրացուն: Այս երեքը, որ դիւղական ինտե-

լիզենցիան են ներկայացնում, հազնուած են համարեա միակերպ, քաղաքի ձևով, իրանց շարժումներով սարքերում են միւսներին և աչքի ընկնում գեղջուկ ու պարզ բազմութեան մէջ, ժամհարն էլ վատ չէ հազնուած, նա սև ժուլեա ունի, սպիտակ շապիկ, իսկ նոր ածիլած դէմքը փայլում է տօնին պատշաճ հանդիսաւորութեամբ, բազմութեան մէջ միակ բարձրահասակ մարդն է, բայց կոնատ է, նրան պակասում է ձախ թերւ իր միակ ձեռքում նա բռնած ունի փող հաւաքելու մի խիստ օրիդինալ թաքաղ, դա թիթեղեայ մի փոքրիկ արկղիկ է, փայտեայ երկար կոթով, ամեն մի նստարանի ծայրում, կանգնելով, ժամհարը մեկնում է այդ ամանը և նստողները հերթով ձգում են այնտեղ իրանց լումաները. ապա նա մեկնում է նոյն ամանը դէպի վեր՝ դէպի վերնայարկը, առանց շարքերի մէջ շրջելու, և հեշտութեամբ հաւաքում սանտիմները: Եւ նկատեցի, որ ամենքն անխտիր որ և է դրամ ձգեցին ժամհարի թարաղը, և ինչպէս իմացայ յետոյ. այդ ձևով հաւաքուած դրամը յատկացւում է բացառապէս գիւղի աղքատներին:

Ժամերգութիւնն սկսուեց մի սաղմոսով, որ տիրացուն երգել սկսեց, բազմութիւնը ձայնակցեց ոտքի կանգնած. մեզմ ու խղճուկ ձայներ, որոնք միախառնուելով կազմեցին մի դուրեկան համերգ՝ նոյնքան անյոյզ, նոյնքան խաղաղ, ուրբան ամեն բան այս երջանիկ երկրում: Համերգը լուսեց, քահանան կարդաց «Գործք սուսքելոցի» Պողոսի այցելութիւնն Աթէնքին, ապա զիրքը փակելով, նա կարդացածը քարոզի նիւթ դարձրեց, նա խօսում էր այնպէս, ինչպէս կը խօսէր քաղաքի մի լաւ պատուօր, թէ իբրև ոճ, թէ իբրև նիւթի յաջորդական մշակումն, այդ քարոզը մի օրինակելի դասախօսութիւն եղաւ: Հաճելի էր լսել ծայրէ ի ծայր:

Նա նախ վառ գոյներով նկարագրեց այն տպաւորութիւնը որ փիլիսոփայ—մօրալիստ Պօղոս առաքեալը կարող էր ստանալ գեղի ու շուայտ Աթէնքում, «Հին աշխարհի այդ Պարիզում» աւելացրեց նա: Համեմատական մեթոդով և պատմական ճշտութեամբ նկարագրեց Աթէնքի հին տաճարները, սիւնազարդ և արձաններով լի, խօսեց Պարթենոնի մասին, բացատրեց նրա նշանակութիւնը հին յոյների համար և իր նկարագրութիւնն աւելի հասկանալի դարձնելու համար նա համեմատեց Պարթենոնը Լօզանի Կաթեդրալի հետ, սխառմեց նոյն-իսկ, թէ ինչպէս յունական այդ գեղեցիկ յիշատակարանը բարբարոս թուրքերի ձեռքով քար ու քանդ եղաւ: Հասկայնելու համար թէ Պօղոսը ինչ միջավայրում սկսեց իր առաքելութիւնը, նա նկա-

րագրեց մեծ քաղաքի բազմազան ու կրքոտ ամբոխը իր զանազանակերպ պարապմունքներով, խօսեց Աթէնքի այն ժամանակուայ փիլիսոփայական հոսանքների մասին, բացատրեց պարզ, հասկանալի ժողովրդական լեզուով ստօիցիզմը և էպիկուրիզմը և մօտաւորապէս յոյց տուեց, թէ Պօղոս ինչպէս պէտք է վէճի բռնուած լինի այն ժամանակուայ փիլիսոփաների հետ յունական արեօպագումէ Միաստուածութեան մասին խօսելով՝ նա չօչափեց նոյն-խակ մետաֆիզիկական խնդիրներ, անցաւ դէպի բնագիտութիւնը, խօսեց ելկնքի մասին, որ անհունութիւնն է և այդ անսահմանութեան գաղափարին, իբրև եզրակացութիւն, կապեց միաստուածութեան գաղափարը:

Այս ամբողջ քարոզից մօրալ հանելու համար նա դարձաւ դէպի ժամանակակից կեանքը, չօչափեց հասարակական-քարոյսական մի շարք խնդիրներ, որոնք սերտ առնչութիւն ունեն չվէյցարացու նիստ ու կացի, նրա տնտեսական, բարոյական կացութեան հետ, և իր ունկընդիրներին հրաւիրեց դէպի առողջ, բարոյական սկզբունքներ, ինչպէս Պօղոս հրաւիրում էր աթէնացիներին երես դարձնել արձաններից և դառնալ դէպի այն «Անծանօթ Աստուածը» որի անունով, ասաց, տաճար կար հին Յունաստանում: Այսպէս խօսեց Շվէյցարիայի գիւղական քահանան, և այդ շատ հասկանալի է, որովհետև այստեղ ամեն մի քահանայ, լինի նա քաղաքային թէ՛ գիւղական, անպատճառ համալսարանական է և յատկապէս այդ պաշտօնի համար պատրաստուած, պատահական պոռոտաբոյծ արկածախնդիրները, կեանքի բոլոր ասպարիզներում անպէտք համարուած թշուառականներ, չեն կարող, երազել անգամ, ժողովրդի ուսուցիչ, հոգևոր հովիւ դառնալ այստեղ: Երջանիկ երկիր, քահանայ և ժողովուրդ իրար արժեն. այս օրուայ հրաշալի քարոզը լսում էր Շվէյցարիայի գիւղացին, որոնց եղբայրները մեզանում անգրագէտ են դեռ, և յայտնի չէ, թէ երբ գրագէտ կը դառնան: Ուշադրութեան արժանի մի երևոյթ ևս, այս ամբողջ քարոզն ու ժամերգութիւնը տեսց ուղիղ մի ժամ, ոչ աւել և ոչ պակաս: Այս բանը ես նկատել էի դեռ քաղաքների եկեղեցիներում: Դու գիտես, սիրելիս, որ մեր վարդապետներն ու տէրտէրները կամ խօսել չը գիտեն, կամ երբ բերանները բանան էլ վերջ չը կայ ամբողջ ժամեր... Մեր քարոզիչները կարծում են, թէ երկար խօսելը խելքի և կարողութեան նշան է, սկսում են Ադամից մեր օրերով վերջացնելու համար: Չը գիտեմ, դու ինչպէս, բայց ես լաւ յիշում եմ, որ երբ մեր եկեղեցիներում վարդապետը կամ քահանան երեսը դարձնում էր դէպի ժողովուրդը և արտասա-

նում իր «սիրելի ժողովուրդը» (ինչքան շատ են սիրում քեզ, խեղճ ժողովուրդ) ... ես միշտ դուռում էի այն մարդիկ կացութեան մէջ, որին սպառնում են մի ծանր պատիժ տալ, առանց որ ինքը, այդ խեղճ մարդը կարողանար հասկանալ թէ ինչո՞ւ եւ սկսում էր անհամութիւնների հին շարքը, տգէտ, անտրամաբան լսարձանքների անծայր շղթան, յօրանջի որքան կ'ուզես, այս ու այն ոտիդ վրայ յենուի փոխ առ փոխ քանի կամք է, բայց քարոզը վերջ չունի։ Մարդը խօսում է, խօսում, ինքն էլ չիմանալով թէ ինչ, իսկ թէ հաւատում է իր ասածին թէ ոչ, այդ մենակ ինքը գիտէ, ուրիշ ոչ ոք։ Հաւատացնում են, որ մի անգամ Պասկալը իր բարեկամին երկար նամակ գրելուց յետոյ վերջում աւելացրեց հետեւեալ ուշադրաւ խօսքերը. «Ներքի, բարեկամ, որ երկար եղաւ նամակս, կարճ գրելու ժամանակ չունեցայ»։ Խորիմաստ խօսքեր, ճշմարիտ է, որ հակիրճ ու տրամաբանօրէն մի բան ասելու կամ գրելու համար աւելի մտածել է հարկաւոր՝ հետեւապէս և աւելի ժամանակ, քան թէ երկար ու անկապ-անհամ խօսել գրելը։ Ասենք, արեւելքը միշտ շատախօս է ու ձանձրալի և արեւելցին իր ժամանակը խնայել, գնահատել չը գիտէ. ամեն ինչ այնտեղ ձգձգում է և ընթանում սպանիչ դանդաղութեամբ։ Երկար ու անհամ է խօսում արեւելքում քարոզիչը, երկարանում է միշտ մասնաւոր խօսակցութիւնը, երկար ու ձիգ են մեր բառերը, երկար ու ոլորուն են մեր եզրանակները։ Ապա մեր լրագրերը, շատախօսութիւնների մի շտամարան, մի փոքրիկ լուր հաղորդելու համար այնտեղ դու կը գտնես ամբողջ սիւնեակներ, ճառ՝ սկզբում, ճառ վերջում, իսկ մէջ տեղում մի քանի խօսք բուն նիւթի մասին։

Էհ, սիրելիս, քարոզի և քահանաների մասին խօսելիս ես ինչպէս մոռանամ մեր տէրտէրին, յաւակնող ու փքուն, դրսում շատախօս, լեզուանի, եկեղեցում քարոզելու համար բոլորովին համր, ինչպէս ձուկը։ Նա քարոզ չէր խօսի երբէք, և որպիսի փրկութիւն մեր ժողովրդի համար։ Միայն տարին մի անգամ ծնունդի Զրօրհնեաց հանդիսին. նրա սեւ օրն էր, որովհետեւ նա ստիպուած էր մի քանի խօսքով խաչը ջրից հանելու հրաւեր կարգալ իր հօտին։ Հեշտ բան է, երեսը դարձնել դէպի ժողովուրդը և բաներ ասել. խեղճ մարդը, առանց այն էլ փոքրահասակ, այդ ժամանակ խողառ փոքրանում էր, ասես զրակալի յետեւում ծածկուելու համար։ Բայց ճար չը կար, պէտք էր մի բան ասել, նա հազում էր, քրանում, և վերջ ի վերջոյ գտնում էր տարիներ չարունակ կրկնած իր երեք նախադասութիւնը.

«Սիրելի ժողովուրդ, դուք գիտեք, որ մենք ամեն տարի խաչ
կը հանենք ջրից, էս տարի էլ հանում ենք, եկեք, հանեք»
Սաչը ջրից հանում էին և տէրտէրն սպասում էր մինչեւ յա-
ջորդ ջրօրհնէք էլի մի երկու խօսք ասելու համար: Ինչ ուզում
ես ասա, բայց ես մեր տէրտէրին սիրում էի իր այդ սովորու-
թեան համար. կեանքում քիչ չեն նրանք, որոնք եթէ բնաւ չը
խօսէին շատ, աւելի լաւ կը լինէր:

Յը գրութիւն.

Հնկերդ՝

ԿՈՒՐԲԱԹ-ՀԱՐՈՒՆ

ԱՇՈՒՂԻ ԵՐԳԵՐԻՑ

ՋԱՆ ԳԻՒԼՈՒՄ

1

Թուխպը կալաւ սարի ծէր,
Քամին փչեց—սարից էր.
Վայ մեր տունը քանդեցին—
Դուչման, սիրտըդ քարից էր:

2

Դուրսը բուք ու բորան ա,
Վայ թէ վարդըս չորանայ.
Աղջի, դու իմ վարդն եղիր,
Թող փուշ—աչքը քոռանայ:

3

Էս ի՜նչ զուլում օրումն ենք,
Ասես, մըթին ձորումն ենք,
Արև, երկինք չենք տեսնում,
Խեղճ գուսաղի օրումն ենք...

4

Գարուն կը գայ, լոյս կը տայ,
 Ծառ ու տունկին բոյս կը տայ,
 Անճար ախպէր, համբերիր,
 Քու սըրտին էլ յոյս կը տայ...

5

Փունջ կապեցի—չորացաւ,
 Սըրտիս եարէն նորացաւ,
 Եթիմ մնացի—հերիք չէր,
 Սիրածս էլ ինձ մոռացաւ:

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Ա Ն Հ Ա Շ Տ Ը

(Ժողովրդական կեանքից)

Ա

Շ... գաւառի ճօխ և փարթամ գիւղերից մինն է Ն... գիւղը: Շրջապատուած այգեստաններով, գեղեցիկ պտղատու պարտէզներով, խիտ խիտ անտառներով, բաղնիքահամ և կարկաչուն աղբիւրներով. նա բոլոր չորշակայ բնակիչների համար մի դրախտանման տեղ էր համարուում: Գիւղացիների առողջութիւնը, թշերի կարմրութիւնը, առոյգութիւնը, ամենքի մէջ նախանձ էր զարթեցնում և շատերը ամառուայ սպանիչ տաքութիւնից ազատուելու համար գալիս էին այդտեղ զով, առողջարար, թարմ օդ ծծելու ու համեղ պտուղներ վայելելու:

186... թ. յուլիս ամիսն էր:

Արծաթափայլ լուսինը բաւական բարձրացել էր երկնակամարի վրայ և արթուն աբաղաղը կանչել էր մի անգամ, բայց ամբողջ գիւղը դեռ ընկղմուած էր քաղցր քնի մէջ, որովհետեւ օրը կիրակի էր, աշխատանք չը կար: Լուսաստղը դեռ պայծառ կերպով շողում էր հորիզոնի վրայ, կարծես նա թռթռում էր ուրախութիւնից, աւետելով լոյսի մօտաւոր գալուստը: Խորին լուռութիւն էր տիրում: Հեռւում երկու ստուերներ երեւացին այն մեծ ճանապարհի վրայ, որ քաղաքից տանում էր դէպի գիւղը: Շուտով այդ ստուերները ո-

րոշ կերպարանք ստացան և կարելի էր նկատել երկու ճանապարհորդներ, որոնք քաղաքից ոտքով գիւղն էին դալիս: Նրանք ընթանում էին յամրաքայլ և կիսախաւարի մէջ գծուար էր պարզ կերպով որոշել նրանց դիմագծերը: Շուտով հորիզոնը սկսեց լուսաւորուել և այդ միջոցին ճանապարհորդները բարձրացան մի բլրի վրայ ու այնտեղ կանգ առնելով, դիտում էին բնութիւնը:

Մի աննման առաւօտ էր բացւում: Արեգակը դեռ դուրս չէր եկել, բայց նրա կարմրաշէկ ճաճանչները բոցավառել էին հորիզոնը: Մեզմ' ու պաղ զեփեռը, տերեւների սօսափիւնը, թռչունների դայլայիկը, հօտաւէտ ծաղիկների բուրմունքը և բնութեան խորհրդաւոր լուսթիւնը, ամենապաղարիւն մարդի մէջ անգամ բանաստեղծական խանդ, սէր և ուրախութիւն էին զարթեցնում: Եւ մեր ուղեւորները զմայլուած էին այն փառահեղ տեսարանով, որ բացուած էր նրանց առաջ: Արդէն լոյս էր, և այժմ՝ կարելի էր նկատել նրանց գէմքերի վրայ մի խորին մտահոգութիւն:

Նրանցից մինը, մի կարճահասակ ծերունի էր, առողջ և պնդակազմ: Նրա ճերմակ մազերը թափւում էին ուսի վրայ և նրա լայն, կնճիռներով ու խորշումներով ծածկուած ճակատը մի անսովոր մտահոգութեան կնիք էր կրում: Իր վրայ՝ նա իր վշտոտ ու մրուայլ աչքերը մերթ բարձրացնում էր գէպի երկինք, մերթ բլրի աջ կողմը ձգուած գերեզմանատան կողմը և արտասուքի կաթիլները թափւում էին և ծեր այտերի վրայից իջնում գէպի ալեղարդ միւրուքը: Ծերունու այտերի վրայ, որպէս անցեալ առուգութեան մնացորդ, դեռ երեւում էր թեթեւ կարմրութիւն, իսկ ամբողջ կերպարանքը ցոյց էր տալիս, որ նա ժամանակով մի շատ գեղեցկատեսիլ երիտասարդ է եղել: Ձեռները աշխատաւորի նման կոշտ և պինդ էին, իսկ բայլերը՝ ամուր և հաստատ, չը նայելով իր մեծ տարիքին: Նա հագնուած էր գիւղական պարզութեամբ, բայց անսովոր մաքրութեամբ և վայելչութեամբ, այնպէս որ ըստ

երեւոյթին նա ոչ միայն հասարակ գիւղացիներից չէր, այլ գուցէ և գիւղում մի պատուաւոր պաշտօն էր վարում: Եւ, յիրաւի, Թովմաս ապերը—այսպէս էր նրա անունը—ոչ միայն իր գիւղում, այլ և քաղաքում և ամբողջ գաւառում հռչակուած էր իբրեւ մի արդար, խելացի և շնտես ծերունի, բայց մի և նոյն ժամանակ խիստ և աննկուն բնաւորութեան տէր: Ով որ մի վէճ, մի կռիւ ունէր, կամ խորհուրդ ունէր հարցնելու, գիմում էր Թովմաս ապօրը և նա ամենքին գոհ ծանապարհ էր ձգում: Մինչև անգամ նրա հասակակից ծերերը նրանից պատկառում էին և գիւղը շատ ազէտներից ազատուելու համար նրան էր երախտապարտ:

Այդ առաւօտ Թովմաս ապօր կերպարանքից երեւում էր, որ մի անսովոր բան յուզում էր նրա հոգին: Յանկարծ նրա մռայլ դէմքի վրայ բարկութեան մի փայլ անցաւ և նա ինքն իրան բացականչեց.

—Ոհ, ինչքան վատ են մարդիկ, ինչքան չար և ապականուած են:

Նրա միւս ընկերը, որ մինչև այդ ժամանակ մի ահագին գաւազանի վրայ կռթնած լուռ մտածում էր, այդ բացականչութիւնը լսելով իր թմրութիւնից սթափուեց և մի տխուր նայուածք ձգելով ծերունու վրայ, կարծես կամենում էր հարցնել. ինչ է նշանակում այդ բացականչութիւնը:

Երիտասարդը 23—24 տարեկան էր և այնքան նման ծերունուն, որ կասկած չը կար, թէ նրա օրդին է: Նա հօրը հակառակ բարձրահասակ էր, և գեղեցկատեսիլ: Թուխ դանդաղաւոր մազերը ծածկում էին նրա գլուխը, ճակատը վեհ և լայն էր, թշերից կարծես արիւն էր կաթում, ատամները ձիւնի պէս սպիտակ, բայց քիթը փոքր ինչ մեծ, իսկ մետաքսի նման կակուղ, բարակ ընչացքը մի առանձին սիրունութիւն էր տալիս նրա դէմքին. վիզը երկար, կուրծքը լայն, ձեռները հաստ, զօրեղ և աշխատանքից կոշտացած: Նա փոքր ինչ լաւ էր հագնուած. հաստ կաշուի ծանապարհային կոշիկներ

հասնում էին մինչև նրա ծնկները, նա հագած ունէր մի զանաւուզ արխաւուղ, վրայից մի սև մահուդէ չէր քեզկա, մէջքը սեղմած արծաթեայ կամարով և նրանից կախ ընկած մի փոքր դաշոյն։ Սակայն առաջին նաշուածքով կարելի էր տեսնել, որ նրա ամբողջ կերպարանքը վշտով համակուած էր և մի ներքին ցաւ տանջում էր նրան. նա կարծես բոլորովին մոռացել էր բընութեան հրաշալի գեղեցկութիւնը և միայն հօր բացականչութիւնը և զիւղից լսուող զանգակի ձայնը սթափեցրին նրան և նա մի առանձին հիացմունքով դիտեց գեղանկար տեսարանը ու կարծես դրանով սփոփանք դտաւ իր ցաւին, որովհետեւ դէմքը պարզուեց։

—Ոհ, ինչ գեղեցիկ տեսարան է, ինչ գեղեցիկ առաւօտ է, դռչեց նա։

—Այո, որդի, ասաց հայրը, խաչակներով ի լուր զանգակի, և կարծես իր ներքին մտածմունքին պատասխանելով, և այդ անաստուածը այսպիսի դրախտ ունէր, բայց կորցրեց, այսպիսի բախտաւորութիւնը անտանելի թշուառութեան հետ փոխեց, ստնատակ տուեց իր պապերի օջախի անունը, պատիւը, քանդեց, աւերեց այդ շէն և ամեն բարիքներով լի հայրենի տունը։ Ո՛հ, Աստուած,—և ծերունին նորից խաչակընքեց ու վշտոտ հայեացքն ուղղելով դէպի այն կողմը, որտեղից զօղանջում էր զանգակը—ոչ մի հայ քրիստոնեայի անառակ, փուչ որդի չը տաս, թող աւելի շուտ մեռնի իմ որդին, եթէ նա իմ օջախը նոյնպէս բոռացնելու է, իմ նամուսը ու անունս ցելիի հետ է հաւասարեցնելու։ Անիծեալ լինեն այդ գինեվաճառները, նրանք մեր ժողովրդի ցեցերն են, քանի բանի տներ քանդեցին։

Եւ ծերունին չը կարողացաւ զսպել արտասուքը։

—Ապեր, ի՞նչ կայ, ինչո՞ւ այդպէս տխուր էք, միթէ երէկ քաղաքում մի վատ լուր էք իմացել։

—Սարգիս-Ջան, որդու հարցին ուղղակի պատաս-

խանելու փոխարէն ասաց հայրը, — երգուիր այսօրուայ անմահ պատարագի վրայ, որ կեանքումդ ոտքդ գինետուն չի տեսնի, այլապէս ես քեզ իմ որդին չեմ համարի:

— Միտմիտ կաց, ապեր, քո հրամանը ինձ համար սուրբ է. ես նրա համար չեմ ուսում առել, որ ժամանակս գինետանը անցնեմ: Ախ, երբ կը գայ Արշակ-բէգը, մենք միասին գործի կենանք: Դու կը տեսնես ապեր, թէ մենք ինչեր կանենք, մենք կը կերպարանափոխենք մեր գիւղը:

— Աստուած տայ, Աստուած տայ, որդի, ապրէք. Արշակ-բէգը, յոյս ունեմ նորից օտքի կը կանգնեցնի իր պապերի օջախը, բայց խեղճ տղայ, նա, երևի ստիպուած կը լինի կիսատ թողնել ուսումը ու գալ:

— Ինչու, ապեր, ինչ կայ:

— Կարելի է հարցնել ինչու, երբ նրա հայրը Զօհրաբ-բէգն է, այդ անաստուած, անխղճմտանքը: Լսիր, ես քեզ պատմեմ թէ նա ինչ օր է պատրաստել իր մի-նուծար որդու՝ Արշակ-բէգին և խեղճ աղջկան՝ Սօնային:

Երիտասարդը ցնցուեց վերջին անունից, բայց կարողացաւ թագցնել յուզմունքը:

— Դու շատ բան չը գիտես, ինչպէս և Արշակը, բանի որ փոքր ժամանակից ձեզ ուղարկեցինք Շ... ուսում առնելու: Ինչ մխիթարութիւն պէտք է գտնէ խեղճ տղան, երբ վերադառնայ Մոսկուայից, երանի թէ նա հօրը նման չը մոռանայ իր հայրերի օջախը: Է՛հ, լաւ, որ ես քեզ չուղարկեցի Մոսկուա, մեզ պէս հասարակ գիւղացիների համար հայոց հոգեւոր դպրոցում ստացած ուսումն էլ բաւական է. դու չը պէտք է մոռանաս, որ քեզ սպասում են եղն ու լուծը, արտն ու կալը:

— Հայր, ասաց Սարգիսը, Արշակի մասին կարծիքդ ոխալ է. նա այն տղաներից չէ, դու կը տեսնես, որ նա հաւատարիմ կը մնայ իր հայրենի օջախին. նա չա-

րունակ ինձ գրում է, յայտնում է իր ծրագիրները. նա ամենեւին դուռը չէ հօր պէս և նա իրան այնպիսի գիւղացի է համարում, ինչպէս մենք:

—Աստուած տայ, Աստուած տայ, որդի, բայց լըսիր պատմութիւնս: Քսան հինգ տարի առաջ, երբ կենդանի էր մեր մէլիք Սահակը — Աստուած նրա յիշատակը քաղցր անի — այս մեր գիւղի և ահագին կալուածների տէրը, մեր գիւղի կեանքը, վիճակը բոլորովին ուրիշ էր. մէլիքը ոչ թէ կալուածատէր աղայ էր, այլ հասարակաց հայր. նա գիւղացիներին խնամում էր իր դաւակների պէս, շատ բարի էր, ահագին բարերարութիւններ էր անում, ոչ ոք նրանից զուլում չէր տեսնում, մեծ ու պստիկ սիրում, յարգում էին նրան, գիւղում մի հատ անգործ, աղքատ մարդ չը կար: Ախ, ինչքան լաւ էր այն ժամանակ. ո՞ր ջահիլը կը համարձակէր իր հօր կամ ծերունիների մօտ նստել, գինի խմել, հարբել. մէլիքը կտոր-կտոր կ'անէր նրան: Բոլոր ջահիլները նոր հարսերի պէս ամաչկոտ էին. լի օրերը աշխատում էին դաշտերում, հանդերում, այգիներում: Եւ ամեն օրերը ձիախաղութեան, զինախաղութեան, յետեւիցն էին. ամեն մինը մի-մի առիւծ էր դաշտում, իսկ տանը՝ մի-մի հարս: Ափսո՞ս էն օրեր, էլ չենք տեսնելու:

Եւ ծերունին խոր հառաչ քաշեց.

—Դժբախտաբար, շարունակեց նա, մէլիքը և խանը մը այնպէս խիստ չէին դէպի իրանց միջուճար որդին, այդ փչացած Զօհրաբ-բէգին. պէտք է ասել, որ Զօհրաբն այդ ժամանակ մի լաւ և բարի տղայ էր, գիւղի միւս տղերանց նման, աշխատող, ժրաշան, հնազանդ: Աստուած հօգին լուսաւորի, շատ խելօք մարդ էր մէլիք Սահակը, թէև ինձ պէս անուսում էր, բայց շատ հեռատես էր: Որդուն ուղարկեց Թիֆլիս ուսում առնելու, ասում էր, հարկաւոր է ժամանակի հետ գնալ: Զօհրաբը գնաց, երեք չորս տարի քնաց Թիֆլիսում, իբր թէ ուսում էր ստանում, բայց դու մի ասա մեր տղան

ընկնում է փչացած բէգզադաների ընկերութեան մէջ
 և ուսում առնելու փոխանակ իրան տալիս է բէֆի,
 զուարճութեան, անառակութեան. նա սովորում է
 թուղթ խաղալ, նոր տեսակի խմիչքներ գործածել, հօ-
 րից թաքուն մեծ մեծ պարտքեր անել: Երբ մէլիքը ի-
 մացաւ բանի էութիւնը, արդէն նա փչացած էր. նրան
 յետ բերեց գիւղը. այստեղ ևս նա հնար գտաւ շա-
 րունակել իր անառակ կեանքը. նրա յետեւից մեր գիւ-
 ղը մուտք գործեցին նոր տեսակի խմիչքներ—կօնեակ,
 րօմ, շամպայն, որ թաքուն ծախում էին մի բանի գի-
 նեվաճառներ Զօհրաբ-բէգի օգնութեամբ. ինքն էր
 ստիպում նրանց բերել տալ Թիֆլիսից այդ խմիչքները.
 գիշերները նաև մի բանի իր ընկեր ուրիշ բէգզադաները
 դալով այդտեղ, հաւաքւում էին և թաքուն թուղթ
 խաղում, անառակութիւններ անում: Խեղճ մէլիքը խը-
 րատեց, սլատեց, լացեց, անիծեց, ոչինչ չեղաւ...
 մայրը վաղուց դարդից գերեզման էր իջել: Մէլիքը
 կարծեց, որ եթէ Զօհրաբի գլուխը կապի, ամուսնացնի
 գուցէ խելքի գայ, մարդ դառնայ. նա պսակեց նրան
 մէլիք Ռստամի սիրուն աղջկայ, Հռիփսիմէի հետ: Մի
 բանի ժամանակ Զօհրաբը իր անպիտան վարմունքից
 յետ կացաւ, բայց հէնց որ մէլիքը մեռաւ, իրան ա-
 զատ զգաց, դարձեալ սկսեց իր նախկին կեանքը: Խեղճ
 մէլիք. մեռնելիս, աղաչում, պաղատում էր ինձ, ասե-
 լով. «Ես գիտեմ, Թովմաս, որ խեղճ հարսս, Հռիփսի-
 մէն և թոռնս, Արշակը, նեղութիւն են քաշելու, գոնէ
 դու մի թողնիր նրանց, օգնիր նրանց»:

Ծերունին զգացուած այս յիշողութիւններից, սըր-
 բեց արտասուքը, ապա յարեց.

—Ախ, ինչքան չը քաշեց խեղճ և անբախտ Հռիփ-
 սիմէն Զօհրաբ-բէգի ձեռքից. օր չէր լինի, որ խեղճ
 կնկան լը ծեծէր. նա հարբած գալիս էր տուն, կա-
 տաղած գաղանի նման. կին, ծառայ, աղախին, ամենքը
 ենթարկւում էին նրա հայհոյանքներին, ամենքին թա-
 կում էր, շան չարչարանք էր տալիս: Միւս կողմից, երբ

մեր կողմերում նոր կարգերն ու օրէնքները մտցրին, օրինաւոր ուսում չունենալով, նա մնաց չշկլուած, չը հասկացաւ ինքն իրան հաւաքել և ամեն բան թարս գնաց: Նա իր բոլոր ունեցած չունեցածը կերաւ, գրաւ դրեց թղթախաղում: Բարեհոգի մարդիկ էլ շատ կային, որ մի բաժակ բոմը կամ կոնեակը մի այգու էին ծախում: շուտով գիւղն էլ գնաց, ջաղացներն էլ, այգիներն էլ, ու մալ և ամեն բարութիւններով լի, շէն օջախը քանդուեց, աւերուեց. մնաց միայն այս բարաշէն տունը, որի մէջ այժմ ապրում է ինքն ու իր աղջիկ Սօնան: Դեռ լաւ է, որդուն, Արշակ-բէգին ուղարկեց Շ... Հայոց թեմական դպրոցը և այդտեղ աւարտելով, նա գնաց Մոսկուա ուսումն շարունակելու: Աստուած տայ նա իր պապի օջախը շէնացնի, վառ պահի, թէև ի՞նչ է մնացել: Խեղճ Հռիփսիմէ խանըմը, քանի-քանի անգամ, իր աղջկան՝ Սօնային՝ գրկին փախել, եկել է մեր տուն, մարդի ձեռքից. նա մոմի նման հալւում էր օրէցօր, էլ չը դիմացաւ, երբ այդ անաստուածը տան կահ կարասիքն ևս սկսեց ծախել, և դերեզման մտաւ: Տեսնում ես, ահա, այդ անշուք գերեզմանը. ահա այդտեղ է հանգստանում իր վշտերից այդ անմեղ հրեշտակը. մի քարի անգամ չարժանացաւ...:

Ծերունին մի փոքր լռեց ու շարունակեց.

—Անիծեալն իր աղջկան ևս չը խնայեց, խեղճ Սօնային:

Այս անունի վրայ Սարգսի վրդովմունքը սաստկացաւ:

—Խեղճ Սօնա, շարունակեց ծերունին, դեռ չը գիտես, թէ էգուց քեզ ինչ ձախորդութիւն է սպասում:

—Հայր, ասաց Սարգիսը, այլ ևս չը կարողանալով զսպել յուզմունքը, էլի՛ մի նոր ձախորդութիւն է պատահել:

—Ոհ, Սարգիս-ջան, ի՞նչ անեմ. այդ անիրաւը իրան երեխային ևս չը խղճալով, հարբած ժամանակ տանել է տուել թղթախաղում մեծ գումար, մուրհակ

է տուել և ահա այս երկու օրը դատաստանական պըրիստաւը գալու է տունը աճուրդի դնէ, ծախէ ու հօրը աղջկան տնից դուրս անէ. ինքն բարը գլուխը, բայց ինչ պէտք է անի թշուառ աղջիկը, ում դռները ընկնի: — Բայց ինչ եղաւ քեզ, արդեօք ինչ ունես:

Հօր այդ լուրի վրայ, երիտասարդի ծնկները կը ծկուել էին, նա գունաթափուել էր և անշուշտ կ'ընկնէր, եթէ մահակի վրայ կոթնած չը լինէր. հօր ներկայութիւնը զսպում էր նրան և նա տխուր ձայնով ասաց.

— Ոչինչ չը կայ, ապեր, մի քիչ գլուխս պտտուեց. շուտ գնանք, մայրս հիմա անհամբեր սպասելիս կը լինի...

Ծերունին վազուց գիտէր, որ Սարգիսը և Սօնան միմեանց սիրում են, որ իր կինը փափագում էր Սօնային իրանց տանը հարս բերել, բայց նա գիտէր, որ Զօհրաբ-բէգը երբէք համաձայնութիւն չի տայ, որ իր աղջիկը հասարակ գիւղացու հարս դառնայ. միւս կողմից ևս նրա կանոնում չը կար որդու երեսը բացել, ուստի բաւականացաւ ասել.

— Աստուած ողորմած է, որդի, նա չի թողնի Սօնային ուրիշի դռներին: Գնանք:

Եւ երկուսն էլ, անձնատուր եղած իրանց մօտամունքներին, ճանապարհ ընկան լուռ ու մունջ և մինչեւ գիւղը հասնելը ոչ մի խօսք չարտասանեցին այլ ևս: Թողմաս ապերը ուղղակի գնաց եկեղեցի, իսկ Սարգիսը շտապեց մօր մօտ՝ հաղորդելու նրան տխուր լուրը:

Բ

Կայծակի արագութեամբ ն... գիւղում տարածուեց այն լուրը, թէ մէլիք Սահակի նշանաւոր օջախի վերջին մնացորդը, այն բերդաման տունը, որ այնքան աղէտների, արհաւիրքների գիմացել էր պարսկական տիրապետութեան օրերում և գիւղացիների համար մի

տեսակ սրբալայր կամ օջախ էր նկատուում, պէտք է ածուրդով ծախուի: Գիւղի ծերունիները և պառաւ կանայք այնքան շատ և լաւ յիշողութիւններով կապուած էին մէլիք Սահակի օջախի հետ, որ նրանց սիրտը ճշմութեց ցաւից: Ծերունիները, պատարագից յետոյ, եկեղեցու բակում, մտածում էին մի կերպով փրկել այդ թանկագին յիշատակը:

— Ով փուչ աշխարհ, ասում էր Գիւղի ապերը, ինչ էր երէկ մէլիք Սահակի օջախը, ինչ է այսօր: Տուն չէր, այլ բարիքների ծով էր, ծով, և ով կարող էր կարծել, որ այդ ծովը կը չորանայ:

— Դրա համար են ասել աթա բաբա, որ թշնամուն էլ մարդ չը պէտք է ցանկանայ փուչ ժառանգ:

— Քարը նրա գլուխը, ասաց Մարտիրոս ապերը, բայց խեղճ են նրա որդին և աղջիկն. նրանց համար պէտք է մտածել: Ասում են, բէգդաւէն շատ լաւ տղայ է և լաւ ուսում է ստանում և նա կարող է պսպի հանգած օջախը վառել: Պէտք է մի կերպ իմաց տալ նրան. կարելի է ոչ մի բանից տեղեկութիւն չունի, գուցէ դայ և մի ելք, հնար դտնի. բնա ձր օրուայ համար է ուսումը: Իսկ խեղճ աղջկան, Սօնային, քանի որ մայր չունի, հայրն էլ արեւցողութեամբ և թղթախաղով է զբաղուած, պէտք է աղատել այդ տնից. լաւ էլ չէ ջահիլ ջահիլ աղջիկը մնայ իր հօր տանը, որտեղ ոչ մի մօտ կնիկ արմատ չը կայ: Եւ մի բան եմ լսել. Աստուած տայ որ դժուատ լինի. մեր տնեցիները ասում են, որ Սօնան և Սարգիսը ստեղծուած են մէկ մէկու համար: Էլ ինչու ենք ուշացնում: Սօնային առնենք Սարգսի համար և խեղճ աղջիկը Հերիքնաղ արօր պէս մայր կունենայ: Ի՞նչ ես ասում, Թովմաս— վերջացրեց ծերունին դառնալով վերջինիս:

— Աստծուն էլ յայտնի է, որ ես և մեր պառաւը, Հերիքնաղը, մեծ բախտաւորութիւն կը համարէինք մէլիք Սահակի օջախից մի խանձուղ բերել վառել մեր օջախը, բայց միթէ չէք իմանում, որ Զօհրաբ բէգը այդ

բանին չի համաձայնի. նա պատրաստ կը լինի վերջին աղքատին, վերջին ամենափչացած մարդուն տալ իր աղջիկը, եթէ նա բէգղադէ է. նա երբէք չի համաձայնի իր աղջկան տալ գիւղացուն:

—Բայց Սարգիսը ուսում առած, շնորքով տղայ է, ինչու չը պէտք է տայ. վերջապէս Սարգիսը կարող է քնալ ծառայութեան մօտեւ, չինօֆնիկ դառնալ, գիւղացի չը մնալ:

—Աստուած մի արասցէ, բարկացած շեշտով ասաց թովմաս ապերը. Սարգիսը պէտք է իր հօր ու մօր նման գիւղացի մնայ, մեր օջախը վառ պահէ, գիւղացի էլ պէտք է մեռնենք, իմ տղան պէտք է պահէ այն հողը, որ իր պապերը, հայրը՝ իրանց քրտինքով ողողել են: Սարգիսն ինքն էլ ամենեւին սէր չունի քաղաքացի դառնալու. նա ասում է գիւղացին կրթութիւն ստանալով պէտք է իր գիւղում մնայ:

—Գործը, ուրեմն, մի քիչ դժուարանում է, թովմաս ապեր, ասաց 40 տարեկան մի համիա գիւղացի. բայց էլի պէտք է փորձել, գուցէ Աստուած յաջողեց: Ես կարծեմ, շատ լաւ կը լինի, որ հէնց հիմա դու և տէրտէրը գնաք Ձօհրաբ բէգի մօտ խնամխօսի և տէրտէրը թող հասկացնի՝ նրան, թէ ինչ կը լինի Սօնայի վիճակը, եթէ տունն էլ ծախեն: Բան է, նա յամառուեց, չը համաձայնեց, պէտք է այն ժամանակ իմաց տալ որդուն, Արշակ բէգին, որ դայ, իսկ մինչ այն, պէտք է ջամայա թով խնդրել Մկրտիչ Խօջայից, պարտատէրից, որ մի առժամանակ յետաձգէ տունը ծախելը, մինչև Արշակ բէգը վրայ հասնէ:

—Աստուած խղճմտանք տայ Մկրտիչ Խօջային, այդ անիրաւը ծծեց ամբողջովին խեղճ մէլիքի տուն-տեղը, էլ բան թողեց, հիմա էլ աչքը տնկել է կիսաքանդ տան վրայ:

—Դէ գնացէք, այսօրուայ սուրբ պատարագը ձեզ օգնական լինի:

Թովմաս ապերը և տէրտէրը ուղղեցին իրանց բայ-

լերը դէպի Մէլիքանց հինաւորաց տունը, կամ օջախը, ինչպէս ընդունուած էր ասել:

Առաջին տեսքից կարելի էր կարծել, որ հինաւորաց տունը, արդարեւ, մի բերդ է եղել, բայց ժամանակից կամ թշնամու յարձակումներից այնպէս քայքայուած և աւերուած, որ դժուար էր կարծել, թէ նա մարդաբնակ է: Ընդարձակ բակը, ուր մտան Թովմաս ապերը և քահանան, որդերից կրծոտուած և մի կրնկան վրայ ճռուճըռացող մեծ դռնով, կատարեալ ամայութիւն էր ներկայացնում: Նրա մի մասը միայն կոխոտուած գետին էր ներկայացնում, իսկ չորս կողմը ծածկուած էր անպէտք բանջարներով և որոմներով: Մի քանի կիսաչորացած ծառեր էլ տխուր տխուր նայում էին և կարծէք զարմանում, որ իրանց դեռ չեն կտրել վառել: Բակի մի ծայրում, արդէն գտած և կործանուած փայտեայ ցանկապատի մօտ աննուում էր մի ջրհոր, նոյնպէս կիսակործան չարխով և ժանգոտած սառինջով (ջրի դուռ): Հնութիւն, անկենդանութիւն, ցրտութիւն էր փչում այդ բակից, թէև ամառային պայծառ և տաք արևը ամեն տեղ կենդանութիւն և ջերմութիւն էր տարածում: Տեղահան եղած բարէ սանդուխներով Թովմաս ապերը և տէրտէրը մտան տան էյվանը, ուր մի պառաւ կին, տան սպասուհին, մի ժանգոտ կաթսայի մէջ բրինձ էր լուանում: Մի օջախի վրայ ևս մի մեծ կաթսայում ջուր էր եռում և մի գիւղացի սղայ երկու երեք միըհաւ փետրահան էր անում:

Տեսնելով քահանային և Թովմաս ապօրը, պառաւը վերկացաւ և, բէթկալը բարձրացնելով, մօտեցաւ տէրտէրի աջը առնելու:

— Օրհնեալ լինիս, Շուշանաքեր, բէգը տանն է. երևի այս միըհաւերը ինքն է որսից բերել:

— Ոչ, տէրտէր, էն փուչ Նգան բէգն է ուղարկել, որ փլաւ եփենք, որովհետև իր ընկերների հետ գալու է թուղթ խաղալու: Տէրտէր, ախր երբ է խելքի գա-

լու, բայց մարդ տանը հասած նշանացու աղջիկ կունենայ էլի կը շարունակի իր փշուլթիւնները. խեղճ աղջիկը դարդից հալ ու մաշ է եղել: Արշակ-աղան էլ չի գալիս. նա է մնացել մեր միակ յոյսը, ես էլ մի ոտս գերեզմանում, եթէ հսօր էգուց մեռնեմ, էլ ով տէր, տիրական պէտք է լինի խեղճ Սօնային:

— Լաւ, լաւ, Աստուած ողորմած է, նուշան-աքեր, դու այն աստ, ինչ է անում Զօհրաբ բէգը. մենք խէր բանի համար ենք եկել:

— Աստուած յաջողեցնի. իմ սիրտս հէնց զգաց երբ ներս մտաք. հանգուցեալ Հռիփսիմէ խանըմիս փափագն էլ այն էր, որ Սօնայի և Սարգսի բախտերը միացնէ. վերջապէս խեղճ Սօնաս՝ մի բախտաւոր օր կը տեսնէ, բայց կը համաձայնի Զօհրաբ բէգը:

Եւ պառաւ գլուխը օրօրեց:

— Բարձրացէք, նա թալարում նստած, չիբուխ է բաշում ու կօնեակ խմում:

Տէրտէրը ու Թովմաս ապերը բարձրացան խարխուլ ու ոտնաքայլերի տակ ճարճատող փայտեայ սանդուխներով ու մտան թալարը: Դա մի մեծ, լայն սրահ էր պարսկական փէնջարէներով և պարսկական ճարտարապետութեան զարդադրուագներով. տեղ տեղ ոսկեզօծ դրուագները սևացել էին և քանդուել. առաստաղի վրայ ևս կտուրից թափած անձրևի կաթիլները հետքեր էին թողել: Մի բանի տեղ, պատուհաններում, նոր կարկատաններ էին երևում և ամբողջ սրահը ներկայացնում էր հնի և նորի մի խառնուրդ. կոպիտ կարկատաններ, անհմուտ կերպով լցրած ծակ ու ծուկեր, հին փառքի, ճոխութեան, շռայլութեան բեկորներ ու աղքատութեան ապացոյցներ, ինչպէս և նորագոյն բազալքալքութեան նշաններ: Թալարի յատակը փռուած էր հնացած, խաւը բոլորովին կորցրած գորգերով, ճղրտուած կարպետներով և նոյն-իսկ խտիրով:

Սևացած և տեղ տեղ զառ բանդակագործական զարդերը պահպանած պատերի վրայ կախ էին տուած

բաղմաթիւ մտրակներ, մի քանի հրացան, ատրճանակ, թրեր, վառօդամաններ: Թալարի առաջ ընկած պատշգամբի փայտեայ սիւներից կախուած էին երեք մեծ վանդակ, որոնց մէջ մի բազէ և երկու թարլան թռչուն իրանց գիշատիչ դէմքերով և ոտներին կապած զանգակիկների ղօղանջիւնով կարծես կամենում էին հասկացնել մտնողներին, թէ պատրաստ են նորից միրհաւներ, կաքաւներ որսալու:

Փէնջարանների առաջ մի քանի որսկան թաղիներ մրափում էին և նրանց մօտ դրուած էին փայտեայ ամաններ, կերակրի մնացորդներով:

Այդ մտրակները, վառօդամանները, այդ բազէները և որսկան շները ապացոյց էին թէ տանտէրը հաւատարմութեամբ պահպանում է այն աւանդութիւնը, որի համաձայն բէգերի և մէլիքադանների միակ ազնիւ պարապմունքը համարւում է որսորդութիւնը ու ձիասպատակութիւնը:

Տանտէրը, Ձօհրաբ բէգը, մօտ 45 տարեկան մի տղամարդ էր արթնօրականութեան ընտելացածի բոլոր նշաններով. նրա նայուածքը, շարժումները խոժոռ էին և հրամայողական. նա այդ րոպէին նմանում էր այն մարդին, որ բարկացած իրան հասած որ և է անաշուղտութեան կամ ձախորդութեան վրայ, առիթ է որոնում մէկի գլխին թափելու իր դառնացած հոգու բոլոր մաղձը:

Տեսնելով քահանային և Թովմաս ապօրը նա խոժոռեց դէմքը և նրանց բարեկին, գլխի թեթև շարժումով հազիւ պատասխանեց, ու ձեռքով նշան արեց, որ նստեն գորգի վրայ, ապա դժիամակ ձայնով հարցրեց:

— Հը, ի՞նչ կայ, ո՞ր խաչիցն է, որ ինձ մտներդ էք ձգել, ուրախացել էք հա, որ այս տունը ծախուելու է. ես շատ լաւ գիտեմ, որ դուք միայն ուրախանալ կարող էք. գիւղացին երբ չէ ուրախանում, տեսնելով բէգերին հասած ձախորդութիւնը:

— Աստուած չանէ, որ մենք ուրախանանք մէլիք

Սահակի օջախին հասած դժբախտութեան վրայ, բէգ, ասաց ծերունի Թովմասը. դուք ձեր հոգու վրայ մեղք էք աւելացնում. ընդհակառակը ամբողջ գիւղը խոր ցաւ է զգում. միթէ այսօրն էլ պէտք է տեսնէինք, որ մէլիք-Սահակի վերջին օջախը քարուքանդ լինի և նրա յիշատակը ջնջուի այս գիւղից։

—Քեզ ի՞նչ. ես գիտեմ իմ հօր տունը, իմ ժառանգութիւնը. այդ էր մնացել, որ բնծռոտ գիւղացիներն ևս խղճան ինձ։ Եթէ հայրս, մէլիքը, ձեզ այդքան երես տուած չը լինէր, այսօր բաները այստեղ չէին հասնի. նրա անխելքութեան շնորհիւ դուք, բնծռոտ գիւղացիներդ, մալ ու ապրանքի, հողի այգու տէր էք դարձել և այսօր էլ համարձակում էք ինձ խրատներ կարգաւ։ Բայց սպասեցէք, շատը գնացել քիչն է մնացել. թող տղաս, Արշակ բէգը գայ, չինովնիկ դարձած, ես ձեզ ամենքիդ ցոյց կը տամ, թէ ով է բէգը, ով է գիւղացին։

—Օրհնուած, ասաց լրջօրէն քահանան, այդ տարիքումդ դեռ ելի չես խրատուել. հայրդ, մէլիք-Սահակը— Աստուած հոգին լուսաւորի, նա մեզ պահպանում էր՝ իբրև իր զաւակներին։ Բայց այդ թողնենք, բէգ, մենք այսօր եկել ենք, այս հին մեր օջախից մի կրակ տանենք մեր օջախը վառենք, այս հին այգուց մի պտուղ տանենք, մեր այգին պտղաբերենք. ընդունիր մեր խնդիրը։ Միթէ գիւղացի լինելով մենք մարդիկ չենք, որ շարունակ մեզ նախատում ես. մենք մեր ճակատի հալալ քրտինքով, մեր աշխատութեամբ պահում ենք մեր ընտանիքը, տունը։ Յիշիր, որդի, ինչպէս էր վարւում մեզ հետ ողորմածահոգի հայրդ։

—Ձեմ հասկանում, ինչ էք ուզում, ասացէք շուտով տեսնեմ։

—Թովմաս ապերը եկել է Սօնային իր որդի Սարգսի համար հարս ուղելու։

Ձօհրաբ բէգը յանկարծ տեղից ցատկեց խայթուածի պէս։

—Ի՞նչ, ի՞նչ, պոռաց նա, իմ աղջիկս, Սօնային, մէ-

լիք-Սահակի թողան, դուք համարձակում էք ուզել՝ մի հասարակ, քնծռոտ գիւղացու համար։ Ախ, Աստուած, այս խայտառակութեան, անպատուութեան էլ արժանացրիր ինձ։

Եւ նրա աչքերը բարկութեամբ շողացին։

Թովմաս ապերը և քահանան օտքի կանգնեցին։

— Զօհրաբ բէգ, ասաց առաջինը, դու սխալում ես. այդ քնծռոտ, հասարակ գիւղացին, որ իր հալալ աշխատանքով ապրում է, ամենեւին պակաս չէ այն բէգ-ղադաներից, որոնք փչացնում են իրանց հայրերի աշխատածը։ Դու զուր ես աքացի տալիս քո աղջկայ բախտին. Սօնան աւելի բախտաւոր կը լինի իմ տանը, քան այստեղ։ Մի իրան էլ հարցրու տես ինչ կասի։

— Իմ աղջիկս, Սօնան, կարծում ես կը համաձայնի գիւղացու կին դառնալ, տխմար ծերուկ, սպառնալից մօտեցաւ Թովմաս ապօր Զօհրաբ բէգը։ Շատ սխալում ես. քո տղան կարող է միայն իմ՝ աղջկայ սպասաւորը լինել, իսկ եթէ նա, Աստուած մի արասցէ, այդ տեսակ բան ցանկանալու լինի, ես նրան այս իմ ձեռքերով, կտոր կտոր կանեմ։ Դուրս կորէք այստեղից, էլ իմ տան չէմքս չը կոխէք։

— Հա, հա, հա, բրբջալով դիմեց նա այդ միջոցին թալարը մօտնող մի քանի նոր հիւրերի. լսիր, Եգան-բէգ, լսել ես կեանքումդ այսպիսի յանդգնութիւն. իմ հօր երէկուայ բէգաւոր եկել է այսօր իմ աղջիկն ուզում է իր տղի համար. քնծռոտ, տրեխաւոր գիւղացին համարձակում է աչքը տնկել բէգի աղջկայ վրայ։ Ի՞նչ էք ասում։

— Այդ լրբութիւն է, կատարեալ լրբութիւն. բէգի աղջիկը ինչպէս կարող է գիւղացու կին դառնալ, պատասխանեցին բէգերը։

— Բաւական է, բաւական, ասաց Թովմաս ապերը, գնանք, տէրտէր։ Ճշմարիտ է, գիւղացին ո՞վ, բէգն ո՞վ. գնանք մենք մեր արտը քաղահան անելու, իսկ բէգերը և բէգագդանները թող արաղ խմեն, թուղթ խաղան,

որսի գնան: Խեղճ Սօնա, ափսոս մէլիք, որ այսպիսի
փուչ ժառանգները քո տեղը բռնեցին:

— Կորիւր աչքիցս, պոռաց Ձօհրաբ-բէգը:

Տէրտէրը և Թովմաս ապէրը տխուր-տխուր ցած
իջան:

— Խեղճ Սօնա, խեղճ Սարգիս, լացակամած ասաց
Շուշան արքերը և խոր հառաչեց:

ՇԱՀՐԻԱՐ

(Վերջը միւս համարում)

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

(Քննադատական փորձ)

Քառորդ դարից աւելի է անցել այն օրից, երբ իր վերջին շունչն էր աւանդում վշտաբեկ ու հեղամրմունջ Պէշիկթաշլեանը՝ հայոց սակաւաթիւ իսկական բանաստեղծներից մէկը:

Հայոց գրականութեան տեսակէտից հետաքրքիր է, ի հարկէ, թէ ինչպէս է ծնուել, զարգացել ու բեղմնաւորուել եղբայրութեան երգիչ այդ բանաստեղծը. սակայն դժբախտաբար մեզ չը յաջողուեց հակառակ երկար խուզարկութեանց զբաւնել նրա հանգամանօրէն մանրապատում կենսագրութիւնը:

Վերս յիշած պատճառով ներկայ ուսումնասիրութեան մէջ ստիպուած ենք անտես առնել բանաստեղծի կենսագրութիւնը և բաւականանալ միայն նրա գրքերով:

Պէշիկթաշլեանի երկերը տպուած են Պօլսում 1870 թ. հետեւեալ պարզ վերտառութեամբ. «Մատենագրութիւնք Մ. Պէշիկթաշլեանի»: Սակայն այս հրատարակութիւնը ներքին շատ պակասաւոր կողմերի հետ ունի նաեւ արտաքին այն թերութիւնը, որ ամբողջական չէ: Հարեւանցի գրած յառաջաբանում հրատարակիչը գրում է. «Մ. Պէշիկթաշլեանի գործերը յան և յիր ինչ որ գտանք այս հատորիս մէջ բովանդակեցինք» որից պարզ երեւում է, որ թերեւս կարելի էր այլ ոտանաւորներ եւս գտնել բանաստեղծի ազգականների և մօտիկ ծանօթների քով: Այս առաջին և միակ հրատարակութիւնը պարունակում է իր մէջ 63 մեծ և փոքր ոտանաւորներ, 4 ճառ՝ նուիրուած եղբայրութեան ու լուսաւորութեան գաղափարին և 8 թատերական գրքուածքներ: Շատ յանկալի է, որ բանիմաց մարդիկ Թիւրքիայի պարբերական հրատարակութիւններում մէջ ընդ մէջ լոյս տեսած ոտանաւորները հաւաքելով, ըստ կարելոյն մի լիակատար ժողովածու ընծայէին մեզ:

I

Պէշիկթաշլեան հայոց քնարերգու բանաստեղծներից է և որպէս քնարերգու նա, անշուշտ, երգած պիտի լինի բնութիւնը, սէրը, մահը, դէպի մարդկութիւնն ու հայրենիքն ունեցած անհատական զգացումը: Պէշիկթաշլեանի ազնիւ, հոգեպարար քնարի մեղմիկ դայլայլիկների մէջ դուք չէք նկատի ոչ մի յախուռն, չափազանց խրոխտ յուզում, զգացմունքների արտակարգ գեղում, չէք գտնի ոչ մի գոռ բողոք, խիստ թափով ու զօրեղ շեշտով արտայայտուած անբաւականութիւն, փոթորկալից կրքեր, դէպի բնութիւնն ու առ կոյսը տածած ոչ մի անսանձ, կրակոտ սէր, որ դիտէ քանդել, այրել, տապալել, այլ ամեն ինչ նրա քնարի լարերի վրայ ստանում է մեղմիկ, համեստ ու չափաւոր ձեւ. ամեն բան գրաւիչ, բայց ոչ այրող, սիրելի, անուշ, բայց ոչ մոլեգին և արբեցնող: Պէշիկթաշլեանի քնարը տալիս է հոգեկան բաւականութիւն, առանց մարդու ներքինը տալն ու վրայ անելու յարուցանում է մարդու մէջ զգացմունքներ, առանց կրքերի կնճռոտ ընդհարումներ առաջացնելու:

Պէշիկթաշլեան իր հոգու հակումներով և խառնուածքի ինքնուրոյն կողմերով հակամէտ է բնութեան մեղմիկ, քնքոյշ կողմերը սիրելու: Նա սիրում է ոչ փոթորկալի, անեղաչունչ, ամեն ինչ քարուքանդ անող, սոսկալի բնութիւնը, նա հիանում է, սքանչանում ոչ զայրացած ու մոնչացող բնութեամբ, ինչպէս անգլիական մեծագոյն բանաստեղծ ըմբոստ Բայրոնը, այլ հանդարտիկ, հեղ ու ժպտուն, կենսունակ ու ծիծաղկոտ շըրջապատն է. որ նրան քաշում է, գրաւում, որ նրան բնութեան ջերմ երկրպագու է դարձնում: Բնութեան շունչը՝ անեղամուռնի հողմն ու քամին, մրրիկն ու փոթորիկը, որ շատ շատերին գըլխից հանել է, որով շատերը սգեւորուել, հիանալի տողեր են գրել, Պէշիկթաշլեանի համար գրաւիչ է դառնում միայն այն ժամանակ, երբ փոխւում է հեղիկ, հանդարտիկ զեփիւռի կամ զովայուցիչ հովիկի: Նրա երեւակայութիւնը իր սիրած երեւոյթները կերպարանաւորում, անձնաւորում է, հոգի ու շունչ է դնում նրանց մէջ, խօսում է նրանց հետ, հիանում, ոգեւորւում է ու կարօտակէզ սրտով բացականչում է.

Դու փափկաթե մանկիկ զեփիւռ,
Սղբերց վրալէն լուսակարկաջ
Սնուչ հոտով ծաղկանց ըսփու
Ի՞նչպէս թռչիս ինձ ընդ առաջ.
Ու խունկ ու զով ընծայելով
Զիս ողջունես հեղիկ շնչով:

Այդ մեղմ հովիկը բանաստեղծի համար փափկիկ սուր-
հանդակ է դառնում, որ լուր է տանում հովախն ու ծործորին,
բարձրադիտակ անտառներին, երամ երամ սոխակներին, լուր է
տանում նոցա, նրանց իմացնում է.

Թէ մլտերիմն իրանց եկաւ
Բիւր ըղմալմանց չիշատակաւ

Տեսէք ինչքան զբաւիչ ու ներդաշնակ գունեղ պատկեր-
ներ է տալիս «Գարուն» հրաշակերտ ոտանաւորի մէջ:

Ո՛հ, ինչ անուշ և ինչպէս զով
Առաւտուց փչես հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ...
Ո՛հ, ինչ աղու և սրտագին
Ծառոց միջէն և թղես թռչնիկ.
Սիրոյ ժամերն ի լանտառին
Ըղմալեցան ի քո ձայնիկ...
Ո՛հ, ինչ մրմունջ հանես վրտակ
Ականակիտ և հանդարտիկ.
Քու հայելուդ մէջ անապակ
Նային զիրենք վարդն ու աղջիկ...

Եթէ կարելի է և պէտք է հիանալ բնութեան խորհրդա-
ւոր ու հրաշալի տեսարանով գիշերը... Պէտքիկ թաշկանին ահա
թէ որ գիշերն է զբաւում:

Պարապի խաղաղ և անգորր ժամ է. տիեզերքն ամբողջա-
պէս սեւաթոյր քողով պատած, խաչինքն ու արօտ խոր թմբրի
մէջ են. դալար ոստերի վրայ հանգստանում են թռչնիկները,
մութը, որպէս անձնաւորեալ մէկը, ահաւոր և սեւագէմ իշխանի
նման բաղմուլ էր աղջամղջի մէջ իր գիշերային ութորը.

Լըքեալ լերինք, լըքեալ և զաշոք ամալի
Միայնութիւն բնակէր միայն և չերկրի:

Եւ այս խոր և վեհ լուսութեան ժամին հեզիկ սիւքն էր, որ
վէտ ի վէտ ծածանուելով, վարդ ծաղկանց խնկաւէտ անոյշ
բուրմունքը ծաւալում էր խաղաղական օդի մէջ և միւս կողմից
գիշերախօսիկ երգիչ թռչնակն էր, որ այս բնութեան ժամին,
մարդկանց թարգման լինելով, մեղմիկ դայլայլիկներ էր գեղգե-
ղում: Սակայն գիշերուայ ամենաչքնաղ տեսարանը երկնքում
պէտք է վնտռել, ուր և ուղղւում է սպլած բանաստեղծի որո-
նող հայեացքը, նա տեսնում է ջահազգեստեալ, եթերաճեմ կա-
մարում, ինչպէս՝

Արծաթափալ զըշիտին ի գահ բոցակէզ
ձեմէր դաշտին լաչնածաւալ չապարէզ:

Նա հոգեզուարճ պշնութեամբ եթերին նայելով հիանում է երկնքի մշտամրմունջ բազմաչեայ քնարներով, երկնաձեւ լուսաղգեայ էակների աստուածային վեհ փառայ ճառագայթների շողերով, տիեզերքի անհուն, անհամար աչերի փայլմունքներով-աստղերով: Աստղերն եւս, ինչպէս լուսինն ու արեւը և այլ բնական երեւոյթներ և մարմիններ, անձնաւոր են բանաստեղծի երեւակայութեան մէջ:

Յարշաւատոյլ լուսաշաւիղ չէր ի ճեմ
Ի ձեզ զանմահ ծնունդս երկրի նրկատեմ:

Եւ բնութեան այս փառահեղ հրաշալի ու խորհրդաւոր տեսարանի առաջ կանգնած է բանաստեղծը վերամբարձ պըշնեալ հայեացքով:

Յոյց տալու համար, թէ բնութեան որ տեսարաններն են նրան գրաւում, բնութեան որ մոմենտը նրա ուշքը կաշկանդում, արտագրում ենք այստեղ «Աշուն» ոտանաւորի ա. մասը, որի մէջ, նկարագրւում ու փառաբանում է աշունը: Այդ ոտանաւորը Պէշիկթաշկեանի գեղեցկագոյն ոտանաւորներից մէկն է, ահա դա.

Ո՛ւր էք ծաղկունք դուք փայլփրլունք
Ո՛ւր ձեր այտեր անուշ հոտով,
Ո՛ւր ձեր պչրանք ու փափկութիւն
Եւ ծոց լցեալ շաղ մարգարտով:
Ինչո՞ւ հովիկ, անգութ հովիկ
Յուրտ համբոյրներ կուտայ ձեզի.
Մոռցաւ արդեօք իւր սէր գոգարիկ
Եւ իւր գգունք փայփայելի:
Ո՛ւր թիթեռն իկ հոլաթեան
Ձեր բաժակին հիւթոց կարօտ,
Որ զայր թերթից ձերոց գունեան.
Ցանեւ զբոյր հեռի և մօտ:
Ա՛հ, ուր սոխակ իմ սիրակէզ,
Որ տերևոց նստած ի շուք
Հալէր կարմրիկ վարդին ի տես
Եւ կողկողէր սրտամաշուք:
Ձկայ գեփիւռ, չկայ ծաղիկ
Եւ ծաղկատարի չկայ թիթեռ.
Ձկայ սոխակ, ոչ վարդենիք
Լցեալ ցօղով մարգարտայեռ:

II

Բնութեան երկրպագուն հեշտութեամբ դառնում է կոյսի երկրպագու, զի անոր մէջ կոյսից աւելի չքնաղ, կոյսից աւելի

գեղեցիկ երեւոյթ չը կայ: Պէշիկթաշեան, եւս նման միւս բոլոր քնարերգակ բանաստեղծների, հիանում է կոյսով և վառ գոյնե-
րով նկարագրում է, կամ աւելի լաւ նկարում է, իր սիրեցեալի
պատկերը:

Նա իր տաղերում ոչ թէ մանրամասն նկարագրում է կոյսի
դիմագծերը և նրա մարմնի զանազան մասերը, այլ մեծ մասամբ
տալիս է ամբողջական տպաւորութիւն և աւելի շատ կոյսի
գեղեցկութեան թողած հետեւանքը, զգացումը՝ մի պատկերով
գունաւորուած:

Ահա այդպիսի նկարագիրներից մէկը.

Անոյշ աշխոյժ կերպարան
Շնորհաց սիրոյ բնակարան.
Բարբով հեզիկ Աղանի
Խօսքն մընչին գեղանի:

Պէշիկթաշեանի ոտանաւորներից, մասնաւորապէս սիրոյ
տաղերից, կարծես վարդի բուրմունք է, որ պարարում է մար-
դու հոտոտելիքը. աւելի շատ գոհ, ինքնաբաւական ու համեստ
վայելքի տրամագրութիւն, քան բողոքող, դժգոհ ու լացկան սի-
րային յարաբերութիւններ: Սրանից ի հարկէ չի հետեւում, որ
բանաստեղծն իր կեանքում սիրոյ մէջ բախտաւոր է եղել, գուցէ
և եղել է, այլ այն, որ նրա բնաւորութեան հիմնական գծերից
մէկն է՝ չափաւորութիւնը, համեստութիւնը: Նա իր բախտից
տրտնջալուց աւելի երգում է իր մեղմիկ ու ներդաշնակ ձայնով
կոյսի հետ ունեցած համեստ վայելքն ու զբօսանքը. կարդացէք,
օրինակ, նրա լաւագոյն ոտանաւորներից մէկը. «Ճեմք ի լեառն
հսկային», որի առաջին տունը միայն կարտագրենք ստորեւ.

Ծովըն ցոլայր և ծըփծըփայր,
Սուրայր ակատն ի մէջ ալեաց.
Հոփն հեզաթօիչ երթայր և զայր
Վազվըրտելով ամեն դիաց.
Բացէք հաճոյք փափուկ թեւեր
Տարէք ըզմեզ բըլուրն ի վեր:

Այս ոտանաւորի մէջ արուեստի գեղեցկութիւնն ու զգաց-
մունքի անարատութիւնը միացած դէպի բնութիւնն ունեցած և
առ կոյսը տաժած բանաստեղծի քնքոյշ ուսմանտիկ սիրոյ հետ,
մի չքնաղ պատկեր են ներկայացնում, որի նմանը խիստ հա-
զուագիւտ է, համարեա չը կայ մեր արդի բանաստեղծների մէջ:

Կոյսի չքնաղութիւնն ու բնութեան գեղեցկութիւնը զու-
գաւորուած են բանաստեղծի ուղեղում: Գարունը իր իսկ գար-
նանային նշաններով ոչինչ է, եթէ կոյս չը կայ, և թէ նրա ծաղ-

կաւէտ դաշտերի վրայ կոյսի փափկիկ ոտիկները չեն զբօսնում, իսկ աչնանն ու տարուայ այլ եղանակներին, երբ չը կայ բնութեան գեղեցկութիւնը, կոյսն է փոխանակում զբանց:

Ձի ինչ պիտին ծաղկանց փունջեր,

Յորժամ նրա ալտերն հայիս,

Այլ ինչ պիտին վարդի հոտեր,

Յորժամ նորա մօտ գըտնելիս:

Այս քառասուղը իր անպաճոյճ նկարագրով բնորոշում է կոյսի գեղեցկութիւնը և դրա հետ միասին կոյսի ու բնութեան յարաբերութիւնը:

Կոյսի հետ անցկացրած ուրախ ու երջանկավայել ժամերը խոր արմատ են ձգել բանաստեղծի սրտում. նա իր ցաւոյ անկողնում պառկած հրատուչոր կարօտն ու յետին ողջոյնն է ուղարկում կոյսին, դիմելով նրան.

...Թող տուր յետին և այս նուազ

Հայիլ ի քեզ, պըշնող ի դէմսդ և աշերոյդ լուդիլ ի լոյս.

Ի քոյդ խոսուպս դնալ ծածան, որպէս և յայտիցդ ի վալը

Յետոյ մեկնիլ ի նոցունց, սրտակաւոր մեկնիլ ի քէն,

Ըզպսակն երջանկութեան իմոյ առ ոտըս քո եղեալ

Ձոր ի քնքոյշ ձեռանէդ և ի զըթոյդ ես ընկալայ

Ձոր պահեցի սըրտիս կրակով, ցօղով աչացս ոռօգեցի,

Եւ արդ թափուր լետ ի գեղուն և լուսափթիթ կալ ի թերթիցն:

Մահու ժանտ երևան ու անդնդափոս գերեզմանն անզօր են դուրս կորզել բանաստեղծի հոգույ կոյսի մշտափթիթ յիշատակը. յաւիտենից խորութիւնները չը կարողացան նրան կոյսից անջատել. երբ նա երիտասարդ հասակում ընկաւ, թուաւ նրա կենաց արևը, նրան ստուերներին, մոռացութեան և մոայլի աշխարհն իջեցրին, նրանից միշտ անխզելի էր կոյսի սէրը:

Եւ ահա կոյսի այդ սէրն է, որ շունչ ու կենդանութիւն է տուել Պէշիկթաշլեանի լաւագոյն ստանաւորներին մի քանիսին, ինչպիսիներն են՝ Երգ, Գնացէք իմ տաղը, Առ Նէ, Ճեմք ի լեռան հսկային և այլն:

III

Պէշիկթաշլեանի դէպի բնութիւնն ունեցած սէրը աւելի խտանում և խորանում է, երբ նա աչքի առաջ է բերում Հաստանի բնութիւնը, Հայոց աշխարհը, իր պապերի որբանը. և ահա այդտեղից նրա կրկերը այլ գոյն են ստանում, ուրիշ երանգով ներկւում, դրանք քնքոյշ և մեղմիկ կերպով Հայոց աշխարհի դաւն ու վիշտն են լալիս, բանաստեղծի սրտի կարօտն

ու մորմաբը, հայրենեաց համար ունեցած նրա անձուկը, նա երգում է և երգելիս՝ լալիս, ու լայ լինելիս՝ մխիթարւում է, երեւակայութեամբ ստեղծելով տիպեր, որոնք պէտք է Հայոց աշխարհը ցանկալի նպատակին հասցնեն:

Իր տաղերից երեւում է, որ Պէշիկթաշեան Դուրեանի նման Հայաստան ոտք չէ կոխել, նրա հոգին թռչում է շարունակ իր հայրենի աշխարհը, ցանկալի Հայաստանը, և այդ տենչըն աւելի զօրեղանում է գարնան ժամանակ, երբ դառնաշունչ ձմեռուանից յետոյ բնութիւնը նորոգ զարդարւում, գեղածիծաղ գարունը գալիս է իր բոլոր թարմացուցիչ նշաններով ու հով ու զով սփռում ամեն կողմ, ահա այդպիսի բոպէին բանաստեղծը ցանկանում է հայրենիք դառնալ, առոչինչ հաշուելով Հելուեան գուարթ դաշտավայրքը և չքնադագեղ Իտալիոյ պայծառ երկիրքը, նա գիտէ, որ Հայաստանի բնութիւնը ինչքան էլ որ գեղեցիկ ու գրաւիչ է, դարձեալ սղաւոր ու տխրատեսիլ է, բայց էլի առ հայրենիքն ունեցած սիրոյ զգացմունքից երգում է մելամաղձիկ.

Թէպէտ թռչնիկն ու հովն հալոց
Աւերակաց շրջին վրայ,
Թէպէտ սղտոր վրտակն հալոց
Նոճիներու մէջ կը սողալ,
Նոքա հառաչք են հայրենեաց
Նոքա չերթան սըրտէս ի բաց:

Վերջին շունչը նա կուզէ հայրենիքում աւանդել.

Գայեցն աւուրք, ուր մանկութեան
Անկցի դիոյս իմ գեղ գալար
Եւ լինէն խոյս տացեն վալելք
Նենաց թեթև ի գարշապար,
Ուր հէգ Մուսայս մատն ի լերեր
Մոռանալցէ երգել ըզսէր
Ըղնինջ ի ծոցդ առնում յայնժամ
Ով ցանկալիդ իմ Հայաստան:

Սա առ հայրենիքն, առ սուանդական պատմական երկիրն ունեցած բնական, նոյն-իսկ բնադդական սէրն է, որ որոշ չափով ամեն մարդու մէջ կայ: Սակայն Պէշիկթաշեան բարձրանում է այդ պրոգայիկ, սովորական մակերեւոյթից և նայում է բարոյական ու մտաւոր տեսակէտից իր հայրենիքի վրայ: Նրա աչքի առաջ կենդանի է Հայոց աշխարհի անկեալ ու թշուառ դրութիւնը,

Շատ դարերու ցաւերով
Տրտում տխուր ողբական
Ի գերեզմանս նստելով
Արցունք թափէ Հայաստան:

Բանաստեղծի ցան աւելի շատանում է, նրա կարեկցութիւնը խորանում է աւելի, երբ մտաբերում է մեր աշխարհի անցեալը, Բայց Պէշիկթաշլեան լայկան բանաստեղծներից չէ, որոնք, յոյս ու ապաւէն կորցրած, շարունակ հնչեցնում են իրանց մօնոտոն քնարը։ Սա ընդհակառակը կեսնք ու կենդանութիւն է բերում իր հետ, ցանկալի փրկարար ապագայի հեռանկարն է պատկերացնում և միջոցներ առաջարկում նրան դիմելու։ Նա ուրախանում է և հոգեպէս հրճւում, երբ տեսնում է հայ աշակերտուհիների առաջադիմութիւնը, երբ հայ օրիորդը հրկարատեւ քնից և աւանդական սովորութիւնից դուրս է գալիս և վարժարան քայլելով-հայոց տպագայ յուսոյ ժպիտն ու վարդը դառնում։ Բանաստեղծը պատրաստ է սրտառուչ կերպով երգել «գլխարձ բախտին և լուսոյ» և մեծավարի յորդոր է կարգում՝ անգին իմաստութեան ու գիտութեան ծաղկաւէտ վնջի հետ միասին՝ մի փունջ էլ կապել «պարկեշտագեղ բարոյից»։ և գիտութիւնն ու բարոյականը, զտած միտքն ու ազնիւ սիրտը միասնաբար կարող են հայոց սգապատ սարերի կատարներին բառնալ խաւարի ու սգի ծածկոյթը և այն ժամանակ։

Դադրին նուագը ողբերգու,
Սրբէ արցունքն Հայաստան,
Զի յոյս գտարթ օրերու
Սղջկունք հայոց իրան տան.
Ո կոչս, իրան մօտեցէք
Ու թագն իր գլուխը դրէք։

Իսկ այն աղու, մեղրանոյշ և հանրածանօթ երկտողը—

Ընդ աստեղօք ինչ կայ սիրուն
Դան զանձկալի եղբայր անուն,

—այն վսեմ ու իդէալական բարձր իրականութիւն ունեցող «եղբայր եմք մեք» նշանաբանը, միթէ միակ և գլխաւոր պայմանը չէ ամենայն բարեփոխութեանց ու մեծամեծ ձեռնարկութեանց։

Պօէտի զգայուն հոգին չի կարող տանել իր իսկ ազգի մէջ երկպառակութիւններ. հայը հայի դէմ սխ ու քէն ունի, հայ կաթողիկէ առեւտրութեամբ լցուած է գէպի իր ազգակից հայ լուսաւորչականը և ընդհակառակը. ընկերական միացեալ ոյժը չը կայ մէջ տեղում. չը կայ միահամուռ աշխատանք, յոյս ու բերկրանք. նրանց չէ կապում ոչ ուրախութիւն, ոչ վիշտ, որովհետեւ չը կայ ընդհանուր բարիք ու բոլորի համար միատեսակ նշանակութիւն ունեցող ընդհանուր շահերին դիպչող չարիք. եղբայրութեան վեհ գաղափարը նրանք չեն հասկանում և մեր բանաստեղծը զգացուած ու քնքոյշ տոնով դիմում է հային.

Տուր ինձ քո ձեռք, եղբայր եմք մեք,
Որ մրկաւ էինք զատուած,
Բախտին ամեն ոխ չարանենդ
Ի մի համբոյր ցրտին ի բաց:

Ո՛րքան գրաւիչ հեռանկար. միասին ապրել, մէկ տեղ յող-
նել, մէկ տեղ ցանկել, տանջուել ու չարչարուել, լալ ու խնդալ,
ընկերական համերաշխ հիմքերի վրայ դնել հանրակեցութիւնը,
մեր կեանքին նոր դոյն ու հաստատ զեկամարիչ սկզբունքներ
տալ. դա մի վսեմ գաղափար է, որի մասին մեզանում չատերն
են գրել, որը սակայն Պէշիկթաշլեանի նման ոչ ոք այնքան
գողտրիկ ու ազդու չէ արտայայտել: Հայոց աշխարհը պէտք ու-
նի սաստկապէս այդպիսի եղբայրութեան, որովհետեւ նրա փըր-
կութիւնը դրա մէջ է:

Երբ ալեոր Մայրն Հայաստան
Տեսնէ Ղորղիս իւր քովէ քով,
Սրտին խորունկ վերքըն դաժան
Փաղցր արտասուաց բուժին ցօղով:

Այո, աստղերի տակ եղբայր անունից աւելի անձկալի
բան չը կայ. Եղբայրութիւնն է, որի զօրութեամբ բոնութեան
չղթաններ են կոտորատուում, խաւարի ձմերային սառոյցը հալուում
և երկնային անապակ վճիտ վտակը ճանապարհ է ստանում՝ հո-
սել մարդկանց միջով՝ ցանկելով աջ ու ձախ երկնառաւջ բարիք-
ներ: Եղբայրութիւնը, մանաւանդ մեզ հայերիս համար, խիստ
զգալի է, որովհետեւ վտարանդեալ ու ցրուեալ մեր ազգը խիստ
թոյլ, դաղափարական խիստ անդօր օղակներով է շաղկապուած:
Սակայն չը նայած այդ հանգամանքին, չը պիտի վնասուենք,
բանաստեղծը կեանքի նկատմամբ յոռետես չէ: Խաւար գիշերը,
երբ գոյ է հրաշալւան երկինքը, մի գիշեր, երբ շատերի մէջ կա-
րող են ծնուել միմիայն յուսահատական խոհեր, տխուր հառա-
չանքով լի Վանայ ծխածաւալ ծովի մշտափրփուր ալեաց զիմաց
կանգնած Վանայ ծերուկը բանաստեղծի բերանով մեզ աւետիք
է կարդում:

Եւ դու, Մեհիկ, կուլա՛ս անյոյս...
Ո՛հ, ո՛չ, գնա... դայ Արշալոյս:

Եւ առհասարակ Պէշիկթաշլեանի քնարի ամեն մի դայլայ-
լիկից, նրա հոգու իւրաքանչիւր հնչիւնից բոլորովին պարզ ար-
տացօլուում է նրա այդ հանգիստ ու անխռով, և յուսացող դրու-
թիւնը: Սակայն այդ արշալոյսը, ինքն իրան չի իրականանայ.
մէջ տեղ գործ է հարկաւոր, գործ և եռանդուն, անձնուէր զո-
հաբերութիւն...

Պէշիկթաշեանի ամենագեղեցիկ ոտանաւորներէց մի քանիստում նա քաջութիւն է դրուատում: Քաջութեան տիպարը նա վերցնում է Ջէյթունի կեանքից, որ վաթսուհակաւ թուականներին այնքան հռչակուեց:

Ջէյթունի անհաւասար մաքառումը հզօր թիւքքիայի դէմ ոգեւորում է բանաստեղծին:

Ջէյթունցին կտրիճ ու անվեհեր է: Մահուան բոպէին էլ նրա սիրտն ուրախ է, «զի լուծաւ վրէժ յարեան վտակ» և իր վրայ լացող անոյշ մօրը, իր մահուան վերջին բոպէին, մխիթարում է, որ իր կեանքը Ջէյթունի համար է տուել:

Ո՛հ, հայրենիք, ի հուր ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան,

ու հոգին աւանդում է քաջագործ Ջէյթունցին իր յետին բարեւն ուղարկելով սիրելեաց, չը մոռանալով նաեւ քրիստոնէական վերջին պարտքը:

Վերջին համբոյր տամ քեզ, մայրիկ,
Հատուցանեա զայն սիրելոյս.
Վերջին անգամ գրկեմ մեր հող
Ոյր արդ կիջնամ ի ծոցն անլոյս.
Քաջ մը տնկէ վրաս ու զուն
Ուրախ լուրեր տար ի մեր տուն:

Պարզ է ու անպաճոյճ, բայց և ազդու ու տպաւորիչ քաջի թաղման պատկերը:

Ռազմական փողերի ձայնն ու մարտիկների երկար յուզարկաւոր շարքը չէ, որ ուղեկցում է քաջորդուն՝ դադաղը հողին յանձնելիս, և ինչ դադաղ, ազատասէլ քաջին չեն սեղմել ճերմակ պատանքների ու նեղ տախտակների մէջ:

Նա չետ մարտին կարծես լռեանք կուհանգէր
Ու վերարկուն կարմիր բաւէր իւր անձին:

Նրա վրայ չի կատարւում ըստ պատշաճի չքեղ թաղման կարգը, այլ քաջ տէրտէրը մի կարճ ննջեցելոյ է մրմնջում, գոփում է քաջի մահն ու օրհնում նրա արիութիւնը: Քաջի դադաղի վրայ պսակներ և չքանչաններ չը կան, հայրենեաց համար մեռնող զիւցազնի ճակատի գեղն ու պայծառ վէրքն էր, որ փայլ էր տալիս մահատիպ յուղարկաւոր խմբակին: Երբ հրացանի կոթով բացած փոսի մոայլ դուռն են իջեցնում մարմինը, փչում է ցրտաշունչ քամին, լուսինը ծածկում է իր շողերը մութ ամպերի տակ: Տապանի և արձանագրի փոխանակ մի խաչ են տնկում հողակոյտի վրայ: Քաջը մենակ է մնում իր

փառքի հետ. նա կռուելոյ Զէյթունի նեղ օրերում, արիւնը զոհ բերաւ և հանգստացաւ իր իսկ պապերի երկրում *):

Միայն զէյթունցի տղամարդը չէ, որ քաջ է, որ գիտէ կռուել ու ամեն վտանգ յանձն առնել մեծագոյն վտանգի՝ Զէյթունի տագնապի ընկերն. նրան ընկեր ու ողբերգի է կռուի դաշտում նաեւ հայ քաջունին:

Ի՞նչ է այն, որ կուրծքն սեղմէ

— Բոցանշող զրահ մի յայն.

Ի՞նչ գգուանօք նա համբուրէ.

— ձակատամուխ երկաթն է այն:

Հայունին իսկ՝ գաղան դարձած, արիւնն աչերը կոխած, գոռ ընդդիմադրութիւն է ցոյց տալիս և փառաւոր յաղթութիւն տարած, դառնում է իր յաղթական արշաւանքից.

Այդ կոյան աղւոր ուստի՞ կուգայ,

Քռուցեալ զուարթ լերանց վրան.

— Պատերազմէն նա կը գառնայ

Հերաց վրայ դափնիք շուշան:

IV

Պէշիկթաշեան վարպետ է զգացմունքն և ձեւը ներդաշնակօրէն արտայայտելու և իւրաքանչիւրին իր պատշաճը տալու մէջ. դրան ապացոյց կարելի է բերել նրա ոտանաւորներին մի քանի տներ, որտեղ պատկերանում է ընտանեկան կեանքը, յատկապէս մանկան տիպարը, որ ճշգրիտ նկարագիր է գտնուած:

Մեր բանաստեղծներից քչերն են մանուկների հետ այնպէս պարզ ու մանկական ոճով խօսելի, որպէս խօսել է Պէշիկթաշեան: Մանկական կայտուուն ու չարածճի բնաւորութիւնը նրան դուր է եկել ու նա մանկան է նուիրել, թէեւ մի եր-

*) «Թաղումն քաջորդոյն» ըստ ամենայնի գեղեցիկ ու ներդաշնակ ոտանաւորը 8 քառատող տներից է բաղկացած: Երբ թերթում էինք ՅՕՏՈՅԵ-ի «Ննդհ. գրականութեան պատմութիւն» աշխատութեան IV հատորը, անգլիական գրականութեան մասում, պատահմամբ նկատեցինք մի նման ոտանաւոր, որի սկզբի 4 տունը կատարելապէս նոյնն է այս ոտանաւորի սկզբի չորս տների հետ համեմատած: Միայն վերջին մասերը քիչ շատ զանազանում են. Պէշիկթաշեան հալացրել է: Այդ ոտանաւորի հեղինակն է անգլ. սօէտ Զարլս-Վօլֆ (1791—1829) որ նշանաւոր է հէնց այդ ոտանաւորով, որի վերնագիրն է «Թաղումն Ջօն Մուրի»: Մեանդը մի գեներալ էր անգլիական, նշանաւոր և չալտնի իր քաջութիւններով: Արդեօք ֆրանսերէն թարգմանութիւնից է փոխադրել Պէշիկթաշեանը, թէ բնագրից, մեզ չալտնի չէ: Մենք առայժմ հնարաւորութիւն չունենք իմանալու, թէ հարազատութեամբ որ ոտանաւորը նրան է պատկանում:

կու երեք, բայց գեղեցիկ ոտանաւորներ: Նա ըստ ամենայնի մտնում է մանկան դրութեան մէջ, ըմբռնում է նրանց նուազական, մեղմ ու քնքոյշ չափաւոր ու բնական⁶⁶ զգայմունքները և պարզ երեխային մատչելի ձեւով էլ արտայայտում է:

Ահա երեխան, թեթեւ մանկական վիշտը ճակատին կանգնել է. նրա սիրտը ցաւել է, նա ախուր է, որովհետեւ նրան ծւիկ ծւիկ ձայնող թռչունն այլ եւս չը կայ, լոկի և անբարբառ ընկած է ոտերի տակ: Չը կայ մշտամրմունջ ծլվան թըռչնակը, նրա սեւուկ աչիկները նուաղել են թերաքացիկ: Սակայն երեխային յատուկ ձեւով՝ մանկան վիշտը յարատեւ, կայուն չէ. նա շուտով փոխում է իր ախուր տոնը, սկսում է պատրաստութիւն տեսնել իր նազելի թռչնակին հողին յանձնելու համար: Աղօթք է անում նրա հեզ հոգու համար ու ճանապարհ է դնում Յիսուսի պարտէզը, որպէս զի այնտեղ ոսկեփետուր զարդարուած, թեւապարիկ երգով Յիսուսին զմայլեցնէ, ապա երեխայական պարզամտութեամբ աղաղակում է վաղամեռիկ թռչնակին.

Սակայն խնդրեմ, անտի դարձեալ
Ծւիկ ծւիկ ինձ ձայնիցես:

Ո՛րքան պարզ ու բնական վիշտ, սիրտինք ու սպասելիք: Ահա չարածձի փոքրիկ Գոհարիկը, որ դադար ու հանգիստ չունի և չի տալիս անեցոց և առ ոչինչ համարելով նուէրներն ու շաքարեղէնները, մանկան յատուկ քմահաճոյքով ուզում է, որ բոլորն էլ իր հետ խաղան ու գրաղուին:

Առհասարակ փոքրիկ մանուկը միշտ դուր է դալիս մեծերին իր վարդադոյն շրթունքներով, կարմրիկ թչիկներով, քաղցրազրուցիկ ժպտով, փափկիկ թաթիկով ու ձիւնափայլ պարանոցով, հրաշագեղ գոհար աչերով, վերջապէս իր մարմնի ու հոգու երկնային գեղով և նրանով, որ նա երեխայ է: Աշխոյժ Գոհարիկը.

Երբ որ իջնայ պարտէզիկ
Քաղել զվարդ կամ յաամիկ.
Դու չես կրնար որոշել
Ո՞վ է վարդ, ո՞վ Գոհարիկ:

Կամ՝

Երբ որ թռչուն ճըճըւայ,
Երբ որ վառեակ կրակըտայ
Դու չես գիտեր թռչունն
Չէ՛ նէ Գոհար, որ ձայն տայ:

Ընտանեկան խաղաղ և հանգիստ կեանքը գրաւում է մեր հեզիկ բանաստեղծին: Նա ուրախանում է ընտանիքի զարդ և-

րեխայով, նրա հետ մէկ տեղ խաղ է անում ու նրա զգայմունքի թարգման հանդիսանում իր ոտանաւորների մէջ: Եթէ երեխան կարողանար ոտանաւորներ գրել, նա, երեւի, իրան՝ Պէշիկթաշլեանից աւելի լաւ չէր նկարագրի:

V

Բանաստեղծի մէջ եղած ներքին հոգեկան ոյժն ու կարողութիւնը պարզօրէն երեւան է դալիս, երբ պօէսը հանդերձեալ կեանքի հանդիման է կանգնում: Իւրաքանչիւր քնարական բանաստեղծ երգում է իր քնարի տխուր լարերով մարդկանց համար անխուսափելի պատուհասը, կամ թերեւս բարեքը, բոլորիս ճակատագրական վերջը՝ մահը: Մահն ինքն ըստ ինքեան մի բնորոշ զէպք է տխրութեան և վշտի. դա խոր ցաւի մէջ է ձգում մեռնողի ազգականներին ու սիրելիներին: Եւ քանի երիտասարդ ու արժանաւոր է մեռնողը, քանի նրա շրջապատողները զեւ շատ բան են սպասում նրանից, այնքան աւելի զգալի է լինում նրա կորուստը, այնքան աւելի խոր թողած վիշտը: Քնարական իւրաքանչիւր բանաստեղծ երգել է մահը, մէկը յուսահատ, սրտակտոր հեծեծանքով ամենամեծ չարիքն է համարել մահը մարդկանց համար, չի ուղեցւել բաժանուել իր սիրած և իրան սիրող աշխարհից—դա լաւատես պօէսն է, մի ուրիշը իր տանջանքների ու վշտերի մի հատիկ հանգստարանն համարում է ցուրտ ու խոնաւ շիրիմը, ուր պէտք է դադրին նրա ցաւերը և նա յաւիտենական անհունութեան մէջ պէտք է կորչի, փռչիւնայ—դա յուսահատուած բանաստեղծն է: Մի երրորդը զրանց միջին ճանապարհն է բռնում կեանքի և մահուան նկատմամբ, սա զոհ է իր վիճակից, հանդիստ և խաղաղ, թէեւ դժուարութիւններն ու բախտի անհամութիւնները սրա գլխից եւս անպակաս են, բայց սա համբերութեամբ է տանում, կեանքի վրայ քաղցր աչքով է նայում և երբ անդառնալի օրհասը գլխին կանգնի, նա չի սարսափի, չի սրտնեղի, այլ խաղաղ ու անվերգով, ինչպէս ապրել էր, այնպէս էլ հոգին կը փչէ՝ թեւակոխելով անյայտութեան շեմքը:

Այս բանաստեղծներից իւրաքանչիւրի մահուան վրայ ունեցած հայեացքից երեւում է նրա հոգու ընդհանուր տրամադրութիւնն ու նրանց բանաստեղծական երկերի գոեմաւորումը: Եթէ նայենք Պէշիկթաշլեանի այս կարգի ոտանաւորների վրայ, հեշտութեամբ կը տեսնենք, որ նա երրորդ կարգին է պատկանում: Այստեղ եւս նրա քնարի ընդհանուր յատկութիւնը գերիշխող է. Պէշիկթաշլեան, որ բաւական ազգու նկարագրել գի-

տէ արտաքին, դրսի աշխարհի երեւոյթները, որ իր բարեկամի մահուան առթիւ նշմարում է ծովի ու հովի սուգն ու բացականչում:

Աւա՞ղ, տեսէք, սուգ առաւ ծով,
Ձինքը տանող դարձաւ հովիկ.
Քեկերն կախ կը փէ՛ն տրտում—
Ի՞նչ լուր բերիր մեզի հովիկ.

որ տեսնում է երկնի անթիւ աստղերի անոյշ ցօղակ լայը և սգաւոր սոխակի աղեկէզիկ հառաչանքները, որ թափանցում է ծովի խորքը և լսում է գիտախօիւ յաւերժահարմաների սրտակոտոր լացը—այդ բանասանդծը չը գիտէ այդպիսի դրդող և ազդու բոպէին իր զգացմունքները գիշել, խոր վշտակցութիւն արտայայտել. նա միշտ չափաւոր ու զսպուած է:

Մահուան մասին ունեցած նրա գաղափարը և օրհասի նկատմամբ յայտնած նրա մտքերը ուսելի սլարզ զգալի են իր մասին գրած տողերի մէջ: Մահուան անկողնում ընկած, մահկանացուն յատուկ մտածողութեամբ, նա սին ու փուռ է ահուանում իր անցկացրած կեանքը.

Ողջամբ մնացէք. ոսկեակ, անուրջք, լուսատեսիլ երեւոյթք,
Որ այնքան բոցր և աչնքան զարդս ամիք աւուրց իմ գեղաշուք
Սիրուն մոլորութիւնք, մեղըր անոյշ և մահածու
Արբեցութիւն, որոյ զրկումն աղետաբեր է սրտի:

Նա այժմ զգում է, որ իր զուարթ ու ժպտուն կեանքը լոկ երեւոյթ էր, իսկականի կեղեւը. իսկականը նոր է սկսւում նրա համար՝ գերեզմանի չեմքից. նա պատրաստ է արդէն խաղաղ և անդորր ականգել իր հոգին. անվեհեր հոգով ընդառաջում է մահուան և սիրած հովիկին խնդրում, որ չը մոռանայ իր գերեզմանը: Նա Դուրեանի նման համոզուած է, որ մահից յետոյ նա այլ եւս չի խաբուելու:

Դիմեմ յուշիկ ի գերեզման, այն հանգստոց զիս ոչ խաբէ.
և ապա աւելադնում է.

Հանգեացց և ես դոհ, անտրտում, դէթ աստանոր չեմ անոքիկ:

«Դոհ, անտրտում» խօսքերը շատ բնորոշ են սրա համար. հանգիստ ապրել է, առանց մեծամեծ յոյզերի, առանց արտակարգ զեղումների և այժմ էլ դոհ և անտրտում հանգստանոց է դիմում.—Ապա մի նայենք Դուրեանի մահամբնձ գրած վերջին տողերին և իսկոյն պարզօրէն աչքի կ'ընկնի Պէշիկթաշեանի առանձնայատուկութիւնը: Նա երիտասարդական բուռն կրակի բորբոքումն է, որ լաւայի նման դուրս է ժայթքում ռոտով-գլխով բանաստեղծ Դուրեանի հրաբխային կրճքից, դա խօսքի և մտքի գոռ բողոքն է, ըմբոստ ոգին, որ մահուան անյուսուլթկան դի-

մայ ինքնամուտայ դրութեամբ կայծակներ է տեղում անյայտ էակի գլխին. դա վերջին ծայր յուսահատութեան հասած խռովարար սրտի աղեկտուր, հոգեմաշ հառաչանքն է, զօրեղ բողոք, յափշտակուած սպառնալիք՝

Իսկ թէ կորնչի պիտի իմ հուսկ շունչ
Հոս մառախուղի մէջ համր անշրշունչ,
Այժմէն թող որ շանթ մը ըլլամ զարկահար
Պըլշուիմ անուանդ, մռնչեմ անդադար,
Թող անէժք մըլլամ ու կողդ խըրեմ
Թող յորջորջեմ քեզ ձեռնառած ռիսերիմ:

Իսկ Պէշիկթաշեան լուռ ցաւեր ու լուռ գերեզման է խնդրումս նա կրակոտ ու բուռն, սա հանգիստ ու մեղմ, նա բողոքաւոր ու ըմբոստ, սա դո՛ւ ու համեստ. նա հրաբուխ ու հեղեղ, սա պարզօրակ վճիռ վտակ: Մահը չի սարսեցնում սրան, սա Դուրեանի նման սարսափած չի հեծկտում:

Ի՞նչ, երազ է վերջ գրկել ցուրտ շիրիմ...

Այլ կարծէք գլուխը կախ ձգած խոնարհ ու հեղ կերպով մրմընջում է.

Հանգեայց և ես դո՛ւ, անտրտում:

Ցանկալի էր իմանալ, թէ եղբայրութեան այդ հեղիկ երգիչը, որ երբեմն տակ է. «Ես լաւ կը համարեմ զրկուած ու չքաւոր մեռնել և իմ բարեկամայ յարգանքը հետս գերեզման տանել, քան թէ որ և ի՞նչ ծանօթի վիրաւորական մի գէպք պատճառած լինեմ,—լինչպէս է մեռել, ինչպէս տարել մահուան տանջանքն ու ինչ մտքերով բաժանուել, ցրուել յաւիտենականութեան մէջ. ցանկալի էր տեսնել նրա անշուք շիրիմը զարնան ժամանակ, երբ ամբողջ բնութիւնը ճշտօրէն համադատատախանում է բանաստեղծի հոգուն և տրամադրութեանը, քանի որ երգչի հոգին ամբողջապէս մի գարուն էր: Անշուշտ գարնանը այդ անշուք շիրիմն աւելի ևս զարգարւում է. սոխակի քնքոյշ դայլայիկները, ծիծեռնակի գեղգեղանքը, սնոյշ հովիկի մեղմիկ սոսափիւնը, նոճիների թեթեւակի հովը, ծաղիկների բոյրը,—այդ բոլորն ի տես կ'երթան իրանց երգչին. բայց աւսօղ, պակասում է ինքը, երգիչը, չըջակայ բնութեան շունչ ու լեզու տուողը: Բայց ո՛չ, նրա հոգին թռթռում է գերեզմանի շուրջը և շատերին գեռ պատմում է նրա սիրելի գեփիւռի տատանմանց, մշտամրմոնջ սոխակի մեղմիկ քնքշոյի, մեղրանոյշ թռչնակի դայլայիկի միջով բանաստեղծի սիրող սրտի ցաւոտ ու դարդոտ մարդու բազմամիտ պատմութիւնը: Նրա անունը չի սահմանափակում անշուք շիրիմը չըջանակի մէջ. դուրս է և

կել ու ծաւայուել և քանի հայերս պարապենք մեր տնայեալով, քանի հետաքրքրուենք մեր գրականութեամբ, այնքան աւելի կ'ընդլայնուի թէ Պէշիկթաշեանի և թէ շատերի անյայտ կամ քիչ յայտնի անունն ու հռչակը:

Սրանով մենք վերջացնում ենք Մ. Պէշիկթաշեանի ոտանաւորների մէջ արտայայտուած գաղափարների, զգացմունքների, նրա պօէզիայի առանձնայատկութիւնների վերլուծումը. մեզ մնում է տեսնել, թէ Պէշիկթաշեան իր գաղափարներն ու իր սրտի մեղմիկ տաղերը ինչպէս է արտայայտել, ինչ ծածկոյթով է պարփակել, այլապէս ինչ արուեստ ու ճարտարութիւն ունի, որպէս բանաստեղծ, որքան ներդաշնակ է նրա ոճը, որքան սահուն լեզուն, որքան պարզ ոտանաւորը, որքան հարուստ ու քաղմագան չափը:

VI

Արտաքին ձեւի մասին ընդհանրապէս պէտք է ասել, որ Պէշիկթաշեան մեր արեւելահայ բոլոր բանաստեղծներից բարձր է իր բանաստեղծական արուեստով ու ճարտարութեամբ, իսկ արեւմտեան՝ պօլսահայ բանաստեղծների համար կարելի է ասել սովորական բան է վայելուչ ձև ու գրաւիչ արուեստ բանեցնելը:

Պէշիկթաշեան, ինչպէս յայտնի է, գրել է թէ գրաբար և թէ աշխարհաբար ոտանաւորներ և սխալ կը լինէր միայն աշխարհաբար ոտանաւորների վրայ խօսել, իբրև Պէշիկթաշեանի տաղանդի բնորոշ արտայայտութիւնների վրայ. որովհետև վրաստան կարելի է պնդել, որ այդ ճկուն բանաստեղծը ազատօրէն օգտուելով գրաբարի գանձերից, տուել է հին, կլասիկ լեզուով ոչ պակաս հմայիչ ու գեղեցիկ ոտանաւորներ: Նրա «Գիշերը», «Քնարն ու Շիրիմը», «Գնացէք իմ տաղք»-ը, «Վերագարձը»... զգացմունք արտայայտելու, ձեւի և եղանակի կողմից ոչնչով յետ չեն մնում «Աշունից», «Առ գեփիւռն Ալեմտաղի», «Ճեմքի լեռն հսկային»... ոտանաւորներից:

Սակայն ինդիրն այն է, որ Պէշիկթաշեան զուտ աշխարհաբար, իրանց գրական մտքուր բարբառով ոչ մի ոտանաւոր չունի. նա այնքան ընտելացել է գրաբարին, նրա միաբն ու գրիչը գրաբարի վրայ այնքան վարժուել ու աշխատել են, որ առանց մի չնչին դժուարութեան նա գրում է հնադաժ լեզուով ամենայն հեշտութեամբ սիրուն ոտանաւորներ և իր աշխարհաբար գեղեցկագոյն երկերի մէջ խառնում է գրաբար տողեր:

Պէշիկթաշեանի լեզուն խայտաճամուկ է այդ կողմից, բայց շատ հարուստ ու ձկուն: Նա գիտէ ճարպիկութեամբ օգտուել լեզուից և ընթերցողի պաշար դարձնել շատ բառեր:

Պէշիկթաշեանի քերականութիւնն համարեա բացառապէս գրաբարի վրայ է յենուած, չափուած ու ձեւած. խոնարհումներն ու հոլովումները բազմիցս գրաբարի ձեւով են կատարուած. ածականների և գոյականների դասաւորութիւնը, ոչ սովորական ենթակաների և զրանց ստորոգեալների յարաբերութիւնները, նախդիրներով գոյականները—ամբողջապէս գրաբարի տարազն են հագել: Բերենք մի տուն, որի մէջ կարել է տեսնել մեր վերոյիշեալ ասածները.

Հուր հեր արփուցն կըծաւայի
Ի դաշտ չարօտ գեղածըպիտ,
Ծովըն ի չերկինըս կըզմայլի
Երկինք ի ծով ծիծաղախիտ,
Բացէք հաճոյք փափուկ թևեր
Տարէք զմեզ բըլուրն ի վեր:

Պէշիկթաշեանի ոտանաւորն ազատ է խրթին, դժուարիմանալի և մութ դարձուածքներից, բանաստեղծական ոլոր մոլոր, մանուածապատ շրջումներից: Ինչ վերաբերում է չափին և բանաստեղծական արուեստին, պէտք է ասել, որ սա վարպետ է բառիս իսկական իմաստով: Նա կարողանում է տեղն եկած պահին զգացմունքին պատեն չափ գտնել և բազմազան չափն ու ոտերի, բանաստեղծական նախադասութիւնների կանոնաւոր երաժշտական անդամահատութիւնը միանալով լեզուի ձկնութեան ու իմաստի, զգացմունքի վայելչութեան հետ—ունկնդրի լսելիքն են պարարում իրանց քնքոյշ և սահուն ներդաշնակութեամբ, չափաւոր ու արուեստաւոր ուրիշմերով, լի և հնչունաւոր յանգերով:

Եթէ ուրախ զբօսանքի, բաւականութեան ու վայելքի զգացումն է արտայայտել յանկանում, կամ սրտի խոր ծալքերի սիրային տենչերն ու յոյզերն անհունութեան զիրկը նետել—գրում է թեթեւ ու սահուն, կարճ և կոկիկ տողեր:

Եթէ մահուան ստուերների ազդեցութեան տակ կամ 'ըրանց ժանգ գերանդուն ուղղած տողեր է գրում—գուրս են գալիս թունդ վիսական, երկայն ու հանգիստ, միապաղաղ, հաւասար չափեր: Եթէ երևիւմների հետ է խօսում, մէջ է բերում թոթռուն, շարժուն, կենդանի և խայտաբղետ շարքեր. և ամեն անգամ այդպէս գրուած իւրաքանչիւր ոտանաւորի մէջ զգացմունքն ու ստղաչափութիւնը միառախնուելով տալիս են զօրեղ ներդաշնակութիւն և զրանց հետ միանալով ընտրովի և

հնչիւնայարմար բառեր՝ առաջ են բերում երբեմնապէս ուղղակի երաժշտութիւն, մուզիկա:

Կարդացէք, օրինակի համար, «Ճեմք ի լեան հսկային» կամ «Առ Գոհարիկ» կամ «Երգ առ մանկին»:

Երբ որ թռչուն ճըճրալ

Երբ որ վառեակ կըտկըտալ...

Կամ՝

Եկու պըտիկ, եկու բըղիկ

Այ կը պօռաս, ինչու մընդիկ

Վախ իմ աղջիկ վախ բըղբըղիկ

Առ մէկ պաշիկ, կեցիր լըռիկ:

Պէշիկթաշլեան գիտէ բազմազան չափի դորժածել սկսած հայրական 16 վանկանի—չորս հատածով չափից մինչև 5—6 վանկանի ոտանաւորները: Սակայն սրա տաղերի մէջ տիրող և արտայայտիչ չափն է 8 վանկանի ստանաւորը, ինչպէս և երգերի մէջ՝ 7 վանկանին:

Տաղաչափական հաշիւները մէջ Պէշիկթաշլեան հմուտ է: Քիչ կը դանէք նրա տաղերի մէջ այնպիսի տներ, որոնց մէջ չափն ու հատածները, շեշտի տեղն ու ցէղութայի բաժանումները խանգարուած լինեն: Տաղաչափութեան, արուեստի կողմից մեղանում խիստ հաղուապիւտ են այսպիսի տղեր:

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ

Թէ երգ թռչին սիրողարար:

Մատունք կուտին ամենազեղ

Թէ որ զարնին փափուկ քննար:

Ձունին մի ձայն այնքան սիրուն,

Քան զանձկալի եղբայր անուն:

Յանգերի սրալիսութեան և դասաւորութեան կողմից ևս Պիշիկթաշլեանի ոտանաւորն աչքի ընկնող է: Յանգերի զօրեղութիւնն ու շեշտը առանձին ոյժ են տալիս խօսքին ու տըպաւորիչ դարձնում թէ մտքի, յիշողութեան և թէ խողութեան վայելչութեան համար:

Այնպիսի լիահնչիւն յանգեր, ինչպիսիներն են.

դաստակերտ

հրեշտակի

տրտատուք

աշակերտ

շեշտակի

տրտմատուգ

մանուշակին

գեփիւտ

տեսարան

ցօլագին

լափիւռ

զրօռարան

Կամ այսպիսի տներ՝

Քու սիրատարի կտրիչ Արտակ

Տխուր երգեց, ո՛հ աչա գիշեր:

Սէրն էր երգոց իմ նըպաստակ

Բացք Թուրքմաշ զաղէտան լիշէր:

Հաղուապիւտ չեն Պէշիկթաշլեանի տաղերի մէջ:

Բանաստեղծի գործածած պատկերները^{*)} մէջ, յաճախ պատահում են նմանութիւններ՝ մեծ մասամբ բնութիւնից վերջրած և հոմերական համեմատութիւնների բնաւորութիւն են կրում. այսինքն նմանութեան առաջին մասը համարեա նոյնքան և աւելի շատ երկար է, քան երկրորդը և այդ՝ առաւելապէս երկար տողերի մէջ:

Վերջապէս մեր խօսքը, մեզ մնում է ցանկալ, որ մեր ուսահայ բանաստեղծները, որոնք երբեմն գաղափարի կողմից շատ առաջ են, մի փոքր ուշք դարձնէին բանաստեղծական արուեստի վրայ, ուսումնասիրէին նաև ոտանաւորի արտաքին հանգամանքները և մշակէին իրանց լեզուն, ոճը և խմանային ամեն բան տեղին գործ ածել, ինչպէս այդ անում էր Պէշիկթաշլեան:

Գ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

^{*)} Պէշիկթաշլեանի պատկերաւորութիւնը աշխատել ենք ներկալ ուսումնասիրութեան մէջ ղուգրնի՛ացարար զուրա բերել:

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

35) 604.2. ԱՐԱՐԱՋԵԱՆ. Մայրենի լեզու. Ա. տարի (Երկրորդ, փոփոխած և լրացրած տպագրութիւն)։ Նոյնը Բ. տարի։

Տասնեակ տարիներից ի վեր ընդհանուր մանկավարժութեան մէջ կազմուել է մի որոշ ծրագիր մայրենի լեզուի դասագրքերի համար։

Ինչպէս ծրագիրը, նոյնպէս էլ նիւթը շարունակ կրկնուել են, ի հարկէ փոփոխութիւններով, սակայն այդ փոփոխութիւնները չափ չնչին են եղել։ Այս իմ ասածը ստուգելու համար բաւական է նոյն-իսկ մի անգամ աչքի անցնել պ. Արաբաջեանի դասագիրքը. հեղինակը ոչինչ իւրը չունի նրա մէջ, ամեն ինչ օտարին է՝ թէ ծրագիրը և թէ բովանդակութիւնը։

Դասագիրքը իր ճակատին գրած ունի՝ «Մայրենի լեզու», այդ նշանակում է, թէ նա յատկացուած է հայ մանուկների ուսուցման համար. հայ մանուկը պէտք է գտնէ այդ գրքի մէջ իր մայրենին, այն ամենը, ինչ որ նրան չըջապատում է առօրեայ կեանքում, ապա և սիրելի է նրա սրտին. այդ դասագիրքը լինելու է նրան մայրենի, թէ լեզուով և թէ բովանդակութիւնով։ Մանուկը պէտք է զարգանայ իր ազգային տարրերի ազդեցութեան տակ և օգնութեամբ։ Այս պարզ ակտիւման կրկնում է իւրաքանչիւր գրքի մէջ, որ նուիրուած է մանուկների կրթութեան խնդրին։ Ներկայումս ամեն մի մանկավարժ հաստատ համոզուած է, որ միայն այն կրթութիւնն է բացիո՞նալ, որը աչքի առաջ է առել իր օրեկտի առանձնայատկութիւնները իբրեւ որոշ ազգի։ Մի երեխայ, որ զարգացել է օտար պայմանների մէջ, նման է այն ծաղկին, որը պոկել են մայրենի տեղից և տարել տնկել օտար հողի վրայ։

Բացէք պ. Արաբաջեանի դասագիրքը. ասացէք խնդրեմ, մայրենի ինչ կայ նրա մէջ. ոչինչ, կամ համարեա ոչինչ։

Ահա «Ծոյլ աշակերտը», «Ջանասէր մանուկը», «Եղբայրները», «Որդիական սէրը», «Հրաշալի խոտը» և այլն և այլն... Հայկական ոչինչ չը կայ դրանց մէջ: Մի «Հասօյի երգը», մի «Ծիծեռնակի յիշողութիւնը» և էլի մի երկուսը չեն կարող պ. Ա. գիրքը դարձնել «Մայրենի լեզու»:

Ա. տարուայ բ. տպագրութիւնը համարեա նոյնն է, ինչ որ առաջին տպագրութեանը. նկատելի փոփոխութիւններ է կրել այբուբենական մասը՝ դասերի յաջորդականութիւնը ուրիշ է, աւելացրած է գրչադիրը, դասի սկզբի բառերը վանկ-վանկ են տպուած. ընդհանրապէս զգալի է, որ հեղինակը աշխատել է բարեփոխել իր գործը: Բ. չրջանը (այբուբենարանից յետոյ), մեր կարծիքով, չափազանց ընդարձակ է, նրան կարելի էր համարեա կիսով չափ կրճատել առանց մէկ զգալի վնաս հասցնելու ուսուցման կանոնաւոր ընթացքին:

Դասագրքի մէջ պատահում ենք այսպիսի յօդուածների. «Դասատուն», «Կարասիներ», «Ուտելիք և խմելիք», «Գոյներ», «Մեր սենեակը», «Ընտանի և վայրենի կենդանիներ»... Եթէ նպատակն է ծանօթացնել աշակերտներին այդ յօդուածներով բնական գիտութիւնների տարերքի հետ, դա վաղաժամ է՝ հէնց առաջին տարուայ երկրորդ կիսից նման դժուարամարս նիւթ մատակարարել մանուկներին: Իսկ եթէ այդ յօդուածները նպատակ ունեն ծանօթացնել լեզուի հետ, կարելի էր նոյն նպատակին հասնել առակների, հէքիաթների միջոցով էլ:

Մի ժամանակ մանկավարժական աշխարհում սաստիկ յափշտակութիւն էր նկատուում զէպի, այսպէս ասած, առարկայական դասերը. նկատողական ուսումը հռչակուեց անկախ առարկայ, իբրեւ նախադուռն բնական գիտութիւնների, կազմուեցան բազմաթիւ դասագրքեր, ձեռնարկներ այդ «առարկայից»: Սակայն այժմ նա զրկուած է արդէն իր նախկին փառքից ու պատուից, ընդարձակ քննական գրականութիւնը պարզ ցոյց տուեց նրա աննպատակայարմարութիւնը և այժմ նա լոկ մանկավարժական «միջոց» է, բայց ոչ «նպատակ»: Ի հարկէ, ցանկալի է որ աշակերտները զանազանն առարկաների խմբեր՝ գործիքներ, կարասիներ, խաղալիքներ, ճանաչեն վայրենի և ընտանի կենդանիներ, իմանան առարկաների գոյները, յատկութիւնները... Բայց այս ամենը ոչ թէ չոր ու ցամաք, գիտնականօրէն կազմուած յօդուածի օժանդակութեամբ, այլ կենդանի խօսակցութեան միջոցով, նոյն-իսկ դասի ընթացքում, ի միջի այլոց:

Անցնենք բ. տարուայ դասագրքին:

Սրա նիւթն էլ նոյն տառնեակ անգամներ արտատպուած

հնամաշ բարոյախօսական առակներն են ու պատմութեանը: Ինչ ընդ մէջ յօդուածների հետ գեանդուած են գրաւոր վարժութիւններ, որոնց միջոցով աշակերտը ծանօթանում է միջանի ուղղագրական ու քերականական կանոնների հետ:

Մարդ ակամայ ձեռներն է վար գցում, երբ տեսնում է այս դասագրքի մէջ 10—15 ուղղագրութիւն միասին գործածուած: Եւ այսպիսի մի ձեռնարկի օգնութեամբ նոր սերունդը պէտք է հայերէն սովորէ:

Թարգմանութիւնները շատ թերի են կատարուած. օրինակ՝ «Գիւղի դրագէտը»: մարդ զժուարութիւնով է կարողանում ճանաչել սրա իսկականը (Грамотѣй, Волеперъ-ի դասագրքից), այնքան անճոռնի է թարգմանութիւնը: Բերենք մի նմուշ այ. Ա-ի զիտական բացատրութիւնների.

«Օդ եւ քամի».—«Վեր առնենք մի թղթէ պարկ, փչենք, ուղնենք նրան, իսկ յետոյ բռնեցքով խփենք. պարկն իսկոյն կը ճայթի և կը տրաքուի. դա օդն էր»:

«Քամին ու արեւը».—«Ճանապարհորդը արեւից տաքացած, հանում է վերարկուն, ծալում և կապում «թամբին».—«Ինչ թամբ է դա: Գուցէ մարդը ձիու վրայ էր նստած. բայց ձիու մասին ոչ մի խօսք չի եղած»:

Դասագիրքը բովանդակութեան կողմից աջողութեանը չէ:

Այդպիսով, «Մայրենի լեզու»-ների մէջ, ըստ իս, այնուամենայնիւ, Դ. Աղայեանցինն է փնտրել լաւագոյնը:

ՀԱԹ

36) Vital Guinet: „LA TURQUIE D'ASIE, Tom I—892 p. II—884. III—780. IV—716“. Վ. Քիլնէ. «Ասիական Թիւրքիան, 4 հատոր. 3272 երես»:

Դժուար է ցոյց տալ մի աշխատութիւն, որը կատարելապէս պատկերացնէր Թիւրքիայի տնտեսական-սոցիալական վիճակը: Եղածները կամ ճանապարհորդական թուոյցիկ տպաւորութիւններ են պարունակում իրանց մէջ, կամ զուտ մասնագիտական, հնագիտական, բուսաբանական, երկրաբանական և այլ ուսումնասիրութիւններ: Ահա այդ պակասը լրացնել է փորձում այ. Քիլնէ իր այս հսկայական աշխատութեամբ, որ բաղկացած է 4 հատորներից—երեքական զիրք իրաքանչիւր հա-

ստորում՝ զարդարուած բազմաթիւ քարտէշներով ու վիճակա-
գրական տախտակներով:

Հեղինակը նախօրօք ուսումնասիրել է Թիւրքիայի վե-
րաբերեալ ամբողջ գրականութիւնը, 12 երկար ու ձիգ տարի-
ներ ճանապարհորդել է այդ ընդարձակ երկրի զանազան գա-
ւառներում, հարց ու փորձ է արել պաշտօնական ու ոչ պաշ-
տօնական ձեռնհաս մարդկանց և ապա նոր հրատարակութեան
յանձնել իր աշխատասիրութիւնը:

Նա խօսում է Ասիական Թիւրքիայի բոլոր վիլայէթների
մասին առանձին-առանձին. յետոյ իւրաքանչիւր վիլայէթի կա-
զմների մասին և գրեթէ միշտ շոյափում է հետեւեալ հարցերը.
1) Վարչական բաժանումն—տարածութիւն և սահմաններ. 2)
Ազգաբնակչութիւն ըստ կրօնի և ազգութեան. 3) Ժողովրդական
բարքեր ու սովորութիւններ. 4) Դպրոցներ. 5) Վաճառականու-
թիւն. 6) Արդիւնաբերութիւն. 7) Ծանապարհների հաղորդակ-
ցութիւն. 8) Գետեր, լեռներ, հանքեր և անտառներ. 9) Հար-
կահանութիւն. 10) Պետական եւ և մուտք:

Հէնց միայն վերնագրի այդպիսի ստորաբաժանումը բաւա-
կան է, որպէս զի ընթերցողին ցոյց տայ, թէ որքան հետա-
քերբաշարժ նիւթեր է պարունակում այդ դիրքը: Բայց ասել,
թէ նա միանգամայն հեռու է սխալներից, թէ բառիս բուն նը-
շանակութեամբ լիակատար ուսումնասիրութիւն է—զա դժուար
կը լինէր: Շատ տեղ հեղինակը ընկնում է մանրամասնութիւն-
ների մէջ, հաղորդում է ճիշտ ու նորագոյն տեղեկութիւններ,
իսկ շատ տեղ էլ բաւականանում է միմիայն թուղիկի տեսու-
թեամբ: Սակայն խստապահանջ լինել չէ կարելի, որովհետեւ
Թիւրքիան այն երկիրն է, որտեղ չը կայ կանոնաւոր վիճակա-
գրութիւն, չը կայ անհրաժեշտ տեղեկութիւնների մի մաքուր
աղբիւր: Պարզ է ուրեմն, որ այդպիսի պայմաններում խօսք
անգամ չի կարող լինել լիակատարութեան ու անսխալակա-
նութեան մասին: Կարելի է ասել միայն այսքանը, որ պ. Բիյնէ
սուեւել է այն, ինչ որ կարողացել է, ինչ որ հնարաւոր է եղել:

Գերմանացի հեղինակներից Նաումանի «Vom Goldenen
Horn zu dem Quellen des Euphrat» և Կարլ Կաննենբերգի
«Kleinasien Naturschätze» խորագրով գրքերը չունեն այնպիսի
ընդարձակութիւն ու նիւթերի բազմակողմանիութիւն, ինչպէս
այս ֆրանսիացի հեղինակի աշխատութիւնը:

Հեղինակը միշտ անաչառ կերպով ընդգծում է իրերի դը-
րութիւնը, առաջ է բերում փաստերն ու վիճակագրական տե-
ղեկութիւնները, եզրակացութիւնը թողնելով ընթերցողներին:
Բաւական է ուշադրութեամբ կարդալ այդ փաստերը, համեմա-

տել ուրիշ երկրների հետ, որպէս զի մարդ ակամայից բացականչէ.

—Որպիսի ընդարձակ ու բարեբեր երկիր է Ասիական Թիւրքիան, բայց միևնոյն ժամանակ որքան խակ ու յետամնաց է նա կուլտուրայէս, որքան ճնշուած ու հարստահարուած է նա բռնակալ կառավարութեան կողմից:

Այդ իրողութեան պերճախօս ապացոյցներից մէկն էլ կազմում է ազգաբնակչութեան քանակութիւնը: Կար ժամանակ, երբ Փոքր Ասիան մի շարք ծաղկած պետութիւնների որրան էր և ունէր մեծաքանակ ազգաբնակչութիւն: Իսկ այժմ շնորհիւ վարչական կորստաբեր սիստեմի և տիրող սոցիալական պայմանների, ազգաբնակչութեան թիւը հազիւ հասնում է 15,553,186-ի, այսինքն իւրաքանչիւր քառակուսի կիլոմետրի վրայ մօտ 12 հոգի: Այդ թուի ողորմելիութիւնն հասկանալու համար բաւական է աչքի առաջ ունենալ, որ իւրաքանչիւր քառակուսի կիլոմետրի վրայ ապրում են *):

Թիւրքիայում .	12 հոգի
Ֆրանսիայում .	71 »
Գերմանիայում .	97 »
Անգլիայում .	125 »
Բելգիայում .	218 և այլն

Պ. Քիյնէ տալիս է մանրամասն տեղեկութիւններ Ասիական Թիւրքիայի ազգաբնակչութեան մասին: Այդտեղ մեզ համար հետաքրքիր կարող են լինել հայերին վերաբերեալ թուերը: Ո՛րքան հայ կայ Թիւրքիայում:—Ինչպէս յայտնի է, այդ հարցի մասին չափ է խօսուել ու գրուել 70-ական թուականներից մինչեւ օրերս: Սակայն արտայայտուած կարծիքներն այնքան հակասական են, այնքան տարբերում են միմեանցից, որ չափ դժուար է նրանցից մի որոշ եզրակացութիւն դուրս բերել: Այսպէս, օրինակ, այդ թիւը հասնում է.

Ըստ «Ազգ. Հիւանդանոցի 1902 թ. Օրացոյցի»	2,300,000-ի.
» Վագների ¹⁾	. . . 1,300,000 »
» պրոֆ. Վամբերի ²⁾	. . . 1,131,125 »
» Ս. Բարխուդարեանի	. . . 3,500,000 »
» գեներալ Զելենսովի	. . . 1,219,750 »
» պրոֆ. Զուպանի ³⁾	. . . 1,226,750 »

*) Prof. Hickmann: „Universal Taschen-Atlas“.

¹⁾ Dis Bevölkerung der Erde 1891.

²⁾ „Deutsche Rundschau“ 1896. Februar.

³⁾ „Ausland“ 1891. № 20

⁴⁾ „Записки Кавказ. отдѣл. Импер. рус. Географ. Общества“

ИВХ, 1895.

⁵⁾ „Petermanns Mittheilungen“ 1896.

Իսկ «La Turquis d'Asie» գրքի հեղինակը չի տալիս հայերի ընդհանուր թիւը, այլ առաջ և բերում իւրաքանչիւր վիլայէթի ու սանջազի ազգաբնակչութեան ցուցակը առանձին-առանձին: Դրանց միջից զտելով հայերի թիւը, կը ստանաք՝ Փոքր Ասիայում 939,000, իսկ ամբողջ Թիւրքիայում 1,144,000. ուրեմն դարձեալ մի տարբեր կարծիք: Իսկ թէ այդքան բազմազան կարծիքներից որն է աւելի ճիշտը, որն է աւելի մօտ իրականութեանը—դա մի ծանրակշիռ հարց է, որին, գուցէ, վերադառնանք առանձին յօդուածով:

Ե. ԹՈՓՉԵԱՆ

37) Ս. ԶԻԼԻՆԱԿՐԵԱՆ և Տ. ՌԱՇԵՄԱՃԵԱՆ, Էլեֆանտա-նուրիւն, (ժողովրդական բնագիտական գրադարան № 6), 1902 թ. Ալէք-սանդրուպօլ, գինն է 15 կոպ.:

Այդ պարոնների կազմած միւս «բնագիտական» գրոյցների հետ անձանօթ ենք, սակայն, եթէ նրանք էլ գրուած են այս «էլեֆանտականութեան» նման թէ ոճով և թէ հմտութեան կողմից—առանձին ուրախանալու առիթ չունի մեր ժողովուրդը: Գիտութիւնը ժողովրդականացնելու իղձը չատ լաւ բան է, սակայն միայն իղձը բաւական չէ մի գործ աջող կերպով զլուել. բերելու համար: Եւրոպայում ճիշտ գիտութիւնները ժողովրդականացնելու փորձը անում են այն գիտնականները, որոնք բացի մասնագիտական հմտութիւնը՝ ունեն նաև կենդանի ու հետաքրքրական ոճով պատմելու շնորհք. մինչդեռ մեր այդ երկու պարոնները նախ՝ բաւական մակերևոյթային, անկատար տեղեկութիւններ ունեն այն երևոյթների մասին, որ ձգտում են ժողովրդականացնել և, երկրորդ՝ բոլորովին անշնորհք են իրանց մտքերը ճիշտ գիտութիւններին վայել կերպով արտայայտելու: Երկար կանգ առնել այդ գրքոյի վրայ մտադիր չենք. բաւական է հէնց այն, որ այդ պարոնները «ներկայ գիտութիւնից» խօսելով, սկի տեղեկ չեն այդ գիտութիւնից: Ինքներդ դատէք. «տղաներից մէկը» հարցնում է.

—Բայց ի՞նչ ոչ թէ այդ էլեֆանտականութիւնը:

Դրանք պատասխանում են.

—Ներկայ գիտութիւնը հաստատ կերպով չի կարող այդ բանը որոշել, այլ ասում է. այստեղ էլ մարդիկ գործ ունեն մի ծածուկ նիւթի կամ ֆլուդիումի հետ:

Մի այլ տեղ (երես 14) տրւում է այսպիսի բացատրու-թիւն «ֆլուդիումի» մասին.

«Գիտնականներն ընդունում են, որ աշխարհում գտնուած

բոլոր առարկաների մէջ, մի տեսակ չափազանց նուրբ նիւթ կայ կամ ինչպէս իրանք են ասում Ֆլուդիում, դա մի այնպիսի նիւթ է, որ ոչ մի մարդ ոչ տեսել, ոչ լսել, ոչ հոտոտել է և չի էլ կարելի Բացի դրանից, նրանք կարծում են, թէ այդ ֆլուդիումը հրկու տեսակ նիւթից է կազմուած:

— Բայց վարժապետ, ո՞րտեղ է գտնուում այդ շատ նուրբ նիւթը:

— Հէնց բանն էլ նրանումն է, որ այդ հաստատ չգիտեն, թէ առարկաների անտեսանելի և մտքով անբաժանելի մասնիկների կամ ատոմների մէջն են գտնուում, թէ նրանց ծակոտիկների, մէջ չալտնի չէ. բացի դրանից ասում են, որ չնայելով ֆլուդիումը երկու նիւթից է կազմուած, բայց և այնպէս նրանք մարմինների մէջ քնած, հանգիստ գրութեան մէջ են: Երբ մենք առարկան տրորում ենք՝ այն ժամանակ ֆլուդիումը դարձնում, շարժում է, երկու տեսակն էլ իրարուց բաժանուում են և իրար շուրջն են կարող մնալ, մէկը միւսին կարծես դուրս է վռնողում, դրա համար էլ մի տեսակ ուժը, էլէքտրականութիւնը մնում է տրորուող առարկայի մէջ, միւս տեսակը անցնում է մահուդի կամ մետաքսի մէջ, ահա այնպէս են մարմինները ստանում մեղ զգալի, էլէքտրական չափութիւնը. ուրիշ խօսքով մարմինների մէջ բաժանուած էլէքտրականութիւնը առաջ է բերում էլէքտրական երևոյթներ *):

Ինչպէս երևում է, այդ պարունակները ի նկատի ունեն Սէյմերի և Փրանկլինի թէօրիաները էլէքտրական հեղուկի մասին. մինչդեռ յայտնի է, որ վաղուց արիւիւ է գտնուած՝ սպեցիֆիկ էլէքտրական հեղուկների թէօրիան:

Փարադէյլի, Մաքսուելի հետազօտութիւններից և 1888 թուականին Հերցէնի հոշակաւոր փորձերից յետոյ «ներկայ գիտութիւնը» էլէքտրական, ինչպէս և մագնիսական ու լուսային երևոյթների էութիւնը, եթերի զանազանակերպ դեֆօրմացիաների և պերտուրբացիաների, այսինքն՝ եթերի շարժման մէջ է գտնուում:

Վերս բերած քաղուածքը արդէն որոշ գաղափար է տալիս գրուածքի խառնաչփոթ և ճապաղ ոճի մասին. սակայն ահա մի նմուշ ևս.

Եթէ էլէքտրականութեան համար բոլոր օտաճներս կարճ, համառօտ կերպով ամփոփեմ, մօտաւորապէս այս կտաւանն է:

Բնութեան բոլոր ուժերից, որոնց մարդ տիրապետել և օգտուում է, հաւանորէն էլէքտրականութիւնն ամենից զօրաւոր, օգտակար և չարմարն է: Այս ուժը մեղ տալով լոյս, զիշերը ցերեկ է դարձնում, գործը չափազանց արագացնում է աշխատանքի ժամերը շատացնում է և մարդկանց միջոց տալիս կեանքի հարկաւոր պիտոյքներն աւելի ու աւելի հեշտ ձեռք բերել: Էլէքտրականութիւնը մեղ տալիս է տաքութիւն, շարժելու, գործելու անսպառ ուժ. մեր մտքերի ամենաարագ փոխանակութիւն, ուրեմն ժամանակի, տարածութեան կարճութիւն և ուրիշ բազմատեսակ հազարաւոր օգուտ:

*) Ուղղագրութիւնը և կէտադրութիւնը բնագրինն է:

ներ, որոնց մի մասը դուք իմացաք. այնպէս որ, չափազանցութիւն չի լինի, եթէ ասեմ—մարդու կատարած գիտերի երեք քառորդ բաժինը միասին վերցրած, չեն կարող հատաստուել էլէքտրակահունութեան օգուտների հետ: Եթէ այս բոլորի հետ աչքի առաջ ունենանք նրա ապագայ գիտերն ու արդիւնքներն՝ այն ժամանակ պէտք է նրան համարենք մարդկային մտքի ամենահարուստ, ամենապտղատու ծառը:

Իզուր չէ ասած. «Ոճը—ինքը մարդն է»...

Շատ աւելի լաւ կ'անէին պ.պ. Ռաշմաճեանը և Զիլիւկարեանը, եթէ՝ հեղինակելու փոխարէն, թարգմանէին կամ փոխադրէին աւելի հմուտ և տաղանդաւոր ժողովրդականացնողների գրքոյկներ. հէնց, օրինակի համար, պ. Վ. Լուսինկիւիչի զրոյցների այն սերիան, որ հրատարակել է Պավլէնկովը:

Բն.

32) Իվան Տուրգենևի, «Արձակ բանաստեղծութիւններ». թարգմ. Ս. Ծատուրեան, 13 էր., Բազու, 1902 թ., գ. 2 կ.:

Այս փոքրիկ ժողովածուի մէջ արտատպուած են Տուրգենևի յօրինած ու պ. Ալ. Ծատուրեանի թարգմանած և արդէն տպուած «Արձակ բանաստեղծութիւններից» վեցը:

Հրատարակիչը աւելորդ է համարել յայտնել այդ հանգամանքը ընթերցողներին, —մի բան, որի բացատրութիւնը պէտք է փնտռել մեզանում տիրող գրական անիշխանութեան մէջ:

Հրատարակիչը աւելորդ է համարել նաև հոգ տանել, որ Տուրգենևի գեղեցիկ «Արձակ բանաստեղծութիւնների» գեղեցիկ թարգմանութիւնը տպուի առանց այնպիսի վրիպակների, ինչպէս «Ախեր», «Ի՞նչ կա» որ» և այլն:

Արդէն սաացի, որ թարգմանութիւնը գեղեցիկ է: Մատուրեանի նման ռճագէտից ուրիշ տեսակ թարգմանութիւն չէր էլ կարելի սպասել: Մենք կը ընտելանայինք միայն, որ պ. Ծատուրեան աւելի մեծ ուշադրութիւն դարձնէր թարգմանութեան ճշտութեան վրայ, որովհետև ամեն մի բառ իր նշանակութիւնն ունի գրչի այնպիսի վարպետների շարագրութիւնների մէջ, ինչպէս է Տուրգենևի:

Երբ Տուրգենևի գրում է, օրինակի համար, թէ ճնճղուկները թռչկոտում էին тусьбомъ և божко այդպէս էլ պէտք է թարգմանել և ոչ թէ «խմբով» ու «ախորժալի»:

Տ. Յ.

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ո Ւ Ա Մ Գ Ր Ք Ե Ր

- 1) Վ. Արծրունի՝ «Մի ծխիր», Թիֆլիս, 1902 թ., գինն է 5 կ.
- 2) Նար-Դոս՝ «Տանտիրոջ աղջիկը», վիպակ, Թիֆլիս, 1902 թ., գինն է 20 կ.
- 3) Ա. Իսահակեան՝ «Հին-Նոր երգ ու վէպերից», բանաստեղծություններ, Բագու, 1902 թ., գինն է 3 կոպ.
- 4) Բժ. Ա. Բուդուղեան՝ «Ուղեղի Սիֆիլիսը», Ս. Պետերբուրգ, 1902 թ., գինն է 20 կոպ.
- 5) Ա. Չոպանեան՝ «Նահապետ Գուչակի Դիւանը», Պարիզ, 1902 թ., գինն է 3 ֆռ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Արհեսագիտութիւնը Պարսկաստանում

Վիճակագրութիւնը յոյց է տալիս, որ Պարսկաստանի պէս բնական բերքերով հարուստ երկիրը, իւրաքանչիւր տարի արտահանում է օտար երկիրներ միայն 78 միլիօն ֆրանկի արանք, իսկ ներմուծում է 132 միլիօն ֆրանկի, ուրեմն այս երկրի առևտրի տարեկան ընդհանուր չրջանառութիւնն է 210 միլիօն ֆրանկ, միջոցով փոքրիկ Հօլլանդիան, որ 50 անգամ փոքր է Պարսկաստանից, արտահանում է իւրաքանչիւր տարի մօտ 1900 միլիօն ֆրանկի արանք, ուրեմն 25 անգամ աւելի, քան Պարսկաստանը, իսկ այդ երկրի առևտրի տարեկան չրջանառութիւնն է 3500 միլիօն ֆրանկ, ուրեմն մօտ 18 անգամ աւելի:

Պարսկաստանը, այս քսաներորդ դարումն անգամ, չունի գործարաններ եւրոպական մոքով առած, ուստի և չի կարելի խօսել գործարանական կեանքի մասին այս երկրում:

Բելգիական մի ընկերութիւն, մի քանի տարի առաջ, բացեց Թէհրանի մօտակայքում շաքարի գործարան, բայց վնաս արեց և ստիպուած եղաւ փակել գործարանը:

Պարսիկ անաստաւորները իրանց տանը մասնաւոր գործարաններ են պահում, վարձում են ըանուորներ և աշխատեցնում նրանց: Հասկանալի է, որ այստեղ անհաւիտահամների աշխատանքը ոչ մի հսկողութեան չի ենթարկուած և յաճախ կարելի է տեսնել գորգի գործարանում, դազգեա՜նի առաջ նստած աշխատելիս 8, 10 տարեկան մանուկներ, որոնք ամբողջ օրուայ աշխատանքի համար ստանում են միայն... 4 կոպէկ, չորս շահի պարսից փող: Բանուորի ամենալաւ օրավարձն այս երկրում

համարում է մի զուան (1 ո. 36 կողմէ)։ Օրական աշխատանքի տեւողութիւնը 12—14 ժամ է, երբեմն նաև աւելի։ Հասկանալի է ինքն ըստ ինքեան, որ բանուորի վնասուելու գէպքում ոչ մի վարձատրութիւն չի ստանում նրա ընտանիքը, թէև պէտք է նկատել, որ այդ շատ հազիւ է պատահում այժմ երկրում, որովհետև մեքենաները և շողին դեռ ևս մուտք չեն գործել այստեղ արդիւնաբերութեան մէջ։

Ամենածաղկած արհեստը այս երկրում գորգագործութիւնն է և Պարսկաստանը իւրաքանչիւր տարի արտահանում է օտար երկիրներ չորս միլիօն ֆրանկի գորգ։ Հսկակուած են իրանց ընտիր յատկութիւններով և գեղեցիկ գործուածքով Թաւրիզի, Խորասանի և մանաւանդ Քիրմանի գորգերը, Ընտիր են նաև Սովուգ-Բուլաղ գաւառակի գորգերը իրանց ամբողջեամբ, այդ գաւառակի բնակիչները պարապում են անասնապահութեամբ և իւրաքանչիւր տարի վաճառում են Թաւրիզ և ուրիշ քաղաքներ մեծ քանակութեամբ բուրգ։ Թաւրիզում և ուրիշ տեղեր գործ են ածում նաև ընտիր մետաքսեայ գորգեր, որոնք շատ թանկ են գնահատուում։ Պակաս հոշակ չեն վայելում Պարսկաստանի առևտրական շուկայում նաև Անգրկասպեան երկրի ընտիր գորգերը։ Եւրոպական մի քանի ընկերութիւններ և կիւլպէնկեան առևտրական տունը Պոլսում զբաղուած են բացառապէս գորգեր գնելով և արտահանելով եւրոպական նշանաւոր վաճառատեղիներ, գլխաւորապէս Բերլին, Նիւ-Եօքը, Վաշինգտօն։ Գերմանական Յիգլէր ընկերութիւնը 30 տարուց աւելի է, ինչ պարապում է գորգի առևտրով և գնում է իւրաքանչիւր տարի 200,000 մանէթի և աւելի գորգ։ Այդ ընկերութիւնը բացել է հարաւային Պարսկաստանում, ինչպէս յիշուած էր «Մուրճում» նաև սեփական գորգի գործարան, միայն ինչ որ պարսիկ վաճառականի անունով, որովհետև նախապաշարուած պարսիկները չեն յօժարում քրիստոնեայի համար աշխատել և մեծ օրաւարձ են պահանջում։ Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը մի քանի տարի առաջ բացել էր քաղաքում գորգի գործարան, բայց մի տարի պահելուց յետոյ ստիպուած եղաւ վնասով փակել գործարանը։

Գորգերը այստեղ ծախւում են քառակուսի արչինով, իւրաքանչիւր քառ. արչինը 3—7 թուման և աւելի, նայած գորգի յատկութեան։ Մետաքսեայ գորգերի քառ. արչինը ծախւում է 20—25 թուման և էլ աւելի (թումանը հաւասար է ուղտական երկու ուրլուն)։ Ծղգրիտ հաշիւը ցոյց է տալիս, որ մի գորգի վրայ, որի երկարութիւնն է 8 արչին, իսկ լայնութիւնը

3 արշին, ծախք լինում է 125—132 (թուման*), իսկ այդպիսի մի գորգը ծախուում է 150—170 թումանով, ուրեմն մի այդպիսի գորգի վաճառումից զուտ արդիւնք մնում է 18—38 թուման:

Հետաքրքրական է գորգի գործարանի ներսը, մի գետնափոր, մեծ սենեակում գրուած են մի քանի մեքենաներ (դազ-գեահներ), իւրաքանչիւր դազգեահի առաջ նստած են մի քանի մարդիկ, գործում են և երգում: Ի դէպ է նկատել, որ Պարսկաստանում շատ արհեստաւորներ, մանաւանդ որմնադիրները երգելով են գործ կատարում և այն որմնադիրը աւելի շատ գործ և պատուէրներ է ստանում, ով աւելի լաւ է երգում: Որմնադիրն ցեխ, աղիւս, և կամ կիր է հարկաւոր, նա այդ բոլորը ինզորում է գործաւորից երգելով և դիմելով նրան զանազան փաղաքշական խօսքերով՝ «աչքիս լոյս», «հարազատ», «եղբայր» և այլն:

Յաճախ մտածել ենք, թէ ինչու Պարսկաստանի հայ վաճառականներից ոչ ոք մինչեւ օրս չէ ձեռնարկել գորգի առեւտրին, մինչդեռ այդ առեւտուրը շատ աւելի շահաբեր է, քան նուէի և սարգայի առեւտուրը, որով բացառապէս պարապում են նրանք և միշտ էլ եկել ենք այն եզրակացութեան, որ զրա պատճառը Պարսկաստանի հայ վաճառականի տգիտութիւնը, լեզուներ չիմանալն է և արեւմտեան Եւրոպայի առեւտրական կենդրոններին միանգամայն անծանօթ լինելը: Պարսկաստանցի հայ վաճառականը դեռ չի թօթափել իրանից պապերից ժառանգած աւանդական հայեացքների լուծը, երանելի տգիտութիւն ունի այն բոլորի մասին, ինչ որ կատարւում է իր բնական երկրի սահմաններից դուրս և այն կարծիքի է, որ վաճառականութիւնը ոչ թէ գիտութիւն է, այլ ազարտ խաղ, որտեղ յաջողութիւն կամ անյաջողութիւն կախուած է միայն բերմունքից: Եւ այդպիսի անմիտ վերաբերմունքի հետեւանքը այն եղաւ, որ Պարսկաստանի հայ վաճառականները այս տարի այնպիսի մեծ նիւթական վնաս ունեցան, որ այսուհետեւ հազիւ թէ տասնեակ տարուայ ընթացքում կարող լինեն վերադառնալ նախկին վիճակին:

Կապերտագործութիւնն եւս բաւական մեծ ծաւալ ունի Պարսկաստանում, բայց կապերտները տեղական գործածու-

*) 24 լիտր ներկած թել, իւրաքանչիւր լիտրը $3\frac{1}{2}$ թումանով—84 թուման, բանուորների վարձ 48 թուման, ենթադրելով, որ այդ գորգի պատրաստութեան վրայ աշխատում են 4 բանուոր 4 ամիս ժամանակով. $84 + 48 = 132$:

Թեան համար են և չեն արտահանում օտար երկիրներ: Արդարիւրում և չրջակայքում գործում են ընտիր կապերտներ, որոնք իւրաքանչիւր հարուստ մարդու առանձնասենեակի զարդը կարող են կազմել: Բայի կապերտներից այս երկրում գործում են նաեւ Թաղիքներ (քէչա). Թաղիքը գործում են ուղտի բրդից զլորելով, առանց մեքենայի օգնութեան:

Պարսկաստանում գործում են նաեւ ընտիր շալեր (Ահարի կոչմերում) հագուստի համար. այդ շալերը դնում են մինչեւ իսկ եւրոպացիք և հագուստ կարել տալիս:

Թաւրիզում, Թէհրանում և համարեա ամենուրեք այս երկրում գործում են նաեւ ընտիր ջէջիմներ՝ բրդից և մետաքսից: Ջէջիմը ունասական կէս արշին լայնութիւն ունեցող մի կտոր է, չերտաւոր նկարներով զարդարուած. տեղացի հարուստները և եւրոպացիք գնում են ջէջիմի ընտիր տեսակը վարագոյրների և սեղանների ծածկոյնների համար: Ընտիր տեսակի ջէջիմի արշինն արժէ 2—3 դրան, կամ 40—60 կոպէկ: Քիբմանում և ապա Բէլուջիստանի սահմանին մօտիկ գտնուող Քիշմիր քաղաքում գործում են ընտիր տեսակի շալեր, որոնք ծախւում են քաշով՝ մըսխալը 1—2 դրան, կամ 20—40 կոպէկ: Այդ շալերը կրում են կրօնապետները, իբրեւ գլխի ապարօ: և հարուստ դասի կանայք, իբրեւ զարդարանք:

Սպահանի մօտակայքում գործում են նաեւ ընտիր տեսակի պարսկական Թաւիշ, որ իր փայլով գերազանցում է մինչեւ իսկ եւրոպականը և ծախւում է արշինը 3 ուրլի:

Պարսկաստանում գործում են նաեւ ընտիր կտաւներ, դանազան տեսակ չիթեր և այլն:

Ինչպէս յայտնի է, այս երկրում կանայք փողոյ ելնելիս ծածկւում են կապոյտ ծածկոցներով, որոնք կոչւում են չարսաւ. չարսաւները լինում են հասարակ և կամ մետաքսեայ: Այդ չարսաւները գործւում են Պարսկաստանում: Պարսկաստանի գիւղերում ձմեռնային պարապմունքներից մէկն էլ շիլա պատրաստելն է, չիլան կարմիր ներկած կտաւ է, երբեմն ծաղիկներով զարդարուն: Շիլան պատրաստում են հետեւեալ կերպով. կտաւի վրայ առանձին տեսակի տախտակներով, որոնց վրայ փորագրուած են զանազան նկարներ, տպաւորում են նկարներ զանազան գոյնի, բայց գլխաւորապէս կարմիր և գորշ:

20—30 տարի առաջ այս երկրում պատրաստում էին մեծ քանակութեամբ գլիլի չիթ (ծաղկաւոր չիթ), որ տեղական պէտքերին բաւականութիւն տալուց յետոյ կովկաս էլ էր արտահանւում, բայց այժմ այդ չը կայ:

Պարսկաստանը թէեւ դեռ չի մտել գործարանական կեանքի շրջանը, բայց կրում է իր վրայ դրա հետեւանքները, նկատելի է, որ այս երկրում տնայնագործութիւնը և մի քանի արհեստներ տարէց տարի ընկնում են և այդ այլ կերպ էլ չէր կարող լինել, երբ Պարսկաստանի շուկաները հեղեղւում են անգլիական և ռուսական ապրանքներով, որոնք անհամեմատ աւելի ընտիր են և էժան, քան տեղական գործուածքները:

Ռաշտում ասեղնագործում են մահուզի և թաւչի վրայ սեղանի ընտիր ծածկոցներ և թամբի զարդարանքներ: Պարսկաստանը իր բնական բերքերը վաճառք է հանում աւելի իրօք եւ հում նւթ, քան մշակուած: Այսպէս այս իրերից իւրաքանչիւր տարի մեծ քանակութեամբ բուրդ է գնում Ռուսաստան և Անգլիա, իսկ հում մետաքս դուրս է տարւում երկրից իւրաքանչիւր տարի մօտ 10 միլիոն ֆրանկի: Շերամաբուծութեամբ պարսկում են առհասարակ միջին Պարսկաստանի բնակիչները, գովուած է մանաւանդ Ռաշտի մետաքսը, որ գնում է գորգերի և ընտիր մետաքսայ գործուածքների վրայ:

Զարգացած է Պարսկաստանում նաեւ ոսկերչութիւնը. Թաւրիզը, Սպահանը և Թէհրանը հռչակուած են իրանց ընտիր ոսկերիչներով: Մենք տեսել ենք Սպահանի ոսկերիչների քանդակները արծաթեայ չաքարամանի, լուցկիների տուփի վրայ և հիւսիս, քանդակի նրբութիւնը, գեղարուեստական կատարելութիւնը չի թողնում ոչինչ աւելի ցանկալ: Այստեղի ոսկերիչները (գլխաւորապէս Զանգան քաղաքինը) արծաթից չինուած իրերի մէջը զարդարում են արծաթեայ մանր օղակներով, որ կոչւում է շաքաք և գեղեցիկ տեսք է տալիս արծաթից չինուած իրին: Ոսկերչութեան մէջ հայերը պատուաւոր տեղ ունեն գրաւած, Թաւրիզի, Թէհրանի ընտիր ոսկերիչները հայերն են: Թէհրանի ոսկերիչներից մէկը չինել է հանգուցեալ շահի համար մի գլօբուս, որ իր տեսակի մէջ ընտիր գործ է համարւում: Այդ գլօբուսը ոսկուց է, լեռները նշանակուած են աղամանդներով, իսկ գետերը՝ փրփուղայով: Մենք տեսել ենք Թաւրիզի հայ ոսկերիչներից մէկի ներկայ գահաժառանգի համար չինած արծաթեայ մատուցարանները, աւելի ընտիր գործ Պարսկաստանում անկարելի էր ցանկալ:

Մի արհեստ, որ Պարսկաստանում խիստ յետամնաց, ողորմելի վիճակի մէջ է, այդ հիւանութիւնն է և դրա պատճառը այս երկրի՝ անտառներից զուրկ լինելն է: Ամբողջ Ատրպատականում միայն Ղարադաղն ունի ընդարձակ անտառներ, բայց նրանք էլ անխնայ կտրատւում են ածուխի համար և գու-

ցէ չատ հեռու չէ այն ժամանակը, երբ Ատրպատականը ստիպուած կը լինի ուրիշ տեղերից ածուխ բերել տալ իր համար: Մաղանդարանի շուրջը սփռուած են ընդարձակ, խիտ անտառներ, որոնք իրանց դարաւոր ստուերներում ապաստան են տալիս անապատի թաղաւոր առիւծին և արիւնհոռւ Վազրին: Այդ անտառները չահագործում է մի յոյն, որ իւրաքանչիւր տարի աշտահանում է Եւրոպա, գլխաւորապէս Յւնաստան և Իտալիա, մի քանի հարիւր հազար մանէթի ընտիր տեսակի փայտ: Ռուսաստանն ևս իւրաքանչիւր տարի ստանում է մօտ 200,000 պուդ ընտիր տեսակի փայտ: Մաղանդարանի անտառները գլխաւորապէս հարուստ են տօսախի ծառերով (самшитъ), որ փայտի վրայ փորագրելու համար միակ յարմարաւոր նիւթն է ներկայումս: Տեղացիները չինում են ընտիր տեսակի արկղներ և փորագրում են կախարիչի վրայ առիւծի, վագրի և այլ պատկերներ: Պէտք է նկատել, որ Պարսկաստանի լաւ հիւմները հայեր են: Փայտի պակասութիւնն է անշուշտ պատճառ, որ Պարսկաստանում սենեակների յատակները փայտեայ չեն:

Ապակեգործութիւնը դեռ ևս նախնական վիճակի մէջ է, իրաւ է, տեղացիները գիտեն պատրաստել ապակի, բայց տեղական ապակեայ գործուածքները անճաշակ, ողորմելի, տձև և դիւրաբեկ բաներ են: Ուրմիի չրջակայքում կայ ընտիր կաւ, որից տեղացիները չինում են զանազան ամանեղէն: Սպահանում կաւեայ ամանները դրսի կողմից պատւում են սպիտակ վերնիճով (глазурь): Նոյն Սպահանում և չրջակայքում պատրաստում են սպիտակ կաւից ընտիր աղիւմներ, որոնց մի կողմը ձենապակու փայլ ունի: Այդ աղիւմները իրանց ձեւով և մեծութեամբ յիշեցնում են ռուսական паззетъ-ները, դրանց վրայ ուռուցիկ կերպով դուրս են բերուած պատկերներ զարմանալի ճարտարութեամբ: Այդ պատկերներից մէկը ներկայացնում է երեք կնոջ և երկու տղամարդու, որոնք սենեակում նստած խօսում են իրար հետ: Կանանց հագուստը ամենեւին նման չէ պարսիկ կանանց այժմեան հագուստին: Այժմ, ինչպէս յայտնի է, պարսիկ կանայք տանը չրջում են համարեա կիսամերկ՝ ի ցոյց դնելով իրանց մարմնի պլաստիկ ձեւերը՝ տղամարդու զգայական կիրքը գրգռելու համար, մինչդեռ մեր տեսած նկարի վրայ պարսիկ կանայք հագել են երկար գէրիա, որ ծնկներից դաժ է իջնում, կոճկում կրծքի վրայ՝ թողնելով վզի տակ աննշան դեկոլտէ: Այսպիսով ուրեմն արդարանում է մի ռուս ճանապարհորդի կարծիքը, որ պարսիկ կանանց այժմեան

հագուստը նորագոյն ծագումն ունի *):

Տեղական արհեստների մէջ պէտք է յիշատակել նաեւ թելագործ կօշիկների պատրաստութիւնը, որոնք տեղական բառով կոչում են գիվա: Այդ կօշիկները պատրաստւում են գլխաւորապէս Համադան քաղաքում, այդ կօշիկների վերին երեսը դործում են թելից, իսկ ներքանը (ПОДОШВА) շինում են զանազան ցնցոտիներից: Այդ կօշիկները ամառուայ համար, որ բաւական շոգ է լինում այս երկրում, միակ յարմարաւոր հալնելիքն են:

Տեղական տնայնագործութեան մէջ գուլպաների գործելը մեծ տեղ է բռնում: Պարսիկ կանայք ձմեռը գիւղերում գործում են բրդէ գունաւոր գուլպաներ, իսկ սպիտակ բամբակեայ գուլպաները հայ կանանց ձեռքի գործն են: Այդ գուլպաները մեծ մասով տեղումն են գործածւում, թէեւ Կովկաս էլ արտահանւում են: Պարսկաստանի հայ կանայք գուլպաներով տուն են կառավարում, ընտանիք են կերակրում և երեխաներ մեծացնում: Մեզ շատ անգամ պատահել է լսել կարծիք, որ, եթէ կայ հայ կեանքի մէջ կուլտուրական մի տարր, այդ հայ կինն է և պարսկաստանցի հայ կինը այդ կողմից իրաւամբ արժանի է մեր յարգանքին: Պէտք է միայն տեսնել, թէ որպիսի անձնութիւններով նա իր ամուսնու հետ միասին տանում է կեանքի լուծը, որպիսի սիրով և անձկութեամբ ապաստւում է իր տարիներով արդէն անյայտ, կորած ամուսնուն, որպիսի անյողգուլգութեամբ տանում է աղքատիկ կեանքի բոլոր զրկանքները, վաճառ չի հանում իր տան պատիւը և ամօթը և դուք կը լըցուէք խորին հիացմունքով դէպի նա, դէպի հայկական ընտանիքի այդ նահատակ—մայրը և կ'ըմբռնէք թէ ի՞նչ շինող ոյժ է ներկայացնում հայ ընտանիքի մէջ հայ կինը: Եւ Պարսկաստանի հայ աղքատ կանանց ապաւէնը գուլպան է, դործում են անդադար, որ ու գիշեր, ծախում և կերակրում իրանց զաւակներին: Եւ քանի՜, քանի՜ ընտանիքներ աղատուել են բարոյական անկումից շնորհիւ դրա: Մի քանի տարի սրանից առաջ, երբ կենսական մթերքները այնպէս թանկ չէին այս երկրում, գուլպաներից ստացած արգիւնքով կարելի էր ամբողջ ընտանիք կերակրել, բայց այժմ—հէ:

Մի քանի խօսք էլ ասենք Պարսկաստանի արհեստաւորների ներքին կազմակերպութեան մասին:

Պարսկաստանում միեւնոյն գործով պարապող արհեստաւորները ունեն իրանց պետը, որ տնօրինում է նրանց մէջ ծա-

*) Тонзичкий—„Персія и персы“ էջ 112—114.

գած մանր լէճները և նրանց ներկայացուցիչն է իշխանութեան առաջի Այսպէս, օրինակ, ոսկերիչներն ունեն իրանց պետը, որ կոչուում է զարգարբաշի, կամ, եթէ թարգմանենք հայերէն, ոսկերչապետ, գերձակները՝ իրանց դարդիրաշին և այլն: Արհեստաւորների պետի իշխանութիւնը ժառանգական է, եթէ ժառանգները արժանի են այդ պատուին. իսկ եթէ արժանաւոր ժառանգներ չը կան, այն ժամանակ արհեստաւորները ընտրում են իրանց միջից իրանց համար պետ և ներկայացնում ի բարձրագոյն հաստատութիւն: Նրբեմն գահաժառանգը և կամ նահանգապետը նշանակում են արհեստաւորների պետին ըստ իրանց հայեցողութեան:

Պարսկաստանը բնական բերքերով հարուստ մի երկիր է. մի հեղինակաւոր ուսու մասնագէտի կարծիքով *) միայն Ղարադաղում ահագին հանքային հարստութիւններ կան—պղինձ, երկաթ, կապար, արծաթ: Ուրմիի լիճը աղի մի անսպառելի աղբիւր է ներկայացնում. էլբրուսը հարուստ է քարածուխով և ընտիր փրուղայով. կայ նաև նաւթ: Բայց այդ բոլոր հարստութիւնները, դժբախտաբար, չեն մշակուում, քնած են երկրի խորքերում: Սակայն, երբ երկաթուղիները ամեն ուղղութեամբ կը կտրտեն այս երկիրը, երբ այս երկրի ընդարձակ դաշտերում կը լսուի շոգեմեքենայի սուլոցը, այն ժամանակ կը զարթնեն այս երկրի քնած ոյժերը, կը մշակուեն երկրի խորքերում թաղուած հանքային հարստութիւնները և Պարսկաստանը ոտք կը կոխէ քաղաքակրթութեան հաստատ ճանապարհը: Պարսկաստանի ապագան մեզ պայծառ գոչներով է երևում, որքան էլ ճշնշող և յուսահատական է այժմ նրա իրականութիւնը: Այդ երկիրը զեռ եւս դեր ունի խաղալու պատմութեան ասպարիզում:

Յ. ԿԱՐԱՆԱՆԵԱՆ

Նախադիւնաբերութիւնը Պարսկաստանում

Աջքարաց եւրոպացիների հետազօտութիւնները ցոյց տուին, որ հարուստ նաւթահանքեր ունի և մեր հարեւան Պարսկաստանը. Պարսից Մոցին կից, Արաքստան կամ Խուժաստան նահանգում, ինչպէս և Լաուրիստանում, որ կից է Թիւրքիայի

*) Ломницкий—„Персія и персы“, էջ 167.

սահմանին և մօտ Բաղդադին, այնքան առատ է նաւթը և այնպիսի մեծ ապագայ ունի նրա շահագործութիւնը, որ երկու տարի առաջ կազմուել է անգլիական մի մեծ ընկերութիւն, աւստրալիացի մի միլիօնատէրի մասնակցութեամբ, և ստացել է պարսից կառավարութիւնից իրաւունք 60 տարուայ ընթացքում շահագործել այդ նաւթային հողերը: Նաւթ գտնուել է և Կասպից ծովի հարաւային ափում, Էնզէլի մօտերքում, Լրագիւրները հաղորդում են՝ որ Լօնդօնում արդէն կազմակերպուել է մի անգլիական ընկերութիւն այդտեղի նաւթային հողերն ևս շահագործելու նպատակով:

Գ Ա Ի Ա Ռ Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք

Քանանայական ժողովներ Ախալքալափում եւ «գլխագինը» վերացնելու հարցը

Այս անցեալ ամսու Ախալքալափում առաջին անգամ գաւառի բոլոր հայ քահանաների ժողովներ կայացան, որոնց գլխաւոր նպատակը գիւղերում մինչեւ հիմա գոյութիւն ունեցող «գլխագինը» վերացնելն էր: Աւելորդ չենք համարում այդ առթիւ «Մուրճի» ընթերցողներին համառօտ կերպով ծանօթացնելու այդ հարցի էութեան հետ:

Մեր մի քանի գաւառներում հայ ազգաբնակչութեան մէջ գոյութիւն ունեցող վատ և վնասակար սովորութիւններից վատթարագոյնը «հմ-դիմտի», «բաշլըղ» կամ «գլխագին» անուններով յայտնի տգեղ, անպատուարեր և վերին աստիճանի վնասակար սովորութիւնն է:

Նա տգեղ և անպատուարեր է, որովհետեւ այդ սովորութեան շնորհիւ ազատ-բանական արարածին, աղջկան կամ այրի կնոջը, անշունչ առարկայի կամ անասունի նման՝ փողով ծախում կամ առնում են՝ ամենագլուխի սակարկութիւն անելով: Քիչ չէ պատահում մեր գիւղացուց լսել, թէ գնացել էր այսինչ գիւղը՝ իր մանչի կամ եղբօրը համար աղջիկ առնելու, նրանք, զիցուք, 60 ուրբլի պահանջեցին, իսկ ինքը 50 առաջարկեց, այդպիսով «ուրմիչ» չեկան, և գործը մնաց...

Այդ սովորութիւնը խիստ վնասակար է բարոյական և տրնտեսական տեսակէտից, թէ ընտանիքի և թէ հասարակութեան համար: Նրա շնորհիւ մեր գիւղերում աղջիկները նշանւում են մեծ մասամբ իրանց կամքի հակառակ, լոկ ծնողների ցանկութեան համաձայն: Իսկ ծնողները այդ հարցում առաջնորդւում են միայն տնտեսական շարժառիթներով, ցանկանում են նրանց, որոնք աւելի շատ փող են առաջարկում: Փոյթ չէ, եթէ այդ աւելի փող վճարողը հազար ու մի ֆիզիկական կամ բարոյական

արատներ ունենայ: Դրանից առաջ են գալիս հաւալի երեւոյթներ—ախամայ նշանուած աղջկայ առեւանգումը կամ փախչիլը իր ուզած երիտասարդի հետ, պատկուելույ յետոյ անհաւատարիմ ամուսնական կեանքը, անպսակ կենակցութիւնները սովորական երեւոյթներ են դարձել մեր գիւղերում:

Բայի դրանից՝ տեղի է ունենում ընտանեկան բարքերի անկում և ուրիշ տեսակէտից: Պարտքով-պատուհասով աղջկայ տիրոջը շատ փող վճարած և այդ պատճառով զգալի չափով աղքատացած ընտանիքը շատ սառն է վերաբերւում իր թանկ նստած հարսին: օրինակ, ճրագ չէ վառում՝ շատ ծանր խօսքերով ակնարկելով, թէ չափազանց թանկ նստած հարսը ինքը լոյս կը տայ... Կամ եթէ, զիցուք, գոմէշը ծախել և ստացած փողով հարս են բերել (իմն դնել) տեղի-անտեղի տան միւս անդամները ակնարկում են, թէ գոմէշի տեղ հարսին պիտի լծեն և այլն: Այդ պատճառով տեղի են ունենում ընտանեկան պառակտումներ և անհամաձայնութիւններ: Ի հարկէ, հասարակական բարոյականութիւնն էլ շատ է տուժում այդ սովորութիւնից:

Բայց անհամեմատ աւելի ազէտայի է նիւթական վնասը: Մեր անհաշիւ գիւղացիները իրանց անչափահաս որդիներին ամուսնացնելով պարտքի տակ են ընկնում՝ թէ «գլխագինը» վճարելու և թէ անմիտ ու շռայլ ծախսերը ծածկելու համար: Ապա պարտքը բազմապատկւում և անվերջ շղթայով դերում ու կաշկանդում է մեր նորապսակներին իրանց ապագայ սերունդներով: Կարելի է ասել, որ մեր գաւառներում տիրող վաշխառութեան պատճառներից մէկն էլ «գլխագինն» է:

Այդքան վայրենի և վնասակար սովորութեան և նրա դառն հետեւանքների վրայ ուշադրութիւն են դարձրել մեր ժողովրդի ամուսնական գործերը տնօրինող հոգեւորականներից ոմանք *):

Սակայն այն ժամանակներում՝ չարիքը արմատախիլ անելու համար՝ հողը սլափաւատ և հարցը արծարծուած ու հասունացած չէ եղել ընդհանրապէս. այդ պատճառով էլ այդ բարի ցանկութիւնները մնացել են լոկ իբրեւ ցանկութիւն: Հիմա հանգամանքները փոխուել են. հարցը հասունացել է, և անտեսապէս քայքայուած գիւղական ազգաբնակչութիւնը տրամադրութիւն է ցոյց տալիս թողնելու այդ վայրենի սովորութիւնը:

*) Դեռ Ներսէս Վ և նրա ժամանակակից Պարպետ եպիսկոպոսը, Կարնոյ զաղթականների առաջնորդը, ուշադրութիւն են դարձրել այդ չարիքի վրայ. վերջինիս յորդորներով ականջխացիք շատ շռայլութիւնների են վերջ տուել: Սպա 1875 թուին Գէորգ IV-ն է մի կոնդակով ուղեցել սահմանափակել զլխագինը և ուրիշ շռայլ ծախսեր:

միայն թէ մի ընդհանուր կարգադրութիւն կամ կանոններ լինեն:

1897 թուի սկզբին Ախալքալաքի գաւառի հայ-կաթոլիկ 11 գիւղերի քահանաները և աշխարհական ներկայացուցիչները՝ ժողով կազմելով Խուլղումա գիւղում՝ վճռեցին սահմանափակել, չափաւորել գլխագինն ու հարսանիքի շռայլ ծախսերը և համառօտ կանոններ մշակեցին այդ առիթով: Ապա վերջերս Կարդախ գիւղի քահանաներն էին նոյն նպատակով կանոններ մշակել: Բայց գործը ընդհանուր և խիստ լուրջ լինելով՝ հարկաւոր էր մի ընդհանուր և աւելի հեղինակաւոր ու բարձր հոգեւոր իշխանութիւնից հաստատուած կանոնադրութիւն:

Ահա այդ նպատակով Ախալքալաքի գաւառի գործակալ Ընձակ վարդապետը իր վիճակի լուրջ քահանաներին առաջին անգամ ժողովների հրաւիրեց:

Առաջին ժողովին, որ կայացաւ յունիսի 14-ն, ներկայ էին 43 քահանայ, որոնցից միայն 2-ը քաղաքից:

Ժողովը նպատակադրմար համարեց մի յանձնաժողով ընտրել գործակալ վարդապետի նախագահութեամբ, որ «հաւգիմաստ» և առհասարակ գիւղական նշանադրութեան ու հարսանիքի վերաբերեալ այլ տգեղ սովորութիւններն ու շռայլ ծախսերը արմատախիլ անելու և չափաւորելու համար՝ մանրամասն ծրագիր և պարտադիր կանոններ կազմէ և ներկայացնէ քահանայական հետեւեալ ժողովին: Յանձնաժողովի անդամներ ընտրուեցին երեք քահանաներ և երկու ուսուցիչ աշխարհականներից: Նաեւ վճռուեց, որ մինչեւ այդ օրը քահանաները իրանց ժողովրդի մէջ արծարծեն «գլխագին» տգեղ սովորութիւնը վերջացնելու հարցը, ժողովրդի համաձայնութիւնը և պատրաստակամութիւնը արտայայտող համալծիւններ առնեն և այլն:

Մինչեւ երկրորդ ժողովը գիւղերից շարունակ նորանոր գրաւոր ստաջարկութիւններ և համալծիւններ էին ստացւում «հաւգիմասին» վերջացնելու առիթով: Ընտրուած յանձնաժողովը էլ բոլոր գրաւոր նիւթերն ու գիտողութիւնները և տեղական պայմանները աչքի առաջ ունենալով՝ մշակեց մանրամասն ծրագիր և կանոններ:

Երկրորդ ժողովը կայացաւ Թարգմանչաց տօնին, յուլիսի 4-ն: Այդ ժողովում կարդացուեց Գէորգ կաթողիկոսի 1875 թուին տուած կոնդակը, ապա յանձնաժողովի մշակած կանոնների նախագիծը, որը թեթեւ փոփոխութիւնների ենթարկուելուց յետոյ ընդունուեց բոլոր ժողովականների կողմից:

Այդ նախագիծը յետոյ առանձին պատգամաւորութեան միջոցով էջմիածնում ներկայացուել է վեհ. կաթողիկոսին, որը

հաւանութիւն տալով կանոնադրութեանը՝ առաջարկել է գործադրել առայժմ իբրեւ փորձ: Յետոյ, եթէ հարկաւոր լինի, գործընական անհրաժեշտ փոփոխութիւնների ենթարկելով՝ պարտադիր կը դարձնուի: Բացի այդ, կաթողիկոսը՝ Ախալցխայի և Ախալքալաքի վիճակների հայ ժողովրդի անունով վերջերս տուած մի կոնդակում, ի միջի այլոյ, յորդորում է գիւղական ազգաբնակչութիւնը թողնել աւելորդ, անմիտ և չոպլ ծախսերը: Այդ կոնդակը Ախալցխայի առաջնորդական փոխանորդ Բարգէն վարդապետը սեպտեմբերի 29-ն կարդաց Ախալքալաքի եկեղեցում, որից յետոյ քարոզ խօսեց՝ մատնանիչ անելով գիւղացիների տնտեսական ծանր դրութեանը վրայ և այդ դրութիւնը բարւոքելու նշանակութեան և միջոցների մասին: Այլ փոխանորդը՝ հետն առած այստեղի գործակալ վարդապետին՝ գնաց գաւառի գիւղերը շրջելու, եկեղեցիներում կաթողիկոսի կոնդակը կարդալու և քարոզներով յորդորելու ժողովրդին, որ «զխագինը» և այլ վեասակար սովորութիւնները թողնեն:

Ի հարկէ, դժուար է դարաւոր սովորութիւնը միանգամից արմատախիլ անել, բայց եթէ այսպէս շարունակուի և գիւղական քահանաները անկեղծօրէն կռուեն այդ չարիքի դէմ, մի քանի տարուց յետոյ՝ հազար տեսակ չարիքների պատճառ դարձող «զխագինը» ընդմիջտ աւանդութիւնների շարքը կանցնէ:

Ծանկալի է, որ քահանայական ժողովները երբեմն պարբերաբար կրկնուեն զանազան գործնական հարցերի առիթով: Ժողովները մեծ կրթական նշանակութիւն կունենան հէնց իրանց քահանաների հոմար, մանաւանդ՝ երիտասարդ քահանաների:

ՍԱԼԼԻԻՄԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ

„Պրասուզուած զանգը“ Հառապումանի.—Հիւսիսի միտքը.—Ի՞նչ է ուզում
ասել Հառապուման իր պիէսայով.—Հառապուման և Նիցշէ.—„Տօնածառ“,
Նեմիրովիչ-Դանչենկօի և „Ոչ մի բոսկէ հանգիստ չունեմ“ Մեանիցկու.—
„Տրիլբի“ Գէի.—Հրէական ազգի ոգին.—„Օտարներ“ Պօտապենկօի.—Նիւ-
թապաշտական, գործնական ոգին մեր „ուռած“ և „գեր“ ժամանակում.—
„Ուրիշ Ախստա“ Գուցկօվի.—„Օտելլօ“ Շէքսպիր և հայ բեմը.—Պ. Կարա-
Մուրզայի կօնցերտը:

Թիֆլիսի հայոց զրամատիկական ընկերութեան խմբի
ներկայացումները շարունակուում են և, բարեբաղդաբար կարելի
է ասել, յաջողութեամբ: Ծշմարիտ է, թատրոնը միշտ բազմա-
մարդ չէ լինում և բնականապէս մոռաքը չէ գոհացնում, եր-
բեմն այս կամ այն պիեսայի ընտրութեան դէմ արդարացի
տրտունջներ են լսուում, բայց այդ բոլորը գործի գույշէ սլըզը-
նաւորութեան հետ կապուած անպատեհութիւններ են, որոն-
ցից, երեւի, ժամանակը մեզ կ'ազատի: Ասում են, որ երբ տա-
րիներ առաջ առաջին անգամ լուր տարածուեց թէ հայ լեզուով
Համլէտ են խաղալու, լսող օտարները երեւոյթի անսովորու-
թեան հանդէպ զարմացած՝ հեզութեամբ նկատում էին. Ասենք
թէ բոլորը հնարաւոր եղաւ, բայց հայերէն լինչպէս կարելի է
արտասանել Համլէտի փիլիսոփայական անվճռողականութիւնը
բնորոշող յայտնի ֆրազան: Եկաւ Ադամեան, խաղաց Համլէտ և
ի մեծ զարմանս ամենքի հայերէն քաղցրահնչիւն կերպով ար-
տասանեց՝ «Լինել, թէ չը լինել»: Տաղանդի և հասարակութեան
գիտակցական վերաբերմունքի առաջ իլլիւզիաները հեշտութեամբ
իրականութիւն են դառնում և անյաղթելի համարուած դժուա-
րութիւնները կամայ-կամայ անհետանում: Ադամեան չունենք,
բայց շնորհալի դերասաններ կան, ընդունակ շարունակելու
բեմական գործը, եթէ ոչ Ադամեանի փայլով, գէթ պատուա-
ւոր կերպով: Անցնենք փաստերին:

Անցեալ հոկտեմբերի 25-ին Վուսթը Ներկայացրեց Հառապմանի «Խորատուղուած զանգը»։ Այդ պիեսան արտաքուստ յիշեցնում է այն գրաւիչ հէքիաթները, որոնք օրօրել են մարդկային իւրաքանչիւր սերնդի գերբնականի սիրահար մանկութիւնը, որոնք ծնունդ լինելով հազիւ թոթովող մարդկութեան մանուկ երեւակայութեան բնականապէս գրաւիչ են երեխաների համար։ Խորատուղուած զանգը հէքիաթի պէս արտաքուստ չափազանց գրաւիչ է ներկայացրած բնութեան գեղեցիկ տեսարաններով, ֆանտաստիկ պատկերներով, նաեւ գերբնական անակնկալներով։ Եւ այդ բոլորը ըստ երեւոյթին թւում է այնպէս հասկանալի, այնպէս պարզ, այդ ոգիները, այդ ֆէաները, որոնք գնում, դալիս են, կայտոում և երգում, վշտանում և ուրախանում իսկ և իսկ մարդկանց պէս։ Բայց հարցը դրանով չի վերջանում։

Հէքիաթները, բնութիւնը, լեռները ու անտառները, լճերն ու գետերը խօսեցնող, կենդանացնող այլաբանութիւնները միշտ երկու պատկեր ունեն՝ մէկ արտաքինը, որ այնպէս հասկանալի է թւում անգամ մանուկներին, և միւսը՝ ներքինը, որ պարունակում է շատ անգամ կեանքի խորին փիլիսոփայութիւնը և մտածել է տալիս յարուցած բարդ խնդիրների վրայ։ Հառապմանի պիեսան այդ երկու պատկեր ունեցող այլաբանութիւններից մէկն է, հասկանալի և գրաւիչ արտաքուստ, խոտիմաստ կ'փիլիսոփայօրէն խորհրդաւոր ու դժուարըմբռնելի ներքուստ։ Զարմանալի չէ, որ այդ պիեսայի ներկայացումից յետոյ, ամեն անգամ, և կարծեմ ամեն տեղ, մի փոքր մտածող մարդիկ՝ շուրս են դնում թատրոնի միշտ բազմաթիւ «Լինչեր» և «Ինչո՞ւներ» շրթունքներին և մտազբաղ։

Պէտք է ասել նաեւ, որ Հառապմանի այս յայտնի գործը դժուարհասկանալի է ոչ միայն այն պատճառով, որ ալլեգորիա է. և բնականաբար ըմբռնելի դառնալու համար որոշ մտաւոր աշխատանք, ուշադրութիւն և քննադատական կարողութեան լարումն է պահանջում, այլ և նրա համար՝ որ այդ այլաբանական գործը դերմանական ազգի ծանր, մառախլապատ հանճարի արտադրութիւն է։ Առհասարակ հիւսիսային միաբը որքան առողջ է, ասես սասնամանիչների մէջ կարծրացած ու հաստատուն, բայց և դրա հետ միաժամանակ նա սովորաբար մշուշապատ է։ Հարաւի այն գրաւիչ, կենսաթաթիւ, մի քիչ թեթեւ (frivole) ժպիտը, մտքն այն անօրինակ պարզութիւնը, դարձուածքների այն գեղարուեստական բացութեան հասնող

գալարուն ոճը ծանօթ չէ ցուրտ երկրներում, ուր բնութիւնը ինքն է մուսլի, մթութեան ու խորհրդաւորութեան մայրը:

Հիւսիսում, ինչպէս ամեն բան, նոյնպէս և միտքն ասես մշտապէս սքողուած է մի խորհրդաւոր ծածկոցով, նա նման է հիւսիսային երկրների շամանդաղի մէջ լողացող լեռներին ու բլուրներին, որոնք հեռուից նայողի համար հազար ու մի ձև են ընդունում, գալարում, երկարանում, բացւում, կրկին կծկւում են և անտառային ֆէաների պէս հեշտութեամբ չեն ներկայանում իրանց իսկական պատկերով: Գերմանական միտքը, որպէս հիւսիսային միտք, առանձնապէս սիրահար է խորհրդաւորութեան և հեշտութեամբ հակամէտ է դէպի այլաբանութիւնները, դէպի մութ, դժուարըմբռնելի, շատ անգամ գերբնական էլէմենտների լեզուն: Եւ այս յատկութիւնը, որ արտայայտւում է մտքի ստեղծագործութեան համարեա ըլլոր արդիւնքների վրայ, առանձնապէս շեշտւում է գերմանական փիլիսոփայութեան և դեղարուեստի մէջ: Դեռ Գեօթէն իր Ֆաուստով, մարդկային երկու սեռերի հոգու մէջ վառուող, յարատեւ տենչը, արուի և էգի յաւիտենական երգը դրեց մի սքանչելի այլաբանութեան մէջ, պարուրեց հիւսիսի խորհրդաւոր մշուշով: Կանտոն իր փիլիսոփայութեամբ մարդկային մտքի առաջ մի մուսլ անդունդ բացեց, հիւսիսային լեռների մի անդունդ, ուր նայելն անգամ գլխի պտոյտ է առաջ բերում, այն աստիճան խորհրդաւոր է, այն աստիճան դժուար վերձանելի այն ինչ կատարւում է, ինչ ծածկւում է այն սեւ վեհի մէջ: Հեգելը Կանտի բաց արած այդ մութ անդունդների վրայ նսեւ սեւ ամպեր կուտակեց, այնպէս որ ճանապարհորդն լեռնային վերջին արահետն էլ կորցրեց: Եւ այսպէս ուրիշ շատերը:

Այժմ, որպէս նմուշ, մեր առջեւ դրուած է Հաուստմանի «խորասուզուած զանգը», մի զուտ գերմանական գործ, հիւսիսի թաւ ու կուսական անտառների, խորունկ ձորերի, բարձրաբերձ լեռների մէջ ապրած ժողովրդի մտքի ստեղծագործութիւն: Անշուշտ գերմանական հասարակ ժողովուրդը տակաւին մոռացած չէ տնտնիների շարայարած ֆանտաստիկ հէքիաթները, դեռ ձմեռային երկար գիշերները, երբ դրսում կատաղի քամու թափի տակ հեծում են ձիւնապատ եղեւնիները, գերմանացի մանուկները կրակի առաջ նստած՝ ծեր տատերի չրթունքներից հետաքրքրութեամբ ու անորոշելի երկիւղով լսում են անտառային ֆէաների, ողիների, ջրի պապերի մասին: Գուցէ և Հաուստմանի մանկութիւնը այդ հէքիաթներով, այդ ֆանտաստիկ պատկերներով մնում է և գուցէ հէնց դրանցից էլ նա հիւսել է իր «խորասուզուած զանգը» այլաբանօրէն, դնելով

նրա մէջ գերմանական հանճարին յատուկ ծանրութեամբ լուրջ ու զօռաբարմբռնելի մտքեր, հասարակական գաղափարներ:

Նախ քան բացատրենք, թէ ի՞նչ է թագնուած այս գեղեցիկ ալլեգորիայի տակ, թէ ի՞նչ է ուզում ասել Հաուպտման իր սգիների, իր ֆէաների բերանով, փորձենք ներկայացնել այդ պիեսայի նիւթը, նրան իբրեւ սիւժետ ծառայող փոքրիկ լեգենդան:

Դէպքը կատարւում է հիւսիսային գերմանական մի լեռնային գիւղում, մի բողոքական բարեպաշտ գիւղում, ուր կրօնը և հին անդրբրիստոնէական հաւատալիքներն ու նախապաշարմունքները տակաւին իշխող են, ուր մարդիկ հաւատում են այն բոլորին ինչով մանուկ միտքը բնակեցնում է բնութիւնը: Գիւղական հասկացողութիւնների բարձր ներկայացուցիչներն են այստեղ պատօրը, ուսուցիչը և սափրիչը. կրեքն էլ շնորհիւ իրանց պարպմունքի ազդեցութիւն ունեն գիւղում և իրանց գաղափարներով, այսպէս ասած, մարմնացնում են գիւղական խիղճն ու միտքը: Գլխաւոր հերոսն է վարպետ Հէնրիխ, որ համայնքի յանձնարարութեամբ ձեռնարկում է մի զանգ ձուլել լեռան կատարին յցուած մի եկեղեցու համար: Վարպետը հզօր է և հմուտ, նա աշխատում է լեռներում և նրա մուրճների ձայնից չրջակայքն է զղբողում: Գործն ընթանում է յաջող և արագ, վերջին օրն է. գիւղացիք խմբերով գնում են դէպի վեր, դէպի եկեղեցին նոր զանգը աշտարակի վրայ բարձրացնելու: Բայց այդ չի յաջողւում, լեռնային չար ոգիները դժգոհ են, նրանցից մէկը կարողանում է լեռան կատարից վար գլորել զանգը տանող սայլը: Վարպետը ջախջախուած՝ ընկնում է մի անդունդի մէջ, ուր ապրում է մի վհուկ, պառաւ Վիտտելխէն, իսկ նրա ձեռագործը, այն՝ որ պիտի հնչէր լեռներում «հրեշտակների աղօթքը», «երջանկութեան մխիթարութեան օրհներգը», այդ հրաշալի զանգը ժայռից ժայռ թաւալուելով, զօղանջելով ու հառաչանքով ընկնում է վար և խորասուզւում լեռնային լճակի մէջ: Ջարդուած ու վիրաւոր Հէնրիխին տեսնում է անտառային ֆէա Բաուտենդլէյն, սիրտում և խնամում է նրան լեռների միայնութեան մէջ և սիրում է նրան բուռն սիրով: Պատօրը ուսուցիչն ու սափրիչը գալիս, գտնում են Հէնրիխի սամու վարպետին այն իսոր ձորում, պատգարակով տանում են իր տունը և կնոջը Մաքգային յանձնում: Հէնրիխը ծանր հիւանդ է, նա մեռնում է, բայց անտառային ֆէան Բաուտենդլէյնը նրան չի մոռացել, նա յայտնւում է աղախնի կերպարանքով և իր հմայքով նրան վերակենդանացնում: Այստեղից սկսւում է պիեսայի երկրորդ մասը:

Հէնրիխը թողնում է իր տունը, իր կնոջն ու երկու զաւակներին, գնում է լեռները, աւելի բարձր՝ քան երբեւիցէ եղել էր, այնտեղ, ուր ապրում է Բառուտենդլէնը, այն բարի ոգին և թեւաւորուած նրա երկնային սիրով, նա ձեռնարկում է ձուլել մի նոր զանգ, յորովհետև առաջինը, որ խորասուզուեց լճի մէջ, «ձորերի համար էր և ոչ լեռների թագաւորութեան»։ Նոր զանգի մասին, Հէնրիխ ասում է՝ «գեռ երբէք իմ միտքը այդպիսի ստեղծագործութիւն չէ ծնել, նրա ձայնը կը լինի լաւագոյն մեծադի, նա ինքն իրան հնչում, ղօղանջում ու երգում է, բաւական է միայն, որ ես ձեռք դիպնեմ, այ այսպէս և իսկոյն լսում եմ ձայներ, աչքերս եմ փակում և վայրկեանպէս ձև ձևի յետեից ծնւում են պարզ կերպով... Այնտեղ, վերս լեռներում ես կամենում եմ նոր հիմքեր ձգել, և նրանց վրայ բարձրացնել նոր տաճար»։

Շրջակայքում լուր է տարածւում, որ յայտնի, պարեպաշտ վարպետը իր կնոջն ու զաւակներին ուրանալով՝ լեռնային ոգիներին բռնփն է դարձել, պատրաստւում է մի ինչ-որ հրէշաւոր բան, մի կախարդական գործ։ Պատուօրը յուզուած գալիս զրուսում է նրան դարձի բերելու այդ կորստաբեր ճանապարհից։ Զանքերն անօգուտ են անցնում, նա զայրացած սպառնում է վարպետին երկրային նետերով և հեռանում։ Հէնրիխը շարունակում է իր դիւթական գործը։ Լեռնային ոգիները կատաղած են նրա դէմ, որոնհետև նրանց հանգիստը խռովուած է, զիւղում ու չըջակայքում, ամենքը մոռնում ու սպառնում են, որ բովհետև նա կատարում է մի բան, որ վեր է ամենքի հասկացողութիւնից, որի խորհրդաւորութիւնը ծնւում, սարսափեցնում է։ Զինուած ամբոխը գալիս է խորտակելու նրա լեռնային դիւթական գործանոցը և փշրելու նրա զանգը, գալիս են հեռուից նաև իր երկու երեխաները, որոնք բերում են մի փոքրիկ կփի մէջ իրանց մեռած մօր արցունքը, միաժամանակ լճի յատակում ընկած զանգը ղօղանջում է թափով, ահագին, սասանեցուցիչ թափով։ Ֆէայի հմայքը չի օգնում, նրա սէրը չի փրկում Հէնրիխին, և նա ընկնւում է ու թողնում գնում։ Նա կրկին յայտնւում է լեռներում, փորձում է բարձրանալ այնտեղ, ուր ինքն առաջ աշխատում էր վսեմ, գաղափարական գործի համար, և ուր այժմ իջնում է հրդեհն ու աւերածը։

«Ես պիտի բարձրանամ, ասում է նա վիտալիսներին, այն չէնքը, որ բոցերի մէջ է այժմ, իմն է, իմ ստեղծագործութիւնն է, հասկանում ես, ես շինեցի այն, և բոլորն ինչ կար իմ հօգուտ, ո՛ր, բոլորը, բոլորը, ինչ որ էի, ես նրա մէջ դրեցի... ևս չեմ կարող... էլ չեմ կարող»։ Թեւերը ջարդուած արծուի պէս

այժմ նա ընկած է իր աւերուած բնից ներքեւ՝ անկարող վեր սլանալու. ուստի նա նստում է քարի վրայ՝ խորտակուած ու յուսահատ։ Այն ժամանակ, որպէս գերագոյն փորձ՝ Վիտորլսէնը նրան տալիս է երեք դիւթական բաժակ, մէկը՝ սպիտակ, մէկը՝ կարմիր և երրորդը՝ դեղին գինիով լցրած։ Առաջին երկուսը խմելով Հէնրիխը կարող է նորէն տեսնել իր պաշտպան Ֆէանսը՝ վերստանալ իր նախկին ոյժն ու զօրութիւնը, բայց ճակատագրապէս նա ստիպուած կը լինի խմել նաև երրորդ բաժակը։ Հէնրիխը խմում է երեքն էլ և մեռնում իր նախկին սիրուհու, Բառետենգլէյնի գրկում, մրմնջալով՝ «Մեռաւ խաւարը! Ծագում է արեւը... Արեւ. գիշերը երկար է»։

Ինչ է ուզում ասել Հաուպտման իր այս այլաբանական պիէսայով. ինչ է նշանակում վարպետ Հենրիխի առաջին և ինչ երկրորդ զանգը և ինչու վարպետի այս տխուր վախճանը։ Այս հարցերին զանազան մարդիկ պատասխանել են տարբեր եղանակով. հետո լինելով այստեղ լաւագոյն բացատրութիւնը տալու յաւակնութիւնից, կտրծում ենք սակայն, որ ճշմարտութիւնի շատ հեռու չենք լինի, եթէ ասենք, որ Հաուպտման իր այս երկով տալիս է յաւիտենականապէս դէպի գերագոյն երջանկութիւնը, դէպի նոյն-իսկ անկարելին, դէպի այսպէս ասած աստուածութիւն ձգտող մարդու բուռն ջանքերի և նրա պարտութեան վսեմ տրագեդիան։ Նրկրաւոր ստեղծուած, նիւթով այս ցեխէ զանգուածին կպած, որի անունն է աշխարհ, մարդն իր հոգով յաւիտենականապէս դէպի երկինք, դէպի գերագոյն երազներ, դէպի անհունի խորհուրդն է սաւառնում, այնտեղ երջանկութիւնների երջանկութիւնը գտնելու համար։

Հաուպտմանի դրաման, տիեզերական այդ մեծ ու անվախճան տրագեդիայի մի գործողութիւնն է, կատարուած մարդկութեան պատմութեան, էվոլյուցիայի անսահման ընթացքի մի մոմենտում։ Եւ հէնց դրանում պէտք է փնտռել այդ պիեսայի ոյժը, դրանով պիտի բացատրել այն մոռյալ խոհերը, որոնք ճշնշուտ են մարդու հոգին նրա ներկայացումը տեսնելուց յետոյ։

Հէնրիխը ինքը մարդն է, յաւիտենական ճանապարհորդը, որ վազում է անյայտի յետեւից, իր հետապնդումների մէջ նա անցել է մարդկայինի սահմանը, և ենթարկւում է զարհուրելի կարսաւորոփի։ Երբ լեռնային Ֆէանս նրան գտնում է՝ վիրաւոր, ջարդուած իր դրանն ընկած՝ ասում է.

«Ինձ թւում է, որ դու սովոր չես լեռներին. դու երեի այն մարդուկների ցեղից ես, որոնք տէր են այնտեղ՝ ներքեւում և բարձրացել ես շատ բարձր։ Այո, Հէնրիխը այն մարդուկների ցեղից է և աշխատում, տքնում է այդ մարդուկների

համար, նա մի զանգ է ձուլում նրանց եկեղեցուն, նրանց երջանկութեան և միաթիարութեան համար: Բայց այդքանը քիչ է, շատ քիչ մի մարդու համար, որի վրայ ծանրացած է առաքելութեան, նահատակութեան ծանր ճակատագիրը. Հէնրիխը մի ընտրեալ է, և այդ իմանալու համար անհրաժեշտ է կարծես մի զօրեղ հոգեկան ցնցում, մի մահ և մի վերածնութիւն, Պասկալի ասածի պէս, թէ «մի ծանր հիւանդութիւնը փրկարար է»: Նա ընկնում է, փչրւում, համարեա մեռնում, որպէս զի իմանայ, թէ «կեսնքը մահ է և մահը՝ կեսնք», ինչպէս ինքն է ասում:

Նա այժմ միայն հասկացաւ, որ իր գործը, առաջին զանգը «Հարթավայրերի և ոչ թէ բարձր լեռների համար էր... որ նա անկատար գործէր»: «Ես, ասում է Հէնրիխ, սրտի ցաւով էի ընթանում նրանց յետեւից դէպի կատարները, երբ աղմուկուելով և ուրախ-ուրախ նրանք տանում էին զանգը դէպի վեր և նա ընկաւ... Ես էլ չեմ կամենում ծառայել հարթավայրերին, նրանց աշխարհը էլ չի հանգստացնում իմ յարատեւ եռուն արիւնը: Բոլորն ինչ իմ հոգում ապրում է այն ժամանակից, որ ես եղայ լեռներում, ձգւում է նորից դէպի ամպերից վեր բարձրութիւնները, թափառելու մառախուղների ծովի վրայ և ստեղծագործել բարձունքների թափով: Եւ որովհետեւ ես անդօր եմ այդ անելու, հիւանդ՝ ինչպէս այժմ, և որովհետեւ թէ ես բարձրանում էլ, նորէն՝ կ'ընկնեմ, աւելի լաւ է թող մեռնեմ: Երկրորդ անգամ ապրելու համար ես պէտք եմ... սրտումս զգամ առողջութիւն, կրկաթ՝ ջլերիս մէջ, ոյժ՝ ձեռներումս, և խելագար տիրապետողի ետանդը, որպէս զի կարողանամ ստեղծել մի սքանչելի, մի չը տեսնուած գեղեցիկ գործ»:

Իր անկումից յետոյ, իր պատկաւեան հիւանդութեան մէջ նրա աչքերը բացում է ոգին, մայր ընտելեան յարատեւ դէպի կատարելութիւն ձգող, դէպի անյայտը և գեղեցիկը գիմող գաղտնի զօրութիւնը, որ ապրում է անտառների և լեռների խուլ ամայութեան մէջ. «Ես մարդ եմ և կոյր, ասում է Հէնրիխ Բառտենդէյնին, բաց իմ աչքերը», և երբ առաջին անգամ տեսնում է, «Նայիր, Նայիր ինձ, ասում է հիւանդ Հէնրիխը Բառտենդէյնին, քո խորհրդաւոր, խորունկ հայեացքով: Հասկացիր, քո աչքերում վերստեղծւում է աշխարհը, երկնային կապոյտը իր թափառող ամպերով, իր լեռներով, կրկին դիմում է ինձ աշխարհը... Ընկայ, ես ապրում էի. զանգն էլ ընկաւ, մենք երկսով, ես էլ, նա էլ, ով առաջինը, ես և նա իմ յետեւից, թէ նա, ես նրա յետեւից, ով կ'ասի, ով կարող է հասկանալ... մենք

ինձ մօտ, իմ ձեռքը մեղաւոր չէ, իսկ դու սուրբ ես: Այո, ես քեզ ճանաչում էի: Ես քեզ տեսել եմ: Ո՛ւր: Ես ապրում էի, ես պայքարում էի, որքան շատ օրեր ես քո մասին եմ մտածել: Ես աշխատել եմ քո ձայնը զանգի հնչիւնների մէջ դնել... Այդ յաղթանակի մասին ես միշտ մտածել եմ և նրան համեմել ես չը կարողացայ երբէք և լալիս էի արիւնի արցունքներով: Անկուսից և «հիւանդութիւնից» յետոյ Հէնրիխի ցանկութիւնն է իր իսկական առաքելութիւնը կատարել, հեռանալ աշխարհի մանր մունր կարիքներից ու յաւերից և վեր բարձրանալ այնպիսի տեղեր, ուր կարելի է ընդգրկել ամբողջութիւններ, ուր կարելի է գերազոյնը երազել ու փնտռել:

«Քո քնքոյշ ձեռքով, ասում է նա իր բարի ոգուն, ազատիր ինձ այս յոգնեցուցիչ աշխարհից, որի հետ ժամը կապել է ինձ չլթայով, ինչպէս խաչին մեխած, ազատիր ինձ, դու այդ կարող ես, ես գիտեմ, և մէկ էլ... այստեղ, իմ գլխից հան նաեւ այս փշէ պսակը, որ նրանց ձեռներով է հիւսած ինձ համար: Պսակ պէտք չէ. սէր, միայն սէր»: Ոգին կատարում է նրա ցանկութիւնը, նա նրան կտրում է աշխարհից, և բարձրացնում է վեր, վեր լեռնակատարները, մօտիկ երկնքին և այստեղ՝ սնահոգ դէպի ամեն ինչ, որ փռուած է իրանից ներքեւ հարթութեան վրայ, անտարբեր դէպի ամեն ինչ, որ անցնում, դառնում է իր ոտքերի տակ, գերազոյն առաքելութեան համար մոռացած սնդամ իր զաւակներին և իր կնոջը, ողբերգուած Բաուդենտէյնի գիւթիչ սիրով, նա սկսում է իր սիրոյ մեծ առաքելութիւնը: Չարիքի թագաւորութեան մէջ հնչում է նրա մուրճը անագնադղորդ, չար ոգիները դողում են իրանց այրելութեամբ և մոմոում, բայց Հէնրիխի փոյթը չէ, նա յանձն է առել սիրոյ վսեմագոյն առաքելութիւնը, նա գտել է, որ ժամանակակից հասարակական կազմը խախուտ է, անբաւարար, և որ հարկաւոր է նոր հիմունքների վրայ դարձնել՝ նոր հասարակութիւն, նոր կարգեր, որովհետեւ, ասում է նա պատասօրին «Ձեր փոքրիկ եկեղեցին մասամբ տւերուել, մասամբ այրուել է, և այդ պատճառով այնտեղ լեռներում ես կամենում եմ ձգել նոր հիմունքներ և այդ հիմքերի վրայ նոր տաճար»: Եւ այդ նոր կարգերը, նոր քաղաքիւնները աւետելու համար նա բարձրագոյն լեռներում ձուլում է ագնիւ մետաղից մի նոր հսկայական զանգ, որ պիտի հնչի ինքն իրան, բարձր ու քաղցր, հէնց որ Հէնրիխ նրան զիպչի իր ձեռքով: Բայց այնտեղ հարթավայրում մի այլ կեանք կայ, նա, որին առաջ պատկանում էր Հէնրիխը, որի վարիչներն են պատօրը, ուսուցիչը և սափրիչը: Այնտեղ ամբողջ կայ, մոլեռանդ, հին, մզլած հասկացողութիւնների

կոյր հետեւող, նորութիւններէ, խոշոր ցնցումներէ զողացող, նա՛ որին պատօրի քարոզները մեխել են անշարժութեան ժայռին, որի հայեացքը դարձած է դէպի երկինք, որպէս գերագոյն տնօրինողը բաղդերի՝ այստեղ երկրի վրայ: Պատօրը դալիս է յանուն հարթավայրի նզովելու Հէնրիխին, որ խիզախութեամբ է երկրնքի առաջ նզովելու նրա գործը՝ որ վերաւորում է Աստուծոյ:

Ամեն ինչ վերջացած է, ասում է պատօրը, դուք խորապէս թաթախուել էք չարիքի մէջ... էլ ոչինչ չունեմ ասելու, բայց միայն մի բան մի մտապէք, կախարդների համար դեռ վառ են խարոյկները որպէս առաջ, հերետիկոսներին, ինչպէս առաջ և այժմ սպասում է կրակը. Vox populi, vox dei. Այն ինչ դուք այժմ անում էք գաղանի, որպէս հեթանոս մեզանից ծածուկ չէ, ձեր վարմունքն ամեն տեղ յարուցանում է զգուսնք: Ձեզ ատում են: Եւ չատ հաւանական է, որ երբ վրդավունքը սաստիկ զօրանայ, որ էլ զսպել անկարելի լինի, այն ժամանակ ժողովուրդը տեսնելով իր սրբութիւնը վիրաւորուած, խմբով ներս կը խուժի ձեր արհեստանոցը և անողորմ կերպով կ'աւերի:

Սպառնալիքները Հէնրիխին չեն վախեցնում, չէ՛ որ նա մի առաքեալ է, քարոզող նոր կեանքի. նա ընդունում է, որ պատօրի ասածը հնարաւոր է, որ ժողովուրդը, ամբողջ միշտ քարեր է չլրտել իր իսկ փրկիչների գլխին: Դեռ չեմ զարհուրում, ասում է նա, այրող ծարաւով ամենջողին ևս մօտեցնում եմ դիմով լի բաժակը, իսկ նա մի հարուածով վար է ձգում իմ ձեռքից և բաժակը և գինին, դա նրա կամքն է, և դույզէ, նրա ճակատագիրը, ևս մեղաւոր չեմ: Մեղքի և անմեղութեան սահմանները տարբեր մարդկանց և տարբեր դասակարգերի համար նոյնը չեն. ինչ որ անմեղ է Հէնրիխի համար, նոյնը մեղաւոր գործ է պատօրի համար, ինչ որ վսեմ է ընտրեալ հոգիների համար, նոյնը չատ անգամ անհասկանալի և յանցաւոր փորձ է մոլորուած ու խաւար ամբողիների համար: Ժամանակն է որոշում անցեալի արժէքը, իսկ մինչեւ այդ զոհեր, զոհեր և դարձեալ զոհեր...

Եւ Հէնրիխը զոհւում է, ամբողջը աւերում է նրա գործանոցը, նա չի ուզում նոր զանգը, որ փրկութիւն պիտի աւետէր, նա վախենում է այն բարձրութիւնից, որտեղից պիտի հնչէր նրա գիւթական ձայնը, նա գտնում է, որ պատօրը իրաւունք ունի, որ զարմանալի վարպետը երկնքի դէմ է խիզախում, և անհրաժեշտ է խորտակել, վար քաշել նրան և Հէնրիխը խորտակում է, վար ընկնում ջախջախուած, այլ եւս երբէք վեր չը բարձրանալու համար: Առաւօտ է, լոյսը բացւում է,

կրք Հէնրիխ մեռնում է, նա տեսնում է արեւը և բացականչում՝ «Արեւը ծագում է... Արեւը, գիշերը երկար է»։ Արեւը ծագում է, բայց գիշերը երկար է, որովհետեւ այս արեւը չէր Հէնրիխի փնտռածը այս չէր, որ նա սպասում էր, նրա համար այս արեւով հանգերձ դեռ գիշեր է աշխարհի վրայ։

Հէնրիխի վիթխարի պատկերի առաջ մարդ ակամայ յիշում է Նիցչէի Գեր-Մարդը, բայց այս երկու տիպերը չեն ծնւում միեւնոյն գաղափարական զանգուածից։ «Մարդը մի ձգուած լար է, ասում է Նիցչէ, անասունի և Գեր-Մարդի մէջ, մի լար անդունդի վրայ, ինչ որ մեծ է մարդու մէջ այդ այն է, որ նա մի կամուրջ է և ոչ նպատակ և ինչ որ կարելի է սիրել մարդու մէջ այդ այն է, որ նա մի անցք է... Հէնրիխի սէրը արտայայտւում է այլ կերպով, նա, ամբոխի դէմ դուրս գալով ասում է՝ «Ձեզ համար՝ ես ձեզ դէմ եմ, ես հա իմ լոգունդը»։ Հառապումանի համար մարդը նպատակ է, ինչպէս և Կոնտի համար, Նիցչէն նրան սիրում է միայն իբրեւ մի միջոց այլ նպատակի հասնելու համար, որը նրա Գեր-Մարդն է։

Հառապուման արդէն գտել է իր Գեր-մարդը և նա նրան տառապեցնում է աշխարհի համար, Նիցչէն տրորում, քամում է աշխարհը նրանից Գեր-Մարդը ստեղծելու։ «Աղատիր ինձ այս յոգնեցուցիչ աշխարհից» ասում է Հէնրիխ իր բարի ոգուն, ճաւատարիմ մնացէք աշխարհին, ասում է Ջարադուատրան և մի հաւատացէք նրանց, որոնք ձեզ խօսում են գերաշխարհային յոյսերից»։

Այստեղ, տեղը չէ աւելի երկարացնել այս համեմատութիւնները, որոնցով գուցէ կարելի կը լինէր աւելի որոշ կարծիք կազմել Հառապումանի Հէնրիխի և Նիցչէի Գեր-Մարդի նմանողութիւնների և տարբերութիւնների վրայ, բայց ընդհանուր խօսքերով կարելի է ասել, որ մէկը յիշեցնում է միւսին, որ նրանք երկուսն էլ մի-մի տիտաններ են, ամբոխներից վեր կանգնած, և որոնք աշխատում են տիտանեան բաներ անել, բայց տարբեր ձգտումներով։

Անպայման չնորհակալութեան արժանի են նրանք, որոնք «Խորասուզած զանգը» հայ բեմի վրայ դրեցին։ Ճշմարիտ է, պիեսայի հիմնական գաղափարը ինչպէս այս յօդուածի սկզբում ասայինք, շատերին անհասկանալի մնաց, բայց հէնց այն հանգամանքը, որ այդ ներկայացումը յարուցանում է այնքան հարցեր, որ մտածել է տալիս, հետաքրքրութիւն է զարթեցնում դէպի շատ հառաքակական, բարոյական խնդիրներ, բաւական է, որ այսպիսի գործը դարձնի մի դրսւիչ անհրաժեշտութիւն։

Մեր ղերասանական խմբի կազմն ի նկատի ունենալով՝ կարելի է ասել, որ դերերը լաւ էին բաժանուած: Այնպիսի պիեսաներ, ուր ֆանտաստիկը և դերբնականը մեծ դեր են խաղում, հեշտութեամբ կարելի է չափազանցութիւնների մէջ ընկնելով ծիծաղելի կարրիկատուրա առաջ բերել: Ուրախ ենք ասել, որ ներկայացումը ծայր է ի ծայր անցաւ միանգամայն բաւարար: Գլխաւոր դերակատարների մէջ առաջնութեան զաւիսին պատկանում է պ. Արէլեանին, Հէնրիխի դերը կարծում ենք ժամանակով նրա լաւագոյն դերերից մէկը կը դառնայ: Դա շատ կողմից համապատասխանում է նրա տեմպերամենտին, նրա լայն, համարձակ շարժումներին, անգամ նրա կազմուածքին:

Պ. Պետրոսեան հիանալի պատուր էր:

Տիկին Մայսուրեան Բաուտենդըլէյնի դերով յանձն էր աւրել մի դժուար, բայց գրաւիչ գործ: Սիլֆայի անհոգ եթերային պատկերը նա կարողացաւ ներկայացնել բաւական յաջող և այդ շնորհիւ կօկետ, կենսուրախ տիպեր ներկայացնելու իր անպայման ձիրքին: Մի բան, որ դժուարացնում էր տիկնոջ գործը, և որ նրա ընդունակութիւններից անկախ հանդամանք է, դա նրա կազմուածքն էր, որ հեշտութեամբ չէր ուղում փոքրանալ ու եթերանալ Սիլֆային համակու համար: Պ. Մամիկոնեան անտառային ոգու դերում կարող էր մի փոքր աւելի աշխոյժ լինել և պոչի կէսը համարձակ կարող էր կուլիսների յետեւում թողնել, դա խաղին ամենեւին չէր վնասի: Պ. Յարութիւնեան ջրային ոգու դերը գլուխ հանեց և ամբողջութիւնը բարեխղճօրէն լրացրեց:

Հոկտեմբերի 28-ին խումբը ներկայացրեց «Տոնածառ» Նեմերովիչ-Դանշենկօի և «Մի րոպէ հանգիստ չունեմ» Մեանիցկու: Դա մի թիւրիմացութիւն էր:

Նոյեմբերի 4-ին խաղացին «Տրիլբի», հեղ. Գէի, Թարգմանութիւն Յ. Արէլեանի: Նիւթը վերցրած է արտիստների կեանքից, այն կենսուրախ, անհոգ, թիթեռների պէս մի օրով միայն ապրող մարդկանց միջավայրից, որոնք կարծես ճակատագրապէս իրանց խենթութիւններին միացնում են սէր դէպի գեղարուեստը: Բայց պիեսայի հիմնական նպատակը այդ կեանքը ներկայացնելը չէ, թէեւ Տրիլբի, արտիստներին մօտել ծառայող ազնիւ աղջկայ անունով մկրտուած է այդ դրամատիկական գործը: Պիեսայի խոշոր և հետաքրքիր տիպը՝ Տրիլբին չէ, այլ Սվէնգալին, մէկն այն անթիւ հրէա տաղանդներից որ դարերից ի վեր տառապող ցեղը որպէս պատասխան աշխարհի անողոր-

մութեան և իր կրած հալածանքների, մէկը միւսի յետեւից դուրս է մղում իր հարուստ ծոցից, և դռներում սողալով, ծեծուած, անարգուած, հրաշքներ է գործում: Հեղինակը այդ տիպի մէջ գրել է այն յատկութիւնները, որոնք հրէային դարձնում են անխոցելի իր թափառական և ցաւոտ գոյութեան ընթացքում: Սվէնգալին երաժիշտ է, հանճարեղ արուեստագէտ և միեւնոյն ժամանակ հիպնոզայնելու գիւթական կարողութիւնն ունի, որով կարող է չահագործել՝ երբ և ում կամենայ: Արտիստների չըջանում նրա հետ վարւում են ինչպէս յետին արարածի հետ, ամեն վայրկեան հարուածները տեղում են նրա մէջքին, զլխին, նրան անարգում են, չարչարում, բայց Սվէնգալիի փոյթը չէ, նա այնտեղ է, նրանց մէջ, հարուածների տակ գալարւում է օձի պէս և ապրում: Աշխարհը նրա տաղանդը չէ ճանաչում, Սվէնգալի անունը դեռ ոչ ոք պատկառանքով ու հիացմունքով չէ արտասանում, միայն սղորմելի ժէկկոն է, թափառաշրջիկ, զզուած դերասանը, որ հաւատարիմ չան նման հետեւում է նրան և գիտէ ինչ է անում: Բայց Սվէնգալին չի յուսահատւում, հրէան յուսահատուել չը գիտէ, նա տքնում է, կրում է ամեն մի վիրաւորանք, ամեն մի նեղութիւն հոշակաւոր, մեծ դառնալու համար: Նրան չարչարում են, զրկանքների ենթարկում, բայց դրա փոխարէն նա ցոյց կը տայ աշխարհին թէ ինքը ոյժ է, մեծ ոյժ, և նա կ'իշխի իր հանճարի ոյժով և նա հասնում է իր նպատակին: Տրիլբին գեղեցիկ կին է, հրաշալի կազմուածքով մօղել, Սվէնգալին նրան հիպնոզայնում է, հրամայում է երգել բեմերի վրայ, և դառնալ մեծանուն և երգչուհի, բայց ինչ տանջանքների գնով: Այդ կինը հրէական վրէժխնդրութեան զոհն է, քաւութեան նոխազը, որ տառապող ցեղը վերցնում է իր հալածողների չըջանից: Ինչպէս տեսնում ենք պիեսայի հիմնական գաղափարը խիստ հետաքրքիր է, բայց քիչ անգամ է գրուել գրամատիկական գործ, ուր տեխնիկայի մէջ այդ աստիճան արուեստականութիւն լինի: Արդէն երբ գեղարուեստական գործի մէջ այդ աստիճան խոշոր բաժին է ունենում հիպնոզը, երբ հեղինակը հեշտ միջոց է գտնում ստեղծել անակնկալներ առանց որ այդ անակնկալները արդիւնք լինէին հոգեբանական կացութեան և իրերի խկական տրամաբանութեան, կարելի է ասել, որ գործն սպանուած է, որովհետեւ ամենատեսակ արքուրգներ դուրս թափելու ճանապարհը բաց է: Տրիլբին կարող է միշտ յաջողութիւն ունենալ հեռու չը մտածող և ֆէերվերկների, թեթեւ էֆֆէկտների, ցիրկին մօտեցող ներկայացումների սիրահարներին, բայց վերին աստիճանի անախորժ կը լինի նրանց համար, որոնք որոշ, բնական, հոգե-

բանօրէն նօրմալ պահանջներ ունեն որեւ է գեղարուեստական գործից։

Սվէնգալիի դերը կատարեց պ. Արէլեան. զրկանքների կնթակայ, անարգութեամբ, բայց տաղանդաւոր հրէայի տիպը այդ երեկոյ ունեցաւ իր լաւ բացատրողը՝ Տիկին Մայսուրեան, որ կատարում էր Տրիլքիի դժուար դերը յաջողութեամբ գլուխ հանեց իր պարտաւորութիւնը։ Բայց նա անպայման աւելի լաւ էր իբրեւ մօդել, քան երբ զրամատիզմ պիտի ներկայացնէր։ Առհասարակ եթէ ներկայ հայ գերասանական խմբի մէջ կայ մի արախտ, որի վերաբերմամբ ներողամտութիւնը իր իսկական տեղումը կը լինէր, դա Տիկին Մայսուրեանն է։ Շտապում են աւելացնել, որ այդ ներողամտ վերաբերմունքը բնաւ արդիւնք չէ տիկինը բեմական ընդունակութիւնների չափաւորութեան, այլ այն ծանրակշիռ հանգամանքի, որ նա անխտիր յանձն է առնում ամեն տեսակ դերեր։ Թատրոնական կոմիտէն է արդեօք նրան այսպէս ծանրաբեռնում, բեմասօրը, թէ ինքը՝ տիկինն է անտարբեր դէպի իր ընտրութիւնը, այդ չինք կարող ասել, բայց ինչ որ հաստատ է այդ այն է, որ այս աստիճան բաղմազան դերերի մէջ շատ աւելի խոշոր տաղանդ կարող էր խճճուել։ Դերասանական ամպլուան մի դատարկ խօսք չէ, նրա տակ ծածկուած են արտիստի հոգեկան կարողութիւնները, օտար, իրանից դուրս ծնած զգացմունքների վերապրելու իր ձիրքը։ Ամենայայտնի դերասաններն անգամ իրանց ամպլուան ունեն, նրանք կամ հանճարեղ կօմիկներ են, կամ հանճարեղ տրագիկներ, բայց ոչ երկուսն էլ միանգամից և հաւասար չափով։ Համարեա հաստատ կարելի է ասել, որ տիկին Մայսուրեան մի շնորհալի դերասանուհի է, երբ պէտք է ներկայացնել կօկետ տիպեր և համեմատաբար աւելի թոյլ, երբ պէտք է խորին դրամատիզմ արտայայտել։ Շատ բնական էր սպասել, որ տիկինը առաջին կարգի դերերին առաւելութիւն տար և ոչ երկրորդ։ Դա միակողմանիութիւն է, մենք համաձայն ենք, բայց ուրիշ կերպ չի էլ կարող լինել, աչխատանքի բաժանումն էլ միակողմանիութիւն է, սակայն դա իսկական յառաջադիմութեան անհրաժեշտ և հզօր գործօնն է։

Նոյեմբերի 11-ին խաղացուած «Օտարների» մասին շատ և շատ բան կարելի է ասել։ Հաւատացած եմ, որ դա տխուր, գուցէ և յոռետես, խոհերի մի առիթ եղաւ հանդիսականներից շատերի համար։ Եւ ճշմարիտ այդ պիեսայի ողւա հեղինակ Պօտապենկօն ընտրել է մի այնպիսի հակադրութիւն երկու հասարակական բարոյական դրութիւնների, որ անկարելի է առանց յուզմունքի նայել, անկարելի է ընդհանրացումներ չանել և

անալոգիաներ չը փնտռել մեր շուրջը, նա հանդէս է բերել վաթսու-
նական և ութսունական թուականների ուսու սերունդները նախկին
ուսուցիչ Դըբուլցեւի և սրա որդի Կոնստանդինի տիպերով: Բնա-
կան է թուում կեանքի մէջ փնտռել դառն փորձութիւններով
կենսական իմաստութիւն ձեռք բերած, զգոյշ, չըջանկատ, եօլա
դնալու փիլիսոփայութեան պաշտպան հայրեր և տաք — գլուխ,
ազնիւ արկածների, անձնագոհութեան, գրաւիչ գծութիւնների
սիրահար զաւակներ: Բայց անս Պօտապենիօն մեր առաջ դնում է
հայրերի և որդիների այլ սերունդներ, ուր իրերը ընթանում
են բոլորովին հակառակ կարգով, ուր հայրն է գաղափարական,
չիտակ, անձնագոհ, և որդին նիւթապաշտ, հաշուագէտ և զուրկ
որեւ է բարոյական պրինցիպից: Այս պիեսայի բոլոր տրագիդիան
այստեղ է, դերերի այս փոխանակութեան մէջ, պատաւած երի-
տասարդութեան և հոգով ջահիլ, ազնիւ, գաղափարական ծե-
րութեան ընդհարման մէջ:

Դըբուլցեւ, ալեղարդ մի ծերունի, նախկին ուսուցիչ է
վաթսունական թուականների գաղափարական սերունդի ներ-
կայացուցիչ, որ իր ծերութեան օրերում մնացել է նոյն ազնիւ,
իզէալներով յափշտակուող, չիտակ, գաղափարական մարդը,
որպէս սուսանող ժամանակ, այն յոյզի, խանդի, գծութիւնների
տարիներում: Իր շուրջն ամեն ինչ փոխւում է, ամեն ինչ ըն-
թանում է այլ ճանապարհով, հաշիւը, նիւթապաշտութիւնը բա-
րոյական կոմպրոմիսները խեղդում են ամեն ինչ, նոր սերուն-
դը բարոյական սքրութիւնները ամեն օր ոտնակոխ է անում,
հաւատը դէպի վսեմը և ազնիւը կրծտուում, արիւնոտում է
հրապարակով, և Շէքսպիրի ասածի պէս հաւնում է ժամանակ,
երբ՝

«... Ուռած դարու այս դերութեան մէջ

Պէտք է նոյն ինքն առաքինութիւնը

Ներողութիւն խնդրէ մոլութիւնիցը.

Այն, խոնարհուի, պաղատանք անէ

Եւ հրաման աղերսէ բարիք գործելու».

Եւ այդպիսի դարում նախկին ուսուցիչը իր բարոյական
ամբողջ պատկերով մնում է անդրգուելի, նա մի ժայռ է, որի
վրայ խորտակւում են բոլոր ակտայեր հովերը, նա մի եղակի,
սփոփիչ կրեւոյթ է:

Դըբուլցեւ տիրութեամբ է տեսնում բոլորն ինչ կատար-
ւում է իր շուրջը, նրա միակ միտքարութիւնը իր որդին է,
Կոնստանդինը, որին կրթել, դաստիարակել է իր բարոյական
գաղափարների, իր հասկացողութիւնների համեմատ, նա աշխա-
տել է նրանից պատրաստել մի ազնիւ մարդ, մի անձնուէր,

հասարակական յաւերին արձագանք տուող մի հոգի: Եւ նա համոզուած է, որ իր որդին այդպէս էլ լինելու է, իր որդու վերաբերմամբ ունեցած հաւատը չի խախտուում և այն ժամանակ, երբ իմանում է, որ նա գաղտնի կերպով ապրել է իր հետու ազգականուհու Ալինայի հետ, որից և երեսայ ունի: Որդին հաւատացնում է իր հօրը, թէ նա ամուսնանալու է այդ աղջկայ հետ և ծերունին մանկական դիւրահաւանութեամբ հաւատում է: չէ՞ նա իր որդին է, ազնիւ, գաղափարական ուսուցչի որդին: Սակայն որքան մեծ է լինում հօր ցաւն ու կսկիծը, երբ յանկարծ իմանում է, որ իր բոլոր գաստիարակութիւնն անօգուտ է անցել, որ իր անձնական շիտակ, ազնիւ կեանքը որդու վրայ ոչ մի ազդեցութիւն չեն թողել, կոնստանդինը այլ սերնդի է պատկանում, նա նիւթապաշտութեամբ «ուռած» և «զեր» ժամանակի զաւակ է, որ չի խղճահարուում դէն չպրտել Ալինային, որի զաւակի հայրն է, ամուսնանալ մի հարուստ այրիի հետ: Բարոյապէս այլանդակուած այս հրէշաւոր սերունդի մէջ ծերունի ուսուցիչը մի մտերիմ բաղդակից միայն ունի, դա իր ուսանողական ընկեր Ջավդեադօվն է, որ իր միջավայրում նոր սերնդի գարշութիւնները չը տեսնելու համար մշտապէս ապրում է արտասահմանում և վրայ է հասնում ճիշտ այն ժամանակ, երբ Դըբօլցեւը կարօտ էր մի սփոփիչ խօսքի, մի տաք մտերիմ սրտի: Երկու ծերունիները, հին գաղափարական սերնդի երկու մոռնիկները իրանց շուրջը, իրանց աչքի առաջ կատարուող ստոր արարքների հանդէպ վշտի և զայրոյթի մի յետին ու ազնիւ ճիշ միայն ունեն: Ջավդեադօվ շաւոտ խորհրդաւորութեամբ օրօրում է իր ծեր ու խոհեղ հարուստ գլուխը, իսկ Դըբօլցեւ չպրտում է իր որդու երեսին «վաճառուած, անարգ վաճառուած», ածականները, և երկու ծերունիները դուրս են գնում ձեռք ձեռքի բռնած, թողնում են այս բարոյապէս ապականուած, նեխուած երիտասարդութիւնը ուր նրանք «Օտարներ» են:

Նայում ես այս պիեսային և սիրտդ ցաւով լցւում է, շուրջդ իշխող իրականութիւնը գրական այս գործին տալիս է մի ոյժ, բեալական մի խաւար պատկեր, ուր ոչ մի փայլուն չող չի գալիս թեթեւ լոյս սփռելու: Ռուս հասարակութեանը, գոնէ մօտ քսան և հինգ տարի հարկաւոր եղաւ, որ երկու սերունդներ այլ եւս իրար չը հասկանան, իրար համար օտարներ լինին, իսկ մեղանում տասն տարին և մի քաղաքից միւսն անցնելը բաւական եղաւ, որ բարոյական մետամորֆոզան անձանաչելի դարձնի երկուայ ազնիւ, գաղափարական ձրկաւորութիւնը ոգևորուած սերունդը: Այնտեղ գոնէ կարելի էր

երկու սերունդ իրար դէմ հանել, մի ժամանակ կար, որ աւերմունք գործեց, ծերալիքներ կային որոնց պսակն ու խաչը ծանր էր գալիս յաջորդ սերնդի գլխին ու թիկունքին, մեղանում միեւնոյն սերունդն է յետ նայում և հեգնութեամբ դիտում այն ճանապարհը ուր մի քանի տարի առաջ միայն նա քայլում էր ազնիւ խոհերով ծանրաբեռնուած գլխով: միեւնոյն սերունդն է, որ իր երեկուայ պատկերը չի յիշում, այլ եւս չի ճանաչում միեւնոյն սերունդն է, որ անարգում, արհամարհում, հեգնում է այն ինչ անունով երէկ երդում էր, պառաւած հիւծախտաւոր սերունդ, այս «ուռած» և «գեր» ժամանակի իսկական զաւակ, գործնական, հաշուագէտ ոգու իսկական վիժմունք, որի ազնիւ գծով իւնների, և խելացի գարշութիւնների մէջ ժամանակն այնքան կարճ եղաւ, որ «դեռ չին մաշուել այն կօշիկները, որոնցով նա տանում էր իր գաղափարները գերեզման դնելու» բայց նա արդէն անճանաչելի է: Իրականութիւնն այնքան ցաւոտ է, մեր չուրջն իշխող գործնական, գծուծ նիւթապաշտութեան ոգին այնպիսի աւերմունք է գործել, որ մեղանում սակաւաթիւ «Օտարները» մի անցած սերնդի մնացորդներ չեն, այլ նոյն սերնդին, նոյն ժամանակին, նոյն միջավայրին պատկանող: Ընկերն ընկերին էլ չի ճանաչում, իսկ ազնիւ յափշտակութիւնները և իդէալները դարձել են վաճառքի ապրանք, մի Դըբօյցիւ համարձակ կերպով կարող էր բացականչել և մեր կօնստանդինների երեսին՝ «վաճառուածներ, անարգ վաճառածներ»:

պ. Պետրոսեան այն երեկոյ կատարեց Դըբօյցիւի, գաղափարական ծերունու դերը և դուցէ խաղաց լաւագոյնը իր դերերից: Կեանքից վերցրած պիեսաների մէջ, երբ մանաւանդ պէտք է ներկայացնել վշտացած ծերեր, պ. Պետրոսեան միշտ լաւ է, ինչպէս ծերունի վանիւշինի գերում: Բայց «Օտարներ» մէջ նա գերազանցեց բոլորին: Դա մի անմոռանալի երեկոյ եղաւ Պօտագենիօի և պ. Պետրոսեանի շնորհիւ: Երկու անգամ նա բարձրացաւ նոյն-իսկ մինչեւ առաջնակարգ արտիստների խաղը նախ այն ժամանակ, երբ հանդիպում է իր հինաւուրց ընկերոջը Զավդեադօյին և մէկ էլ այն խորին դրամատիկական վայրկեանին՝ երբ վերջնականապէս երազեկ իր որդու ստոր արարքին, դառնացած հոգւով դուրս է թափում իր ազնիւ սրտում կուտակուած բոլոր ցաւն ու զայրոյթը, երբ այն բարի, շիտակ մարդու վիրաւորուած առաքինութիւնը ուղում է նոյն-իսկ իր ծեշ բազուկներով խեղդել այս նոր ու գարշելի սերունդը: Պ. Աքէլեան իր երկրորդական դերով շատ անելիք չուներ, նա միայն մի գեկօրացիա էր աւելի բելիեֆ դարձ-

նեղու հին սերունդը և նա իր գրիմով, իր շարժումներով, անգամ իր անբաժան ձեռնափայտով եղաւ մի գեղեցիկ դեկորացիա, Դըբօլյեւ-Պետրոսեանի իսկական մտերիմը եղաւ լրացնելով նրա փայլուն խաղը:

Ներկայ դերասանական խմբի մէջ մի հետաքրքիր անձնաւորութիւն կայ, որ իր համեստ դերերով յաճախ մնում է աննկատելի, բայց, իրօք, նա մի կողմից կարող է օրինակ ծառայել է շատերին՝ դա տիկին Վարդուհին է: Նա երբէք իր ուժից և իր ընդունակութիւններից վեր, իր ձեռքերին անհամապատասխան դեր չէ յանձն առնում: «Վանիւշիկի զաւակներ», մէջ նա պառաւ մայր է, «Սորասուզած զանգի» մէջ նա պառաւ Վիտորլաէն է, ինչպէս և այս «Օտարների» մէջ Դըբօլյեւի պառաւ կնոջ Մուրինա Իգնատևնայի դերն ունէր: Մենք նրան համարեա երբէք չենք տեսել անհամապատասխան դերում և չնորհիւ այս էական հանգամանքի նրա խաղը թէեւ միակերպ, միջակից չափ չը բարձրացող, բայց միշտ հարթ է, միշտ դուրեկան: Կրկնում ենք, սա մի հանգամանք է, որ չը պէտք է խուսափէ այն դերասանների հայնայքից, որոնք գերերի ընտրութեան մէջ խիստ անխտրական են:

Իր բենեֆիսի համար նոյեմբերի 15-ին պ. Պետրոսեան ընտրել էր «Ուրիէլ Ակօստա» կարլ Գուցկօվի Միջավայրը՝ որ Գուցկօվ ընտրել է, դաժան, անհամբերող ոգու և լայն սիրուց բղիտող գաղափարների ընդհարման համար, աննման է: Փարիսեցիների մի ամբողջ բանակ, մզլած, հոտած գրքերի տառերի վրայ չորացած գլուխների մի ամբողջ հօտ, որ լսել չէ կամենում, թէ իր ճանաչած մազաղաթների սեւ ու սպիտակից դուրս ուրիշ ճշմարտութիւն գոյութիւն ունի, կամ կարող է գոյութիւն ունենալ աշխարհում: Եւ այս անդրդուելի ժայռի վրայ, որի անունն է կրօնական տրագեդիա, դոգմ, անսխալականութիւն, գալիս է խորտակուելու մի ազատ միտք, մի լայն համբերող սիրտ, մի ազնիւ հոգի: Տրագեդիան կսկծեցուցիչ է: Ազատ մտքի դարաւոր պատմութիւնն է այն. Սօկրատ, Քրիստոս, Բրունո, Դալիլէյ, Սպինօզա, բոլոր մեծ մտքերն ու առաքինութիւնները ծանօթ են այդ տրագեդիային:

Ուրիէլի առաջնակարգ դերը կատարեց պ. Պետրոսեան. բեմի վրայ մենք տեսանք երիտասարդ, յախուռն, ու տենդոտ միտքը՝ մերթ սիրոյ կապանքներում ընկճուած, ինչպէս թռչունը վանդակում, մերթ կատաղի դուրս պոթկալիս, ինչպէս մի անզուսպ հեղեղ: Ափսոս որ պ. Պետրոսեանի ձոյնը խզուեց հէնց էֆֆեկտի վայրկեաններին:

Պ. Արէլեան կատարում էր Դը-Սանտուսի դերը, և այդ ըստ երևույթին երկրորդական դերից նա կարողացաւ ստեղծել մի կենդանի, իրականութեամբ համարեա չշնչող տիպ: Յաղթանակի թուղթերին դօգմի անունից խօսող Դը-Սանտուսը, չնորհիւ պ. Արէլեանի աննման միմիկայիւ կը մնայ անմոռանալի: Նա ոչ մի տեղ չը թուլացրեց կրօնի արթուն և անողորմ պահապանի խորը հոգեբանութիւնը. նրա նայուածքը, գլուխը բռնելու ձևը, շրթունքների կծու հեղինակաւ ժպիտը, նրա լայն քայլուածքը, այդ միշտ կեղերին սղմած և մի քիչ ծալած բազուկները—ամենը, ամենը պատկերներ էին, որոնք վկայում են այս արտիստի սուր գիտողութիւնը, հոգեբանական անալիզի անվիճելի կարողութիւնը:

Պ. Յարութիւնեան, որ կատարում էր Դը-Սիլվայի դերը, իր խաղի մէջ միշտ մի բան ունի, որ այնպէս յիշեցնում է հայ պատմական պիեսաների վերուն, արուեստական ինտոնացիան: Նրա դերերը երբեմն շատ նման են այն վարդապետի քարոզին, որ իր ասածներին չի հաւատում:

Պ. Տէր-Դաւթեանին Բեն-Աւիբի դերը յանձնելը մեր կարծիքով մի կատարեալ սխալ է. դա թէեւ կարճ, բայց վերին աստիճանի լուրջ և ամբողջը լրացնող մի հետաքրքիր դեր է:

Պ. Տէր-Դաւթեան տաղանդաւոր կօմիկ է, և նրա բեմի վրայ երևալը բաւական է, որ քրքիջ բարձրանայ, այնպէս էլ եղաւ. նրա «ամենայն ինչ կատարեալ է»-ն որ իր անողորմ վրձնողականութեամբ սառուցի պէս պիտի նստէր սրտերին և սարսուռ առաջ բերէր, միայն ծիծաղ յարուցեց: Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել:

Ինչ որ առանձնապէս ցուալի էր և զարմանք պատճառեց այդ հասարակութեան զստապարտելի, անտարբեր վերաբերմունքն եղաւ գէպի մի այնպիսի շնորհալի դերասան, որպիսին պ. Պետրոսեանն է, միթէ ճշմարիտ անգամ նրա բենեֆիտին հասարակութիւնը պարտական չէր որեւէ թեթեւ նշանով արտայայտել իր յարգանքը հայրենի բեմի երախտաւոր աշխատաւորին, ինչ արժէր ծաղիկներից շինուած մի պսակը. ինչպէս հաշտեցնել այն որոնողոստ ծափահարութիւնները, որ ստանում է միշտ պ. Պետրոսեան, այս զստապարտելի մոռացութեան հետ...

—

Նոյեմբերի 18-ին խաղացուած «Օտելլօ» մասին այժմ էլ կ'ասենք մօտաւորապէս այն, ինչ անցեալ անգամ ասել ենք «Արքայ Լիրի» մասին: Չը նայելով պ. Արէլեանի անսլոյման լաւ խա-

դմն «Օտելլօի» դերում, չընայելով՝ որ տիկին Մայսուրեան Դեզ-դեմոնայի դերով աւելի չուտ օգնեց պ. Աբէլեանին, քան Վեա-սեց, այնուամենայնիւ, մենք մնում ենք այն կարծիքի, որ Շէքս-պիրը առայժմ, հայ բեմի վրայ յաջողութիւն ունենալ չի կա-րող, ամբողջ թոյլ կը լինի:

Հայկական դրամատիկական խմբի ներկայացումներից բա-ցի՝ մենք այս ամիս ունեցանք նաեւ մի այլ գեղարուեստական հաճոյք, և դա շնորհիւ պ. Պ. Մ. Կարա-Մուրզայի, որ նոյեմ-բերի 3-ին տուեց մի համերգ ի յիշատակ իր հանգուցեալ եղ-բոր յայտնի երաժշտապետ Խ. Կարա-Մուրզայի:

Յուզմունքի մի քաղցր երեկոյ եղաւ այդ համերգի երե-կոնս Գրաւիչ և մարդու սրտին խօսող մի բան կար հանգուցեալ երաժշտապետի եղբայրների այս ձեռնարկութեան մէջ, յարգան-քի նուիրական և լաւագոյն ձեւն էր ընտրուած—երգը մեռելի յիշատակին, աստուածային երաժշտութիւնը՝ օրօրելու յաւիտե-նական հանգիստը այն մարդու, որ այնքան տարիներ անոյշ մեւօղիաներով մեզ երազներ պարգեւեց: Մխիթարական էր նկատել, որ բոլոր նրանք, որոնք այսպէս թէ այնպէս իրանց կապուած էին զգում հանգուցեալ երաժշտապետի հետ, եկել էին իրանց յարգանքը մատուցանելու, եկել էին նրա նուիրական յի-շատակին արժանի փայլը տալու: Եկել էին ազգականները դեռ մեծ կորստի թախիծը ձակատներին, եկել էին նրա երգեցիկ խմբի անդամները, որոնք այնքան տարիներ ակնապիշ դիտել էին նրա ձեռքի հրաշագործ շարժումները, եկել էր և հասարա-կութիւնը, որի սիրտն այնքան անգամ թրթռացրել էր հայրենի գեղարուեստի այն ազնիւ մշակը: Յուզմունքի մի երեկոյ եղաւ. «Մայր-Արաքսի» հետ էլի մի անգամ արցունքներ քամուցին, և լաւ էր, լաւ էր այդ բոլորը: Յարգանք մեռելներին...

Ա.

Ն Ե Ր Ք Ի Ն Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Մի պարագորս անհատի և ժողովրդի մէջ. — Երկու հիմնական աշխարհայե-
ցողութիւն. — Մեր ինտելիգէնտների երեք կատեգորիան. — † Գարբիէլ
Միրզոյեանց. — Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի նոր կազմը. — Քաղուի
քաղաքագլուխը և դուման. — „Baky“ լրագիրը:

Պ ա շ տ օ ն ա կ ա ն հ ա ղ ո ղ ա գ ռ ո լ թ իւ ն ն ե ռ

Մի տարօրինակ համեմատութիւն կարելի է անել անհատ-
ների մահացման և ժողովուրդների երկարակեցութեան մէջ.
այդ համեմատութիւնը առաջին հայեացքից թւում է անհաւա-
տալի, զարմանալի, պարագօքսալ, բայց եթէ մի քիչ մտածէք,
կը տեսնէք որ այդ պարագօքսը իսկապէս ճշմարտութիւն է.
որոշ անհատների մահուան և դրանց ծնող ժողովուրդների եր-
կարկեցութեան մէջ մի յարաբերութիւն կայ. որքան շատ են
մի ժողովրդի կեանքում հասարակական գործիչների մահեր,
այնքան կենսունակ է այդ ժողովուրդը, այնքան երկարատև է
այդ ժողովրդի գոյութիւնը և յուսալի նրա ապագան: Եւ այդ
հասկանալի է. երբ մեռնում են (անխուսափելի վիճակ
թէ հասարակական գործիչի և թէ ինքն իր համար ապրողի)
հասարակական առաքինութիւններով օժտուած անհատներ՝ դը-
րանք թողնում են ժողովրդի մէջ իրանց էութեան լաւագոյն
կողմերը, իրանց էներգիայի և ոգեւորութեան ստեղծած գոր-
ծերը, այդ բիւրեղացած էներգիան և ոգեւորութիւնը, մտնելով
ժողովրդի օրգանիզմի մէջ, թարմացնում, ուժեղացնում, բարո-
յապէս բարձրացնում է նրան: Եւ ինչքան շատ են հասարակա-
կան գործիչները, այնքան շատ է մտնում ժողովրդի օրգանիզմի
մէջ դրանց էներգիայի և ոգեւորութեան ստեղծած մտաւոր-
բարոյական պաշարը, այնքան ընդունակ է դառնում մի ժողո-
վուրդ հաւաքական կեանքի համար, այնքան ուժեղանում է նա
գոյութեան դաժան կռուի համար: Ուրեմն, ժողովրդի հասարա-
կական առաջադիմութեան տեսակէտից անհետեւանք չեն կոր-

չում նոյն-իսկ համեստ գործիչների ջանքերը, որովհետև հէնց այդ համեստ ոյժերի միացած ջանքերով է կամաց-կամաց կերպարանափոխւում մի ժողովրդի մտաւոր-բարոյական աշխարհը:

Անշուշտ, շատ անոտալի է, երբ գործիչը վաղաժամ է իջնում ասպարէզից, սակայն, այնուամենայնիւ, աւելի մխիթարական է այդ, քան եթէ մի ժողովուրդ անկարող լինէր տալ իր միջից այդպիսի կորուստներ և մենք միշտ ականատես լինէինք միայն այնպիսի անձերի չքեղ յուզարկաւորութիւններին, որոնք իրանց կեանքում եղել են լոկ իրանց աստուածացրած ետի ու ընտանիքի համար աշխատող գիշատիչներ:

Բոլորս գիտենք՝ որ անվերջ յաւիտենականութիւնից մարդու տրւում է գոյութեան մի շատ կարճ ժամանակամիջոց, բայց այդ կարճ գոյութեան համար ասես ինչ ստորութիւնների և չարագործութիւնների ընդունակ չէ մարդ...

Եւ այդ բոլոր դարչութիւնները արդարացւում են շատ տարածուած մի գործնական փիլոսոփայութեամբ. «Մի է նոյն է, քանի որ ես մի ժամանակաւոր հիւր եմ, յաւիտենականութեան մէջ միայն մի կարճ վայրկեան պէտք է ապրեմ, ուրեմն, թնդ լաւ ապրեմ, վայելեմ կեանքի բոլոր բարիքները, թէկուզ դրա համար ստիպուած լինեմ գոյութեան կուում գիշատող լինել ուրիշների նկատմամբ, որոնք իրանց կողմից նոյնիկերպ են նայում ինձ վրայ. իսկ ինձնից յետոյ—թէկուզ ջրհեղեղ»...

Ահա այդ գործնական փիլոսոփայութեան դաւանանքը:

Եւ ժամանակակից հասարակական պայմանները հէնց այդպիսի փիլոսոփայութիւն են թելադրում: Այդ գործնական փիլոսոփայութիւնը աւելի ևս ուժեղացաւ այն օրից, երբ մի կողմից թուլացաւ մարդկանց մէջ հաւատը դէպի հանդերձեալ կեանքի թէ երջանկութիւնը և թէ պատիժը, իսկ միւս կողմից՝ սաստկացաւ գոյութեան կոփը:

Մի ժամանակ մարդիկ յանձն էին աւնում զլիանքներ, բարեգործութիւններ էին անում, յաճախ նոյն-իսկ անձնազոհութեան հոյակապ օրինակներ չոյց տալիս՝ լոկ յաւիտենական վարձատրութիւն ստանալու յուսով: մի ժամանակ զժողքի սարսափները զսպում էին մարդու մէջ նստած դաժանին: Այդպիսով, լաւագոյն կեանքը դրախտում կամ դժոխքի սարսափները ստիպում էին նրան բարեգործ և առաքինի լինել: Սակայն իրական կեանքի խիստ պահանջները ստիպում էին այդ ստրկահոգի մարդկանց յաճախ զիմիւ խորամանկութեան, կեղծիքի, դրանք ձգտում էին արտաքին բարեպաշտութեամբ կամ հոգեւորականութիւնից զնած բարեխօսութիւններով կաշառել նոյն-իսկ Աստուծուն: Պարզ է որ երկնքի հետ սկսուած այդ առեւտուրը

ոչ մի առնչութիւն չունէր բուն քրիստոնէութեան հետ և մի կոպիտ կեղեւ էր, որ մաղաչաւ չէր փոխում վերն յիշած գործնական փիլոսոփայութեան ծուծը կեանքի էութեան մասին:

Բայց նոյն իրողութիւնը որ յաւիտենականութիւնից մարդուս տրուած է գոյութեան մի կարծատեւ մօմենտ, կարող է հիմք լինել և տրամադորէն հակառակ, ոչ էզօրիստական, այլ ալտրուիստական փիլոսոփայութեան, որ հիմնուած չէ երկիրի կամ վարձատրութեան սկզբունքների վրայ, այլ բղխում է մրտաքով պայծառացած կատարեալ մարդու ամբողջ էութիւնից: «Աւելի լաւ չէ՞ իմ կարծատեւ գոյութիւնը ես նուիրեմ երկրիս վրայ մնացողների և գալիք սերունդների կացութիւնը բարեօրէնելու վեհ գործին. զարհուրելի է թշուառ մարդկութեան անցեալը, դժբախտ է նրա ներկան, թող բախտաւոր և պայծառ լինի նրա ապագան. ուրեմն, այդ ապագային հասցնելու համար անեմ այն, ինչ թոյլ են տալիս ինձ իմ ոյժերը. իսկ զիտակցութիւնը, թէ ես լաւ դործ եմ կատարում, կը տայ ինձ դոհուսնակութիւն, և այդ ինձ համար բաւական է»:

Ահա փոքրամասնութեան, բայց մարդկութեան լաւագոյն, իդէալիստ փոքրամասնութեան աշխարհայեցողութիւնը:

Մենք վերի սոսացինք թէ պէտք է մտքով պայծառանալ այս վերջին փիլոսոփայութեան յարելու համար: Հետեւաբար, որոշ ինտելիգենտութիւն է պահանջում մարդուց՝ գործելու համար, անտալով միայն իր հոգու ներքին ձայնին, առանց մի րոպէ մտածելու վարձատրութեան կամ պատժի մասին: Եւ մարդկային երջանկութեան համար թէ երազող և թէ աշխատող բոլոր նշանաւոր անհատները գործել են այդ ուղղութեամբ, մղուելով մի վեհ, անբացատրելի ներքին բնազդով դէպի ճշմարտութիւն:

Անպատճառ հանճար պէտք չէ լինել այդ փիլոսոփայութեան հետեւող լինելու համար. նաեւ համեստ գործիչների մէջ նստած է լինում այդ ոգին, ինչպէս այդ տեսնում ենք նորերս վախճանուած Գարրիէլ Միրզոյեանցի օրինակի մէջ: Սակայն, հանգուցեալ գործիչի արժանաւորութիւնները աւելի լաւ ըմբռնելու համար, մենք նախ փորձենք ծանօթանալ մեր ինտելիգէնտների հետ առհասարակ:

Մեզ թւում է թէ՝ մեծ սխալ գործած չենք լինի, եթէ մեր ամբողջ ինտելիգէնցիան բաժանենք երեք կատեգորիաների.

Առաջին կատեգորիային պատկանում են մեր այն ինտելիգէնտները, որոնք առանց քաշուելու համարձակ խոստովանում են, որ իրանք, ընկճուելով կեանքի մէջ գերիշխող պայմաններից, չեն կարող լող տալ հոսանքի դէմ, և լաւ ապրելու համար պէտք է յարմարուեն տիրող կարգերին. իսկ եթէ ու-

սանողութեան ժամանակ իրանք այլ համոզմունքներ կամ դադափարներ են ունեցել, այդ եղել է տղայական անփորձութեան, միամտութեան հետեանք... Այդ կատեգորիային են պատկանում մեր ինտելիգենտների մեծագոյն մասը:

Երկրորդ կատեգորիայի ինտելիգենտները իսկապէս աւելի են անհամակրելի իրանց կեղծութեամբ. դրանք խօսքերով իրանց «արմատական» և աշխատանքի ջատագով ձեւացնելով, գործով ամեն կերպ (չաղ օժիտ) ձգտում են դառնալ րանթիէ և այնուհետև ապրել մեծ կոմֆորտով: Մեղանում դա սովորական բան է թւում և ոչ ոք չի դարմանում, երբ կնոջ օժիտով րանթիէ դառած պորտաբոյծը շարունակում է յօգուածներ և ոտանաւորներ գրել, փառաբանելով աշխատանքի սկզբունքը. դատարտիֆութիւն է միայն ոչ կրօնական, այլ տնտեսական աստուով...

Վերջապէս, երրորդ կատեգորիային պատկանում են այն սակաւթիւ ինտելիգենտները, որոնց անգոր է կեանքը ծովու ել իր ուղածի պէս. դրանք, հաւատարիմ մնալով երիտասարդութեան վեհ իղէալներին, չեն կարողանում այնպէս փոխուել, որ միաժամանակ և մամօնային և գաղափարին ծառայեն: Անկարող լինելով յարմարուել կեանքի ստորացնող պայմաններին, անկարող լինելով հաճոյանալ զանազան գիշատիչների պահանջներին՝ դրանք հարուածներ և հալածանք են կրում ժամանակակից հասարակութիւնից, որը դրանց ճակատին դրոշմում է արհամարհական «անաղողալիներ» և «խենթեր» խօսքերը: Բայց այդ «անաղողալիներն» ու «խենթերը», այնուամենայնիւ, շարունակում են տառապել՝ նոյն հասարակութիւնը բարձրացնելու, ազնուացնելու համար:

Չը պէտք է կարծել, որ այս վերջին կատեգորիային պատկանում են հէնց այն գործիչները, որոնց անունը հրապարակի վրայ է և ամեն կողմից լսւում է: Ո՛չ՝ նայէք աստղադարդ երկնքի վրայ. առաջին անգամից ձեզ այնպէս է թւում, թէ հէնց այդ փայլուն աստղերն են, որ կան. բայց աւելի խորը թափանցէք և կը նշմարէք սկզբում աննկատելի անհամար աստղեր, որոնք շատ հեռու են մեզից և այդ պատճառով այնքան էլ փայլուն չեն: Այդպէս է և կեանքը. գաղափարական գործիչներ կենտրոններից դուրս շատ կան. ամեն մէկը դրանցից իր շուրջ, իր ասպարիզում լոյս է սփռում, բարի գործ է կատարում, իսկ փայլում են և երևում լոկ մակերեւոյթի վրայ գտնուողները: Այդ համեստ, աննկատելի գործիչները յաճախ մարտիրոսութեան, անձնազոհութեան վեհ օրինակներ են ցոյց տալիս, լաւագոյն ապագայի ճանապարհ են հարթում, երբէք

չը մտածելով անուան, փառքի մասին, որ սնտփառութեան հարազատ քոյրն է: Դրանք են այն իսկական ալտրուիստները, որոնց աշխարհայեցողութեան մասին քիչ առաջ խօսեցինք: Դրանք չեն գործում փառքի համար, «թող կորչի անունը, մնայ գործը»—մտածում են դրանք, իսկ եթէ, այնուամենայնիւ, անուն, յարգանք, ուղեք և փառք, վաստակում են և զրանք—այդ լինում է հետեւանք և ոչ նպատակ...

Ահա այս վերջին կատեգորիայի համեստ գործիչներին էր Գաբրիէլ Միրզոյեանցը: Որ հանգուցեալը աչքի ընկնող երեւոյթ էր մեր հասարակական ասպարիզում, մեզ նման փոքրիկ ազգի կեանքում—այդ պէտք է պարզ լինի իւրաքանչիւրի համար, ով ընդունակ է առանց կանխակալ կարծիքի աչքի անցկացնել նրա, մանաւանդ, սկզբի 10-15 տարիների գործունէութիւնը:

Յաճախ կարելի է ինքնահաւան ապուշներից լսել այնպիսի դատողութիւն, որ նման է, կարծեմ, կուկին պատահած ղէպքին. մի ինճոյքում հարց էր ծագել, թէ ով կարող է ղիք կանգնեցնել ձուն. բոլորը փորձեցին և ոչինչ չը դուրս եկաւ: Կուկը խփեց ձուն բութ ծայրով սեղանին և ձուն ղիք կանգնեց: «Այդ մենք էլ կարող էինք անել», լսուեց ամեն կողմից... Այդպէս է լինում: Տարիների ընթացքում մի դպրոց ապուշանոց և անկեղանոց է ներկայացնում. մէկին, ղիցուք, աջողում է ճաղկած վիջակի դնել այդ դպրոցը: Իսկոյն շուրջը լսում են բացականչութիւններ. «Այդ մենք էլ կարող էինք անել»: Մի օրգան տառնեակ տարիների ընթացքում յիմարութեան, խաբեբայութեան, տափակութեան ու միմոսութեան կոյուղի է ներկայացնում. դալիս են նոր մարդիկ, ամեն բան կերպարանափոխում է և դարձեալ լսում է. «Այդ մենք էլ կարող էինք անել», և այն, և այն: Այդպէս է լինում միշտ: Այդպիսի բացականչութիւններ լսում էր և ներկայ ղէպքում. փոխարէն ընդունելու, գնահատելու գործիչի արժանիքը—ողորմելի սնտփառները ուռածփրած իրանց քթերն են ոլորում և ինքնահաւան բացականչում. «Ի՞նչ մի երեւելի գործ է արել, այդ մենք էլ կ'անէինք»...

Մեր համակրանքը ղէպի հանգուցեալը աւելի է բարձրանում, մանաւանդ, ի նկատի ունենալով այն միջնավայրը, որից նա դուրս եկաւ: Անշուշտ, իւրաքանչիւրիս բնաւորութեան վրայ անխուսափելի կերպով ազդում է այն ընտանեկան-հասարակական միջնավայրը, որի մէջ մենք լոյս աշխարհ ենք տեսնում: Եւ այդ միջնավայրը համարեա ինքնուրոյնութիւնից զրկւում է և տափակացնում սովորական անհատներին: Միայն ընտրեալ անձնաւորութիւններն են, որ կարողանում են իրանց

միջնավայրի ձահճից դուրս գալ: Այդպիսի անձնաւորութիւն էր
և Գ. Միրզոյեանցը:

Այն միջնավայրը, որի մէջ նա ծնունց ու անցկացրեց իր մանկու-
թիւնը և պատանեկութիւնը, ընդհանուր էր Թիֆլիսի ունեւոր, բուր-
ժուական ու վրացական հայերի մեծամասնութեան համար. այդ
մեծամասնութիւնը նաև այժմ շարունակում է հաւատարիմ մնալ
իրան արտագրող միջնավայրի մեջնական իդէալներին: Գ. Մ. իր
անհատական առանձնայատկութիւններով միանգամայն տարբեր
էր իր չընդապատողներէն: Նրա ուսանողական կեանքը, ամուս-
նութիւնը, ասպարէզ ընտրելը, հայրենասիրութիւնը, համար-
ձակ դիրքը կուսակցական պայքարներում—այդ բոլորը արամա-
գծօրէն հակառակ էին նրան ծնող միջնավայրին յատուկ նեղ
հասկացողութիւններին: Համալսարանում նա գիպում էր որո-
շում. սիրոյ մէջ՝ դիրք ու օժիտ էր փնտռում, այլ ողելորու-
թիւն և գաղափարական համերաշխութիւն. իր գործունէու-
թեան համար նա շահաւէտ կարիեր էր ջոկում, այլ ընտրում
էր մի փշոտ ասպարէզ, դէպի որը նրան մղում էր իր ներքին
ձախնդ, կոչումը և ժողովրդին օգտակար լինելու իդէալը: Միշտ
կենսուրախ, չիտակ և եռանդոտ՝ նա ուրախութեամբ էր իր ոյ-
ժերը նուիրում հասարակութեան. բացի ուսուցչութիւնից նա
պատուաւոր դեր էր կատարում և մեր գրականութեան մէջ, ոչ
ոք չի ուլանայ, որ «Հրատարակչական Ընկերութիւնը», ման-
կական «Աղբիւր» ամսագիրը (թողած՝ 1902—1903 թ. «Տարագը»)
իրանց փայլուն սկզբնաւորութեամբ պարտական էին Գ. Միր-
զոյեանցի անձնուէր և կարող ջանքերին:

Բաֆֆի բարեկամը և գաղափարակիցը գիտէր ողորդել հա-
տարակ ժողովուրդը, ինչպէս այդ յոյց տուեց նրա կազմակեր-
պած՝ Բաֆֆի հասարակական թաղումը, ինչպէս այդ հաստա-
տեցին հոգաբարձական և կաթողիկոսական ընտրութիւնները:
Իր շատ որոշ ուղղութեան և կոմպրօմիս չը սիրող ընաւորու-
թեան համար՝ հանգուցեալը ասուած էր հայաստանեայց ե-
զուխաներից, որոնք առիթը բաց չը թողին հեռացնել նրան
Ներսիսեան դպրոցից, թէև նա բոլորից վկայուած էր իբրև տա-
ղանդաւոր մանկավարժ և օրինակելի ծառայող: Էջմիածինը
երկար քաջքնեց նրա գործը, մինչև որ արդարացի գոհացում
ստուաւ նրա պահանջին: Սակայն նա այնուհետև երկար չը մնաց
դպրոցական ասպարիզում. ծանր հիւանդութիւնը հեռացրեց
նրան իր սիրած գործից, բայց նա անկարող էր ապրել առանց
կենդանի գործի, և իր ծխական եկեղեցում, մասամբ էլ քաղա-
քային դումայում, նա աշխատում էր մինչև վերջին շունչը:

Մի գործիչ, որ այդքան էլ կարողացել է անել մեր պայ-

մաններում, իրաւունք ունէր սպասել հասարակութիւնից անկեղծ արիւնքներ իր վաղաժամ մահուան առիթով և պատկառանք ու յարգանք դէպի իր յիշատակը: Այն ինչ նա կատարեց՝ կորած չէ հայ ժողովրդի առաջագիմութեան գործում: Թո՛ղ, ուրեմն, հայ ժողովուրդը աւելի շատ տայ իր միջից այդպիսի անհատներ:

Թիֆլիսի դումայի նոր կազմը արդէն սկսել է իր պարագմունքները: Առաջիկայ 1902—1906 քառամեակի համար ընտրուած 80 ձայնաւորներից 51 հոգի հայ են, 15 վրացի, 9 ռուս, 2 գերմանացի, 2 լեհ և 1 մահմեդական: Նշանաւոր է այն, որ ձայնաւորների մեծ մասը բարձրագոյն կրթութիւն ստացած անձինք են: Թէ ինչ կատեգորիայի ինտելիգէնտներ են քաղաքի այդ նոր «հայրերը», մենք չը գիտենք. ապագան ցոյց կը տայ մեզ այդ և անաչառ փոստերով:

Մեր տեսակէտը քաղաքային գործերի մասին մենք առիթ ենք ունեցել մի քանի անգամ պարզելու. հազիւ թէ շատ դժուարատիւական ծրագիրներ ընդունակ լինի իրադրոծել նաև ներկայ կազմը. յամենայն դէպս ցանկալի է, որ նոր հայրերը յիշեն, որ Թիֆլիսի կարիքներն ու պահանջները կենտրոնացած չեն միայն Սօլօլակի և Գօլօլինեան պրոսպեկտի մէջ. իր օրական պարենը արիւն քրտինքով աշխատող մեծամասնութիւնը, որ աւուրում է այդ կենտրոններից դուրս, չը պէտք է քաղաքակրթութեան բարիքների նկատմամբ խորթ գաւակ լինի: Մեր տնտէր-ձայնաւորները արժանի կը լինէին հիւսիսային, եթէ զգային, որ վարձով բնակարաններ տալու ներկայ ձևերը հեռու չեն վաշխառութիւնից. նրանք պէտք է աշխատեն Թիֆլիսում էլ բնակարանային հարցն այնպէս կարգադրել, ինչպէս այդ անուամ է քաղաքակիրթ երկրներում... «Ինտելիգէնտ» դումայից այդ աւելի մեծ իրաւունքով կարելի է սպասել, քան Բազուի դումայից, ուր գերիշխող տարրը հաջիներից և անկիրթներից է կազմուած: Դրանց իսկապէս դժուար է հասկացնել, որ քաղաքի մեծամասնութեան շահերը բոլորովին տարբեր են այդ գիշատիչ խօզէինների գրպանային շահերից: Հետեալաբար, բաւական մեծ եռանդ է պահանջուում Բազուի նոր քաղաքագլխից՝ իր հետ համաձայնեցնելու այդ ձայնաւորներին, որոնք փառաւորապէս գլորեցին նրա մի արդար առաջարկութիւնը՝ նորից գնահատել քաղաքի անչարժ կայքերը ու զրանց ներկայ իսկական եկամուտների համաձայն հարկ նշանակել, և այդպիսով աւելայնել քաղաքի հասոյթները: Հաջիներն և ապերները գերադասում են հին սիստեմը. բարձել չունեւորների վրայ հարկային ամբողջ ծանրութիւնը և շարունա-

կել շէյլօկեան տոկոսներ ստանալ քրահով տուած տներէց։ Իզուր կը լինի քաղաքագլխի կողմից դիմում անել հաջիններէ և ապերների արդարութեան զգացմունքին և ազնւութեան։ Այդ անհասկանալի այբուբէն է դրանց համար։ Սակայն, այնուամենայնիւ, քարոզել և, որ գլխաւորն է, մերկայցնել և մտրակել այդ գիշատիչներին, պէտք է. և այդ ցանկանում է անել նաւթի մայրաքաղաքում նոր հրատարակուող «Баку» լրագիրը։ Յիրաւի, այժմ կարելի է բազուկներին ջնորհաւորել, որ վերջապէս նրանք էլ արժանացան ունենալ մի չիտակ, անկախ օրգան, որ, հաւատարիմ մնալով ռուսաց լաւագոյն մամուլի առաջադէմ տենդենցիաներին, պաշտպան է կանգնած լոյսին և ժողովրդի շահերին, խտրութիւն չը դնելով ազգութիւնների մէջ։ Ինչպէս ցոյց են տալիս մեր ձեռքն հասած առաջին 25 համարները, «Баку»-ն խմբագրուած է լուրջ, կենդանի և բազմակողմանի կերպով, և նրա մէջ տիրապետող ոգին սթափեցնող է և ապ-նիւ։ Ի սրտէ ցանկանում ենք աջողութիւն։ Թող աւելանան խմբարի և անարդարութեան գէմ մարտնչող գրչի զինուոր-ները!

Լ. ՍԱՐԳՍԵԱՆ

22 նոյեմբ.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կովկասեան կառավարչապետ իշխան Գօլիցին, Կարսի առման քանհինգամեայ յօքելեանի առիթով, իր՝ նորին Կայսե-րական Մեծութիւն Թագաւոր Կայսրին ուղարկած հեռագրին ստացաւ հետեւեալ պատասխանը. «Յան ձն տրտում եմ ձեզ հաղորդել Կարսի առման ժամանակ պատե-րազմող զօրամասերի պատգամաւորներին եւ կողկասեան պատերազմներին մաս-նակցողան ձերից ներկայ գտնւողներին իմ սրտագին շնորհակալութիւնը՝ նրանց աջօթ-քներին եւ ինձ արտայայտած զգացմունքնե-րի համար, որոնք ինձ անկեղծօրէն սրտա-շարժեցին։ Պարծանքով եւ երախտագիտա-կան զգացմունքով եմ յիշում կողկասեան քաջարի զինուորներին փառաւոր սխրագոր-ծութիւնները Կարսի առման ժամանակ եւ նրանց պատկառելի գլխաւոր հրամանատար

Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայեւիչին, որ ոչնչ
աշխարհն փայլուն է ջերմ տղերին մեր զօրքի
պատերազմական տարեգրութիւնների մէջ:
Չեմ կասկածում, որ իմ կովկասեան զօրքերը
միշտ հաւատարիմ կը մնան իրանց փառաւոր
նախորդներին՝ պատերազմական անմոռաց
աւանդութիւններին»:

Իշխան կառավարչակալի ուղարկած հետեւեալ
է. «Այսօր լրացաւ 25 տարի այն օրից, երբ թիւրքական հաւոր
կարս բերդը առնուեց շտուրմով, Մեծ-Իշխան Միխայիլ Նիկոլայե-
վիչի հրամանատարութեամբ, եւ այն ժամանակուանից դարձաւ
ռուսական անխորտակելի ամրութիւն: Կարսի բերդապահ զօրքը,
Կարսի առումը իրանց արիւնով ներկած զօրամասերի պատգու-
մաւորները եւ փառաւոր արշաւանքների ծերունազարդ մաս-
նակցողները, այսօր ռուսական Կարսի մէջ ջերմ աղօթքներ
վերառաքելով իրանց Գերագոյն Պետի թանգագին առողջու-
թեան և բարօրութեան մասին, խնդրում են ինձ արկանել առ
ոտս Ձերդ Կայսերական Մեծութեան նրանց անսահման սիրոյ
եւ անձնութեան զգացմունքները գէպի իրանց պաշտելի
Միապետը: Խորին ուրախութեան զգացմունքով կատարելով
Կարսում հաւաքուածների ջանկութիւնը, բազմ ունեւմ՝ իրանց
պատերազմական փառաւոր աւանդութիւններին հաւատարիմ
կովկասեան զօրքերի կողմից՝ պատրաստակամութիւն յայտնելու,
ի փառս իրանց Թագաւորի, կրծքով պաշտպանել մեծ հայրենի-
քի արժանապատուութիւնն ու պատիւը»:

Լրագրներում տպուած է հետեւեալ կառավարչական
հաղորդագրութիւնը.

«Նոյեմբերի 4-ին Րօստովում Դոնի վրայ, վաղիկաւկազի
ճանապարհի արհեստանոցների բանուորները մօտ 3000 հոգի,
ղաղարեցին աշխատանքները՝ պահանջ ներկայացնելով ճանա-
պարհների կառավարչին՝ կրճատելու բանուորական օրը, աւե-
լայնելու բանուորավարձը եւ հեռացնելու վարպետներից մի
քանիսին, մի եւ նոյն ժամանակ նրանք յայտնեցին, թէ մինչեւ
իրանց պահանջների իրագործումը չեն աշխատի: Երկաթուղային
վարչութեան կողմից յայտնուած էր թէ այդ պահանջները կը
հաղորդուեն հաղորդակցութեան ճանապարհների մինիստրին:
Սկզբում բանուորները իրանց զսպած էին պահում եւ միջոց-
ներ նրանց դէմ չէին առնուած: Նոյեմբերի 7-ին գործադու ա-
րած բանուորներին յայտնուեց հաղորդակցութեան ճանապարհ-
ների մինիստրի կարգադրութիւնը, որ ներկայցրած պահանջները

Թողնուած են առանց քննութեան, որովհետեւ բանուորները իրանց կամքով թողին աշխատանքը՝ առանց զիմելու օրինական միջոցների իրանց իրաւունքները պաշտպանելու համար: Բանուորները հրաւիրուած էին ստանալու հաշիւները և դործ որոնելու ուրիշ տեղերու մէջ Գործադուլի սկզբնառութեան միջոցին նկատուեց, որ բանուորների մէջ ձեռքից ձեռք էին անցնում տպագրուած պրօկլամացիաներ, ուսական սօցիալ-դէմօկրատիական բանուորական կուսակցութեան Դօնի կօմիտէի ստորագրութեամբ, որոնց մէջ յիշատակուած էին վերոյիշեալ պահանջները և հրաւեր էր կարդացուած գործադուլ անելու: Յետոյ պրօկլամացիաների տարածումը աւելի զօրացաւ և բանուորական շարժումը մուտք գործեց եւ տեղական մի քանի գործարանները: Նոյեմբերի 8-ին ձերբակալուեցին 5 հոգի շարժման նախաձեռնողներից և գրգռողներից: Նոյեմբերի 9-ին և 10-ին բանուորների ժողովներ շարունակուեցին քաղաքի Տէմէրնիցկի կոչուած մասի յետեւում գտնուող ձորում: Երկաթուղային վարչութեան կողմից նոյեմբերի 11-ը նշանակուած էր որպէս ժամանակամիջոց, երբ աշխատել ջանկացողները պէտք է ձեռնամուխ լինէին աշխատանքի, իսկ չը յանկացողները պէտք է ստանային հաշիւները: Այդ օրը ձերբակալուեցին 6 հոգի ագիտատօրներից՝ ժողով խանգարելու նպատակով և նշանակուեց կօզակների մի հարիւրեակ: Անուամենայնիւ նոյեմբերի 11-ին բանուորները սկսեցին հաւաքուել խմբերով, չը կատարելով ոստիկանութեան պահանջը, և չէին յրուում: Զիաւոր կօզակները մօտ 10 անգամ փորձեցին ցրուել գործադուլ անողներին մտորակներով, իսկ հետեակ կօզակները—հրացանի կոթերով: Բանուորները նրանց վրայ թափեցին քարերի կարկուտ, որի ժամանակ մի օֆիցէր և 2 կօզակներ վիրաւորուեցին, որոնց թւում 2 կօզակ ծանր վէրքեր ստացան: Ամբոխը ջարդեց պրիստաւի օգնականի գլուխը: Բանուորները անարգաբար ծաղրում էին զօրքերին: Զօրամասի հրամանատարը նախազգուշացրեց, թէ ստիպուած կը լինի հրամայել հրացան արձակել երբ բանուորների յանդգնութիւնը, որոնք քարեր էին գցում, անցաւ սահմանից, հրաման արձակուեց պատրաստուել հրաձգութեան: Արձակուեց 37 հրացան, ամբոխը փախաւ, երկուսը սպանուեցին, 19ը վիրաւորուեցին, որոնցից երկուսը մեռան: Այս գործադուլը ազդեց և այն արհեստանոցների վրայ, որոնք զետեղուած են Տիխօբեցկայեա կայարանի մօտ: Բանուորները նոյեմբերի 15-ին դադարեցին աշխատանքները և հալածուեցան ժողովի: Ամբոխը, գրգռուած Բօստովից եկած ղեկավարներից, յայտնեց Բօստովում յայտնուածների նման պահանջներ: Նոյեմբերի 16-ին

Կուրանի շրջանի գլխավորը յայտնեց գործադուլին մասնակցող բանուորներին, թէ նա արգելում է ժողովներ կազմել, բայց և այնպէս մօտ 1000 բանուորներ հոյեմբերի 17-ին հաւաքուեցին ժողովի: Չը նայելով համոզեցուցիչ խօսքերին և հրամաններին՝ բանուորները չը ջրուեցին, սկսեցին գցել կօղակների վրայ քարեր և 12 հոգու վիրաւորեցին: Մի օֆիցէրի ձեռքը կտրեցին կացնով: Չօրամասի հրամանատարը, ամբոխին խելքի բերելու բոլոր միջոցները գործ գնելուց յետոյ, դիմեց, նախ սրերի և ապա հրացանաձգութեան: Ամբոխը ջրուեց, երկու մարդ սպանուեցին, 7 վիրաւորուեցին ծանր, 12-ը թեթեւ կերպով: Չերբակալուած են 102 բանուորներ: Բանուորների չարժման պատճառների մասին քննութիւն է կատարուում:

ԷՄԻԼ ԶՕԼԱՆ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԸ *)

Ֆրանսիական ազգին միշտ յատուկ է եղել հասարակական ըստ երեւոյթին մի աննշան դէպքից հանել ամենախոշոր հետեւանքներ և ընդհանրացումների ընդունակ մաքի հզօր կարողութեամբ համեմել փիլիսոփայական-բարոյական խորիմաստ ու կենսական եզրակացութիւնների Այդպիսի դէպքերից մէկն եղաւ Դրէյֆուսի գործը, մի զուտ դատական գործ, որով սակայն ամբողջ աշխարհն զբաղուեց և որի բազմապիսի հետեւանքները դեռ մինչեւ այսօր շարունակում են յուզել ոչ միայն Ֆրանսիայի հասարակական կեանքը, այլ և անցնելով նրա սահմաններից հարեւան երկրներում նման յուզմունքներ են առաջ բերում:

Տարիների ընթացքում ֆրանսիական բուրժուա հասարակութեան ծոցում բուն դրած ախտերի, մութ գործողութիւնների մի մահաբեր կուտակումն էր, որի վրայից Դրէյֆուսի գործը եկաւ յետ քաշելու փայլուն քօղը, մի պայար, որի մէջ նա մխեց սուր նշտրակը: Հասարական այդ խոշոր երեւոյթի մէջ Զօլան այնպիսի մեծ դեր է խաղացել, որ նրա բարոյական պատկերն ամբողջացնելու համար անկարելի է լռութեան տալ այդ մեծ խնդրի ծագումը և նրա յաջորդական զարգացման գլխաւոր մօմենտներն ու հետեւանքները:

*
* *

«Էմիլ Զօլան և Նատուրալիզմը» վերնագրի տակ գուցէ տարօրինակ համարուի իօսել մեծ գրողի վերջին տարիների կեանքի աղմկայոյզ շրջանի մասին, բայց բանն այն է, որ այդ ժամանակ էլ Զօլան հաւատարիմ մնաց իր Նատուրալիստական ուղղութեանը, որ պահանջում էր ամենից առաջ ճշմարտութիւնը ամեն տեղ և ամեն բանում անկախ տիրող հասկացո-

*) Շարուն. տես. «Մուրճ» № 10.

զուլթիւններից, իշխող մօրալի պահանջներից, ազգային փափկահետադարձներից: Այստեղ էլ նա մնաց, եթէ կարելի է այսպէս ասել, նատուրալիստօրէն ճշմարտութեան զինուոր: Աւելորդ է այստեղ վերստին ներկայացնել Դրէյֆուսի գործը՝ հռչակաւոր L'affaire-ը, մանրամասնաբար. դա այնքան յայտնի է արդէն: Հարցը մօտաւորապէս հետեւեալն էր: Դատաւարտուած էր մի սպա յանցանքներից վատագոյնի՝ դաւաճանութեան համար: Ամբողջ Ֆրանսիան գտնոււմ էր այդ դատն արդար, Զօլան գտաւ անարդար. անտապօնիզմը զարհուրելի էր, մի մարդ՝ մի ամբողջ ազգի դէմ: Երեք հզօր դասակարգերի՝—կղերականութեան, բուրժուազիայի և զինուորականութեան ներկայացուցիչներն ընդունեցին մարտահրաւէրը, որ Զօլան ձգեց նրանց իր ութ J'accuse-ներով:

«Ես չեմ ճանաչում այն մարդկանց, ասում էր Զօլան, որոնց մեղադրում եմ, նրանց երբ չեմ էլ տեսել, ևս նրանց դէմ չունեմ ոչ քէն, ոչ ատելութիւն... Ես միայն մի հատիկ բուռն տենչ ունեմ, լոյսի տենչը և այն յանուն մարդկութեան, որ այնքան տառապել է և որ իրաւունք ունի երջանիկ լինել: Իմ կրակոտ բողոքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ իմ հոգու ճիչը: Թող սիրտ անեն ինձ դատարանի առաջ հանել, և թող քննութիւնը տեղի ունենայ օրը ցերեկով»:

Ո՞վ ունէր իր հետ Զօլան. համարեա ոչ ոք, հազիւ մի քանի սօցիալիստներ. սրանցից մնացածները գտնոււմ էին, թէ չ'արժէ Դրէյֆուսով զբաղուել, որովհետեւ նա մի բուրժուա է, Զօլան նրանց պատասխանում էր՝ նա մի մարդ է:

Եւ Զօլան մեն մենակ մի ամբողջ ժողովրդի, նրա հզօր դասակարգերի դէմ գլուխը չը կախեց, չը շիկնեց: Ամբողջ նրա վրայ քարեր էր նետում ճշարով՝ Zola à la potence. Կուրույած դատարանը նրան սկզբում լսել չէր կամենում և անողորմ էր. մոլորուած երիտասարդութիւնը, քաղաքական փարիսեյութեամբ խաբուած ուսանողութիւնն անգամ մոռնում էր նրա լուսամուտների տակ բռունցքները սղմած. բանակը մոմուում էր, շատերն սպառնում էին Զօլային Սենա գետում խեղդել, բայց նա շարունակում էր ազադակել ամբողջ աշխարհի առաջ՝ «La vérité, toute la vérité!» ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը. կրակոտ գիմումներով, նամակներով ու կոչերով նա աշխատում էր սառած խղճերի մէջ արդարութեան և ճշմարտութեան կայծը վառել, և մոլորուած հոգիներին իր դատի բոլոր վեհութիւնը պարզել:

«Ո՞ւր էք գնում դուք ո՞վ երիտասարդներ, ասում էր Զօլան իր Lettre a la jeunesse-ում, ո՞ւր էք գնում, ուսանողներ,

դուք որ խմբերով վազում էք փողոցներում յանուն ձեր զայրոյթի և ձեր ոգեւորութեան ցոյցեր անելով, ձեր վրդովւած խղճի աղաղակը բարձրացնելու անյաղթելի պահանջից մղուած... գնում էք դուք արդեօք ուղղելու մի հասարակական անարդարութիւն, ձեր թոթոռն երիտասարդութեան բողոքը զնելով կշեռքի անհաւասար թաթի մէջ, ուր այնպէս խաբեբայօրէն ձգուած են երջանիկների և այս աշխարհի խորթ զաւակների բաղդը:

—Ոչ, ոչ, մենք գնում ենք անարդելու մի մարդ, պատասխանում էր Զօլան նրանց կողմից, մի ծերունի, որ աշխատաւորի և շիտակ ընթացքի մի երկար կեանքից յետոյ երեւակայել է, թէ նա կարող է անպատիժ կերպով պաշտպանել մի աղնիւ դատ, ցանկանալ որ լոյսը յայտնուի, որ մի սխալ ուղղուի, նոյն-իսկ Ֆրանսիայի պատուի համար: Երիտասարդութիւն, երիտասարդութիւն, արդարադատութեանը եղիր կոնսակից... աղնիւ և մարդասէր եղիր, ո՞վ, եթէ ոչ դու պիտի փորձես վսեմ արկածը ձգուելով մի արդար և վսեմ դատի մէջ, դէմ զնելով մի ամբողջ ժողովրդի՝ արդարութեան իդէալի անունով: Պատմութեան մէջ չը տեսնուած օրեր էին, մի հատիկ մարդ, մի ծերունի, մի ամբողջ ժողովրդի դէմ, դա մի զարհուրելի մենամարտ էր, որ տեսնց ամբողջ երկու տարի տակն ու վրայ անելով ամբողջ Ֆրանսիան, հիեհե պահելով ամբողջ աշխարհը, և վերջ ի վերջոյ յաղթանակուլը Զօլան եղաւ, ի պատիւ այդ Մեծ Ֆրանսիայի, որի արդարասէր խիղճը կարող է մթափնել, բայց բթանալ ու մեռնել՝ երբէք! Բեննի դատը, Դրէյֆիւսի դէմ արձակած իր դատապարտող վճռով անդամ մի հերքումն եղաւ նախորդ անարդար վճռի, նա վկայեց միեւնոյն ժամանակ Զօլայի պաշտպանած գործի բոլոր ճշմարտութիւնը:

*
* *

Այս բոլորից յետոյ այնուամենայնիւ ինքն ըստ ինքեան հարց է ծագում, թէ իսկապէս ինչո՞ւմն է կայանում Զօլայի կատարած գործի մեծութիւնը, ուր պիտի վնտուկ այդ ահագին, համաշխարհային հետաքրքրութեան և ազմուկի աղբիւրը, որ պատճառեց L'affaire-ը:

Մի մարդ դատապարտուած էր անարդար կերպով, Զօլան իր անունով, իր զօրեղ գրչով օժանդակեց, որ նրա անմեղութիւնն ապացուցուի, որ նա ազատուի, ճիշտ այնպէս՝ ինչպէս Վօլտերը 18-դ դարում ապացուցեց մի այլ անմեղ դատապարտուածի՝ Ժան-Կալանի անմեղութիւնը: Եւ ինչ տարբերութիւն կայ Զօլայի արածի և այն մարդու վարմունքի մէջ, որ տեսնե-

լով մի ուրիշին գետի մէջ խեղաուելիս շտապում է չուան է ձգում և նրան հանում է ջրից, Թէ մէկ և Թէ միւս գէպըում հարցը մի մարդի, մի կեանքի վրկութեան մասին չէ, ինչու ուրեմն մէկի շուրջն այսքան ազմուկ, այսքան իրարանցում, այսպիսի համաշխարհային հետաքրքրութիւն: Ահա այս հարցերին մենք կ'աշխատենք պատասխանել, և դրանով էլ միաժամանակ կը պարզուի Զօլայի կատարած դերի բոլոր մեծութիւնը:

Մարդկային հասարակական կեանքում շատ անգամ՝ ամենաանշան կրեւոյթներ պատճառ են դառնում ամենախոշոր ցնդումների իրանց անուպասելի հետեւանքներով: Մի որեւէ գէպը, որ ինքն ըստ ինքեան միանգամայն աննշան է, որ յայտնի իրականութեան կրեւոյթների չղթայից դուրս՝ համարեա ոչ մի առանձին հասարակական կարեւորութիւն չունի, յանկարծ կրեւան է գալիս այնպիսի պայմաններում, ծագում է առնում այնպիսի պատճառներից, կապուած է լինում այնպիսի գործօնների հետ, որ դառնում է մի տեսակ աղղանշան, մի մարտահրաւէր տիրող այս կամ այն կայութեան հետ: Առանձին մի կրեւոյթ, մի գէպը, սրի ընդհանրացումը (généralisation) տրամաբանօրէն հնարաւոր է ու ճշմարտապատում, որ մի տեսակ սինտեզ է բազմաթիւ այլ նման կրեւոյթների, միշտ ընդունակ է լայն ծաւալով չարժումն առաջ բերել և հասարակական ամբողջ կազմի հիմքերը ցնցել: Դրէյֆիւսի գործը այդ տեսակի մի գէպը էր, որ Ֆրանսիայի ժամանակակից հասարակութեան ամբողջ ցանցի մէջ էր խճճուած, և նրան ձեռք տուողը միաժամանակ և ճակատագրապէս դիպչում էր իշխող մօրալին, դասակարգային զանազան շահերին, ընթացիկ հասկացողութիւններին, աղղային աւանդութիւններին:

Անշուշտ Զօլան շատ լաւ գիտէր այդ խնդրի առաջնակարգ հասարակական նշանակութիւնը և նրանից սպասելիք հետեւանքները, երբ վճռեց թողնել իր գրողի աշխատանոցը և հրապարակ նետուել՝ կարտի վրայ գնելով իր ամբողջ կեանքը, բարի անունը, պատիւը և յանձն առնել այնքան տանջանքներ, այնքան հալածանքներ:

Բեննի դինուորական դատարանի վճոխց յետոյ, որով ինչպէս յայտնի է Դրէյֆիւս կանխամտաւած կերպով, զատական կեղծիքներով տաան տարով կրկին դատապարտուեց, Զօլան «Le cinquième acte» (հինգերորդ գործողութիւն) վերնադրով մի յօդուած հրատարակեց այդ անսպասելի վճոխ գէմ, որը, ինչպէս նա իրաւացի կերպով նկատեց, արդարադատութիւն չէր, այլ մի տեսակ վախուժած ճշմարտութիւնը չստելու և դինուորական դատա-

րանք վարկազուրկ չանելու համար Այդ նշանաւոր յօդուածով Զօլան կատարուած փաստը, Րեննի դատաւճիռը համարում է զրամայի չորրորդ գործողութիւն, բայց որովհետեւ Փրանսիական դրամաները միշտ հինգ գործողութիւնից են լինում, Զօլան հարցնում է. «Րեննի դատաստանը չորրորդ գործողութիւնն է, Տէր Աստուած, բացականչում է նա, որը կը լինի հինգերորդը, որպիսի ցաւերից, որպիսի նոր տանջանքներից նա կազմուած պիտի լինի... որովհետեւ պարզ է, որ անմեղը չի կարող երկու անգամ դատապարտուել և որ մի այդպիսի լուծումը կարող է մարել արեգակը և ոտքի հանել ժողովուրդները»։ Հինգերորդ գործողութիւն ասելով Զօլան հասկանում էր Դրէյֆիւսի վերջնական արդարացումը, այսպէս ասած նրա réhabilitation-ը, մի բան որ կարող է տեղի ունենալ, և որին հաւատում են շատ դրէյֆիւսականներ, բայց իսկապէս կարելի է ասել, որ այժմ արդէն այդ հինգերորդ գործողութիւնն սկսուած է Պրանսիայում և դա Դրէյֆիւսի վերջնական արդարացումը չէ,—նա բարոյապէս արդար է ճանաչուած ամբողջ աշխարհից—այլ այն առաջնակարգ հասարակական պրոբլեմների լուծումը, որոնց առաջ մղեց L'affaire-ը, և որոնք այնպէս տալիս ու վրայ են ածում Փրանսիական ժողովրդի ներքին կեանքը։

*
* *

Շնորհիւ Զօլայի Դրէյֆիւսի գործը հրապարակ հանեց մի ամբողջ կօալիցիա հակադեմօկրատիկական, հակահանրապետական ոյժերի բաղկացած պահպանողական Պրանսիայի բոլոր ֆրակցիաներից։ Դուրս եկաւ, որ նացիոնալիստ, անտիսեմիտ, կղերական, արքայական անուէնների տակ գործող կուսակցութիւններն իրանց ուրոյն ու անկախ գործունէութեան տակ թաղցնում են տիրող բեժիմի դէմ, մեծ յեղափոխութեան պրինցիպների դէմ, «Մարդի և քաղաքացու իրաւունքների» դէմ մի կադմակերպուած ամբողջութիւն, որ իր ահագին ճիւղաւորութիւններով, ինչպէս մի հազարգլխեան հիդրա մօտ է խեղդելու այն բոլորը, ինչ երրորդ հանրապետութիւնը ձեռք է բերել այնքան զոհաբերութիւններով, այնքան դառն փորձերից յետոյ։ Յայտնուեց, որ կղերականութիւնը, պահպանողականութեան այդ կադմակերպուած բանակը, ազատ մտքի, ղեմովկրատիայի այդ անձանձիր ու եռանդուն ախոյեանը իր ձեռքի տակ եղած ահագին նիւթական և բարոյական միջոցներով աշխատում է թունաւորել նոր սերնդի մտքերը և էլի մի անգամ «Դեկտեմբեր 2» պատրաստել։

Այս յայտնութիւնը Դրէյֆիւսի դործի ուրեմն և անուղղակի

կերպով Զօլայի և իր մարդակիցների ամենախոշոր ծառայութիւնը եղաւ Երրորդ հանրապետութեանը, կարելի է ասել, որ Լուքէի ընտրութիւնը, Վալդէկ-Րուսօի «հանրապետական պաշտպանութեան միւնիստրութիւնը», նրան հետեւող բարձրագոյն դատարանի վճռով նաշիոնալիստ—անտիսեմիտներին աքսորելը, կղերականութեան դէմ սկսած շարժումը, կրօնական միաբանութիւններին վերաբերեալ օրինագիծը, զօրքի բարձր զեկաւարների դէմ ձեռք առած միջոցները ամենասերտ առնչութիւն ունին Դրէյֆուսի գործի հետ, նրանից ծագում առած, նրանից մղուին ստացած խոշոր հասարակական երևոյթներ։ Ինչ, Զօլայի ակնարկած դրամայի հինգերորդ գործողութեան բազմապիսի յեղեղողմներն են։ Կոմբի բազիկալ միւնիստրութիւնը շարունակում է ամենամանողորմ վճռականութեամբ այն, ինչ սկըսել է իր նախորդը։ Յետադիմական, մութ, վեասակար ոյժերի մի կատարեալ ջախջախումն է կատարւում այսօրուայ Ֆրանսիայում, զտելու, մաքրելու մի ամբողջ հետեւողական ծրագիր է իրագործւում, հանրապետական—դեմոկրատիկական կարգերի վերջնական հաստատութեան, կատարեալ յաղթանակի համար։ Ահա թէ ինչ հետեւանքներ ունեցաւ Դրէյֆուսի գործը Ֆրանսիայի համար, և ահա թէ ուր պիտի փնտռել այդ հարցին տուած առաջնակարգ կարեւորութիւնը։

Զօլան իր օրինակով Վօլտէրից յետոյ եկաւ բողոքելու դիտական այն չոր, կարելի է ասել, անսիրտ միակողմանիութեան դէմ, որ թոյլ է տալիս այս կամ այն գիտնականին, գրողին, մտածողին, փակուել իր կարինետում, խուլ մնալ դրսից լսուող ձայների առաջ, չը տեսնել իր շուրջը կատարուածները և այս բոլորը դարձեալ յանուն գիտութեան, յանուն իբր թէ մարդկութեան ապագայ գերագոյն շահերի։ Զօլան ցոյց տուեց, որ դէպքեր կան, խոշոր չարիքներ կան կեանքի, երբ ոչ ոք չը պէտք է լուի, չէ կարող լուի առանց մարդկութեան դէմ յանցանք, *l'èse humanité* գործելու։ Ապագայ դրախտը ոչինչ չարժէ, երբ նրա պատրաստողները արհամարհում են ժամանակակից ցաւերն ու արցունքները։

*
* *

Թէ որքան մեծ է Զօլայի տուած հարուածը Ֆրանսիայի յետադիմական ոյժերին, թէ ինչքան խոշոր եղաւ նրա առաջ բերած աւերիչ ցնցումը պահպանողական բանակի շարքերում, ապացուցանում է այն ստորացուցիչ, այն ամօթալի կատաղութիւնը, որ նաշիօնալիստների օրգանները թափեցին նրա դազաղի շուրջը։

Չորս-հինգ տարի կուտակուած մաղձ ու թոյն էր, որ թըշնամիներն շտապեցին դուրս թափել այն մարդու մահուան առթիւ, որ երեսուն տարուայ ընթացքում Ֆրանսիայի մարմնի վրայ նրանց ձեւացրած պալարի մէջ իր սուր նշտրակն էր կոխել իր յանգուգն J'accuse-ներով: Ահա թէ ինչ էր գրում պահպանողական «Libre Parole»-ում անտիսեմիտ Դրիւմոն. «Իմ կեանքի ամենապարարիչ սպաւորութիւններից մէկն եղաւ Զօլայի մահուան լուրը... ամբոխներն ապականող այս մարդու մասնակցութիւնը Դրէյֆլուսի գործում ատելութեան փոխեց այն հակաբողութիւնը, որ մաքուր բնաւորութիւնները զգում էին դէպի այս ազտեղութիւններ կաղապարողը... Նա միայն մի անգամ է թողել իր աշխատանքները և այն մի դարչելի դաւաճան պաշտպանելու համար... և այն ժամին, երբ ամեն կողմ հնչում են հեծեմանքներն ու հառաչանքները այն սուրբ աղջիկների (քոյրերը) որոնց չպրտում են փողոց, մարզիկ գնում են պատուելու թաղումը այն անձի, որ զաւի մէջ միայն տխրութիւն և յուսահատութիւն տեսաւ»:

Մի ուրիշ պահպանողական թերթ Gaulois-ն գրում էր Զօլայի մահուան առթիւ. «Նա մեզ շատ չարիք պատճառեց և պատմութեան մէջ, եթէ միայն նա այնտեղ ընկնի, նա կը նկատուի որպէս կարապետ այն վատ մարդկանց, որոնք մեզ կառավարում են այսօր»:

Բայց ինչ արժէք ունեն այսպիսի անարգ վիրաւորանքները այն հոյակապ տեսարանի առաջ, որ ներկայացրեց Զօլայի յաղարկաւորութիւնը: Աշխատաւորների, կեանքի անողորմ դժուարութիւնների ծանր բեռն իրանց ուսին կրողների, ինչպէս նրանց վիճակով զբաղուած բոլոր ազնիւ գլուխների մի տհաճին բաղմութիւն, հարիւր հազարի հասնող մի ամբոխ հետեւում էր պատկների դէղերի մէջ կորած այն սգակառքին, որ տանում էր «Ժերմինալի», «Աշխատանքի», «Բեղմնաւորութեան», «Ճշմարտութեան» հեղինակի դիակը: Այդ յաղարկաւորութիւնը իսկապէս աշխատաւորների, արգարութեան և ճշմարտութեան ծարաւիների մի տօն է եղել, մի յաղթանակ: Իրաւունք ունէր Ժօրես երբ գրում էր. «Դեռ Ժերմինալը գրելիս, Զօլային երեւաց պրօլետարիան, որպէս մի մեծ ոյժ, մռայլ ու խորը, որ պիտի բարձրանար կամայ-կամայ և տեղ գրաւէր լոյսի առաջ: Եւ այժմ նա փնտռում էր «Աշխատանքի» և «Ճշմարտութեան» մէջ և թէ ինչպէս այս նոր և անսահման ոյժը կարող կը լինի կազմակերպուել առանց միեւնոյն տեղում սասելու, և պահպանել նոր կարգերում կեանքի շարժունութիւնը և աշխույժը: Մեծ և սնդակազմ աշխատաւորը դաւաճան մահու հա-

բուսածն ստացաւ, նախ քան նա կը կարողանար վերջացնել իր ամբողջ գործը: Նա չի տեսնի արդարադատութեան կատարածը, որ նա չէր դադարում յուսալ և ճշմարտութեան դրաման, որի մէջ նա եղաւ մի հզօր գործող, սպասում է դեռ, ինչպէս ինքն ասում էր, «վերջին գործողութեանը»:

Եւ բոլոր նրանք, որոնք վսեմ հաւատն ունեն դէպի արդարութեան և ճշմարտութեան յաղթանակը, բոլոր նրանք, որոնք աշխատանքի նուիրագործող խորհուրդը գիտեն, գլխակոր և տխուր պատկառանքով հետեւում էին մեծ քաղաքացու ամէլ-նին դէպի նրա յաւիտենական քնակարանը: Այնտեղ, մահուան հովանու ներքոյ, որ լռեցնում է կրքերը, և իրերի ու երեւոյթների վրայից յետ է քաշում արուեստականութեան, չարամտութեան, նախանձի, կուբայնող կրքերի քօղը, այնտեղ Զօլային վերջին գնահատութիւնը տուեց ժամանակակից Ֆրանսիայի ամենաընտիր բանաստեղծական փիլիսոփայական միտքը՝ Անատօլ Ֆրանս—իրան յատուկ հմայիչ ոճով:

«Զօլան, դեռ երիտասարդ օրերից, ասաց Անատօլ Ֆրանս, տիրապետել էր փառքը, խաղաղ և անուանի, նա վայելում էր իր աշխատանքի պտուղը, երբ կամաւ մի հարուածով ինքն իրան խից հանգստից և աշխատանքից, որ նա սիրում էր, կեանքի և անխառն ուրախութիւններից: Մի դադաղի վրայ պէտք է արտասանել խորիմաստ և մաքուր բառեր, պէտք է արտայայտել մեղմութիւն և համերաշխութիւն: Բայց դուք գիտէք, պարոններ, որ միայն արդարադատութեան և ճշմարտութեան մէջ է հանգիստը: Ես չեմ խօսում փիլիսոփայական ճշմարտութիւնից, որ մեր յաւիտենական վէճերի առարկան է, այլ այն բարոյական ճշմարտութիւնից, որ մենք ամենքս կարող ենք ըմբռնել, որովհետեւ նա յարաբերական է, զգալի, համապատասխան մեր բնութեանը և այնքան մօտիկ մեզ, որ նոյն-խակ մի երեխայ կարող է այն շօշափել... Արդարութեան և ճշմարտութեան համար սկսած պայքարը յիշելով կարո՞ղ եմ ես լռել մի անմեղի կորուստը խնդրող այն մարդկանց մասին, որոնք նրա փրկութեան մէջ իրանց կորուստն զգալով՝ երկիւղի յուսահատութեամբ նրան նեղում էին... Կարո՞ղ եմ լռութեան տալ նրանց ստերը, սա կը լինէր լռութեան տալ նրա (Զօլայի) առաքինութիւնը: Կարո՞ղ եմ ես լռութեան տալ նրանց լուտանքները, նրանց վիրաւորանքները. սա կը լինէր լռութեան տալ նրա (Զօլայի) ստացած վարձատրութիւնը և պատիւները: Կարո՞ղ եմ ես լռութեան տալ նրանց ամօթը, դա կը լինէր լռութեան տալ նրա փառքը: Ո՛չ, ես կը խօսեմ»: Ապա հակիրճ կերպով նկարագրելով Զօլայի կեանքի վերջին տարիներին կա-

պուած խոչոր հասարակական դէպքերը, Անատօլ Ֆրանսը շարունակում է. «Այդ նենգաւոր օրերում շատ բարի քաղաքացիներ էլ հաւատ չունէին դէպի հայրենիքի փրկութիւնը, դէպի Ֆրանսիայի բարոյական ոյժը... Մէկը, ներկայ բեժիմի մի կատաղի հակառակորդ, մի անհաշտ ընկերավարական ասում էր զառնութեամբ՝ «Եթէ այս աստիճան ապականուած է ներկայ հասարակութիւնը, ապա նրա գարշելի բեկորները չեն կարող նոյն-իսկ ծառայել հիմունք մի նոր հասարակութեան»։ Արդարութիւն, պատիւ, միտք, ամեն ինչ թւում էր կորած։

Եւ ամեն ինչ փրկուեց։ Զօլան միայն մի դատական սխալ չէր, որ ցոյց տուեց, նա բացեց դաւադրութիւնը բռնութեան, ճնշումների, բոլոր այն ոյժերի, որոնք միաբանուած էին սպանելու Ֆրանսիայում հասարակական արդարադատութիւնը, հանրապետական իդէան և ազատ միտքը։ Իր արի ձայնը արթնացրեց Ֆրանսիան։ Նրա արածի հետեւանքներն անհաշիւ են։

Նրանք, այդ հետեւանքները, այսօր յեղյկւղւում են մի հզօր փառահեղութեամբ և ուժով, նրանք տարածւում են անվերջ, և առաջ են բերել հասարակական արդարութեան մի շարժում, որ էլ չի կանգնի։ Նրանից կը ծնուի իրերի մի նոր կարգ հաստատուած աւելի լաւ արդարադատութեան և ամենքի իրաւունքի աւելի խորը գիտակցութեան վրայ։

...Զը խղճանք նրան իր կրած տանջանքների համար... Նախանձնք նրան, որովհետեւ նա պատիւ բերեց իր հայրենիքին մի հսկայական գործով, մի մեծ գործողութեամբ. նախանձնք նրան, իր ճակատագիրը և իր սիրտը նրան պատրաստեցին ամենամեծ ըաղզը, նա եղաւ մի արձան մարդկային խղճի։

Անատօլ Ֆրանսը իր այս խօսքերով ամբողջ Ֆրանսիայի լաւագոյն մտքերի և սրտերի թարգման հանդիսացաւ։ Եւ կը մարդ մտածում է, որ այս բոլորը վերաբերում են այն մարդուն, որին մի քանի տարի առաջ համարեա ամբողջ Պարիզը, ամբողջ Ֆրանսիան մահ էր աղաղակում, ականայ բռնւում է մի սրբազան հիացմունքով դէպի ճշմարտութիւնը և հաւատով դէպի նրա գերագոյն յաղթանակը։ Կեանքի գարշութիւնների, խեղդող իրականութեան մէջ ամեն տեղ և ամեն ժամանակ այդ հաւատը այնպէս սփռիւի է, որ միայն նրա համար Զօլան արժանի է տառապող մարդկութեան խորին երախտագիտութեանը։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մաքսային սակագների քննութիւնը ռայխստագում.— Մեծամասնութեան և փոքրամասնութեան պաշտօնը.— Ձեխերի և գերմանացիների անտագոնիզմը.— Աւստրիայի և Ունգարիայի յարաբերութիւնները.— Կրուպպի մահը
Պ օ լ ս ի թ ե ը թ ե ը ի ց . Կլիկիայի կաթողիկոսական ընտրութիւնը

Գերմանական ռայխստագը այս անգամ իր նստաշրջանը սկսեց այնպիսի տեսարաններով, որ յիշեցնում էին աւստրիական ռայխստատի ծանօթ աղմկալի կոիւնները, հայհոյանքն ու տուրուղմիոյը։ Մաքսային սակագների փոփոխութեան հարցը նոյնքան զրգուց ստոնարիւն գերմանացիների կրքերը Բերլինում, որքան լեզուի վէճը չեխերին և համագերմանականներին Վիէնայում։ Ձեռք յիշում, խօսել ենք արդեօք մեր ընթերցողների հետ մաքսային սակագները փոփոխելու մասին, թէ ոչ։ յամենայն դէպս, գուցէ, աւելորդ չը լինի այդ հարցի ծագումը պատկերացնել ընթերցողի առաջ։

Վիէնայի Ա-րդը վիթխարի ծրագիր կազմելու սէր ունի։ Նրա փայփայած իղձերից մէկն էլ այն է, որ Գերմանիան ունենայ հզօր նաւատորմիդ. նա ցանկանում է նաև էլքա և Հոենոս գետերը՝ միացնել մի ջրանցքով։ Իր այդ ծրագիրները իրագործելու համար նա պէտք է գտնի ժողովրդի ներկայացուցիչների համաձայնութիւնը. ռայխստագը պէտք է ընդունի բիւդժէտի մէջ այն ծախքերը, որ պահանջւում են կայսրի այդ ծրագիրները զլուխ բերելու համար։ Վիէնայի գիտէ, որ ազատական և արմատական կուսակցութիւնները դէմ կը լինեն՝ ժողովրդի բեռը նոր հարկերով ծանրացնելու, մանաւանդ որ չեն էլ համակրում այդ ծրագրները. ուստի նա մտածեց իր կողմը գրաւել ռայխստագի ամենաուժեղ տարրը՝ խոշոր կալուածատէրերին կամ ազդարներին, որոնց կողմնակից են ի-

րանց հիմնական աշխարհայեցողութեամբ նաև միւս պահպանողական կուսակցութիւնները (կղերական, աջակողմեան)։

Սակայն ագրարները լոկ կայսեր սիրոյ համար այդպիսի քայլ անելու ընդունակ չէին, պէտք էր նրանց աջակցութիւնը գնել, ահա յօգուտ ագրարներին՝ մաքսային սակագների փոփոխութեան շարժառիթը։

Այդ օրինագծով՝ դրսից Գերմանիա ներմուծուող գիւղատնտեսական բերքերի վրայ մաքսը աւելացնուում է, մանաւանդ զգալի փոփոխութիւն է մտցնուում ներմուծուող հացահատիկների և անասունների սակագների մէջ։ Ագրարները ուրախ էին, բայց որպէս զի գէթ կառավարութեան նախագծի մէջ նշանակած գներն անփոփոխ մնան—գիւմլային մի մանեօլրի՝ իրանց դժգոհ էին ձեւացնում այդ չնչին յաւելումներից։ Ռալֆստտգի ազատական և արմատական պատգամաւորները, ինչպէս և հասարակական կարծիքը, արդիւնագործները, բանուորները, արհեստաւորները, սաստիկ բողոքում էին այդ անարդար ծրագրի դէմ, որով ազգաբնակչութեան մի մասի շահերը գոհ էին բերւում միւս մասի ազահութեան։

Կառավարական օրինագծի առաջին ընթերցանութիւնից յետոյ, ռալֆստապը ընտրեց մի յանձնաժողով՝ մանրամասն քննելու համար իրան առաջարկուած փոփոխութիւնները մաքսային սակագների մէջ։ Սակայն այդ յանձնաժողովի միծամասնութիւնը աւելի ագրարական դուրս եկաւ, քան իրանք ագրարները, մասնաժողովը համարեաւ բոլոր սակագները աւելի բարձր նշանակեց, քան կառավարական օրինագծի մէջ էր։ Այդպէս, ուրեմն, ագրարները, օգտուելով կառավարութեան օրինագծի տենդենցիայից, դժգոհ էին ձեւացնում իրանց և աւելի մեծ պահանջներ անում, որ վերջ ի վերջոյ գէթ անփոփոխ պահպանուեն կառավարութեան նշանակած սակագները։ Հետեւաբար, կառավարութիւնը և կալուածատէր ազնուականութիւնը, փակելով դրսի ապրանքների ներմուծումը ներքին շուկայի մէջ, այդ շուկայի կատարեալ տէր էին դարձնում ագրարներին, որոնք, ընականաբար, աւելի թանկ էին ծախելու գիւղատնտեսական բոլոր արդիւնքները, ոչ մի երկիւղ չը կրելով դրսի մրցումից, այդպիսով, հողից կտրուած մասսան ոտքով գլխով յանձնուած էր այդ հողատէրերի կամայականութեան։ Բայց մտաւորապէս այդքան բարձր կանգնած մի ազգ, ինչպէս գերմանացին է, բուծ և տգէտ անտարբերութեամբ չէր կարող վերաբերուել իր ամենաէական շահերը շօշափող այդ հարցին, մամուլի մէջ, հասարակական ժողովներում, ամեն տեղ ըննադատուում էր օրինադիւծը, մասնագէտ անտեսագէտները դասախօսութիւններ էին կարդում,

բազմակողմանի կերպով քննում էին հարցը և այն: Այդ բոլորից յետոյ զարմանալի չէ, թէ ինչ մեծ հետաքրքրութեամբ էր սպասում ամբողջ Գերմանիան ռայխստագի նիստերի նորոգման: Բայնստագում, երբ պարզուեց յանձնաժողովի ուլտրա-սգրարական կարծիքը, կառավարութիւնը սկզբում ցոյց տուեց, որ նա կը գերադասի բոլորովին հրաժարուել իր օրինագծից, քան ընդունել յանձնաժողովի արած յաւելումները, որովհետեւ իրագործել այդ չափադանց բարձր սակագները նա անկարող կը լինի թէ միջազգային և թէ ներքին պատճառներով: Բայց բանից դուրս եկաւ, որ, անկախ ռայխստագից, կառավարութիւնը և սգրարները փոխադարձ վիճումներով համաձայնութեան են եկել և ամեն բան դրսուել են և սարքել, ինչպէս հարկն է: Այսպիսով, կառավարութիւնը իր հետ ունէր մեծամասնութիւն — կենտրոնը, աջակողմեաններին և նաչիօնալ-լիբերալներին: Ընդդիմադիր կուսակցութիւնը մի փոքրամասնութիւն էր կազմում, բազկացած լինելով սօցիալ-դեմոկրատներէից և ազատ խորհողներէից:

Ինչ տնէր այդ պայմաններում փոքրամասնութիւնը. ինչ օրինական ղէնք ունէր նա իր ձեռքում՝ մասսայի շահերի դէմ ուղղած օրինագծի իրագործումը խանգարելու համար:

Պարլամենտը մի միջոց է տալիս, զա օքստրուկցիան է:

Հիմնուելով ռայխստագի կանոնադրութեան այն կէտի վրայ, որով օրէնքի իւրաքանչիւր յօդուած նախ քան ընդունուելը պէտք է քննութեան և ապա քուէարկութեան ենթարկուի, օպպոզիցիայի համարեա իւրաքանչիւր անգամ սկսեց անվերջ ճառեր արտասանել օրինագծի ամեն մի յօդուածի մասին առանձին առանձին: Իսկ յօդուածների թիւը այդ մաքսային սակագների օրինագծի մէջ մօտ 1000-ի է հասնում: Բայի այդ, իւրաքանչիւր չնչին խնդրի առիթով պահանջում էին անուանական ձայնաւութիւն:

Այդ տակտիկայի նպատակն էր ձգձգել հարցը մինչև այն ժամանակ, երբ կը վերջանայ ներկայ ռայխստագի իրաւասութիւնը և նոր ընտրութիւններ կը նշանակուեն: Իսկ թէ ինչ հետեւանքներ կունենային այդ ընտրութիւնները՝ պարզ է. ազգաբնակչութեան մեծամասնութիւնը, հակառակ լինելով օրինագծին, կուղարկէր ռայխստագը այնպիսի ներկայացուցիչներ, որոնք կարող են պաշտպանել մասսայի շահերը: Այդ լաւ դիտէր, ի հարկէ, պահպանողական մեծամասնութիւնը, որ բոլոր երկրներում առհասարակ միջոցների մէջ խտրութիւն դնել չէ սիրում. երբ այդ իրանց ձեռնառու է, օրէնքն էլ կը փոխեն սեփական լապատրութիւն էլ կը տան: Այդպէս էլ արուեց և

ներկայ դէպքում. պահպանողականներից մէկը, Կարգօրֆը, յանկարծ օպպօզիցիայի համար բոլորովին անսպասելի մի յայտնութիւն արաւ.

—Նախ քան դիմել սակագների նիւթական մասի քննութեան,—ասաց նա նախագահ կոմս Բալլեստրեմին,—ես թոյլ կը տամ ինձ ձեր ուշագրութիւնը դարձնել այն բանի վրայ, որ մի քանի բոպէից յետոյ պատգամաւորներին կը բաժանուի ռայխստագի երեք կուսակցութիւնների կողմից ստորագրուած առաջարկը, որ յանձնարարում է սակագների ընդունումը ամբողջապէս, en bloc: Ապա, դիմելով սօցիալ-դեմօկրատներին, նա աւելացրեց. «Դուք ի չար գործ դնելով պարլամենտական ձեւերը և ձեր յաւակնութեամբ՝ մեծամասնութեանս չլնքին կապելու փոքրամասնութեանդ կամքը, մեզ այս ճանապարհը ցոյց տուիք»:

Տպաւորութիւնը շանթահար էր և ցնցող փոքրամասնութեան կատաղութիւնը սահմանից անցաւ, երբ մեծամասնութիւնը նոյն իսկ չուղեց յետաձգել այդ ապօրէն առաջարկի քննութիւնը մի օրով և միայն մի փամ էր տալիս փոքրամասնութեան՝ ուշքի գալու համար:

—Աւագակներ, դուք ուզում էք ձեր գրականները լքցնել ժողովրդի դրօշներով: Սրիկաներ—ասաց սօցիալ-դեմօկրատներից մէկը դիմելով պահպանողականներին:

Բարձրացաւ մի աղմկալի փոթորիկ. պատգամաւորներին տիրեց մի անզուսպ կատաղութիւն, կրքերը ծայրայեղօրէն բորբոքուեցին:

Սօցիալ-դեմօկրատներից մէկն էլ, Զինգերը, դիմելով ագրարներին, ի միջի այլոց, ասաց.

—Դուք այժմ բոլորովին հանեցիք ձեր դիմակը. ձեզ ինչ փոյթ ժողովրդի իրաւունքները, երբ կարելի է ժողովրդի հաշուով չահուել: Զեզնից չէր էլ կարելի սպասել յարգանք դէպի ուրիշների իրաւունքը, բայց ինչու դուք ձեզ ծիծաղելի էք դարձնում, ոտնակոխ անելով սեփական քկանոնադրութիւնը: Այդ ծիծաղելի է, սակայն աւելի ևս գարշելի»:

Աւելի հանգիստ կերպով էին խօսում միւս արմատականները և ցոյց էին տալիս, թէ որքան վտանգաւոր քայլ է պահպանողականների կողմից այդ փորձը՝ խախտել ռայխստագի սահմանադրական հիմքերը:

Մի քանի օր շարունակ ռայխստագի պատուին էանվայել տեսարաններ էին տեղի ունենում. մի անգամ նախագահը նոյն իսկ ստիպուած եղաւ փակել ժողովը: Տեսնենք ինչով կը

վերջանալ արդար փոքրամասնութեան և հանգամանքներից օգտուող մեծամասնութեան այս պայքարը:

Նման տեսարաններ անդի ունեցան նաև աւստրիական ռայխսրատում, ուր վերջին ժամանակները կարծես հանդարտուել էր չեխերի և գերմանացիների ազգային սուր անտագոնիզմը, որի մասին մի քանի անգամ առիթ կնք ունեցել խօսել մեր տեսութեան մէջ դեռ ևս անցեալ տարի (№№ 3, 6, 12):

Եւրոպական ոչ մի տէրութեան մէջ այնպէս պարզ չի երևում լեզուի հիմնական նշանակութիւնը ազգերի գոյութեան կուռում, ինչպէս Աւստրո-Ունգարիայում: Այդ ազգայնական պայքարը աւելի ազատ արտայայտութիւն ստացաւ 1867 թուականին ամբողջ ազգաբնակչութեան տուած սահմանադրական կարգերի չնորհւալմանը տեսանք *) թէ օրէնքով ինչ լայն սկզբունքների վրայ է գրուած լեզուների հարցը Աւստրիայում: Իսկ իրականապէս այդ իրաւունքից կարողանում են օգտուել ոչ-գերմանացիները Աւստրիայում ևւ ոչ-ունգարացիները Ունգարիայում միայն այն ժամանակ, երբ թուր և կաղմակերպութեան որոշ ոյժ են ներկայացնում:

Աւստրիայում իսկապէս սլաւոնական տարրը (60,5%) գերակշռում է գերմանականից (35%) և եթէ այնուամենայնիւ գերմանացիներն են համարում իշխող ազգութիւն—դա հետեանք է պատմական անցեալի, երբ սլաւոնական ազգերի մէջ ուժեղ չէր ազգային ինքնաճանաչութիւնը և ընդհանրապէս մտաւոր զարգացումը: Այժմ կարծես հասել է այն պատմական մօմենտը, երբ պէտք է վերջ դնուի գերմանական գերիշխանութեան, եթէ ոչ ամբողջ Աւստրիայում, դէթ Չեխիայում, ուր ազգաբնակչութեան միայն 27—37% է գերմանական:

Չեխերի և գերմանացիների անտագոնիզմը, ինչպէս յայտնի է, պտտում է լեզուի հարցի շուրջ: չեխերը պահանջում են որ Բօհեմիայում և Մօրավիայում ոչ միայն դպրոցական, տեղային գործաւարական, այլ և պետական լեզուն լինի չեխերէնը:

Աւստրիական կառավարութիւնը գուցէ պատրաստ լինէր մեծ գիշումներ անել այդ ուղղութեամբ, եթէ համագերմանական կուսակցութիւնը այնքան զօրեղ կերպով ընդդիմադրութիւն չը ցոյց տար: Յայտնի է թէ այդ կուսակցութեան պարագլուխ Շենեքեր և Վոլֆ ինչ վայրենի տուրուզմիտոցների և սկանդալների ասպարէզ դարձրին մի ժամանակ ռայխսրատի նիստերը: Այժմ էլ համագերմանականների յանդգնութիւնը այնտեղ

*) „Մուրճ“, 1901 թ. № 12, էեր. 215:

է հասնում որ նրանք, զժգոհ կառավարութեան զիջող տակտիկայից, բղաւում են մինիստր-նախագահի երեսին. «Մենք զերաւ-դասում ենք պատկանել Գերմանիային, բան այնպիսի Աւստրիային, որ տիրապետութիւնը պէտք է պատկանի սլաւոններին. կեցցեն Հօհենցոլլերները»:

Ձեխերն էլ զժգոհ են կառավարութիւնից, որ սա կտրուկ տակտիկա չէ բանեցնում լեզուային հարցում:

—Եթէ կառավարութիւնը իրան անընդունակ է զգում անհրաժեշտ քայլերն անել լեզուի հարցում, նա պէտք է տեղ տայ ուրիշին, ասում են չեխերի պարագլուխները:

Այդպէս ահա մինիստր-նախագահ Կեօրքերը ևս անկարող եղաւ. հաշտեցնել երկու ներհակ կողմերը:

Ինչպէս Աւստրիայում տիրապետող գերմանական ազգութիւնը ունի ռիսերիմ հակառակորդ յանձին չեխերի, այնպէս և Ունգարիայում տիրապետող մաջարները ունեն ընդդիմադիր ազգային հոսանք խորվաթների կողմից, որոնց մտաւոր ազգային կենտրոնը Զագրէբ քաղաքն է: Անջատուել և անկտիւ Մեծ-Խորվաթիա ստեղծել—ահա այդ սլաւոնական փոքրիկ ազգութեան *pia desideria*ն:

Բայց աւելի լուրջ և հիմնական է Աւստրո-Ունգարական յարաբերութիւնների խնդիրը: Այդ երկու իրար հաւասարաիրաւունք պետութիւնները, ինչպէս յայտնի է, 1867 թուականից յետոյ կապուած են մի համաձայնութեամբ (*Ausgleich*) որ երերուն է, անհաստատ, զիւրաբեկ: Ընդհանուր վեհապետ, ընդհանուր զօրք և նաւատորմիդ և ընդհանուր արտաքին մինիստրութիւն—ահա չփոխն կէտերը: Բացի՝ այդ զինւորական-գիւլլոմատիական ընդհանուր-կէտերից կան ի հարկէ նաեւ տնտեսական հանգոյցներ, սակայն այդ վերջին կապերը փոփոխելի են և այլալի և պահանջում են ժամանակ առ ժամանակ նորոգութիւն: Տնտեսական կեանքին վերաբերեալ կողմերը—ընդհանուր մաքսային սիոտեմ, ընդհանուր բանկ, միաձեւութիւն չափի, կշռի և դրամի մէջ, ինչպէս և երկու պետութիւններից ամեն մէկի մասնակցութեան չափը ընդհանուր ծախքերում—այդ բոլորը պէտք է իւրաքանչիւր 10 տարին մի անգամ քննուեն և ընդունուեն երկու երկրների պարլամենտներից ընտրուած պատգամաւորների կողմից: Այդպիսի համաձայնութիւն կայացել է առաջին անգամ 1867 թուականին, ապա նորոգուել են 1877 և 1887 թուականներին. իսկ 1897 թուականին համաձայնութիւնը չի կայացել և մինչեւ այժմ այդ խնդիրը լուծուած չէ և մի կերպ եօլա են տանում կայսերական ժամանակաւոր կարգադրութեամբ: Ուրեմն, կարող է պատահել որ կայսրութեան եր-

կու մասերի մէջ չի կայանայ համաձայնութիւն տնտեսական հողի վրայ, և՛ մաքսային դաշնակցութիւնը, ընդհանուր բանկը և այլն խզուելով, մազից կախուած լինի նաև զինուորական-գիւղ-լուծարական միութիւնը...

Բոլոր պետութիւնների զինուորական-գիւղացւոտիական շրջաններում անկասկած մեծ տպաւորութիւն է թողել աւերող աշխարհի զօրքերին, բայի ֆրանսիականից, թնդանօթներ մատակարարող Կրուպպի մահը:

Հետագիրը տարածեց նրա մահուան լուրը և այն անուանարկող պատմութիւնները, որ կապում են նրա վաղաժամ (48 տ.) մահուան, գուցէ և ինքնասպանութեան, հետ Գերմանական կայսրը իր ներկայութեամբ պատուեց իր «բարեկամի», թնդանօթային թագաւորի, թաղումը և ճառ արտասանեց նրա գազազի վրայ:

Իսկապէս նշանաւոր անձնաւորութիւն էր ֆրիդրիխ-Ալբրէխտ Կրուպպը, իբրև կապակերպող առդանդ և որոշ տեսակի բարեգործ իր բանուորների նկատմամբ: Լրագրներից *) քաղում ենք հետևեալ թուրը նրա էսսենեան գործարանների մասին:

Նրա գործարանները տարին բանեցնում են 120 միլ. պուլ ածուխ: Շոգեկաթսաները արտադրում են 43,500 հազար ձիու ուժ. գրանց աւելայրէք 370 էլէքտրո-մագնիսական շարժիչների վիթխարի ոյժը: Նրա էսսենեան գործարանները լուսաւորելու համար վաճում են 11,000 էլէքտրական լամպեր: Միայն 1901 թուականին նրա գործարանից դուրս է եկել 40 հազար թնդանօթ: Նրա բանուորների թիւը հասնում էր 43 հազարի, իսկ հաշուած և զրանց ընտանիքները՝ 150 հազար հոգու: Կրուպպ իր բանուորների կեանքը ապահովելու համար տարեկան մտցնում էր 4 միլիոն. բացի այդ, բանուորների համար կենսաթոշակ էր հիմնել՝ նուիրելով իր կողմից 9 միլիոն: Իր բանուորների համար նա բնակարաններ էր շինել բոլոր յարմարութիւններով և մսիւի էր այդ բանի վրայ 12 միլ.:

Կրուպպի տարեկան հասոյթը հասնում էր 15 միլիոնի: Այդ միլիոնները, ի հակէ, կազմում էին միլիտարիզմի բեռան տակ տնքող ազգերի արիւն քրտինքով աշխատած կռակներին:

Լ. Ս.

25 նոյեմբ.

*) „Рус. Вѣд.“

Պ Օ Լ Ս Ի Թ Ե Ր Թ Ե Ր Ի Յ

Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան վեցանուն ցանկի մէջ մտած եկեղեցականներէ մասին «Արեւելք» ասում է.

«Իրենցմէ չորսը Պալեան Տրդատ, Յովակիմեան Ստեփաննոս, Ասլանեան Ներսէս եւ Կեօմարիքեան Մովսէս եպիսկոպոսները, բացի երկրորդէն՝ ամենքն ալ նորապսակ,—այս միջոցիս առաջնորդական պաշտօնով կը գտնուին Կեսարիոյ, Նիկոմիդիոյ, Ռոտոսթոյի եւ Պիլէճիկի վիճակներուն զուլիւր:

Տրդատ եպիսկոպոս թէ եկեղեցւոյ արժանաւոր պաշտօնեայ մըն է, թէ գրականութեան վաստակաւոր մը՝ մասնաւորաբար իր բանասիրութեամբ ու բազմաթիւ երկասիրութիւններով, եւ թէ նոյն ատեն կարող վարիչ մը: Այսչափ ատեն է ի վեր կը վարէ Կեսարիոյ առաջնորդութիւնը, եւ տակաւին ոչ մէկ հիմնաւորութեան գանգատ լսուած է իրեն դէմ, ոչ մէկ անպատեհութեան ծնունդ տուած է: Ընդհակառակը, Կեսարիոյ ժողովուրդը միշտ շնորհակալութիւն յայտնած է իր առաջնորդին՝ որուն գործունէութիւնը արդէն ամեն գովեստի արժանի կը դարձնէր զինքը:

Յովակիմեան սրբազան, Նիկոմիդիոյ առաջնորդը, իրաւ է որ չի կրնար պարծիլ գրական կարողութեամբ ու զարգացմամբ, բայց վերջապէս ամենէն օրինակելի առաջնորդներէն եղած է, եւ մէկը անոնցմէ՝ որոնք սրտովին փարած են իրենց գործին, եւ երբէք չեն ուզած բաժնուիլ այն վիճակէն որ անգամ մը զիրենք արժանի դատած էր իրենց հովուութեան: Միւս կողմէ, չինող առաջնորդ մը եղած է, եւ առածի կարգ անցած է այդ տեսակէտով Նիկոմիդիոյ վիճակը՝ իր բազմաթիւ թեմերով, բարիք չատ տեսած է այդ ոչ հմուտ, բայց շատ կարող եկեղեցականէն՝ որուն վարչական յատկութիւններն ալ կրնան առաջին կարգի վրայ դասուիլ:

Վարչական այդ յատկութիւնները իր վրայ միացուցած է նաեւ Ռոտոսթոյի առաջնորդ Ասլանեան սրբազանը: Խստամբեր եկեղեցական մը եւ խիստ՝ ամեն անգամ որ պէտք կայ խստութեանը իր անշահախնդիր բնաւորութեամբը մանաւանդ, ամեն տեղ պարկեշտ ու արժանաւոր եկեղեցականի մը համբաւը թողած է, գրեթէ առանց բնաւ քննադատութեան տեղի տալու: Յետոյ կրթասէր առաջնորդ մը եղած է միշտ, ու երբէք չէ ուզած խտրական ոգիով վերաբերուիլ եկեղեցւոյն ու դպրոցին հանդէպ, ինչ որ սղտիկ յատկութիւն մը չէ ո՛ր եւ է առաջնորդի համար:

Ընտրական ժողովին նախագահը, Կէօմրիւքճեան սրբազան պէտք է ըսել որ գործունեայ անցեալ մը չէ ունեցած, եւ իր պաշտօնավարութիւնն ալ՝ իբր Պիլէճիկի առաջնորդ, երբէք չէ ստացած փայլուն, աչքառու հանգամանք մը: Հանրութեան ուշադրութիւնը՝ այս վերջերս անգամ մը իր վրայ կեդրոնացած էր եպիսկոպոս ձեռնագրուելուն առթիւ, և անգամ մըն ալ այսօր կը կեդրոնանայ, կաթողիկոսական ընտրութեան չնորհիւ: Իր գործունէութեան պատկումը այդ պատրիարքական պատուիրակի պաշտօնն է այս պահուս, եւ պէտք է ընդունիլ որ բաւական ընդունակութիւն ու կարողութիւն ցոյց տուաւ անոր կատարման մէջ:

Մնացեալ երկու եկեղեցականները, — անոնք որ առաջնորդական պաշտօն մը չունին այս միջոցիս, — ալ աւելի ծանօթ են, և ալ աւելի բարձր պաշտօններ վարած:

Չամչեան Բարթողիմէոս արքեպիսկոպոս, երբեմն շատ խօսեցողացած է իր վրայ, Պրուսայի առաջնորդութեան միջոցին, և կարելի էր ըսել թէ այդ վիճակին նախանձելի հանգամանք մը ունենալը իր պաշտօնավարութեան արդիւնքն է պարզապէս: Ինքն ալ շինող առաջնորդ մը եղած է հոն, և բաւական աշխատած է ատենին՝ այդ համայնքին մէջ կրթութիւնը տարածելու համար: Աւելի վերջը կոչուած է Պօլսոյ պատրիարքական տեղապահութեան պաշտօնին, և իր օրովն է որ Պատրիարքարանի երկու համակրելի դիւանապետները, Թէլեան Բարթող և Խաչատուրեան Կարապետ էֆ—նեքը, կայս. իրատէի մը տրամադրութեան համաձայն, հիմը դրած են այն նպաստի գործին, որ վերջ ի վերջոյ առանձին Նպաստից Յանձնաժողովի մը ծնունդ տուաւ, և որ, — կայս. կառավարութեան բարեացակամութեան և առատաձեռնութեան չնորհիւ, — այնքան կարօտութիւններ կ'ամօքէ, այնքան անոքներ կը պատսպարէ:

Իսկ Խապայեան Սահակ սրբազան՝ որ երկար ատենէ ի վեր կը վարէ Երուսաղէմի լուսարարապետութեան բարձր ուղծուարին պաշտօնը, և որ ամենէն մեծ դօրավիզն է Վեհապետեան տ. Յարութիւն ս. պատրիարքին, մէկն է այն բաղդաւոր եկեղեցականներէն՝ որոնք իրենց արժանաւորութեան և ուղղամտութեան չնորհիւ երբէք չեն ճանչցած քննադատութիւն ըսուածք: Չազգացած, հմուտ ու կարող վարիչ, արդիւնք տուած է թէ իբր դաստիարակ, թէ իբր պաշտօնեայ, և թէ իբր եկեղեցուոյ հովիւ: Բիշ եկեղեցականներ կրնան իրենց զոյովիւնը անհրաժեշտ դարձնել այն հաստատութեանց համար, որոնց մէջ կը պաշտօնավարեն: Խապայեան սրբազան այդ հանգամանքը ունի այսօր Երուսաղէմի մէջ: Միւս կողմէ, նախորդ

ընտրութեան միջոցին, իւր ընտրական ժողովոյ նախագահ, ոչ նուազ աչքի զարկած է իր բազմադիմի բարեմասնութիւններով ու յատկութիւններով, և իր բաժանումը Կիլիկիայէն՝ Կատարեալ դաւ մը առթած է ընդհանուր վիճակայիններուն:

Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրելեաց վեցանուն ցանկը, ս. պատրիարքը յատուկ թագրիրով մատուցած էր կայս. կառավարութեան: Նախարարաց Խորհուրդը հոկտ. 3ին իր նիստին մէջ նկատողութեան առած է այդ թագրիրը և պատրիարքարանի ալ հաղորդուած է թէ Բ. Դուռը և Դատական նախարարութիւնն ալ նկատի առնելէ վերջը, պատասխանը կը հաղորդուի Պատրիարքարան:

Նախարարաց Խորհուրդին հոկտ. 6-ի նիստին մէջ Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրելեաց վեցանուն ցանկին մազպաթան ստորագրուելով երկուշաբթի օրը, հոկտ. 7-ին, յանձնուած է Մեծ — Եպարքոսին, ուրիշ պիտի հաղորդուի դատական գործոց նախարարութեան, որ յատուկ պաշտօնագրով պիտի զրկէ պատրիարքարան՝ պարտ ու պատշաճ անօրինութեան համար:

Հոկտ. 8ին իրիկուն Կիլիկիոյ կաթողիկոսական տեղապահ տ. Կիրակոս եպիսկոպոս Բեքմեղճեանի կողմէն հեռագիրներ ուղղուած են տ. Սահակ Խապայեան սրբազանի, Կիլիկիոյ պատգամաւորներուն կողմէ, խնդրելով որ չհրաժարի. միեւնոյն իմաստով երուսաղէմայ պատր. փոխանորդ տ. Գէորգ սրբազանն ալ հերազիր մը ուղղելով, խնդրած է մասնաւոր եւ ազդու հեռագիր մը զրկել. տ. Սահակ սրբազանի, ներկայացնելով Կիլիկիոյ այս փափաքը:

Հոկտեմբերի 9ին իրիկուն ժամը 12ի միջոցին Դատական նախարարութենէն Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրելեաց վեցանուն ցանկին պատասխանը պատրիարքարանը հասած ըլլալով՝ ս. պատրիարքը անմիջապէս Խառն ժողովի անդամներուն հրաւէր ուղղեց այսօրուան համար: Խառն ժողովը, գրեթէ ամբողջութեամբ, այս առաւօտ, ս. պատրիարքին նախագահութեամբ նիստ դումարեց Ղալաթիոյ Խորհրդարանին մէջ: Ներկայ էին Կրօնական ժողովէն տ. Գաբրիէլ եպիսկոպոս Ճէվահիրճեան, տ. Եղիշէ եպիսկոպոս Դուրեան, տ. Կարապետ Սանտալճեան ու տ. Յովհաննէս Շահպաղեան ընդհանրը: Քաղ. ժողովէն՝ Տիգրան Եւսուփեան, Գրիգոր Խորեան, Տիգրան Տէր

Ներսէսեան, Գրիգոր Գարակեօզեան, Միհրան Սեթեան, Մկրտիչ Ասասեան, Սեպուհ Տէմիրճիպաշեան ք. ֆ. -ները, Ատեանը բացուեցաւ ժամը 4-ու կէսին. ժողովը նկատողութեան առաւ Բ. Դուռնէն ի պատասխանի պատրիարքական թագրիրին հասած պաշտօնագիրը, որով վեցանուն ցանկէն ընտրելի կը նշանակէր տ. Բարթողիմէոս արքեպիսկոպոս Չամչեան, տ. Սահակ եպիսկ. Խապայեան եւ տ. Մովսէս եպիսկ. Կէօմրիւքճեան: Ըստ այսմ, որոշուեցաւ հեռագրով անմիջապէս հրահանգ ուղղել Կիւլիկիոյ Կաթողիկոսական պատուիրակ տ. Մովսէս եպիսկ. -ի եւ Կաթողիկոսական տեղապահ տ. Կիրակոս եպիսկ. -ի, որպէս զի Ընտրողական ժողովը ինիստ գումարուի եւ Կաթողիկոսը ընտրելով՝ տեղեկագիրը փոխելով ուղարկուի պատրիարքարան: Միանգամայն յանձնարարուեցաւ որ Ընտրողական ժողովը չցրուի, ընտրութիւնը կատարուելէն ետքը, այլ սպասէ պատրիարքարանի հրահանգին:

Բարթողիմէոս արքեպիսկոպոս Չամչեան նամակ մը գրելով ս. պատրիարքին, շնորհակալութիւն յայտնեց է Ընտրողական ժողովին կողմէ պատրաստուած ցանկին մէջ իր անունը դրուած ըլլալուն համար: Սակայն նկատելով որ ինք կարողութիւն չունի Ասոյ աթոռին բազմապահանջ վիճակին օգտակար ըլլալու, կը փութայ հրաժարիլ, մի գուցէ ընտրելիներու ցանկին մէջ իր մնալը արգելք ըլլայ աւելի արժանաւորի մը ընտրութեան: Բարթողիմէոս արքեպիսկոպոս նաեւ խնդրեց է որ Ընտրողական ժողովը քուէ չտայ իր անունն: Ս. պատրիարքը հեռագրով Ընտրողական ժողովի նախագահին հաղորդեց այս հրաժարականը:

Բ. Դուռը, իբրեւ պատասխան այն ցանկին, ուր Կիւլիկիոյ Կաթողիկոսութեան համար վեց ընտրելիներու անունները նշանակուած էին, հոկտ. 10-ին հեռագրած էր Ատանայի՝ կուսակալութեան թէ այդ վեց ընտրելիներէն երեքը զատուելով, միւս երեքը՝ տ. Բարթողիմէոս, տ. Սահակ Խապայեան եւ տ. Մովսէս Կէօմրիւքճեան եպիսկոպոսները ընտրելի մնացած են: Պատրիարքարանն ալ ըստ այնմ ծանուցած էր ընտրութեան պատուիրակ տ. Մովսէս եպիսկոպոսի եւ Կաթողիկոսական տեղապահ տ. Կիրակոս եպիսկոպոսի հոկտ. 12-ին ժամ 8-ին, կուսակալ Պահրի փաշայի, մէքթուպճի Ֆասիհ պէյի, տ. Մովսէս ու Կիրակոս եպիսկոպոսներու եւ բոլոր ընտրողներու ներկայութեանը, կուսակալը բանախօսութիւն մը արտասանեց եւ յետոյ մեկնեցաւ: Ապա տ.

Մովսէս եպիսկոպոս ալ կարգ մը բացատրութիւններ տուաւ և մէքթուպճի պէյին հսկողութեանը տակ կատարուեցաւ ընտրութիւնը: Եւ Սահակ եպիսկոպոս խապայեան ընտրուեցաւ: 45 պատգամաւորներու 62 քուէներն ամբողջապէս միացած էին յանձին տ. Սահակ սրբազանի: Կուսակալը նորէն ժողովին գալով գոհունակութիւնը յայտնեց ընտրութեան պատուիրակին և բարեմաղթութիւններ ըրաւ Վեհ. Սուլթանին համար: Բոլոր ներկաները «Փաղիչահըմ չոք եաչա» գոչեցին:

Հոկտ. 13ին իրիկուն, ուշ առտն, ս. պատրիարքը հեռագիր մը ստացաւ Կիլիկիոյ նորընտիր ս. Կաթողիկոսէն, որով ամեն. տ. Սահակ սրբազան կ' ընդունի Կիլիկիոյ կաթող. պաշտօնը: Աւասիկ այդ հեռագրին թարգմանութիւնը.— «Շնորհակալութիւն կը յայտնեմ Սիսի Կաթողիկոսութեան ընտրութիւնս ծանուցանող ու շնորհաւորող ձեր սրբազնութեան հեռագրին համար: Այս նոր պաշտօնիս բարեղք կատարման համար զիմելով Աստուծոյ, կ'ապաւինիմ Օգոստափառ Կայսեր բարձր հաւանութեան եւ կայս. կառավարութեան պաշտպանութեան, ու կը վստահիմ պատրիարքարանի շարունակական օգնութեան»:

Տ. Մաղաքիա ս. պատրիարքը, խապայեան սրբազանի Սոյ Կաթողիկոս ընտրուելը հեռագրով հաղորդած էր Երուսաղէմի ս. պատրիարքին: Երէկ Յարութիւն սրբազան պատրիարքը հեռագրով շնորհակալութիւն յայտնած է ս. պատրիարքին: Աւասիկ այդ հեռագրին թարգմանութիւնը:

«Սահակ արքեպիսկոպոսի Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուելուն առթիւ, ն. Սրբազնութեան սոյն պաշտօնին կատարեալ արժանաւորութիւնը յիշելով, շնորհաւորած էիք նաեւ մեր Միաբանութիւնը: Ձեր այդ հեռագրին համար գոհունակութիւն յայտնելով, կ'ապահովեմ որ Սահակ Արքեպիսկոպոս ընդունած է Կաթողիկոսութիւնը եւ պիտի շարունակուին այն ամեն գիւրութիւնները, որոնք կարեւոր են Եկեղեցիի շահուն համար»:

Շնորհաւորական հեռագիր ստացուած է նաեւ վեհ. Կաթողիկոսից:

Կիլիկիոյ Կաթողիկոսական պատուիրակ տ. Մովսէս եպիսկոպոս Կէօմրիքճեան, մինչեւ նորընտիր ս. Կաթողիկոսին Սիս ժամանելը եւ օծուիլը, պիտի մնայ Ատանա: Պատրիարքարանի շրջանակներուն մէջ կ'ըսուի թէ նորընտիր Կաթողիկոսը Սիս մնա՞նք օրը, Վարչութեան կողմէն պատուիրակութիւն մը պիտի կազմուի, եկեղեցականներէ եւ աշխարհականներէ բաղկա-

ցած, որոնք պիտի հետեւին նորընտիր Ս. Կաթողիկոսին, օծման հանդէսներուն ներկայ գտնուելու համար:

Ս. պատրիարքը, հեռագիր մը ուղղելով Ատանա, Կաթող. պատուիրակ տ. Կէօմրիւքճեան սրբազանին յայտնեց թէ ամեն. Խապայեան սրբազան ընդունած ըլլալով իր պաշտօնը, պատգամաւորները կրնան դառնալ իրենց թեմերը:

Նորընտիր Կաթողիկոսի մասին «Սուրհանդակից» քաղուժ ենք հետեւեալ կենսապրական տեղեկութիւնները.

«Տ. Սահակ եպիսկոպոս Խապայեան ծնած է 1849-ին, Խարբերդի Եղէզի գիւղը: Հայրն էր մահ. Կարապետ, իսկ մայրը Գոհար: Խապայեան գերդաստունը, մանաւանդ Կարապետ աղան, մեծ համբաւ մը ունի Խարբերդի դաշտի ժողովուրդին մէջ, Գիւղին քէհիանալ թաղականալ հոգաբարձուն ալ ինքն Կարապետ աղան էր:

Գարրիէլ (Սահակ եպիսկոպոսի աշխարհական անունը) երբ իր գիւղի դպրոցական չրջանը աւարտեց չուղեց անով գոհ ըլլալ, և ստիպեց հօրը որ զինքը Մէզրէի ազգ. վարժարանը ղրկէ: Այն ատեն Մէզրէի վարժարանը Խարբերդի ամենէն լաւ դպրոցն էր. ուսուցիչներէն մէկ քանին Պօլսէն տարուած էին:

Գարրիէլ քիչ ժամանակի մէջ Մէզրէի բոլոր ուսուցիչներուն համակրութիւնը շահեց: Իր ձայնը այնքան անոյշ էր որ գիւղին երևելիները շատ անգամ երաժիշտ դասատուին հետ իրենց տունը խնջոյքի կը հրաւիրէին Գարրիէլը, որպէս զի շարականները և տաղեր երգէ:

Գարրիէլ հազիւ 16 տարեկան կար և տակաւին Մէզրէի դպրոցը կը յաճախէր, երբ օր մը գիւղին ուսուցիչը ձամբուելով, անոր տեղ ինքը ուսուցիչ նշանակուեցաւ, հօր հսկողութեան տակ:

Օր մը Կարապետ աղա միտքը կը դնէ ղրկել զաւակը Երուսաղէմ, և ա. Աթոռին որգեգրել զայն: Իր այս մտադրութիւնը կը յայտնէ Գարրիէլին, որ կը համակերպի հօրը հրամանին, և 1867 փետր-ի վերջերքը երկուքը մէկ տեղ ձամբայ կելլեն դէպի Երուսաղէմ: Կարապետ աղա Երուսաղէմի այն ատենուան պատրիարքին՝ տ. Եսայի սրբազանի՝ ղրմելով կը խնդրէ, որ Գարրիէլն ալ ժառանգաւորաց վարժարանը ընդունուի, տ. Եսայի պատրիարք նկատողութեան կառնէ Կարապետ աղայի խնդիրը, իր ներկայութեան կը կանչէ հայրը և որդին, և ամեն կերպով եկեղեցականութեան յարմար դատելով պատանի Գար-

րիէլը, հարկ եղած բժշկական քննութեանէն վերջը վարժարան կ'ընդունի զայն:

Եսայի պատրիարք ջանք չէր խնայեր ս. Աթոռի վանքին մտաւոր մակարդակը բարձրացնելու համար, և ամեն նիւթական զոհողութիւն կ'ընէր: Այս նպատակին հասնելու համար որոշեց վարժարանին յառաջագէտ աշակերտներէն մէկ քանիին մասնաւոր կրթութիւն մը տալ: Գաբրիէլ հազիւ երկու տարուան մէջ իր լուրջ աշխատասէր բնաւորութեամբ թէ՛ հանգուցեալ պատրիարքին և թէ՛ ուսուցիչներուն համակրութիւնը գրաւած էր: Ուստի Եսայի պատրիարք խորբերդցի Գաբրիէլ Սապայեանը անմիջապէս սարկաւագ ձեռնադրելով Պօլիս կը զրկէ: Անփորձ սարկաւագը որ հազիւ 20 տարեկան էր կը հաստատուի Երուսաղէմատան մէջ, և ժամանակին համբաւաւոր ուսուցիչներէն Յակոբ Ոսկանի, տաճկագէտ Հերթիկ Հօճայի, Մ. Բաքալի և ուրիշներու խնամքին տակ երեք տարի անընդհատ աշխատելով, կը յաջողի պէտք եղածին չափ ուսում ձեռք բերել:

Ժամանակին Պօլսոյ պատրիարքը—արդի ս. հայրապետը —տեսնելով Գաբրիէլ սարկաւագի քարողութեան մէջ ունեցած ձիրքը և գիտական հմտութիւնը, կը հրամայէ որ նոյն իսկ իր ներկայութեանը երբեմն քարոզ խօսի Մայր-եկեղեցիին բեմէն: Գաբրիէլ սարկաւագ քիչ ատենուան մէջ ճարտար քարոզիչի մը համբաւը կը շահի Պօլսոյ մէջ:

Գաբրիէլ սարկաւագ իր երկու ընկերներուն հետ երբեմն կ'այցելէ Սաս գիւղ, Նուպար-Շահնազարեան վարժարանը, և հոն ներկայ կը գտնուի դասախօսութիւններուն: Երեք տարի Պօլիս մնալէ ետքը, երեք սարկաւագներն ալ Եսայի պատրիարքին հրամանով Երուսաղէմ կը դառնան, ուր իւրաքանչիւրը իր մասնագիտութեան համեմատ դասեր կըստանձնէ Ժառանգաւորաց վարժարանին մէջ: Տ. Մելքիսեդեկ սրբազան—այն ատեն վարդապետ—որ Ժառանգաւորաց վարժարանին տեսուչն էր, Զմիւռնիոյ վիճակին առաջնորդ ընտրուելով բոլորովին կը հրաժարի միաբանութենէն, և իրեն տեղ 1874-ին վարժարանին տեսչութեան կը կանչուին Գաբրիէլ, Մելքոն և Մաքսուտ սարկաւագները: Այդ օրէն Գաբրիէլ սարկաւագ դպրոցին վարիչը կը դառնայ: Տեսչական և ուսուցչական զբաղումներէն դուրս կը խմբագրէ «Սիօն» ամսաթերթը: Միևնոյն ատեն միաբանական ընդհանուր ժողովին ա. քարտուղար, տնօրէն ժողովին ատենադպիր և ուսումնական ու տնտեսական խորհուրդներուն անդամ կընշանակուի: Թէև դեռ սարկաւագ, բայց իր լուրջ բնաւորութեան ջնորհիւ եպիսկոպոսական տիտղոսը կը ստանայ

միաբանութենէն: Իր սարկաւագութեան ատեն ուխտաւորական շրջաններու միջոցին քարոզ ալ կը խօսէր ս. Թորոս եկեղեցին, Նսայի պատրիարքին հրամանով:

Գաբրիէլ 7 տարի սարկաւագ մնալէ վերջը, 1877-ին Վարդապետի կիրակին Նսայի պատրիարքէն արեղայ կը ձեռնադրուի հինգ ընկերներով. Գաբրիէլ սարկաւագ կը կոչուի Սահակ արեղայ:

Նորընծաներու արեղայութիւնը երկար չտևեց, հազիւ տարի մը անցած էր, երբ հինգն ալ վարդապետական մասնաւոր իշխանութիւն և դաւադան կրեկու արտօնութիւն ստացան: Այս արարողութեան ատեն Սահակ վարդ. քարոզ մը կը խօսի, բացատրելով վարդապետական կոչման վեհութիւնը: Այս քարոզը մեծ տպաւորութիւն կը նշէ:

Երեք տարի վերջը Սահակ վ. Խապայեան կը փափաքի իր ծննդավայրը դառնալ, ուրկէ բաժնուած էր 12 տարիէ ի վեր: Ուստի վեց ամսուան արձակուրդ առնելով 1880 մայիսի 1-ին ճամբայ կ'ելլէ Խարբերդ երթալու համար, ճամբան հանդիպած բոլոր քաղաքները՝ Իսկէնտէրուն, Հալէպ, Այնթապ, Եղեսիա, Տիարպէքի պատարագելով: Յունիսին կը հասնի Խարբերդ, Եղէգի գիւղը: Այդ միջոցներուն ալ Խարբերդի առաջնորդական ակթոզ թափուր ըլլալով, ժողովուրդ կը խնդրէ Սահակ վարդապետէն, ընդունիլ առաջնորդի պաշտօնը, բայց վարդապետը կը մերժէ: Հազիւ երկու ամիս վերջը պատրիարքական հեռագրով երուսաղէմ կը կանչուի, որովհետեւ իր բացակայութեան ատեն ժառանգաւորաց աշակերտները փոխանորդաբար վարժարանին տեսչութիւնը վարող վարդապետին դէմ անսաստելով, ամեն բան խանգարուեր և իր ներկայութիւնը անհրաժեշտ դարձած էր: Սահակ վրդ. Նսայի պատրիարքին հեռագիրը ստանալէն անմիջապէս վերջը ճամբայ կ'ելլէ, և անկէ նաև նստելով Պօլիս կուգայ:

Սահակ վ. ամիս մը Պօլիս կը մնայ կը քարոզէ մայր եկեղեցին և ամենուն զնահատման կ'արժանանայ՝ իբրի պերճախօս քարոզիչ: Երբ երուսաղէմ կը հասնի, կը տեսնէ որ վարժարանի աշակերտները ծայր աստիճան զգուած փոխանորդ տեսուչէն, որոշած էին խմբովին ելլել դպրոցէն և իրենց ծննդավայրը դառնալ, եթէ Սահակ վրդ. քիչ մը ուշանար: Բարեբաղդաբար ժամ առաջ գործի ձեռնարկելով նորէն կը բարեկարգէ վարժարանը, ստանձնելով տեսչութեան պաշտօնը:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

„Миръ Божій“, նույնպէս Ամսագրի այս համարում տպուած է ռուս լայանի թարգմանիչ-բանաստեղծ Պետր Վէյնբերգի յօդուածը գերմանական բանաստեղծ Լենաուի ծննդեան հարիւրամեակի առիթով: Յանձին Լենաուի գերմանական բանաստեղծութիւնը պատում է իր ամենախոշոր լիրիկ բանաստեղծներէ մէկին, Գէօթէից և Հէյնէից չեռայ: Լենաուի իսկական անունն է Նիմաշ Փօն-Ստերլենաու, իսկ կեղծանուն (պսեւդօնիմ) նա ընդունել է, ի նկատի ունենալով մետտեր-լիխեան Աստրիայում այն ժամանակուայ տիրող գրաքննչական կարգերն և խտտութիւնները: Լենաու ծնունդ է 1802 թ. օգոստոսի 13-ին ունդարական Տլադատ քաղաքում մի աղքատ և ցաւազար ընտանիքում: Բանաստեղծի կեանքը թափառումների, զրկանքների, սիրային անաջողութիւնների և տանջանքների մի տխուր շարք էր: Այդ աննպատակ պայմաններում նա չէր կարող կենսութախ երգիչ լինել և նրա վշտոտ լարերից լսում են „տիեզերական վշտի“, մենակ, դժբախտ և խորտակուած արտի հեծեծանքներ, պատած „բոմանտիզմի“, միասփիգի մշուշով, լի թերահաւատութեան և վառ հաւատի խոր մաքառումներով: Բազմաթիւ մանր բանաստեղծութիւններից և բոմանտ-

ներից բացի նրա աւելի խոշոր գործերն են „Պառուտ“, „Սափանարօլա“, „Ալրիկոյցիներ“, այդ բոլորի մէջ նա դնում է իր ներքին սուբեկտի աշխարհը: Դժբախտ բանաստեղծը 42 տարեկան հասակում հոգեպէս հիւանդացաւ, խելագարուեց, և 1850 թ. օգոստոսի 22-ին թողեց այս վշտալի աշխարհը:

„Հանդէս Ամստերդամ“, նույնպէս.—Ժ. Բ. միջազգային արեւելագէտների համաժողովում բաւական հարուստ է եղել հայկական բաժինը: „Հանդէսի“ այս համարում տրպուած մի թղթակցութիւնից քաղում ենք հետեւել հետաքրքրական կտորը.

„Ուրախալի երեւոյթ է տեսնել, որ վերջին տարիները շարունակ փորձեր են լինում եւրոպական գիտնականներից՝ պարզել Հայերի մութ պատմական անցեալը. խընդիրներ, որոնք մեզանից երկու տասնեակ տարի առաջ անլուծելի էին թւում գիտութեան, այժմ շնորհիւ նոր-նոր աղբիւրների միանգամայն այլ լուսարտնութիւն են ստացել: Ահա թէ ինչու պրօֆ. Լէմանի յայտարարած դառախօսութիւնը՝ Հայերի առաջին գալստեան մասին՝ գրաւել էր շատերի հետաքրքրութիւնը. սակայն երիտաւարդ ուռուցչապետը, հեռու մնալով պատ-

մական փաստերից, շարունակ ծանրանում էր իր ենթադրությունների վրայ: Ընդունելով Winckler-ի տեսությունը, թէ Կիմմերներ Հայաստան են մտած, անցնելով նախ Վովկասեան լեռնաշղթան, որի հետեանքը պէտք է լինէր «Խալդիայի» (ըստ Լէմանի նույն Ուրարտու երկիրն է) երկու մասերի բաժանունին, պ. պրոֆ. Հալերի ճանապարհի հետքերն արեւմտքում է որոնում. Թրակիայից անցնելով Փոքր Ասիա, նրանք մի ժամանակ նստած են եղել Փոնտիայում, ինչպէս ապացուցանում է տեղիս Արմեն ի ո ն քաղաքի անունն. ուստի հաւանական է ընդունել, որ Հալերը և Փոնտիայից ազգակից են միմեանց: Միւս կողմից Օրմեոն ի ու մ (ըստ Լէմանի՝ Արմենիում) քաղաքի գոյությունն թեստադիաշում ենթադրել է տալիս, որ Հալերը, կամ նրանց մի մասը, այստեղ ետքնակած են եղել: Այսպիսով Հալերը Կիմմերների հետ ոչ մի կապ չունեն, այլ եկած են Փոքր Ասիա գետաւելի վաղ, Ռուստո Ա. և Բ-ի ժամանակ (այսինքն մոտաւորապէս 722—680 թ.): Սակայն Հայաստան մտան արդէն խառնուած ալլ ազգերի հետ. զաղթումն տեղի է ունեցել առնուազն երեք անգամ՝ ա. Հալերը սկզբում ոտ գրին նոր երկիրը իբրեւ անխառն ազգութիւն. բ. նստան Փոքր Ասիայում թրակացիների հետ արդէն ձուլուած. գ. Հայաստան եկան Հեռոտիտների հետ խառն... (այստեղ երիտասարդ գիտնականը բաւական հեռու է դնացել իւր ենթադրութիւններում): Իբրեւ ապացոյց պ. Լէման առաջ բերեց իւր անձնական դիտողութիւնն Վովկասում եղած ժամանակ՝ Հալերը ըստ մեծ մասին տարբերում են միմեանցից իրանց արտաքին գծադրութեամբ: Վերջապէս, արդարացնելու համար ետալդ անունն, որով նա մկրտել է Ուրարտու երկիրն և

աղգն պ. պրոֆ. մատնացոյց է անում Քանեփոնի մի տեղեկութեան վրայ, թէ «Խալդերը պահուել էին լեռներում».

«Кавказ» №303: Այդ լրագրում տպագրում է Վրաստանի էկզարխ Ալէքսի արքեպիսկոպոսի Նրեանի նահանգում ևս Կարսի շրջանում կատարած ճանապարհորդութեան նկարագրութիւնը: Այդ նկարագրութեան հեղինակ առաջ քահանայ Վաստորպովը, ի միջի այլոց, գրում է հետեւեալը. «Նույն օրը, (սեպտեմբերի 28-ին) հովտապետը այցելեց Ալեքսանդրովի լոռը ղինուրական եկեղեցիները և մերձակալ Ալեքսանդրովի գիւղում մի եկեղեցի հիմնեց ռուսադաւանութիւն ընդունած հայերից նոր կազմուած համայնքի համար: Հայերի մէջ շարժումը զէպի ռուսադաւանութիւն սկսուել է 20 տարի առաջ. նա կենդանի է և հիմա, և եթէ չը լինէին կեանքի այն ճնշող հանգամանքները, որոնց մէջ ապրում են ռուսադաւանութիւն ընդունած հայերը, որոնք մնում են նույն գիւղերում իրանց նախկին հաւատակիցների հետ և ամէն տեսակ անախորժութիւններ են կրում նրանցից՝ ալլ շարժումը լաշն ալիքի նման կը տարածուէր Նրեանի նահանգում: Հասարակ ժողովուրդը չը գիտէ այն տարբերութիւնը, որ կայ հայ-լուսաւորչականութեան և ռուսադաւանութեան մէջ, և իսկապէս էլ նա սոցնքան մեծ չէ, որ անանցանելի անդունդ դառնար: Անդունդ կամեւում են դարձնել նրան քաղաքականութեամբ պարասող տարբերը, գլխաւորապէս ինտելիգենցիայից, բաց ժողովուրդը գործ չունի նրանց հետ: Վերջին ժամանակ կալմուել են մի քանի ծիւղ ռուսադաւան հայերից. նրանց համար ժամկետութիւն է կատարում. բացում են ուսումնարաններ: Աղմինիտարացի-

ան հնարաւոր համարեց ռուսադաւան հայերին դուրս հանել իրանց նախկին տեղերից և կազմել առանձին գիւղեր: Առաջով կազմուած են Ալէքսանդրովկա և Ագինօ գիւղերը: Պապաւոր Վայսըը Իր առատաձեռնութեամբ 5,000-ական ռուբլի նուիրեց՝ եկեղեցի—ռուսմարաններ կառուցանելու համար այդ գիւղերում: Վրաստանի էկզարխը հասաւ Ալէքսանդրովկա երեկոյեան ժամը 4-ին և երկար խօսակցեց ռուսադաւան հայերի հօտի հետ: Աւագ քահանայ Վաստորգով, Վրաստանի էկզարխի յանձարութեամբ, քարոզ խօսեց ժողովուրդին ս. Գրիգորի, հայերի լուսաւորչի կեանքի մասին, և պարզեց այն միտքը, թէ ս. Գրիգորը ապրում էր այն ժամանակ, երբ հայերը բաժանուած չէին ուղղավառ եկեղեցուց, և թէ իսկական գրիգորեաններ՝ համախոհ Լուսաւորիչ Գրիգորին, իրաւացի կերպով կարող են անուանուել հայերից նրանք, որոնք ընդունել են ռուսադաւանութիւն: Որովհետեւ այդ երեկոն սեպտեմբերի 30-ի նախընթաց երեկոն էր, երբ ռուսաց եկեղեցին տօնում է. ս. Գրիգորի, Մեծ Հայաստանի Լուսաւորչի լիշատակը, ուստի այստեղ էլ մագթանք կատարուեց այդ սուրբի չիշատակին և տաճար էր հիմնուեց նրա անունով: Զուգադիպութիւնը զարմանալի էր: Տայ Աստուած, որ ս. Գրիգորի աղօթքներով աճի հայերի ռուսադաւան հօտը: Զարմանալի է, որ մի առանձին պետական հեռատեսութեամբ դեռ ևս Իօհան Գրիգորին առաջին անգամ Տօկուալումը, Վասիլի Բլաժեննի-Մոսկուում, կանգնեց մի սեղան հայերի Լուսաւորիչ՝ ս. Գրիգորի անունով: «

„Вѣстникъ Европы“ Գորիս Մէտէռլինկի պիէսի մասին, որի հայերէն թարգմանութեան վերջը տպուեց

„Մուրճի“ այս համարում, հետեւալ կարծիքն է յայտնում ռուս մամա-գրի աշխատակցուհի Զ. Վ. որ յայտնի է իբրեւ եւրոպական գրականութեան հմուտ անձ: «Գորիս Մէտէռլինկի նոր գրաման,—ասում է նա,—որ նորերս մեծ յաջողութեամբ ներկայացուեց Պարիզում և այնուհետեւ Լօնդօնում, այժմ հրատարակուել է առանձին գրքովով (Քրանսերէն) և քննադատութեան կողմից ընդունուել միահամուռ գովասանքներով: Մէտէռլինկը, որ մինչև այժմ գրում էր իր հէթիաթային ու միստիկական մշուշապատ բանաստեղծութիւնները գնահատողների առանձնացած խմբակի համար, իր այս նոր գրամալով դիմում է, այսպէս ասած, մեծ հասարակութեանը: Վերջին տարիներս Մէտէռլինկը թողել է իր սկզբնական զուտ սիմօլիստական ձևերը և բարդագէտ է դարձել ու սկսել է քարոզել նոր վիրաբւմունք զէպի կեանքը... Իր փիլոսոփայութիւնը նա մեկնում է չափաւորեց պարզ ու լաւ հասարակ կերպով, գրեթէ միամիտ ու ոգևորուած բանաստեղծական լեզուով: Նոյն պարզութիւնը նա ուզում է այժմ մտցնել նաև իր գեղարուեստական ստեղծագործութեան մէջ: «Մօննա Վաննա» առաջին փորձն է այդ տեսակում: Նրա նախկին գրուածքներին չատուկ՝ անյայտ երկիրներ ժողովուրդներին աւելցնող զգացմունքները և նախազգացմունքների ու խորասորհուրդ գաղտնիքների աշխարհի կեանքը այդ նոր գրամալում փոխարինուած են՝ XV դարի զուտ իրական, կրքոտ իտալացիներով: Գրամալում կատարուող զէպքերը շօշափելի են ու հասկանալի, կրքերի մաքառումը կրում է զուտ երկրային, համամարդկային բնաւորութիւն: Մէտէռլինկի նախկին գրամաները տարօրինակ տպաւորութիւն էին գործում իրանց շինծու միամտու-

թեամբ, միևնույն նախադասութիւններէ բաղմանաւ կրկնութեամբ. գործող անձինքը կարծէք լուսնոսներ լինէին, խուլ դէպի ամեն ինչ, որ շրջապատում է իրանց, ամբողջ ուշ ու մտքով զրուտած իրանց տըխուր մտածմունքներով և զարմացած այն բոլորից, ինչ որ տեսնում ու դրում են: «Մօննա Վաննայում», ոչ մի հետք չի մնացել այդ բոլորի: Այդ զրամայի լեզուն կրքոտ է ու հոժկու, բանաստեղծական՝ առանց սեթեւեթութեան (манерность) և արտայայտում է ողբերգական զգացմունքների թափը առանց որևէ մշուշապատութեան: Այս անդամ Մէտէոլինկը ստեղծել է լիովին բեմական մի բան, մի զրամա շէքսպիրեան ոգով, պարզ ու ցնցիչ, կատարելապէս մարդկային և միանգամայն լի խոր փիլոսոփայական իմաստով: Մէտէոլինկը միշտ առանձին հակումն է ցոյց տուել դէպի Շէքսպիրը: Հէնց առաջին դրամաներից յետոյ նրան սկսեցին անուանել «Բելգիական Շէքսպիր»: Նրա առաջին դրամաներից մէկը, «Princesse Maleine», ամբողջապէս կազմուած է միատրիական անուրջներէ աշխարհը տեղափոխուած շէքսպիրեան մօտիվներէ: «Մօննա Վաննայում», բնդհակառակը, դրամայի նիւթը բոլորովին ինքնուրոյն է, բայց կեքերը վերաբարձրելու եղանակը շէքսպիրեան եղանակ է... Եր գեղարուեստական արժանատւութիւններով Մէտէոլինկի նոր դրաման թերևս նրա գրած ամենալաւ դրամաներից մէկն է իր բնատուրութիւնների պայծառութեամբ ու ցայտունութեամբ, արամախօսութեան (գիալօղ) կրքոտութեամբ և ոճի անդիմադրելի բանաստեղծական հրապոյրով...»

„Научное Обозрѣніе“, սեպտեմբերի Ռուսաց «Գիտական հանդէսի» խմբագիր Ֆիլիպպովը այդ ամսագրի սեպտեմբերի համարում մի

լուրջ յօդուած է նուիրել Մօրիս Մէտէոլինկին: Բերում ենք մի քանի հետաքրքրական հատուածներ այդ յօդուածից: «Մի քանի տարի առաջ Ռուսաստանում Մէտէոլինկով հետաքրքրում էին միայն դէկադէնտները: Պոետներին զրեթէ միայն տիկին Վենգերովան, որ միշտ ուշի ուշով հետևում է նոր հոսանքներին, մատնացոյց արեց Մէտէոլինկին, իրրև խոշոր և ինքնուրոյն գրականագէտի: Սակայն պէտք է ասել, որ մենք այդ դէպքում շատ էլ լիտ չենք մնացել Արևմտեան Եւրոպայից, այնտեղ էլ Մէտէոլինկի դրամաքները սկզբում միմիայն տարակուսանք զարթեցրին: Ֆրանսիացի քննադատ Ռընէ Դումիկը 1896 թուին գրում էր, թէ՛ «երկու-երեք տարի առաջ մեզնում չաշտնագործեցին Մէտէոլինկին: Մէտէոլինկը բելգիացի է և նրա առաջին գրածքները Պարիզում չեն տպուած, իսկ չաշտնի է, թէ որքան դժուար է Ֆրանսիա մուտք գտնել աշխարհի գրողի համար, որ չի պատկանում Պարիզի դրական շրջաններին: Միմիայն բացառիկ տաղանդը կամ զոնէ բացառիկ ինքնուրոյնութիւններն են կարողանում այդպիսի դէպքում ճանապարհ բռնալ իրանց համար: Աշխարհիցի գրողին առատիկ խանգարում է դատադիութեան կնիքը, որ անկասկած չառուկ է Մէտէոլինկի առաջին գրածքներին: Սակայն այդ առաջին շրջանի գրածքների մշուշապատ ու միատրիական բովանդակութիւնը չէր կարող արգելք լինել նրանց տարածուելուն: Նատուրալիզմի և պօզիտիվիզմի դէմ սկսուած հակընթացքը (ռեակցիա) արդէն իր անելիքն արեւ էր ութօռնական թռականների մէջընթին, իսկ հետեւալ տասնամեակում, «դարավերջում», բազմացել էին խիստ հակապօզիտիվական բնատուրութիւն ունեցող հոսանքներ: Մէտէոլինկի

երբեմն սիմվոլական հանդուրձումներն ձև կրող գաղափարների իւրացման համար բառական պատրաստի հող կար արդէն շնորհիւ ֆրանսիացի զանուգան տեսակ սիմվոլիստների և ղէկաղէնտների, որոնք իսկոյնեւթ Մէտէոլինկին իրանց բանակի զրոյ հոչակեցին... Նորերս միայն Մէտէոլինկը յայտնի դարձաւ հասարակութեան լայն խաւերին և այն՝ իրրե զրամատուրգւ Նա իսկական համաւերապական հոչակ ստացաւ «Մոննա-Վաննայի» լոյս տեսնելուց յետոյ։ Մինք ևս բարձր ենք գնահատում այդ պիւսը, թէպէտ և չափազանցութիւն ենք համարում նրա համեմատութիւնը Շէքսպիրի զրամաների հետ... Մէտէոլինկի զրամաները ղեղարուեստական լուսարանութիւն են նրա ինքնուրոյն փիլոսոփայութեան... Բոլոր իրօք խոշոր և իրօք ինքնուրոյն մտածողների նըման, — Սպէնսէր լինի նրանց անունը, թէ Դալլին, Մարքս կամ Տօլստօյ, — Մէտէոլինկը, թէպէտ և ոչ այնքան խոշոր, որքան այդ մտածողները, նախ և առաջ յատկանշական ճշմարտութեան որոնող է նրանց բոլորի նման։ Բոլոր ղեկավարող մտածողների նման նա «ծարարի է հոգով» և ամենից առաջ զրաւում է մեղ իր անկեղծութեամբ։ Այդ կողմից չը կայ բանականների և ուղղութիւնների տարբերութիւն։ Ընդհանրապէս բոլոր խոր աշխարհայեցողների սինտէզը կաշանում է նրանում, որ նրանք բոլորն էլ այս կամ այն ձևով ձգտում են հաստատել երկրիս երեսին ճշմարտութեան և արդարութեան թաղաւորութիւնը և հետեալաբար այս կամ այն ձևով ծառայում են մարդկութեան բարօրութեանը։ Բացի այդ ընդհանուր գծից, որ Մէտէոլինկին մօտեցնում է մտքի միւս իշխաններին, նրա մնացեալ բոլոր յատկութիւնները բոլորովին ինքնուրոյն են։ Նախ և առաջ պէտք է

չիշել նրա բնատուրութեան արտասովոր մեղմութիւնն ու քնքշութիւնը... Մէտէոլինկի մէջ կայ ինչ որ պատանեկական, նոյն-իսկ մանկական միամտութիւն, որ սակայն չի խանգարում նրան թափանցել մարդկային հոգու ամենահեռաւոր խորքերը... Նրա հոգին պարզ է ու վճիտ, ինչպէս մի բիրեղ Պէտք է չեւ նայել ղէպի հեռու անցեալը և մտքով տեղափոխուել միջնադարեան վանքի խաղաղ խուցը, — ոչ այնպիսի վանքի, որպիսին մեծ մասամբ զոյութիւն ունէր իրապէս, այլ այնպիսի վանքի, որը կազմում էր այն ժամանակուայ բարեպաշտութեան իղէալը, — որպէս ղի մարդ կարողանայ հասկանալ այն տրամադրութիւնը, որ տիրապետող է հանդիսանում Մէտէոլինկի մէջ... Բացց որքան աւելի ենք ծանօթանում Մէտէոլինկի գրածքների հետ, այնքան աւելի ենք համոզւում, որ համակուած լինելով XIV կամ թերեւս նոյն-իսկ XV դարի տրամադրութիւններով, Մէտէոլինկը միեւնոյն ժամանակ կանգնած է իր ժամանակակից մտքի բարձունքների վրայ և այնտեղից տեսնում է այնքան հեռուն, որ նրա աչքի առաջ աշխարհ թացւում են այնպիսի հորիզոններ, որոնք մատչելի կը դառնան միմիայն մեր հեռաւոր սերունդների հայեացքին...

«Մօսկ», №№ 240, 241, 242, 249, խօսելով հայոց տառերի գիւտի և Մեսրոպ Մաշտոցի գործունէութեան մասին, պ. Ստ. Մալխասեանը յայտնում է այն համակրելի միտքը, թէ անհրաժեշտ է այդ մեծ մարդու և նրա կատարած մեծ գործի առաջիկայ հաղար հինգհարիւրամեայ չիշատակը յաւերժացնել մի որ և է օգտակար ձեռնարկութեամբ։ Իր կողմից այդ յօդուածների հեղինակը առաջարկում է այդ նպատակով

հրատարակել չիտուն հայ պատմագիրներ զրաբար լեզուով՝ «Պատմագիրք հայոց» ընդհանուր վերնագրի տակ։ Այդ առաջարկութեան առիթով «Մշակի» № 249-ում պ. Ս. Սահարոնեանը, խիստ համակրելի գրտնելով Մեսրոպի չիշատակը և հայոց տառերի զիւտը յաւերժացնելու միտքը, իրաւացի կերպով գրտնում է, որ զրաբար լեզուով չիտուն պատմագիրներ տուր հայ հասարակութեան՝ ժամանակակից պահանջներին անհամապատասխան է։ պ. Ս. Սահարոնեանը կը կտմենար, որ ձեռնարկուելիք հրատարակութիւնը ինչ և լինէր՝ անպատճառ հայ ժողովրդի մեծամասնութեան համար լինել, ծառայէր լայն ընթերցանութեան, մինչդեռ զրաբար մատենագիրները այդ կարեւոր պակասը չեն կարող լրացնել շատ հասկանալի պատճառներով։

Անշուշտ, սկզբունքով դէմ չենք հայ մատենագիրների զրաբար հրատարակութեան, եթէ այդ անի մի անհատ իր սեփական միջոցներով, սակայն երբ հարց է գնում, թէ Մեսրոպի չիշատակը իրապէս չարգելու համար հասարակական ինչ ձեռնարկութիւն աւելի համապատասխան կը լինի մեր ներկայ պայմաններում և արժանի այդ մեծ պատմական անցքի չիշատակին և երբ հասարակական օժանդակութեան հարց կայ մէջտեղ — մենք մի քանի տասնեակ գրաւէրների և մասնագէտների շահերից վեր կը համարենք հայ ամբողջ ժողովրդի մտաւոր պահանջները։ Առանց այն էլ հնասիրութիւնը և նեղ մտքով վերցրած բանասիրութիւնը մեր գրականութեան մէջ գերաճման է հասել. թողնենք Վիէնայի, Վե-

նետկի, Էջմիածնի, էլ չենք ասում հալագիտութեան կաթիլդա ունեցող եւրոպական համալսարանների գիտնականներին, շարունակել իրանց նեղ մասնագիտական զրադմունքները, թող նրանք իրանց միջոցները (բաւականաչափ ունեն) չին պատմագիրների ուսումնասիրութեան և հրատարակութեան վրայ զործադրեն, իսկ հասարակութեան միջոցները աշխատենք զործ գնել մեր ժողովրդի լայն պահանջների համար։ Միթէ աւելի լաւ չէ, օրինակ, հաւաքական ոչժերով ձեռնարկել մի այնպիսի հրատարակութեան, որ ժամանակակից գիտութեան վրայ հիմնուած և ընդհանուրին մատչելի լեզուով, մաս-մաս տար հայոց գրականութեան և անցեալի պատմութիւնը։ Դրա համար ևս, անշուշտ, հարկաւոր է կազմակերպել մի խմբագրութիւն, որ կը դիմի մասնագէտների աջակցութեան։ Եւ Մեսրոպի չիշատակի տեսակէտից ի՞նչ պատուաւոր և վեհ զործ կատարուած կը լինէր։

Երբ մի Մանթաշեան իր սեփական միջոցներով ուզում է Պարիզում հայոց եկեղեցի շինել, այդ, ի հարկէ, նրա գիտնալու բանն է, սակայն եթէ նա այդպիսի ձեռնարկութեան համար հասարակութեան դիմէր, մամուլի պարտականութիւնը պէտք է լինէր հասարակութեան ցոյց տալ, որ աւելի անհրաժեշտ կարիքներ ունենք... Այդպէս է և ներկայ հարցում։ Ցանկալի կը լինէր, որ իսկապէս ինքը հասարակութիւնը ևս լուրջ մտածէր մի աւելի նպատակալարմար ձեռնարկութեամբ յաւերժացնելու մեծ Մեսրոպի չիշատակը։

Խ Մ Բ Ա Գ Ո Ի Թ Ե Ա Ն Կ Ո Ղ Մ Ի Ց

Բանալով «Մուրճի» նոր չրջանի երրորդ տարուայ բաժանորդագրութիւնը, մենք դարձեալ յիշեցնում ենք ընթերցող հասարակութեան, որ մեկենասների յոյսով լուրջ գրական ձեռնարկութիւն պահպանել մեզանում անկարելի է, և ինքը ընթերցող հասարակութիւնը պէտք է աջակցի—նիւթական հնարաւորութիւն տալով՝ հաստատ հողի վրայ դնելու «Մուրճի» հրատարակութիւնը: Երկու տարուայ փորձը ցոյց է տալիս մեզ, որ առնուադը հարկաւոր է ունենալ 1000 բաժանորդ՝ ծախքերի ծայրը ծայրին հասցնելու համար:

Դրսի քաղաքի մեր բաժանորդներին այս №-ի հետ ուղարկում ենք պոստի տպուած փոխադրատուսեր—բաժանորդագիրն խմբագրութեան ուղարկելու համար: Ցանկալի է որ մեր բաժանորդները մտածէին նաև խմբագրութեան յարմարութիւնների մասին և շտապէին որքան կարելի է շուտ նորոգել իրանց բաժանորդագրութիւնը: Դրանից շատ բան է կախուած:

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Այս համարում.

երես	տող	տպուած է	պէտք է լինի
75	5	Կալամիի ծանօթացնելով	ծանօթացնելով Կալամիի

- հանգիստ չունենա՞նք Մեանիցկու.— «Տրիբի» Դէի.— Հրէական ազգի ոգին.— «Օտարներ» Պատապենկօի.— Նիւթապաշտական, զործնական ոգին մեր «ուռած» և «դեր» ժամանակում.— «Ուրիէլ Ակօստա» Գուցկօլի.— «Օտեկլօ», Շէքսպիր և հայ բեմը.— Պ. Կարա-Մուրզայի կօնցեկտը, Ա. 164
18. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Մի պարագոքս անհատի և ժողովրդի մէջ.— Երկու հիմնական տշխարհայեցողութիւն.— Մեր ինտէլիգէնտների երեք կատեգորիան.— Դաբրիէլ Միր-զօյեանց.— Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի նոր կազմը.— Բազուի քաղաքագլուխը և դուման.— Бакы՝ լրագիրը 183
- Պ ա շ տ օ ն ա կ ա ն հ ա ղ ո Ր զ ա գ Ր ու Թ իւ ն ն ե Ր 190
19. ԷՄԻԼ ԶՕԼԱՆ ՆԻ ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԸ, Ա. Ահարոնեանի . . . 194
20. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Մաքսային սակառների քննութիւնը ռաչիստագում.— Մեծամասնութեան և փոքրամասնութեան պայքարը.— Չեխերի և գերմանացիների անտաղծնիզմը.— Աստրիայի և Ունգարիայի չարաբերութիւնները.— Կրուպպի մահը 203
- Պ օ լ ս ի Թ ե Ր Թ ե Ր ի ց Կ ի լ ի կ ի ա չ ի կ ա Թ ո ղ ի կ ո ս ա կ ա ն ը ն տ լ ու Թ իւ ն ը ի 210
21. ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 218
22. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ 224
23. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ —
24. 2-րդ ՅԱՒԵԼՈՒԱԾ «Մուրճի», Բրես Հաւս «Ինքնաշարժ և ուր սարի առաջ, Թարգմ. Ս. Լիսիցեանի 1—32

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը՝ յատուկ խնդրում է յօդուածագիրներէրէց՝ գրել պարզ, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ:
2. Զընդունուած մեծ յօդուածները պահում են խմբագրատանը 6 ամիս, իսկ փոքր յօդուածներն ու բանաստեղծութիւնները չեն վերադարձնում: Զեռագիրը չեա ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է Խմբագրութիւնը:
4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուրճի» համարը չի ստացուելու դէպքում պէտք է Խմբագրութեան տեղեկութիւն տալ մինչև յաջորդ համարի լոյս տեսնելը: Այդ տեղեկութեան անհրաժեշտ է կցել տեղական պօստային գրասենեակի՝ հաւաստագիրը (подтверждение), որ ամսագրի համարը չի յանձնուած զանգառաւորին:

Բ Ա Յ Ո Ւ Ա Ծ Է

1903

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Մ Ո Ւ Ի Ր Ճ

Գ Ր Ա Կ Ա Ն, Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Կ Ա Ն Ե Ի Գ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան, III-րդ տարի)

Խմբագրութեան անդամների եւ աշխատակիցների նոյն կազմով:

1903 թուականին «Մուրճում» տպուելու է, ի միջի այլոց, Ա. Ահարոնեանի մի նոր մեծ վէպ՝ «ՄՐՐԿԻ ՍՈՒՐԲԸ», շարունակուելու է Լեօի «ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ», թարգմանուելու են Ա. Ուոլլեսի «ՀՐԱՇԱԼԻ ԴԱՐԸ» և Զօլայի վերջին՝ «ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ» վէպը:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ի Ն Ը

Ռուսաստանում տարեկան 10 հոսք. Արաստանում 12 հոսք.

կէս տարին	6	"	"	7	"
1 ամսուան	1	"	"	1	" 20 կ.

«Մուրճ» ամսագրին կարելի է գրուել.

Թիֆլիսում—խմբագրատանը (ձախակաճեան փողոց, տ. № 16):

Կայսերութեան այլ «Եղերից պէտք է դիմել» Тифлисе, въ редакцію журнала „Мурч“.

Արաստանցիք՝ Tiflis, Rédaction de la revue „Mourteh“.

Բացի այդ «Մուրճին» կարելի է գրուել նաև՝

Թիֆլիսում—«Կուսակցութեան» գրասենտանոցում,

Քալաթանի—պ. Մ. Տէր-Գեորգիեանի մօտ, «Անդրանիկ» բնկ. դրձաբանում,

Քաղաւ. պ. Յ. Մուսիկեանի մօտ, Կրասնովոդսկայա և Մարտիանսկայա փողոցների անկիւն, տ. Մուսա Նազիբովի:

«Մուրճում» ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ զեկեղելու համար պէժք է վճարել.

Մի երես բանոց լայնարարութեան համար . 10 ռ.

1/2	"	"	"	"	• 5 "
1/4	"	"	"	"	• 2 "